

**Զ. Ա. ԹԱՂԵՎՈՍՅԱՆ  
Դ. Ռ. ԳԱԼՈՅԱՆ**

ՀՏԴ 33  
ԳՄԴ 65.5  
թ 141

Հրատարակության է երաշխավորել ՀՊՏՀ  
միջազգային տնտեսական հարաբերությունների  
անբիոնը

Մասն. խմբագիր՝ տ.գ.դ., պրոֆ. Ա. Մարկոսյան  
Գրախոս՝ տ.գ.թ., պրոֆ. Ա. Արշակյան

թ 141

Թաղենոսյան Զ. Ա., Գալոյան Դ. Ռ.  
Միջազգային տնտեսական ինտեգրացիա (մենագրու-  
թյուն).-Եր.: Հեղինակային հրատարակություն, 2006.-  
180 էջ:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՑԻԱ

Աշխատանքում ներկայացվել են գլոբալ և տարածաշրջանային  
տնտեսական ինտեգրման արդի հիմնախնդիրները, դրանց նշանա-  
կությունը երկրների տնտեսական համագործակցության խորաց-  
ման տեսանկյունից:

ԳՄԴ 65.5

**Երևան  
Հեղինակային հրատարակություն  
2006**

ISBN 99930 – 4 – 667 – 1

© Թաղենոսյան Զ. Ա., 2006թ.  
© Գալոյան Դ. Ռ., 2006թ

## Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Ե Ո Ւ Ն

Միջազգային տնտեսական բազմաբնույթ հարաբերությունների, երկրների միջև տնտեսական կապերի զարգացումը XX դարի կեսից այնպիսի աննախադեպ քանակական ու որակական առաջնորդաց ապահովեց, որ, չնայած ժամանակ առ ժամանակ կրկնվող տնտեսական ճգնաժամերին, շարունակում է պահպանվել որպես կայուն երևույթ: Աշխարհի առաջատար պետությունների ջանքերի համախմբման նպատակը, երկրորդ համաշխարհահային պատերազմից հետո, ոչ միայն պատերազմող երկրների քայլայված տնտեսությունների վերականգնումն էր, այլև միջազգային տնտեսական հարաբերությունները կարգավորող միասնական մարմինների ձևավորումը: Միջազգային տնտեսական կազմակերպությունների գործունեությունը պետք է ուղղվեր արտաքին առևտորի պատուականցմանը, կորպորացիաների գործունեության ընդլայնման ճանապարհով աշխարհի տարբեր երկրներում կապիտալ ներդրումների հոսքերի ավելացմանը, ֆինանսական շուկաների փոխկապվածության աճին ու արժութային հարաբերությունների վերազգային կարգավորմանը: Նախկին գաղութային երկրներում սկիզբ առած ազգային ազատագրական շարժումներն, իրենց հերթին, հանգեցրին ոչ միայն համագործակցող երկրների աշխարհագրական շրջանակների ընդլայնմանը, այլև աշխատանքի միջազգային տարածքային բաժանման շրջանակների աստիճանական նեղացմանը՝ ստեղծելով բարենպաստ միջավայր աշխատանքի միջազգային արտադրական բաժանման խորացման համար: Մրվեց մրցակցությունը ոչ միայն զարգացած, այլև զարգացած և զարգացող երկրների միջև: Աշխատանքի միջազգային բաժանման խորացման հետևանքով ազգային տնտեսությունների փոխկապվածության ընդլայնումը, վերպետական այնպիսի մարմինների առկայությունն, ինչպիսիք են՝ Արժույթի միջազգային իիմնադրամը, Զարգացման և վերակառուցման միջազգային բանկը, Առևտորի և սակագների գլխավոր համաձայնագիրը, ՄԱԿ-ի տնտեսական ծրագրերը, միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացումը տարան գլոբալ ինտերման ուղիով:

Հետպատերազմյան Եվրոպայում «Մարշալի պլանի» իրականացումը ԱՄՆ-ի տնտեսական տիրապետությունն այդ տարածաշրջանում հաստատելու վտանգ էր պարունակում: Այդ պատճառով Արև-

մտյան Եվրոպայի վեց երկրներ, ավելի քան կես դար առաջ, ստորագրեցին Ածխի և պղոպատի Եվրոպական միավորման համաձայնագիրը, որն ազատ առևտորային գոտուց աստիճանաբար անցնելով մինչև արժութային միություն, միասնական գյուղատնտեսական, բյուջետային, հարկային, սոցիալական քաղաքականության շրջանակներում ցուցադրեց տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիայի առավելությունները: Դա տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիայի՝ մինչ այժմ աշխարհի մի շարք տարածաշրջաններում ձևավորված ինտեգրացիոն խմբավորումների, առևտորային համաձայնագրերի ամենահաջողված մոդելն է:

Նախկին Խորհրդային Միության երկրների՝ որպես քաղաքական միության ձևավորումն ու դրա հետագա զարգացումը տնտեսական ինտեգրացիայի ուղիով ընթանում էր անդամ երկրների քաղաքական և տնտեսական նվազագույն ինքնուրույնության պայմաններում: Կենտրոնացված պլանային համակարգի փլուզումը, դրան հաջորդող կառուցվածքային բարեփոխումների ոչ հետևողական իրականացումն ամբողջովին քայլայցին նախկին տնտեսական կապերը: Սակայն ներքին ռեսուրսների անբավարարությունը, կառավարման փորձի պակասությունը, անկախացման գաղափարի ծայրահեղ քաղաքականացված դրսևորումները նախկին տնտեսական կապերի վերարտադրության գաղափարը մղեցին առաջին պլան: Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) ձևավորումը դարձավ արդի տնտեսական զարգացումները որդեգրելու ուղիներից մեկը: Սակայն ԱՊՀ անդամ երկրների տարածաշրջանային գործուն և արդյունավետ ինտեգրացիոն խմբավորում ձևավորելու փորձերը առաջն հաջորդությամբ չեն պակվում:

Տարածաշրջանում ՀՀ տնտեսական զարգացման և քաղաքական կայունացման հենակետը, թե՛ պատմական զարգացման և թե՛ ներկա ժամանակաշրջանում ձևավորված կապերի տրամաբանությանը հանահունչ, եղել և մնում է ԱՊՀ առաջատար պետությունը՝ Ուսասատանը: Ուսասատանը ՀՀ արտաքին առևտորային իիմնական գործընկերն է ոչ միայն ԱՊՀ, այլև տարածաշրջանային մեկ այլ, հեռանկարում բավականաչափ խոստումնալից տնտեսական կազմակերպության՝ Սևծովյան տնտեսական համագործակցության (ՍԾԾ) շրջանակներում: Աշխարհագրական փոքր տարածք զբաղեցնող, անբավարար տնտեսական ներուժ տնօրինող այնպիսի երկրում, ինչպիսին Հայաստանի Հանրապետությունն է, միանգա-

մից բացառվում է ավտարկիայի (տնտեսական առանձնացվածություն), ինքնապահովման քաղաքականության իրականացումը: Հետևաբար, միջտարածաշրջանային նշված կազմակերպությունների հետ ՀՀ համագործակցության գարգացումը հնարավորություն կտա տնտեսական կապերի խորացնան ու աճրապնդմանը գուգահեռ, առանց ցնցումների հաղթահարելու այն քաղաքական հակասությունները, որ այսօր առկա են մեր և հարևան երկրների միջև: ԱՊՀ և ՍԾՏՀ շրջանակներում տարածաշրջանային համագործակցության ամրապնդումը խիստ արդիական հիմնախնդիր է, սակայն միաժամանակ անհետաձգելի հիմնահարց է նաև հարևան երկրների հետ առևտության համաձայնագրերի հիմնան վրա տնտեսական համագործակցության գարգացումը, իսկ առավել հեռանկարային ու հուսալի գործընկերների հետ՝ տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացների իրականացումը: Եթե ներկայումս հարևան երկրների հետ ՀՀ տնտեսական ինտեգրումը պայմանավորված է գոյատևման, տնտեսական կայացման և աստիճանական, սակայն կայուն գարգացման անհրաժեշտությամբ, ապա ապագայում տարածաշրջանային տնտեսական ինտեգրման արդյունքների վերաբաշխումը հնարավորություն կտա աշխատանքի տարածաշրջանային բաժանման շնորհիվ հաղթահարելու ոչ միայն ներքին շուկայի սահմանափակվածությունը, այլև հանաշխարհային շուկայի հետ կապվելու արտահաննան բարձր մրցունակությամբ: Տարածաշրջանային տնտեսական ինտեգրման աստիճանական և հետևողական կիրառումը իր մեջ պարունակում է այդ ներուժը: Երկրների տնտեսական գարգացումը, հատկապես փոքր երկրների, այդ առումով, այլընտրանքներ չունի:

## ԳԼՈՒԽ |

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԷՌԻԹՅՈՒՆԸ, ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

#### 1.1. Միջազգային տնտեսական ինտեգրման տեսական հիմնադրույթները

Համաշխարհային տնտեսության ձևավորմանն ու գարգացմանն ուղեկցող առավել նշանակալից, կայուն և երկարաժամկետ միտումները դրսկորպում են միջազգայնացման գործընթացների անշեղ աճի մեջ: Միջազգայնացումը ոչ միայն տնտեսական, այլև համընդհանուր գործընթաց է, որը շոշափում է հասարակական կյանքի բոլոր կողմերը: Հենվելով արտադրողական ուժերի գարգացման որակական փոփոխությունների վրա՝ միջազգայնացումը հանգեցնում է ազգերի մերձեցմանն արգելակող բազմաբնույթ պատճեշների վերացմանը, դրանց տնտեսական, գիտական, հասարակական և այլ կապերի գարգացմանը, ազգային տնտեսությունների փոփոխապահության աճին և տնտեսական հարաբերությունների միջազգային երևույթի վերաճնանը:

Տնտեսական կյանքի միջազգայնացման արմատները հասնում են մինչև կապիտալի նախասկզբնական կուտակման դարաշրջան: Ապրանքարամական հարաբերությունների գարգացումը, փոխանակության և արտաքին առևտության աշխարհագրական գոտիների ընդլայնումը դարձան տնտեսական կյանքի միջազգայնացման իրական գործուները: XVIII-XIX դարերի արդյունաբերական հեղաշրջումը և ապրանքային արտադրության աճը կտրուկ մեծացրին ապրանքային շուկայի և արտաքին առևտության նշանակությունը: Կապիտալիստական արտադրությունը գարգանալով «խորությանք» և քայլքայելով բնատնտեսությունը, գարգացակ նաև «լայնությանք»՝ ընդգրկելով նոր աշխարհագրական վայրեր՝ Եվրոպա, Ամերիկա, Ասիա, Աֆրիկա: Ազգային արդյունքների ավելի մեծ քանակությունը, դուրս գալով արտաքին շուկաներ, միաժամանակ տեղիք տվեց արտասահմանյան ապրանքների ներթափանցմանը ներքին շուկա: Երկրների միջև տնտեսական հարաբերությունների խորացումը մեծ

չափերով պայմանավորվեց նաև արդյունաբերական հեղաշրջմամբ, որի շնորհիվ աշխատանքի դետալային, մասնակի բաժանումը դուրս մղեց աշխատանքի ընդհանուր միջազգային բաժանումը՝ զարկ տալով երկրների միջև արտադրության մասնագիտացման ու կոռացերացման խորացմանը: Ազատ մրցակցության կապիտալիզմին փոխարինելու եկավ մենաշնորհային կապիտալիզմը, որը տնտեսական կյանքի միջազգայնացման վրա դրեց իր կնիքը: Ածխի և պողպատի Եվրոպական միավորումը, Եվրոպական տնտեսական համագործակցությունը, Ազատ առևտորի Եվրոպական ասոցիացիան, Արժույթի միջազգային հիմնադրամը, Սակագների և առևտորի գլխավոր համաձայնագիրը (GATT), Զարգացման և Վերակառուցման միջազգային բանկը պետական մենաշնորհային կապիտալիզմի այն փուլի արգասիքն են, որը տնտեսագիտության մեջ կոչվում է միջպետական կապիտալիզմ:

Տնտեսական կյանքի միջազգայնացումն այսօր լայն, համապարփակ բնույթ է ստանում: Տնտեսությունների փոխկապվածությունն ավելի զգալի է դառնում, փոխկապվում են արտադրության, կրթության և գիտության, արտադրական ռեսուրսների օգտագործման, կադրերի պատրաստման, արժութային հարաբերությունների կարգավորման, բնապահպանական հիմնախնդիրների համատեղ լուծման ոլորտները: Ժամանակակից տեխնոլոգիական հեղափոխությունը, վերազգային կորպորացիաների (ՎԱԿ) գործունեության մասշտաբների աճը ավելի են ուժեղացնում տնտեսական կյանքի փոխկապվածության գործոնի ազդեցությունն ամբողջ աշխարհում:

Գիտատեխնիկական հեղափոխությունը տնտեսական կյանքի միջազգայնացումը հասցնում է էլ ավելի բարձր մակարդակի: Միջազգայնացվում է արտադրությունը, հաստատվում են սերտ տնտեսական փոխարարերություններ տարածաշրջանի մակարդակով, ստեղծվում են տնտեսական համակարգեր, որոնցում նեծանում է ազգային տնտեսությունների սերտ փոխկապվածությունը: Տնտեսական ավանդական կապերի կողքին ծնունդ են առնում գիտատեխնիկական համագործակցությանը, համատեղ տեխնոլոգիական ծրագրերի իրագործմանը, բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը, աշխատուժի միջրացիայի տնտեսական կարգավորմանն ուղղված համագործակցության նոր ոլորտներ: Այսպիսին է ինտեգրման գործնթացների պատմական և տրամաբանական շղթան: Լինելով տնտեսական կապերի միջազգայնաց-

ման բարձրագույն և ժամանակակից փուլը՝ ինտեգրացիան բնութագրվում է գլոբալացման և տարածաշրջայնացման գործնթացներով:

Գլոբալացումը ինտեգրման գործնթացների զարգացման այն մակարդակն է, որի դեպքում համաշխարհային տնտեսությունն աստիճանաբար դառնում է միասնական տնտեսական օրգանիզմ<sup>1</sup>: Գլոբալացման սահմանների և արդյունքների մասին տնտեսագետների, քաղաքագետների, հասարակության այլ խավերի կաթիքներն այսօր բավականին հակասական են: Սակայն դրանք միասնական են գլոբալացման շարժաթիրների գնահատման առումով, որոնց հիմքում ընկած են տեղեկատվական-հեռահաղորդակցության տեխնոլոգիաների գարգացումը, ֆինանսական գործառնությունների մասշտաբայնությունը, միջազգային առևտորի ծավալների ինտենսիվ աճը, կապիտալի արագընթաց հոսքերը: Գլոբալացումն, ի վերջո, գնահատվում է ազգային տնտեսությունների փոխկապվածության, փոխսերտածման անընդհատ խորացող գործնթացներով:

Ինտեգրումը, այս մակարդակում, միջազգային տնտեսական հարաբերությունների կարգավորման ձև է, որի նպատակն ազգային տնտեսությունների մերձեցումն ու տնտեսական հիմնախնդիրների համատեղ լուծման ապահովումն է: Ինտեգրացիան, այսպես կոչված, երեք գործող անձանց՝ մոնոպոլիաների, պետությունների և սոցիալ-քաղաքական ուժերի փոխներգործության արդյունք է և իրականացվում է երեք մակարդակներով՝ մասնավոր կապիտալիստական, պետական-մենաշնորհային և սոցիալ-քաղաքական: Դրանց զարգացումը հավասարաշահի և գուգահեռ չէ. դրանք խաչվում են և հեռանում, «համաձայնվում» և «ընդհարվում»: Մասնավոր կապիտալիստական ինտեգրացիան իրականացվում է ՎԱԿ-երի կողմից, տարբեր երկրներում ստեղծված դուստր ընկերությունների և մասնաճյուղերի միջոցով, պետական մենաշնորհայինը՝ պետության կողմից՝ տնտեսական միավորումների ստեղծման, ազգային տնտեսական քաղաքականության համաձայնեցման ճանապարհով: Մի շարք կուսակցությունների, արհմիությունների, մշակութային, կրոնական և այլ կազմակերպությունների գործունեությունն էլ ավելի է նպաստում ինտեգրման գործնթացների կարգա-

<sup>1</sup> Кузнецов В., Что такое глобализация? Мировая экономика и международные отношения (далее МЭиМО), N2, 1998.

Վորմանը: Դրանք արևատյան գրականության մեջ ստացել են «անտեսանելի» և «հասարակական» անվանումները: Ինտեգրան գործընթացների այս մակարդակները հզոր ազդակ են երկրների համագործակցության համար, օգնում են պահպանելու ազգային տնտեսությունների տնտեսական և քաղաքական կայունությունը, ավելի քիչ կորուստներով անցնելու տնտեսական ցնցումների և ճգնաժամների միջով:

Միջազգային տնտեսական հարաբերությունների կարգավորումն իրականացվում է ինչպես երկրողմ, այնպես էլ բազմակողմ հիմքի վրա: Երկողմ կարգավորումն ընդգրկում է բազմաթիվ հարցեր, սակայն դրա հնարավորությունները սահմանափակ են և չեն համապատասխանում արտադրության և կապիտալի միջազգայնացման ձևավորված մակարդակին: Եական ազդեցություն միջազգային տնտեսական հարաբերությունների վրա թողնում է բազմակողմ կարգավորումը: Սակայն միջազետական գլոբալ կարգավորումը (ԱՀԿ, ԱՄՀ) մինչև այսօր շոշափել է միջազգային տնտեսական հարաբերությունների որևէ մեկ կողմը՝ արտաքին առևտուր, արժուաբային հարաբերություններ: Այդպիսի կարգավորման անհամապատասխանությունը կապիտալի և արտադրության միջազգայնացման նվաճված մակարդակին նույնպես ակնհայտ է: Ինարավոր չէ կարգավորել այդ հարաբերությունների որևէ տարրը, առանց առնչվելու մյուսների հետ, քանի որ միջազգային տնտեսական հարաբերությունները միասնական են: Ուստի տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիան (ՏՏՀ), այդ առումով, ունի ավելի ակնհայտ առավելություններ, քանի որ ինտեգրվում են ինմանախնդիրների ընդհանրություններ ունեցող երկրները, որոնք ընթանում են տնտեսական փոխհարաբերությունների աստիճանական կարգավորման ուղղով՝ հետզետև ընդլայնելով տնտեսական փոխհամաձայնեցված գործողությունների շրջանակները:

Տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորումներն ունեն երկակի բնույթ: Մի կողմից դրանք եղել և մնում են գլոբալացման յուրօինակ մարմնավորում՝ իրենց ակտիվ սուբյեկտներով, որոնք հսկայական էներգենտ էֆեկտ են հաղորդում տարրեր պետությունների և ՎԱԿ-երի նախաձեռնություններին, մյուս կողմից՝ ստանձնում են միջազգային տնտեսական կազմակերպությունների «ընդիմախոսների» դերը և փորձում են ստեղծել գլոբալացման ներփակ գոտիներ: Տարածաշրջանային տնտեսական ինտեգրա-

ցիայի առանձնահատկությունը դրա ունիվերսալության, համալիրության և բազմակողմանիության մեջ է:

Այսօր, XXI-րդ դարի շեմին, դժվար է պատասխանել այն հարցերին, թե ինչը ավելի նախընտրելի կլիմի՝ գլոբալացու՞նը, թե՝ տարածաշրջայնացումը, ինչպիսի՝ ինտեգրացիան կունենա ավելի ընդունելի և տարածված բնույթ՝ բաց տարածաշրջանայի՞ն, թե՝ կոորդինատիվը: Անցած՝ XX-րդ դարը այս հարցերին միանշանակ պատասխան չի տվել, սակայն վերջին տասնամյակը որոշակի պատկերացումներ է տախս ապագա համաշխարհային տնտեսության կառուցվածքի հիմնական միտումների վերաբերյալ: Այնուամենայնիվ, միջազգային տնտեսագիտության տեսաբանների բողած հարուստ տնտեսագիտական աշխատություններում առաջ քաշված տեսական հիմնադրույթների վերլուծությունը թույլ է տալիս որոշակիություն մտցնել ինտեգրման գործընթացների եռթյան, դրսևորման մակարդակների և իրականացման մեխանիզմների գնահատման մեջ:

Տնտեսական ինտեգրացիայի տեսական հիմնադրույթների հետազոտություններում առանձնանում են մի շարք ուղղություններ, որոնք նախնական տարրերում են ինտեգրման մեխանիզմների գնահատականներով: Անցյալ դարի 50-ական թթ. ֆրանսիացի տնտեսագետ Մ. Ալենը տնտեսական ինտեգրացիա ասելով հասկանում էր մի քանի երկրների մակարդակով միասնական շուկայի ստեղծումը, որտեղ գործում են ազատ մրցակցությունն ու շուկայական տարերային ուժեղություններ՝ անկախ պետությունների տնտեսական քաղաքականությունից և գոյություն ունեցող ազգային և միջազգային օրենսդրական ակտերից: Նրա կարծիքով, պետության միջանությունը միջազգային տնտեսական հարաբերություններին ծնունդ է մի շարք բացասական հետևանքներ, ամենից առաջ՝ արժեգորկում և գործազրկություն<sup>2</sup>:

Սակայն միջազգային տնտեսական ինտեգրման հաջողությունները, երկրների ակտիվ մասնակցությամբ, միջազետական և տարածաշրջանային համագործակցության խորացումն ապացուեցին վերոհիշյալ հեղինակի հայացքների սահմանափակությունը: Ավելի ուշ ամերիկացի տնտեսագետ Բ. Բալասան վերանայեց ինտեգրաց-

<sup>2</sup> Allen M., Guide for Investment in Developing Countries, London: Brown, Knight and Trusscott LTD., 1973, page 48.

ման հիմնախնդիրը երկրների տնտեսական ակտիվության բարձրացման հարթությունում: Նա ինտեգրացիան գնահատում է որպես «միջազետական տնտեսական կապերի զարգացում՝ տնտեսական և քաղաքական գործընթացների փոխհամաձայնեցման էվոլյուցիայի միջոցով»<sup>3</sup>:

1960-ական թթ. կեսերին ամերիկացի տնտեսագետ Ռ. Պոմֆրեթը ինտեգրացիան ներկայացրեց որպես ՎԱԿ-երի միջոցով իրականացվող գործընթաց և կարծում էր, թե միայն դրանք են ի վիճակի ապահովելու ինչպես տարածաշրջանային ինտեգրացիան, այնպես էլ երկրների հավասարակշռված զարգացումը: Այդ ուղղությունը միջազգային տնտեսագիտության մեջ բնութագրվեց որպես կորպորացիոնալիզմ<sup>4</sup>: Շվեդացի տնտեսագետ Գ. Մյուրդալը ինտեգրացիան դիտարկում է որպես ինտեգրվող երկրների տնտեսությունում ձևավորված կառուցվածքային գործընթաց, որի արդյունքում առաջանում է որակապես նոր ինտեգրացված տարածություն՝ ապելի կատարյալ տնտեսական օրգանիզմ, իսկ ինտեգրացիայի զարգացման ըստները, ըստ նրա, խոշոր ֆիրմաներն են, արդյունաբերական ձեռնարկություններն ու ճյուղերը: Մյուրդալը քննադատում է ինտեգրման գործընթացներում աշխատուժի և կապիտալի, ապրանքների շարժի համընդիմուր ազատականացումը և ենթադրում, որ «շուկայական ազատ մեխանիզմը կարող է հանգեցնել արտադրության անհամանական զարգացմանը և ստացվող շահույթների անհավասարաչափ բաշխմանը»<sup>5</sup>:

1970-ական թթ. Ս. Կուտաբերը և Բ. Մասելը հրատարակեցին հոդված «Նոր հայացք մաքսային միության տեսությանը» վերնագրով, որտեղ, անդրադարնալով միջազգային տնտեսական ինտեգրման գործընթացներին՝ որպես համագործակցության առաջադիմական ձևի, դրա խնդիրը համարեցին ինտեգրվող երկրների շահերի պաշտպանությունը սահմանափակումներից և, միաժամանակ, յուրաքանչյուր երկրի ազատության առավելագույն պահպանումը: Նրանք ձևակերպեցին նաև միջազգային ինտեգրացիայի զարգացման երկու հնարավոր տարրերակ:

<sup>3</sup> Balassa B., “The Theory of Economic Integration”, Homewood. Irvin, 1961, page 20.

<sup>4</sup> Pomfret R, “ The Economics of Regional Trading Arrangements”, New York: Oxford University Press, 1998, page 105.

<sup>5</sup> Myurdale G., “Development and Undevelopment”, Cairo, National Bank of Egypt, 1959 page 46-52.

1. ազգային ազատության կորստի ճանապարհով տնտեսական և քաղաքական նպատակների պարտադիր համաձայնեցում,
2. ինտեգրացիա՝ հնարավորինս բարձր ազգային ինքնավարության պահպանմանք:

Դաշվի առնելով, որ այս տարրերակներից և ոչ մեկը իրականում չի կարող տեղի ունենալ, նրանք առաջարկեցին ինտեգրվող կողմերի ներքին և արտաքին տնտեսական քաղաքականության օպտիմալ համաձայնեցման տարրերակը<sup>6</sup>:

Միջազգային տնտեսագիտության մեջ հետագայում տարածում ստացած տեսությունները, ինտեգրման գործընթացների իրականացման մեխանիզմի վերլուծությունը կառուցում էն ինտեգրվող երկրների կողմից մշակված տնտեսական քաղաքականության, սոցիալական օրենսդրության համաձայնեցման, վարկային, բյուջետային և գյուղատնտեսական քաղաքականության կոորդինացման, երրորդ երկրների հետ արտոնյալ առևտորային համաձայնագրերի շրջանակներում համագործակցության իրականցման, միջազետական կարգավորող մարմինների ձևավորման հիմքի վրա:

Տնտեսագետ տեսաբանները, համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցող ինտեգրման գործընթացների գործնական փորձի հիման վրա, անդրադարձել են նաև ինտեգրացիայի բնորոշմանն ու տնտեսական գնահատմանը: Այսպես, միջազգային տնտեսագիտության տեսաբաններ Զ. Վիները, Ռ. Լիպսին, Դ. Սալվատորը, Զ. Քանթրիկը, Ա. Կիրեևը և այլոք, միջազգային տնտեսական ինտեգրման գործընթացներին տրված իրենց գնահատականներում միասնական են այն խնդրում, որ տնտեսական ինտեգրումն ազգային տնտեսությունների միջև աշխատանքի միջազգային բաժանմանը պայմանավորված փոխազդեցության խորը և կայուն կապերն են<sup>7</sup>: Որոշ հեղինակներ դրանով ել ավարտում են միջազգային

<sup>6</sup> Cooper C.A., Massell B. “A New Look at Customs Unions Theory”, Economic Journal, 1965, page 745.

<sup>7</sup> Viner J., “The Customs Union Issue” New York The Carnegie Endowment for International Peace, 1953.

Lipsy R., “The Theory of Custom Unions” Economic Journal, September 1961, page 508.

Salvatore D., “International Economics” second edition, New York London, 1987, page 250.

Cantwell J., “The Reorganization of European Industries after Integration; Selected Evidence on the Role of Multinational Enterprise Activities” Journal of Common Market Studies, Vol. XXXI, N2, Dec. 1987, page 135. Киреев А., Международная экономика, часть 1, Москва, Международные отношения 1998, стр. 361.

տնտեսական ինտեգրման բնորոշումը: Ի. Սպիրիդոնովը ինտեգրացիան ներկայացնում է մոտավորապես նույն բնորոշմամբ, սակայն ավելացնում է, որ «տնտեսությունների փոխազդեցությունը իրականացվում է տարբեր մակարդակներում»<sup>8</sup>: Ավելի սպառհչ բնորոշում այդ երևույթին տվել է Յու. Շերբանինը. «Միջազգային տնտեսական ինտեգրացիան ազգային տնտեսությունների փոխանաձայնեցումն է, որը դրանց ներառում է միջազգային մասշտարով միասնական վերարտադրողական գործընթացների մեջ»<sup>9</sup>:

Միջազգային ինտեգրման գործընթացների նշված բնորոշումները երկրների համագործակցությունը բխեցնում են հատկապես աշխատանքի միջազգային բաժանումից: Այս միտումը որոշակիորեն ընդգծված է Ա. Դարբինյանի «Հայաստանը միջազգային տնտեսական ինտեգրացման գործընթացներում» մենագրությունում ներկայացված տեսական վերլուծություններում: Նա գրում է. «Տնտեսական ինտեգրացիան աշխատանքի միջազգային բաժանման վրա հիմնված տնտեսությունների միավորման գործընթաց է, որի զարգացումն ապահովվում է տնտեսությունների բացության և դրանց կառավարման համակարգերի ներդաշնակության միջոցով»<sup>10</sup>: Փաստորեն, կարելի է պնդել, որ միջազգային տնտեսական ինտեգրացիայի, ինչպես նաև միջազգային տնտեսական հարաբերությունների և երկրների համագործակցության հիմքում ընկած է աշխատանքի միջազգային բաժանումը: Աշխատանքի միջազգային բաժանումն այն հիմքն է, առանց որի ազգային տնտեսությունների տնտեսական կապերի խորացումն ու փոխկապվածությունը հնարավոր չէ պատկրացնել:

Երկրների միջև տնտեսական փոխարարերությունների էվոլյուցիան ցույց է տալիս, որ ապրանքների միջազգային շարժի ակտիվացումը խթան է հանդիսանում արտադրության միջազգայնացման գործընթացների զարգացման համար, որի արդյունքում ձևավորվում են միջազգային տնտեսական հարաբերությունների նոր ոլորտներ՝ կապիտալի և աշխատուժի, արժութային և ֆինանսական, տեխնոլոգիաների միջազգային փոխանցումների համաշ-

խարիային շուկաները: Թեև աշխատանքի միջազգային բաժանումը կարևոր դեր է խաղում միջազգային տնտեսական ինտեգրման գործընթացներում, այնուամենայնիվ, դրա դերը տնտեսական ինտեգրացիայի տարբեր մակարդակներում դրսևորվում է պատճառահետևանքային կապերի հակադարձ ուղղություններով: Սա թույլ է տալիս տարածաշենք միջազգային տնտեսական ինտեգրացիայի տարբեր մակարդակները, որոնց միասնականացումը տնտեսագիտական գրականության մեջ հաճախ տեղիք է տալիս ոչ օբյեկտիվ գնահատականների:

Միջազգային տնտեսական ինտեգրացիան իրականացվում է բազմակողմ հիմքի վրա՝ գլոբալ (համընդգրկուն) և տարածաշրջանային մակարդակներով: Գլոբալ ինտեգրացիայի բնորոշ գիծն այն է, որ երկրների միջև տնտեսական կապերի ձևավորումը սահմաններ չի ճանաչում, այն բափանցում է յուրաքանչյուր երկիր՝ կախված դրանց համագործակցության համար առկա համեմատական առավելություններից: Երկրների համեմատական առավելություններն ել այն իրական հիմքն են, որոնց վրա ձևավորվում և զարգանում են աշխատանքի միջազգային բաժանման գործընթացները: Աշխատանքի միջազգային բաժանումը դիմանիկ է և իր վրա կրում է գիտատեխնիկական առաջընթացի ազդեցությունը: Սրանով ավարտվում է միջազգային տնտեսական ինտեգրացիայի գլոբալ մակարդակի «զարգացումը»:

Միաձուլման, սերտաճման առավել գործնական, արդյունավետ զարգացման անսահմանափակ հնարավորություններ է ընձեռում տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիան: Տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիան անդամ երկրների համագործակցության աստիճանական խորացման գործընթաց է, որն սկսվում է երկրների միջև ապրանքների և ծառայությունների շարժի ազատականացումից, ընթանում արտադրության գործոնների բացարձակ մոբիլության, արժույթավարկային, բյուջետային և հարկային միասնական համակարգի ձևավորման, գյուղատնտեսական և արտաքին տնտեսական փոխարամածայնեցված քաղաքականության իրականացման ուղիղությունը: Երկրների տարածաշրջանային ինտեգրման մասին որոշումը բխում է մի շարք հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությունից, հիմնախնդիրներ, որոնք չեն կարող լուծվել երկրների ջանքերի տարալուծման և աշխատանքի միջազգային բաժանման գոյություն ունեցող համակարգի պայմաններում:

<sup>8</sup> Спирidonов И., Мировая экономика, Москва, ИНФРА, 1999, стр. 66.

<sup>9</sup> Щербанин Ю. и др., Международные экономические отношения, Интеграция, М., ЮНИТИ, 1997, стр.16.

<sup>10</sup> Դարբինյան Ա. Վ., Հայաստանը միջազգային տնտեսական ինտեգրացման գործընթացներում, Երևան, Պետական ծառայություն, 2000, էջ 23:

Ինտեգրվող երկրների համար համագործակցության շարժիչ ուժը յուրաքանչյուր երկրի արդյունավետ զարգացման անհրաժեշտության և այդ նպատակի իրականացումը կասեցնող տնտեսական սահմանափակ ռեսուլսների միջև անհամապատասխանությունն է: Ինտեգրվող երկրների միջև համագործակցությունն ընթանում է աստիճանաբար, քայլ առ քայլ՝ արտադրության գործոնների ազատ տեղաշարժի համար պայմանների ձևավորման ուղղով: Սկզբում ձևավորվում են արտոնյալ առևտության համաձայնագրերը, որոնք նպաստավոր, փոխահավետ պայմաններ են ստեղծում համագործակցող երկրների ապրանքային հոսքերի ակտիվացման համար, հետո միայն միասնական տնտեսական տարածքի ձևավորումը թույլ է տալիս զարգացնել աշխատանքի տարածաշրջանային բաժանումը: Այսպիսով, ի տարբերություն գլոբալ տնտեսական ինտեգրացիայի, որը ձևավորվում և զարգանում է աշխատանքի միջազգային բաժանման հիմն վրա, տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիան նպաստում է աշխատանքի միջազգային բաժանման խորացմանը: Այլ խորքով՝ աշխատանքի բաժանումը SSI դեպքում ֆունկցիա է վերջինից: Անշուշտ աշխատանքի տարածաշրջանային բաժանումը աշխատանքի միջազգային բաժանմանը չի հակադրվում. դրանք միասնական են, տարբեր են միայն դրանց ընդգրկման սահմանները: Աշխատանքի տարածքային բաժանման առանձնահատկությունն այն է, որ դա հաճախ հանգեցնում է ինտեգրվող երկրների որոշակի արտադրությունների միաձուլմանը, որը մասշտաբի էֆեկտի շնորհիվ թույլ է տալիս ինտեգրացված շուկայում արտադրված ապրանքը դարձնել ավելի մրցունակ համաշխարհային շուկայական հատված (սեգմենտ):

Աշխատանքի տարածքային բաժանումը, ըստ ինտեգրացիայի տեսությունների, հատկապես մաքսային միության առումով, մեկնաբանվում է որպես ապրանքային հոսքերի ձևավորման, առևտության բազմազանեցման (ոիվերսիֆիկացման) գործնթաց: Այս մոտեցման տրամաբանությունը ինտեգրվող երկրների մասնագիտացման շնորհիվ ավելի թանկ ապրանքների արտադրությունից հրաժարումն ու, համեմատական առավելությունների հիմն վրա, յուրաքանչյուր համագործակցող երկրի կողմից ավելի էժան ապրանքների արտադրությունն է: Դա հետագայում հնարավորություն է տալիս հրաժարվելու նաև երրորդ երկրներից ներմուծվող ապրանքներից՝ ներմուծմանը փոխարինող ապրանքային հոսքերի ձևավոր-

ման շնորհիվ: Ի վերջո, ինտեգրվող երկրներում ձևավորվում է ապրանքների բազմազանեցված շուկա: Տարածաշրջանային ինտեգրման արդյունքները ցուցադրում են իրենց առավելություններն ու նպաստում ինտեգրման գործնթացների ծավալմանը համաշխարհային տնտեսության այլ տարածքներում:

Միջազգային տնտեսական ինտեգրացիայի այս երկու մակարդակների սահմանագատումը թույլ է տալիս որոշակիություն մտցնել ինտեգրման գործնթացների տեսական մեկնաբանությունների մեջ: Դրանց մի մասը ուղղակիորեն բնորոշում է գլոբալ տնտեսական ինտեգրացիան (այդ թվում և վերևում ներկայացված հեղինակները), մյուսները սահմանում են տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիան: Տեսակետների խառնաշփորձ առաջանում է ինտեգրացիայի նշանական մակարդակների ոչ հստակ սահմանագատումից: Այդ առումով, Զ. Պինդերը, Ֆ. Ռուսմանը, Էլ-Ագրան, Ս. Բեւերիին, Կ. Պրադիպը և ուրիշներ, տնտեսական ինտեգրացիան ներկայացնելով որպես բոլոր ապրանքների և արտադրության գործոնների տարբեր տարածաշրջաններում գների հավասարեցման, ազգային տնտեսությունների միջև ավելի բաց համակարգի ձևավորման, մասնակից պետությունների միջև առևտությունների միջև առաջարկելու վերացման և կոորդինացման տարբերի հաստատման գործնթացներ, նկատի ունեն հենց տարածաշրջանային ինտեգրացիան<sup>11</sup>:

Մեկ այլ տնտեսագետ՝ Յու. Շիշկովը, տալով տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիայի գնահատականը, գրում է. «Երկրների արտադրատեխնիկական, տնտեսական, իրավաբարաքական փոխականական շնորհիվ գործնթացների փոխականացման և սերտաճանանան: Դրա արդյունքում ձևավորվում են տնտեսական օրգանիզմներ՝ տարածաշրջանային ինտեգրման համալիրները»<sup>12</sup>:

<sup>11</sup> Պրադիպիան Ա. Վ., Հայաստանը միջազգային տնտեսական ինտեգրացման գործնթացներում, Երևան, Պետական ծառայություն, 2000, էջ 13-15:

Pradip K. Ghosh, Gamani C., Economic Integration and Third World Development, Greenwood Press, 1984, p.48.

Beverly M. Carl, Economic Integration Among Developing Nations: Law and Policy, 1986, p. 207.

<sup>12</sup> Шишков Ю.В., Формирование интеграционного комплекса в Западной Европе. Тенденции и противоречия, Москва, 1973, стр. 31.

Ի տարբերություն համաշխարհային ինտեգրման, տարածաշրջանային ինտեգրման գործընթացների հնարավորություններն ավելի լայն են ու դիմանիկ: Կա այն կարծիքը, որ տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիան կարող է վերաճել քաղաքական միության: Սակայն դա դեռևս ապագա զարգացումների խնդիր է, մինչդեռ այսօր աշխարհում միայն Եվրոպական միությունն է ընթանում քաղաքական այսան (միավորում) ձևավորելու ուղիղով:

Այսպիսով, տարածաշրջանային ինտեգրացիոն խմբավորումների նպատակը համագործակցության անդամ երկրների համար առավել բարենպաստ տնտեսական պայմանների ձևավորումն է, մաքսատուրքերի վերացման ճանապարհով ազգային ապրանքների գների նվազեցումը, որը, վերջին հաշվով, հանգեցնում է բնակչության կենսամակարդակի բարձրացման: Եթե գլոբալ տնտեսական ինտեգրացիան միասնականացնում է համաշխարհային տնտեսական կառուցվածքը, ապա տարածաշրջանայինը հանգեցնում է դրա՝ առանձին տնտեսական խմբավորումների մասնատմանը: Ներկայումս աշխարհում հաշվում են մոտ 60 տարածաշրջանային տնտեսական խմբավորումներ, որոնց թիվը գնալով մեծանում է: Պրիստոնի համալսարանի պրոֆեսոր Ֆ. Մաքհլութը<sup>13</sup> համակարգել և ներկայացրել է SSԻ (տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիա) ռազմավարությունը հետևյալ կերպ.

- ազատ առևտիք գոտի\***, եթե մասնակից երկրները վերացնում են բոլոր մաքսային արգելվները՝ պահպանելով առանձին-առանձին մաքսային քաղաքականություն իրականացնելու իրավունքը,
- մաքսային միություն**, եթե համաձայնություն է ձեռք բերվում նաև երրորդ երկրների նկատմամբ միասնական մաքսատուրքեր կիրառելու մասին,
- ընդհանուր շուկա**, որի շրջանակներում ազատականացվում է արտադրության մյուս գործոնների՝ կապիտալի, բնակչության և տեխնոլոգիաների տեղաշարժը,
- տնտեսական միություն**, որտեղ համաձայնեցվում է տնտեսական կյանքի այլ ոլորտների գործունեությունը,

<sup>13</sup> Machlup F., A History of Thought on Economic Integration, London, Macmillan, 1979, page 40.

\* Սա տարբերվում է ազատ տնտեսական գոտիների շրջանակներում ձևավորված գոտիներից:

5. **լրիվ ինտեգրացիա**, որի դեպքում տեղի է ունենում արժութային, ֆիսկալ, վարկային, կոնյունկտուրային քաղաքականությունների միասնականացում (ինտեգրում):

Թեև տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիան պարունակում է հովանավորչության տարրեր, այնուամենայնիվ, համաշխարհային տնտեսության վրա զրդեցությունը դրական է, եթե երկրները, ինտեգրվելուց հետո, երրորդ երկրների նկատմամբ իրնեց արտաքին առևտրային քաղաքականությունը չեն խստացնում:

SSԻ տնտեսական գնահատականները, տնտեսաքաղաքական համակարգի ձևավորման առումով հաճախ անդրադարձում են նաև նախկին ԽՍՀՄ շրջանակներում ինտեգրացիայի փորձի վերլուծությանը: Սակայն 1980-90թթ. սոցիալիստական համակարգի երկրներում տեղի ունեցած բարեփոխումները (անցումը շուկայական հարաբերություններին) փլուզեցին այդ քաղաքական համակարգը և մինչ այդ գոյություն ունեցող պատերազմներն այն մեխանիզմների մասին, որոնք ապահովում էին տարածաշրջանային տնտեսական խմբավորումների ձևավորումը: Դարցականի տակ դրվեց նաև տնտեսական ինտեգրացիայի վերը նշված հնգաստիճան մոդելի ռազմավարական դասակարգումը, որի մեջ յուրաքանչյուր աստիճան ընկալվում է որպես հաջորդ քայլի տրամարանական նախադրյալ, իսկ տնտեսական ինտեգրացիան դիտարկվում է որպես աստիճանական շարժ դեպի քաղաքական միություն: Սակայն այս դասակարգմանը համապատասխանում է միայն Եվրոպիությունը, որն ընթացել է համագործակցության հետևողական զարգացման ուղիղով: 1990-ական թթ. ձևավորված բոլոր ինտեգրացիոն խմբավորումները փորձում են ձևավորել ազատ առևտրային գոտիներ, մաքսային, տնտեսական միություններ, բայց դեռևս անհաջող: Դրա հիմնական պատճառը պետք է, այնուամենայնիվ, փնտրել անդամ երկրների տնտեսական զարգացման տարրեր մակարդակների և ինտեգրման նպատակի ոչ հստակ կողմնորոշման մեջ: Ննգաստիճան դասակարգման ակնհայտ «տապալումը» աշխարհի մնացած տարածաշրջաններում միաժամանակ նշանակում է, որ տարբեր ժամանակներում առաջ քաշված մի շարք տեսություններ գործնականում կիրառելի չեն: Խոսքը հատկապես վերա-

բերում է «մաքսային միությունների տեսության»<sup>14</sup>, «օպտիմալ արժութային գոտիների տեսության» և «ֆիսկալ ֆեդերալիզմի»<sup>15</sup> մոդելներին, որոնք անտեսում են ինտեգրման գործընթացների աստիճանականությունը՝ առաջ քաշելով տարածաշրջանային նշանակության առանձնահատուկ նախագծերի ֆինանսավորման և վերպետական ինստիտուտների ձևավորման միջոցով տնտեսական համագործակցության զարգացման անհրաժեշտության հարցը:

Եվրոպական տնտեսական ինտեգրացիայի փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ ինտեգրացիայի տնտեսական նախադրյալների հետ միաժամանակ կարևորվում է նաև քաղաքական նախադրյալների դերը ինչպես ազգային, այնպես էլ վերպետական մակարդակով: Դա է պատճառը, որ 1990-ական թթ. ավելի լայն տարածում ստացան քաղաքական ինտեգրման այնպիսի հարցադրումներ, որոնք հենվում էին հայրենիքների «Եվրոպա», «Եվրոպայի միացյալ նահանգներ», կարգախոսների վրա: Այդ կարգախոսները ներկայում քննարկվում են ինչպես տնտեսագետների, այսպես էլ քաղաքագետների կողմից, և բանավեճի արդյունքում ձևավորվել է բավականին հետաքրքիր մի նոտեցում: Այդ նոտեցման համաձայն, տարածաշրջանային խմբավորումների ձևավորումը դիտարկվում է որպես երկու խումբ սուբյեկտների փոխազդեցության արդյունք: Մի կողմից դրանք տարածաշրջանային քաղաքականության միջոցառումների նկատմամբ պահանջարկ ներկայացնող սուբյեկտներն են, մյուս կողմից՝ քաղաքական որոշումներ ընդունող սուբյեկտները, որոնք ապահովում են նման միջոցառումների առաջարկը՝ ինտեգրման օգտին հանդես եկող խմբավորումների քաղաքական աջակցությունը ստանալու համար:

Այսպիսով, սահմանազատելով համաշխարհային և տարածաշրջանային ինտեգրման գործընթացները, կարելի է բնորոշել դրանք նաև ըստ էության:

**Դամաշխարհային տնտեսական ինտեգրումը միջազգային տնտեսական կազմակերպությունների գործունեության ընդայնման, ինչպես նաև ՎԱԿ-երի կողմից, համաշխարհային տնտե-**

**սության մենաշնորհեցման նպատակով, աշխատանքի միջազգային բաժանման խորացման գործընթաց է, որը հանգեցնում է երկրների տնտեսական կապերի փոխլրացմանն ու փոխկապվածությանը և համաշխարհային տնտեսության վերածնամը միասնական տնտեսական օրգանիզմի:**

**Տարածաշրջանային տնտեսական ինտեգրումը միջազնութական համաձայնությունների միջոցով ամրագրված, անդամ երկրների միջև տնտեսական կապերի խորացմանն ու ազատականացմանն ուղղված համագործակցություն է, որն իրականացվում է վերահսկվում և միջազնութական մարմինների կողմից՝ տարածաշրջանային մրցունակ շուկայի ձևավորման նպատակով:**

Կարևոր է նաև ընդգծել, որ միայն «միջազնութական համաձայնությունների միջոցով ամրագրված» սահմանափակումը նեղացնում է տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիայի հասկացությունը, քանի որ այդպիսի ինտեգրման կարող են հասնել երկու ոչ պետական ընկերություններ, ասոցիացիաներ կամ համագործակցող այլ միավորներ:

<sup>14</sup> Shanks M., Lambert J., The Common Market Today And Tomorrow, Praeger, 1962, page 56-69.

<sup>15</sup> Summers L., Regionalism and The World Trade System in Policy Implication of Trade and Currency Zones, a symposium, sponsored by The Federal Reserve Bank of Kansas City, 1991, page 95-102.

## 1.2. Տարածաշրջանային ինտեգրման նախադրյալները և դրանց դրսնորման առանձնահատկությունները

Եվրոպիության տնտեսական համագործակցության հաջողությունների գործնական արդյունքների գնահատումը միջազգային տնտեսագիտության տեսաբաններին թույլ է տվել ուսումնասիրել և ներկայացնել նախադրյալների այն ամբողջությունն, առանց որոնց ինտեգրումը չի տա շոշափելի փոխչափավետ արդյունքներ: Այդ նախադրյաները, որոնք համակարգվել և ներկայացվել են ռուս գիտնական Ա. Կիրեևի կողմից,<sup>16</sup> հանգում են հետևյալն:

1. ինտեգրվող երկրների տնտեսական զարգացման մակարդակների մերձությունն ու շուկայական հարաբերությունների հասունության աստիճանը,
2. ինտեգրվող երկրների աշխարհագրական մերձությունը, մի շարք դեպքերում (մաքսային միության) նաև ընդհանուր սահմանի առկայությունը և պատմականորեն ձևավորված տնտեսական կապերը,
3. երկրների առջև ծառացած տնտեսական և այլ հիմնախնդիրների ընդհանրությունը տնտեսական զարգացման և տնտեսական հարաբերությունների կարգավորման, ֆինանսավորման, քաղաքական համագործակցության և այլ ոլորտներում:

Ինտեգրման նախադրյալների շարքում նշվում են նաև, այսպես կոչված, ցուցադրման և «դոմինոյի էֆեկտները»: Ըստ ցուցադրման էֆեկտի, ինտեգրված երկրներում տեղ գտած տնտեսական հաջողությունները որոշակի հոգեբանական ազդեցություն են թողնում այդ գործընթացներից դուրս մնացած երկրների վրա, որոնք ձգուում են անդամագրվել այդ համաձայնագրերին: Նմանատիպ մեկնարանություն է տրվում «դոմինոյի էֆեկտին», ըստ որի՝ առւսայիտե (վերջնատեղային) երկրները կանգնում են որոշակի դժվարությունների առջև՝ կապված ինտեգրման խմբավորմանն անդամագրվող երկրների տնտեսական կապերի վերակողմնորոշման հետ և կորցնում են նախկին տնտեսական կապերը: Ուստի, չունենալով անգամ ցանկություն, շահագրգրվածություն են ցուցաբերում

մուտք գործելու այս կամ այն խմբավորման մեջ: Փաստորեն, կարելի է եզրակացնել, որ ցուցադրման և «դոմինոյի էֆեկտները» տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիայի նախադրյալները չեն: Այդեն ինտեգրված երկրների տնտեսական հաջողությունների վերագնահատման հիման վրա համագործակցության ցանկությունը կարող է կոչվել ինտեգրացիայի շարժադիր:

Նախ, ինտեգրվող երկրների տնտեսական մակարդակների մերձության ու շուկայական հասունության աստիճանը որպես տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիայի նախադրյալ նշելս անհրաժեշտ է շեշտը դնել երկրների տնտեսական զարգացման **բարձր** մակարդակի վրա: Զարգացող երկրների տնտեսական ինտեգրացիայի արդի ծեռքբերումների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ **ինտեգրման գործընթացներին պատրաստ են զարգացած, այլ ոչ թե զարգացող երկրները**: Այդ առօնությունը չի կազմում նաև Հարավարևելյան Ասիայի նոր ինդուստրիալ երկրների համագործակցությունը (ASEAN): ASEAN-ը ձևավորվել է 1967թ. և միայն 9 տարի անց սկսել է մշակել տնտեսական համագործակցության պլան, իսկ 1992թ. կայացրել է որոշում մինչև 2003թ. ձևավորել ազատ առևտուրային գոտի՝ փոխադարձ առևտուրի ազատականացման նպատակով: Քանի որ ինտեգրվող երկրները միմյանց նկատմամբ չեն կրում իրավական պարտավորություններ, և, որ անենակարևոր է, անդամ երկրները չունեն տնտեսական զարգացման հավասար բարձր մակարդակ (քնակչության մեկ շնչին բաժին ընկնող եկամուտները Սինգապուրում կազմում են 22500 դոլար, Թաիլանդում՝ 8400 դոլար, Մալայզիայում՝ 700 դոլար),<sup>17</sup> ուստի ինտեգրացիայի բացասական ելքը անսպասելի չել: Դա է պատճառը, որ ազատ առևտուրային գոտու ձևավորման հարցը ASEAN երկրները երկարաձգեցին մինչև 2008թ.:<sup>18</sup>

Արտահանման հումքային ուղղվածություն ունեցող երկրների ինտեգրումը ազգային տնտեսությունների փոխլրացման բավարար հիմքեր չունի: Ժամանակակից գիտատեխնիկական առաջադիմության պայմաններում արտահանման կառուցվածքում պատրաստի

<sup>16</sup> Կիրեև Ա., Международная экономика, часть 1, Москва, Международные отношения, 1998, стр. 362.

<sup>17</sup> Հաշվարկները կատարվել են Հյուրալ ՄԷնМО, N9, 2001, էջ 90-94 տվյալների հիման վրա:

<sup>18</sup> “The Framework Agreement on ASEAN Investment Area” Handbook on investment Agreements in ASEAN; Jakarta. The ASEAN Secretariat, 1998.

ապրանքների բաժնեմասի ավելացումն է միայն պայմանավորում ազգային շուկաների փոխլրացման բարձր մակարդակը, որն էլ, իր հերթին, հանգեցնում է բնակչության կենսամակարդակների (բնակչության մեկ շնչին բաժին ընկնող 7ՆԱ) և երկրների տեխնոլոգիական զարգացման մակարդակների փոխապվածությանը: **Որքան բնակչության կենսամակարդակը բարձր է, այնքան ավելի մեծ է պահանջարկը բարձրորակ ապրանքների մկատմամբ:** Ուստի միայն զարգացած երկրների համագործակցությունը կարող է նպաստել բարձրորակ ապրանքների փոխադարձ առևտությանը: Պարզ է, որ «շուկայական հասունության աստիճանը» ճշգրտման կարիք ունի, և տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիայի նախադրյաներից առաջինը կարելի է վերաձևակերպել այսպես. **ինտեգրվող երկրները պետք է ունենան տնտեսական զարգացման բարձր մակարդակ և հասուն շուկայական հարաբերություններ:**

Ինչ վերաբերում է ինտեգրվող երկրների աշխարհագրական մերձությանը, ապա դա կարելի է համարել ՏՏԻ ելակետային նախադրյալը, առանց որի ազատ առևտության գոտիներ ձևավորելու մասին որոշումն իրականացնել հնարավոր չել: Երկրների տնտեսական ինտեգրման հետագա ռազմավարական քայլերը կառուցվում են ազատ առևտության գոտու հաջողությունների հիմքի վրա:

Եվ, վերջապես, երկրների առջև ծառացած տնտեսական և այլ բնույթի հիմնախնդիրների ընդհանրությունը, որոշակի նշանակություն է ձեռք բերում, երբ ինտեգրման գործընթացները թևակոխում են ընդհանուր շուկայի փուլ՝ անցնելով ազատ առևտության գոտիների և մաքսային միության ձևավորման ճանապարհը: Եթե ինտեգրվող երկրները դրանով դադարեցնում են ինտեգրման գործընթացները, ապա տնտեսական այլ հիմնախնդիրների ընդհանրության հարցը չի ծագում (միասնական արժութային, հարկային, ֆինանսավականության իրականացում):

Տնտեսական ինտեգրացիայի համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ համագործակցության իրական արդյունքների ստացումը կախված է այնպիսի գործոններից, ինչպիսիք են՝ ինտեգրվող երկրների կամքն ու վճռականությունը (Նորվեգիայում բնակչությունը հանրաքվեով մերժեց Եվրոպիությանն անդամակցելու առաջարկը) և քաղաքական կողմնորոշումը (Շվեյցարիա): Ինտեգրվող երկրների տնտեսական հաջողությունների հիմքում ընկած են նաև ինտեգրացիայի, այսպես կոչված, թաքնված գործոնները՝ նշակու-

թային և կրոնական ընդհանրությունները: ՏՏԻ գործընթացներում վերջիններիս կարելի է վերագրել ոչ պակաս կարևոր դեր, իամենայնդեպս, այսօր, այն տարածաշրջաններում, որտեղ անտեսված է նշված գործոնների դերը, ինտեգրման յուրաքանչյուր փորձ մատնվում է անհաջողության (ԱՊՀ, ՍԾՏՀ): Պակաս կարևոր չեն նաև ինտեգրման ցանկություն հայտնող երկրների թիվը՝ համաձայնագրի ստորագրման սկզբանական փուլում: Քանի որ տնտեսական զարգացման բարձր մակարդակը միանգամից ձեռք չի բերվում, ուստի ինտեգրացիայի նախընտրելի ուղին երկրում (լավագույն դեպքում եռակողմ) առևտության արտոնյալ պայմանագրերի կնքումից, երկրների տնտեսական զարգացմանը, արտաքին առևտության անվանացանկի և կառուցվածքի ընդլայնմանը գրագահեր, աստիճանական անցումն է բազմակողմ ինտեգրմանը:

Միջազգային տնտեսագիտության մեջ տնտեսության բացությունը, որպես տարածաշրջանային տնտեսական ինտեգրման կարևորագույն նախադրյալ, ընդհանրապես չի քննարկվում: Սակայն տնտեսության բացությունը, որն ուղղակիորեն պայմանավորված է երկրների արտահանման խթանման քաղաքականությանը և պետության արտաքին տնտեսական կողմորոշմանը, չի կարող անմիջական ազդեցություն չունենալ երկրների տնտեսական ինտեգրման նախաձեռնության և դրա հետագա հաջողությունների վրա: Տնտեսության բացությունը արտացոլում է ոչ միայն երկրի տնտեսական իրավիճակն ու դրա ներդաշնակ զարգացումը, այլև թույլ է տալիս գնահատել համաշխարհային տնտեսության մեջ թափանցելու մասշտաբներն ու համագործակցության փոխլրացման հնարավորությունները: Ուստի տնտեսության բացությունը կարելի է ներկայացնել որպես ՏՏԻ նախադրյալ, քանի որ դա նաև երկրների տնտեսական զարգացման մակարդակի չափանիշն է: Ավելին, տնտեսության բացության մակարդակի գնահատումը թույլ կտա ինտեգրման մտադրություն ունեցող երկրներին սկզբանապես կողմնորոշվել, թե ինչպիսին կլինի համագործակցության ապագան:

Տնտեսության բացությունը տնտեսագիտական գրականության մեջ բնորոշվում է որպես «այնպիսի տնտեսություն, որտեղ տնտեսական հարաբերությունների բոլոր սուբյեկտները կարող են, առանց սահմանափակումների, ապրանքների և կապիտալի համաշխարհային շուկայում իրականացնել գործառությներ», կամ՝ «բաց տնտեսությունը արտաքին առևտությունը մենաշնորհի վերացումն է

(մի շարք դեպքերում պետական վերահսկողության պահպանման պայմանով), աշխատանքի միջազգային բաժանման մեջ համեմատական առավելությունների արդյունավետ օգտագործումը, համատեղ ձեռնարկատիրության տարրեր ձևերի ակտիվ օգտագործումը, ազատ ձեռնարկատիրական գոտիների կազմակերպումը»: Տնտեսության բացության մեկ այլ սահմանում է տրված «ժամանակակից տնտեսագիտական բառարանում», որտեղ տնտեսության բացությունը ներկայացվել է որպես այնպիսի իրավիճակ, որի դեպքում երկրն ինարավորություն ունի ոչ միայն ազատ արտահանելու իրապանքները, այլև բաց են երկրի սահմանները օտարերկրյա կայտալի և ապրանքների առջև: Ամերիկացի տնտեսագետներ Զ. Սաքը և է. Ուլրոները տնտեսության բացության չափանիշների թվում կարևորում են արտահանման և ներմուծման ոչ բարձր մաքսային սահմանափակումները, ազգային արժույթի խելանիտ փոխարկելիությունը, բարենպաստ ներդրումային մթնոլորտը և տնտեսության կառուցվածքում բազիսային ճյուղերի տեսակարար կշիռը:<sup>19</sup> Միանգամայն ընդունելի է Վ. Ֆոնիչևի պնդումն այն մասին, որ «տնտեսության բացության աստիճանը կախված է նաև ազգային տնտեսության ճյուղային կառուցվածքից: Որքան մեծ է բազիսային ճյուղերի տեսակարար կշիռը (նետալուրգիա, եներգետիկա և այլն), այնքան փոքր է աշխատանքի միջազգային բաժանման մեջ երկրի մասնակցության աստիճանը, այսինքն՝ դրա բացության աստիճանը: Եվ հակառակը, վերամշակող արդյունաբերությունը՝ հատկապես դրա այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են՝ նեքենաշխնությունը, էլեկտրոնիկան, քիմիան և այլն, ենթարում են ավելի խորը առարկայական մասնագիտացում, որի շնորհիվ տեղի է ունենում երկրների տեխնոլոգիական փոխվարացման աճ և, համապատասխանաբար, տնտեսության բացության բնույթի աճ».<sup>20</sup>

Տնտեսության բացությունը բնութագրող վերոհիշյալ մոտեցումները ոչ թե առանձին-առանձին, այլ բոլորը միասին են արտահայտում միջազգային տնտեսագիտության տեսանկյունից այդ կարևորագույն կատեգորիայի բովանդակությունը: Տնտեսության բացությունը որոշակի երկրում ձևավորված այն քաղաքական, տնտեսական, իրավաօրենսդրական, բարոյահոգեբանական միջավայրն է,

<sup>19</sup> Авдокушин Е.Ф., Международные экономические отношения, Москва, 1999, стр. 19.

<sup>20</sup> Фомичев В.И., Международная торговля, Учебник, Москва, ИНФРА-М, 2000, стр.43.

որը նպաստավոր է ոչ միայն համաշխարհային տնտեսական կապերի ակտիվացումից փոխադարձ օգուտներ քաղելու, այլ նաև տարածաշրջանային ինտեգրման գործընթացների զարգացման առումով:

Տնտեսագիտական գրականության մեջ առաջարկվում են երկրների տնտեսության բացության մակարդակը բնութագրող մի շարք ցուցանիշներ, որոնք միահամանակ նաև արտացոլում են աշխատանքի միջազգային բաժանմանը երկրների մասնակցության աստիճանը:<sup>21</sup> Սակայն դրանք (արտահանման բաժնեմաս, ներմուծման բաժնեմաս, արտաքին առևտորային շրջանառության բաժնեմաս) թույլ չեն տալիս իրականում պատկերացում կազմել երկրների տնտեսական զարգացման մակարդակների մասին, հատկապես ինտեգրվող երկրների տնտեսական զարգացման մակարդակները գնահատելու տեսանկյունից: Նշված ցուցանիշները չեն արտացոլում արտաքին առևտորային կապերին մասնակցության տեխնոլոգիատարությունը, որն անվերապահորեն տնտեսական զարգացման բարձր մակարդակի վկայությունն է:

Միջազգային տնտեսագիտության մեջ, սկսած 1990-ական թթ., շահարկվում է այն մոտեցումը, որ տնտեսության բացության բարձր մակարդակ ունեցող երկրներում արտաքին առևտորային շրջանառության բաժնեմասը գերազանցում է 45%-ը, իսկ եթե փոքր է 27%-ից, ապա տնտեսության բացության մակարդակը գնահատվում է ցածը:<sup>22</sup> Արտաքին առևտորային շրջանառության բաժնեմասի ցուցանիշը, ըստ առանձին երկրների, հաշվարկվում է որպես արտահանման և ներմուծման գումարի հարաբերություն ՀՆԱ-ի նկատմանը: Սա կարելի է համարել տնտեսության բացությունը բնութագրող ոչ լիարժեք ցուցանիշ, քանի որ երկրի արտահանումն արտացոլում է մնացած աշխարհի հետ տնտեսական կապերի որակն ու քանակը, իսկ ներմուծումը աշխարհի մնացած երկրներից տվյալ երկիր մուտքը գործող ապրանքների քանակական և որակական բնութագրիչն է: Եվ այդ երկու ցուցանիշների գումարի հարաբերությունը արտահանող երկրի ՀՆԱ-ին, պատկերացում կարող է տալ միայն աշխատանքի միջազգային բաժանմանը մասնակցության

<sup>21</sup> Акопова Е. и др., Мировая экономика и международные экономические отношения, изд. "Феникс", Ростов-на-Дону, 1997, стр. 30.

<sup>22</sup> Авдокушин Е.Ф., Международные экономические отношения, Москва, 1999, стр. 18-19.

малкапиталын կаң, լավագույն դեպօւմ, երկրի ապրանքային ապահովածության մասին:

Տնտեսության բացությունը բնութագրող քիչ թե շատ հիմնավոր ցուցանիշ է արտահանման տեսակարար կշիռը (ՕԵ): Այս ցուցանիշը կարելի է համարել առավել օբյեկտիվ թեկուզ և այն պատճառվ, որ արտահայտում է տվյալ երկրի արտահանման տեսակարար կշիռը համաշխարհային արտահանման մեջ, այսինքն՝ ցույց է տալիս երկրի և համաշխարհային տնտեսության փոխապահության աստիճանը: Դա հաշվարկվում է որպես առանձին երկրի և համաշխարհային արտահանման հարաբերությունը.<sup>23</sup>

ՕԵ=ԵԿ / ԵՎ \*100% , որտեղ՝

ՕԵ - տնտեսության բացության մակարդակը բնութագրող արտահանման տեսակարար կշիռի ցուցանիշն է,

ԵԿ - երկրի արտահանման ծավալն է,

ԵՎ - համաշխարհային արտահանման ծավալն է:

Որքան ավելի մեծ է երկրի արտահանման տեսակարար կշիռը համաշխարհային արտահանման մեջ, այնքան այդ երկրի մասնագիտացման նակարդակը բարձր է, և մեծ է այդ երկրի արտադրանքի նկատմամբ համաշխարհային պահանջարկը: Սակայն ՏՏԻ տեսանկյունից, այս ցուցանիշը բավարար պատկերացում չի կարող տալ այն մասին, թե ինչպիսին է արտահանման կառուցվածքը, ինչ հաջողություններ կունենան երկրներն այլ երկրների հետ համագործակցությունից: Յարևան երկրների տնտեսական ինտեգրացիայի համար կարևոր է, թե որքանով են զարգացած այդ երկրների ազգային շուկաները, և ինչ կարող են առաջարկել դրանք համագործակից երկրներին: Յումբային ապրանքների կամ էներգետիկ ռեսուրսների առևտորի համեմատական առավելությունները ինտեգրման ցանկություն հայտնող երկրին կախման մեջ կրնեն մի կողմից տեխնոլոգիական առավելություններ ունեցող երկրից, մյուս կողմից էլ համաշխարհային շուկայում այդ ապրանքների գների տատանումներից: Եթե ինտեգրվող երկրների տնտեսական զարգացման նակարդակը բնութագրվում է հումքային և էներգետիկ կողմնորոշվածությամբ, ապա այդ համագործակցությունից սպասումները կլինեն շատ աննշան, որը, վերջին հաշվով, երկիրը կա-

րող է ծեռք բերել՝ օգտագործելով միջազգային առևտորի իր համեմատական առավելությունները: Ուստի փոխշահավետ համագործակցության անհրաժեշտ նախադրյալը երկրների արտահանման տեխնոլոգիական հագեցվածությունն է: Որքան երկրի արտահանման մեծ մեծ է պատրաստի, տեխնիկական առաջադիմության նյութական կրողների՝ ապրանքների տեսակարար կշիռն, այնքան ինտեգրման անհրաժեշտությունը հիմնավորված է: Արտահանման կառուցվածքում գիտատար, բարձր տեխնոլոգիական ապրանքների մեծ տեսակարար կշիռն արտացոլում է երկրների փոխլրացման, արտաքին շուկաներում ազգային արդյունքների նկատմամբ ձևավորված պահանջարկի բավարարման հնարավորությունը: Ուստի, որպես տնտեսության բացության մակարդակն արտացոլող ցուցանիշ, կարող է հանդես գալ, այսպես կոչված, արտահանման տեխնոլոգիատարության բաժնեմասը՝ ՕԵՏ, որը ցույց է տալիս երկրի համախառն արտահանման մեջ տեխնոլոգիատար ապրանքների տեսակարար կշիռը.

ՕԵՏ= ՔԵՏ / ՔԵ \* 100 % , որտեղ՝

ՕԵՏ - արտահանման տեխնոլոգիատարության բաժնեմասն է,

ՔԵՏ - երկրի արտահանման մեծ տեխնոլոգիատար ապրանքների ծավալն է,

ՔԵ - երկրի արտահանման ծավալն է:

Տնտեսագիտական գրականության մեջ առևտորի տեխնոլոգիատարությունը չափվում է «առանձին ճյուղերում ապրանքների արտադրության ու առևտորի ծավալում հետազոտությունների և մշակումների վրա կատարված ծախսումների բաժնեմասով»<sup>24</sup>: Ուստի տեխնոլոգիատարության ցուցանիշը հաշվարկվում է ըստ երկրների առանձին ճյուղերի և տարրեր ապրանքների, այնուհետև սահմանվում է միջին ցուցանիշը, որի համեմատությամբ էլ որոշվում է առևտորի տեխնոլոգիատարության բարձր կամ ցածր լինելը: Տեխնոլոգիատար է համարվում տիեզերական, գրասենյակային սարքավորումների, էլեկտրոնային հաշվիչ մեքենաների, էլեկտրատեխնիկական ապրանքների և դրանց մասերի, դեղորայքի, էլեկտրասարքավորումների և գործիքների առևտությը, որոնց առևտորի տեխնոլոգիատարության գործակիցը տատանվում է 4.4-22.7%-ի սահ-

<sup>23</sup> Акопова Е. и др., Мировая экономика и международные экономические отношения, 1997, стр. 30.

<sup>24</sup> Киреев А., Международная экономика, Москва, 1998, Международные отношения, часть 1, стр. 352.

մաններում: Ավտոմոբիլային, քիմիական արդյունաբերության, ինչպես նաև արդյունաբերական ապրանքների առևտուրն ունի տեխնոլոգիատարության միջին գործակից, որը կազմում է, համապատասխանաբար՝ 2.7, 2.3 և 1.8 %:

Առևտուրի տեխնոլոգիատարության դասակարգումն իրականացվում է նաև ՄԱԿ-ի Առևտուրի և զարգացման հանձնաժողովի կողմից (UNCTAD) և Ստանդարտ միջազգային առևտուրային դասակարգման (SITC) միջոցով, սակայն դրանք հիմնականում մոտավոր բնույթ ունեն:

Վերը նշված արտահանման տեխնոլոգիատարության ցուցանիշը տեխնոլոգիակեցված ճյուղերի կողմից արտադրված նոր կամ շուկայում արդեն հայտնի, սակայն տեխնոլոգիական կատարելագործված, վերջնական սպառման՝ անձնական և արտադրողական նշանակության ապրանքների արտահանման տեսակարար կշռու է երկրի արտահանման ընդհանուր ծավալում:

Երկրների խմբերի արտահանման բաժնենասերի հաշվարկը, ըստ առանձին ապրանքախմբերի, թույլ է տալիս գնահատել դրանց արտահանման տեխնոլոգիատարությունը (այսուսակ 1): Ինչպես ցույց են տալիս այսուսակում բերված տվյալները, համաշխարհային արտահանման մեջ զարգացած երկրների բաժինը, անցած 20 տարիների ընթացքում, եղել է բարձր, իսկ 1990թ. հասել է նույնիսկ 71.3%-ի, չնայած որ 1990-ական թթ. նի շարք զարգացած երկրներում սկիզբ առած տնտեսական ճգնաժամերը հանգեցրին այն բանին, որ 2000թ-ին այդ երկրների բաժինը համաշխարհային արտահանման մեջ կրծատվեց՝ հասնելով 1980թ. մակարդակին: Զարգացող երկրների արտահանման բաժնենասը ևս ունի աճի նիտում. դրանց բաժինը 1980թ. 23.3%-ից 2000թ. հասել է 32.2%-ի, ընդ որում, այդ աճը տեղի է ունեցել համաշխարհային արտահանման մեջ Արևելյան Եվրոպայի երկրների բաժնենասի նվազման հաշվին: Ըստ առանձին ապրանքախմբերի արտահանման կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ տասնմեկ ապրանքային խմբերից իննում զարգացած երկրների բաժինն անցնում է 50%-ից:

Զարգացող երկրներն առաջատար դիրքեր են գրավում էներգետիկ ռեսուրսների, տեքստիլ ապրանքների, բամբակյա գործվածքների և հագուստի արտահանման շուկաներում, այն դեպքում, եթե արդյունաբերական զարգացած երկրները համաշխարհային շուկայում հանդես են գալիս որպես արդյունաբերական, քիմիական ար-

տադրության ապրանքների, տրանսպորտային և մեքենաշինական սարքավորումների, տեղեկատվական տեխնոլոգիաների և մի շարք այլ տեխնոլոգիատար ապրանքների արտահանման առաջատարներ:

Տարածաշրջանային ինտեգրման խմբավորումների արտահանման տեխնոլոգիատարության բաժնեմասի հաշվարկը (այսուսակ 2) ցույց է տալիս, որ բացության ամենաբարձր մակարդակ ունեն ԵՄ երկրները՝ 36.8%, Լատինամերիկյան ազատ առևտուրային տարածքը (LAFTA)՝ 21.7% և Հյուսիսամերիկյան ազատ առևտուրի համագործակցությունը (NAFTA)՝ 18.8%: Մնացած ինտեգրման խմբավորումներում բացության մակարդակը չի հասնում նույնիսկ 10%-ի:

**Այսուսակ 1**  
Երկրների առանձին խմբերի արտահանման բաժնեմասն՝ ըստ ապրանքախմբերի (%)<sup>25</sup>

| Ապրանքների անվանումը                       | Երկրներ                   | 1980թ. | 1990թ. | 2000թ. |
|--|---------------------------|--------|--------|--------|
| Ընդհանուր                                  | Աշխարհ                    | 100    | 100    | 100    |
|  | Չարգացած երկրներ          | 62.9   | 71.3   | 63.8   |
|  | Չարգացող երկրներ          | 29.3   | 23.4   | 32.2   |
|  | OPEC                      | 15.3   | 5.2    | 5.4    |
|  | Այլ զարգացող երկրներ      | 14.0   | 18.2   | 26.8   |
| Առաջնային ապրանքներ, ներառյալ՝ վառելանյութ | Արևելյան Եվրոպայի երկրներ | 7.8    | 5.3    | 4.1    |
|  | Աշխարհ                    | 100    | 100    | 100    |
|  | Չարգացած երկրներ          | 39.0   | 50.5   | 46.8   |
|  | Չարգացող երկրներ          | 53.7   | 39.4   | 44.4   |
|  | OPEC                      | 34.6   | 17.4   | 19.8   |
| Արդյունաբերական ապրանքներ                  | Այլ զարգացող երկրներ      | 19.1   | 22.0   | 26.4   |
|  | Արևելյան Եվրոպայի երկրներ | 7.3    | 10.1   | 6.9    |
|  | Աշխարհ                    | 100    | 100    | 100    |
|  | Չարգացած երկրներ          | 82.3   | 78.8   | 67.7   |
|  | Չարգացող երկրներ          | 10.6   | 17.8   | 29.5   |
| Արդյունաբերական ապրանքներ                  | OPEC                      | 0.5    | 0.8    | 1.5    |
|  | Այլ զարգացող երկրներ      | 10.1   | 17.0   | 28.0   |
|  | Արևելյան Եվրոպայի երկրներ | 7.2    | 3.4    | 2.8    |
|  | Աշխարհ                    | 100    | 100    | 100    |

<sup>25</sup> McGuire G., Smith T., Restrictiveness of International Trade in Maritime, UNCTAD report, Tables 2-10, 2000.

|   |                             |      |      |      |
|---|-----------------------------|------|------|------|
| <b>Պարենային<br/>ապրանքներ</b>                      | Զարգացած երկրներ            | 64.4 | 67.7 | 64.7 |
|   | Զարգացող երկրներ            | 31.2 | 29.2 | 32.9 |
|   | OPEC                        | 1.9  | 1.9  | 3.0  |
|   | <b>Այլ զարգացող երկրներ</b> | 29.3 | 27.3 | 29.9 |
|   | Արևելյան Եվրոպայի երկրներ   | 4.4  | 3.2  | 2.4  |
|   | Աշխարհ                      | 100  | 100  | 100  |
| <b>Գյուղատնտեսա-<br/>կան հոմքային<br/>ապրանքներ</b> | Զարգացած երկրներ            | 6.1  | 66.3 | 63.6 |
|   | Զարգացող երկրներ            | 30.0 | 24.2 | 30.0 |
|   | OPEC                        | 4.7  | 1.8  | 2.8  |
|   | <b>Այլ զարգացող երկրներ</b> | 25.3 | 22.4 | 27.5 |
|   | Արևելյան Եվրոպայի երկրներ   | 8.8  | 9.5  | 6.1  |
|   | Աշխարհ                      | 100  | 100  | 100  |
| <b>Հանքահումք</b>                                   | Զարգացած երկրներ            | 59.9 | 59.4 | 55.8 |
|   | Զարգացող երկրներ            | 31.7 | 33.5 | 39.6 |
|   | OPEC                        | 2.8  | 3.2  | 6.3  |
|   | <b>Այլ զարգացող երկրներ</b> | 28.9 | 30.3 | 33.3 |
|   | Արևելյան Եվրոպայի երկրներ   | 8.4  | 7.1  | 4.7  |
|   | Աշխարհ                      | 100  | 100  | 100  |
| <b>Էներգետիկ<br/>ռեսուրսներ</b>                     | Զարգացած երկրներ            | 18.3 | 27.5 | 32.1 |
|   | Զարգացող երկրներ            | 72.9 | 56.7 | 57.8 |
|   | OPEC                        | 60.5 | 39.7 | 38.0 |
|   | <b>Այլ զարգացող երկրներ</b> | 12.4 | 16.9 | 19.8 |
|   | Արևելյան Եվրոպայի երկրներ   | 8.8  | 15.8 | 10.1 |
|   | Աշխարհ                      | 100  | 100  | 100  |
| <b>Քիմիական<br/>ապրանքներ</b>                       | Զարգացած երկրներ            | 87.1 | 83.5 | 73.3 |
|   | Զարգացող երկրներ            | 7.4  | 11.8 | 18.2 |
|   | OPEC                        | 1.0  | 1.6  | 2.2  |
|   | <b>Այլ զարգացող երկրներ</b> | 6.4  | 10.2 | 15.9 |
|   | Արևելյան Եվրոպայի երկրներ   | 5.5  | 4.7  | 2.5  |
|   | Աշխարհ                      | 100  | 100  | 100  |
| <b>Մետաղ<br/>(պողպատ, երկար)</b>                    | Զարգացած երկրներ            | 84.3 | 73.9 | 65.1 |
|   | Զարգացող երկրներ            | 6.8  | 16.4 | 26.5 |
|   | OPEC                        | 0.4  | 1.4  | 1.7  |
|   | <b>Այլ զարգացող երկրներ</b> | 6.3  | 15.0 | 24.8 |
|   | Արևելյան Եվրոպայի երկրներ   | 8.9  | 9.7  | 8.4  |
|   | Աշխարհ                      | 100  | 100  | 100  |
| <b>Գումավոր<br/>մետաղներ</b>                        | Զարգացած երկրներ            | 74.1 | 64.8 | 55.8 |
|   | Զարգացող երկրներ            | 23.3 | 21.4 | 35.1 |
|   | OPEC                        | 2.7  | 2.4  | 12.4 |
|   | <b>Այլ զարգացող երկրներ</b> | 20.6 | 19.0 | 22.6 |
|   | Արևելյան Եվրոպայի երկրներ   | 2.6  | 13.8 | 9.2  |
|   | Աշխարհ                      | 100  | 100  | 100  |
| <b>Տրանսպորտա-</b>                                  | Զարգացած երկրներ            | 85.0 | 84.5 | 70.0 |

|   |   |      |      |      |
|---|---|------|------|------|
| <b>յին և մեքենաշի-<br/>նական սարդա-<br/>վորումներ</b>                         | Զարգացող երկրներ                        | 6.0  | 12.5 | 27.8 |
|   | OPEC                                    | 0.3  | 0.1  | 0.6  |
|   | <b>Այլ զարգացող երկրներ</b>             | 5.7  | 12.4 | 27.2 |
|   | Արևելյան Եվրոպայի երկրներ               | 9.0  | 3.0  | 2.2  |
|   | Աշխարհ                                  | 100  | 100  | 100  |
|   | Այլ արդյունաբե-<br>րական ապրանք-<br>ներ | 77.4 | 69.6 | 58.5 |
| <b>Տերսութիւն ապ-<br/>րանքներ, բամ-<br/>բակյա գործվածք-<br/>ներ և հագուստ</b> | Զարգացած երկրներ                        | 17.0 | 26.8 | 36.6 |
|   | OPEC                                    | 0.5  | 1.3  | 2.7  |
|   | <b>Այլ զարգացող երկրներ</b>             | 16.5 | 25.5 | 33.9 |
|   | Արևելյան Եվրոպայի երկրներ               | 5.6  | 3.6  | 3.9  |
|   | Աշխարհ                                  | 100  | 100  | 100  |
|   | Զարգացած երկրներ                        | 61.2 | 50.7 | 17.2 |
| <b>Տերսութիւն ապ-<br/>րանքներ, բամ-<br/>բակյա գործվածք-<br/>ներ և հագուստ</b> | Զարգացող երկրներ                        | 33.1 | 45.7 | 59.3 |
|   | OPEC                                    | 0.9  | 1.6  | 5.1  |
|   | <b>Այլ զարգացող երկրներ</b>             | 32.2 | 44.1 | 54.2 |
|   | Արևելյան Եվրոպայի երկրներ               | 5.7  | 3.6  | 3.5  |
|   | Աշխարհ                                  | 100  | 100  | 100  |
|   | Զարգացած երկրներ                        | 61.2 | 50.7 | 17.2 |

**Աղյուսակ 2**  
Արտահանման տեխնոլոգիատարության բաժնեմաս՝ ըստ  
առանձին ինտեգրման խմբավորումների 2000թ.<sup>26</sup>

| Երկրների խմբեր                                     | QE<br>(մլրդ դրամ) | QET<br>(մլրդ դրամ) | Ը ET<br>(%) |
|--|-------------------|--------------------|-------------|
| Ամբողջ աշխարհը                                     | 9040              | 5356               | 59.2        |
| Զարգացած երկրներ                                   | 5135              | 4089               | 64.1        |
| Զարգացող երկրներ                                   | 3730              | 1171               | 31.4        |
| Արևելյան Եվրոպայի երկրներ,<br>այդ թվում՝ Ռուսաստան | 175               | 96                 | 4.5         |
| <b>Եվրոպա</b>                                      |                   |                    |             |
| Բալթյան երկրներ                                    | 9.8               | 1.6                | 0.16        |
| Եվրոպական ազատ առևտուրի<br>ասոցիացիա               | 138.6             | 3.2                | 2.3         |
| Եվրոպական միություն                                | 2248              | 827.3              | 36.8        |
| Եվրոպական միության                                 | 1858              | 565                | 30.4        |
| Եվրոպական միության                                 | 2428              | 964                | 39.7        |
| <b>Ամերիկա</b>                                     |                   |                    |             |

<sup>26</sup>Հաշվարկված է Trade and Development Report, UNCTAD, NY and Geneva, 2002, Tables 3.1-3.4 և M&MO 2001, սեպտեմբեր N9, стр. 94, 111 տվյալների հիման վրա:

|   |      |      |      |
|---|------|------|------|
| <b>Անյան խումբ</b>  | 52   | 0.42 | 0.8  |
| Կենտրոնական Ամերիկայի ընդհանուր շուկա                     | 10.6 | 0.02 | 0.2  |
| Կարիբյան միուլյուն  | 9    | 135  | 0.15 |
| Լատինամերիկյան ազատ առևտուրի համաձայնագիր (LAFTA)         | 1328 | 288  | 21.7 |
| Լատինամերիկյան ինտեղնան ասոցիացիա                         | 317  | 16.5 | 5.2  |
| Դարավային ընդհանուր շուկա                                 | 87   | 1.2  | 1.4  |
| Հյուսիսամերիկյան ազատ առևտուրի համաձայնագիր (NAFTA)       | 1149 | 216  | 18.8 |
| <b>Աֆրիկա</b>   |      |      |      |
| Արևելյան և հարավաֆրիկյան ընդհանուր շուկա                  | 23.6 | 0.09 | 0.4  |
| Կենտրոն. Աֆրիկայի Երկրն. տնտեսական միուլյուն              | 16   | 0.05 | 0.3  |
| Արևմտ. Աֆրիկայի Երկրն. տնտեսական միուլյուն                | 30   | 1.5  | 4.9  |
| Դարավային Աֆրիկայի զարգացման միուլյուն                    | 47   | 0.4  | 0.8  |
| Կենտրոն. Աֆր. տնտ. և արժութային միուլյուն                 | 9.5  | 0.02 | 0.2  |
| Արաբական Մագրիբի միուլյուն                                | 46.2 | 0.4  | 0.8  |
| <b>Ասիա</b>   |      |      |      |
| ASEAN   | 386  | 24.3 | 6.3  |
| Բանգկոկի համաձայնագիր                                     | 470  | 36.2 | 7.7  |
| Տնտեսական համագործակցության կազմակերպ.                    | 82   | 1.1  | 1.3  |
| Պարսից ծոցի Երկրների համագործակցություն                   | 159  | 4.1  | 2.6  |
| Տարածաշրջանային համագործակցություն Դարավասիական ասոցիացիա | 63   | 0.7  | 1.04 |
| <b>Միջտարածաշրջանային խմբավորումներ</b>                   |      |      |      |
| APEC  | 2870 | 1346 | 46.9 |
| Ակտովան տնտեսական համագործակցություն                      | 179  | 5.2  | 2.9  |
| <b>ԱՊՀ</b>  | 149  | 3.6  | 2.4  |

Միջտարածաշրջանային խմբավորում հանդիսացող Ասիա-Խաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցության (APEC) շրջանակներում տնտեսության բացության ցուցանիշը բավականին բարձր է, սակայն դա չի կարելի համարել տնտեսական ինտեգրացիայի մակարդակի չափանիշ, քանի որ այս տարածաշրջանում համագործակցությունը հեռու է ինտեգրում կոչվելուց, իետևաբար՝ տնտեսության բացության ցուցանիշը պայմանական բնույթ ունի: Այսպես, APEC-ի մեջ մտնում են 21 երկրներ, այդ թվում արդյունաբերական զարգացած (ԱՄՆ, Կանադա, ճապոնիա), նոր ինդուստրիալ երկրները, Չինաստանը և Ռուսաստանը, ուստի խոսքը չափազանց ընդգրկուն շուկայի մասին է, որտեղ արտաքին առևտուրային շրջանառության ծավալները փոքր լինել չեն կարող: Փաստորեն, APEC-ի մեջ ներառվում է NAFTA-ի և ASEAN-ի առևտուրային շրջանառությունը ևս:

Արտահանման տեխնոլոգիատարության բաժնեմասի ցուցանիշի և տնտեսության բացության մակարդակը բնութագրող արտահանման բաժնեմասի ցուցանիշի համեմատությունը (հավելված 1) ցույց է տալիս, որ արդյունաբերական զարգացած և զարգացող երկրներում տնտեսության բացության մակարդակը XX դարի վերջին աճել է ընդամենը 1%-ով: Տնտեսության բացության բարձր մակարդակ են ցուցաբերել Կանադան (45%), Ավստրիան (44%), Բելգիան (75%), Ճութանիան (55%), Ըվեյցարիան (42%), Նորվեգիան (47%): Տնտեսության բացության բարձր մակարդակը, փաստորեն, բնորոշ է Եվրոպի համար: Երկրներին: Մնացած զարգացած երկրներում այդ ցուցանիշը 40%-ից ցածր է, իսկ ԱՄՆ-ում կազմում է 11%: Զարգացող նորինդուստրիալ այնպիսի երկրներում, ինչպիսիք են Թաիլանդը և Թայվանը, արտահանման բաժնեմասը 2000թ. կազմում է, համապատասխանաբար՝ 48% և 62%:

Զարգացած մի շարք երկրների համեմատությամբ՝ բարձր են նաև Ֆիլիպինների, Ինդոնեզիայի, Ճարավային Կորեայի, Չիլիի, Մեքսիկայի ցուցանիշները: Սակայն նշանակո՞ւմ է արդյոք, որ այս երկրներն ունեն ավելի ազատականացված ազգային շուկա, ավելի խորն են ինտեգրված համաշխարհային տնտեսական կապերին, քան ԱՄՆ-ը, ճապոնիան, Ըվեյցարիան, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան և այլն: Բացության համեմատաբար բարձր մակարդակ ունեն ASEAN-ի անդամ երկրները, որոնք արտաքին շուկաների հետ կապված են արտահանման տեխնոլոգիատարության համեմատա-

բար բարձր մակարդակով, որը հասնում է 6.3%-ի: Մնացած զարգացող երկրներում արտահանման բաժնեմասի ցուցանիշը 20%-ից բարձր է, իսկ արտահանման տեխնոլոգիատարության բաժնեմասը չի հասնում նույնիսկ 1%-ի:

Այսպիսով, արտահանման տեխնոլոգիատարության բաժնեմասի ցուցանիշի միջոցով երկրի տնտեսության բացության գնահատումը միաժամանակ նաև պատկերացում է տալիս աշխատանքի միջազգային բաժանման մեջ երկրի արտահանման որակական պարամետրերի մասին: Ըստ առանձին ինտեգրման խմբավորումների՝ առաջարկված բաժնեմասի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ԵՄ շրջանակներում այդ ցուցանիշը բարձր է և գերազանցում է 30% մակարդակը: Դա նշանակում է, որ այդ երկրները համաշխարհային շուկայի հետ կապված են բարձր տեխնոլոգիական ապրանքների արտահանմանը, իսկ ինտեգրման գործընթացները գտնվում են զարգացման բարձրագույն փուլում: LAFTA-ն, ինչպես նաև NAFTA-ն ունեն արտահանման տեխնոլոգիատարության այնպիսի մակարդակ, որը դեռևս բավարար չէ տարածաշրջանային տնտեսական ինտեգրման հաջորդ փուլին անցնելու համար: ASEAN-ի երկրների և Բանգկոկի համաձայնագրի շրջանակներում էլ համագործակցությունը չի թևակոխում ազատ առևտրային գոտի, քանի որ արտահանման տեխնոլոգիատարությունը 10%-ից ցածր է:

ՀՀ արտահանման տեխնոլոգիատարության ցուցանիշի հաշվարկը թույլ կտա ճիշտ գնահատել ինչպես տարածաշրջանի, այնպես էլ հարևան երկրների հետ ՀՀ տնտեսական ինտեգրման անհրաժեշտությունն ու հնարավորությունները: Արտահանման կառուցվածքում առանձնացվել են վերը նշված դասակարգմանը համապատասխանող տեխնոլոգիատար ապրանքախմբերը: Դրանք են՝ դեղագործական նյութերը, էլեկտրական մեքենաները և սարքավորումները, ձայնագրող ապարատները և դրանց մասերը, թռչող տիեզերական ապարատները, ինչպես նաև օպտիկական, լուսանկարչական, չափիչ, բժշկական և վիրաբուժական սարքերն ու ապարատները, դրանց մասերն ու հարմարանքները<sup>27</sup>: Այդ սկզբունքով կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ ՀՀ համախառն արտահանման տեխնոլոգիատարությունը 1999թ. կազմել է 5.4%,

2000թ., բավականին բարձրանալով, հասել է 8.2%-ի: Դետագա երկու տարիների ընթացքում ՀՀ արտահանման տեխնոլոգիատարությունը կտրուկ նվազել է և 2002թ. կազմել 3.0%<sup>28</sup>:

Այսպիսով, տարբեր ինտեգրման խմբավորումների փոխադարձ առևտրի ծավալների մեջ տեխնոլոգիատար ապրանքների բաժնեմասի վերլուծությունից կարելի է եզրակացնել՝ եթե արտահանման տեխնոլոգիատարությունը բարձր է 30%-ից, ապա համագործակցող երկրները համաշխարհային շուկայի հետ կապված են բարձր տեխնոլոգիական ապրանքների արտահանմանը, իսկ ինտեգրման գործընթացներն անշրջելի են: Եթե ինտեգրման ցանկություն հայտնող երկրներում արտահանման մեջ ծավալներին համապատասխանում է արտահանման տեխնոլոգիատարության 15-20%-ի հասնող բաժնեմաս, ապա տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիայի գործընթացներից սպասումները կլինեն առավել իրական և երկարաժամկետ: Արտահանման տեխնոլոգիատարության ավելի պակաս մակարդակը վկայում է տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիայի ոչ իրատեսական լինելու մասին:

<sup>27</sup> Նշված ապրանքախմբերը հետազյում կդրվեն այլ երկրների հետ ՀՀ փոխադարձ առևտրի տեխնոլոգիատարության հաշվարկման հիմքում:

<sup>28</sup> Հաշվարկները կատարվել են «ՀՀ արտաքին առևտուրը 2002թ.» վիճակագրական ժողովածուի տվյալների հիման վրա, ՀՀ ազգային վիճ. ծառայություն, Երևան 2003, էջ 25-38:

## **ԱՐԵՎԱՏԱԵՎՐՈՊԱԿԱՆ ՏՏՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ**

### **2.1. ԵՎՐՈՄԻՈՒԹՅԱՆ ԾՆԱՎՈՐՄԱՆ և ըՆԴՀԱՅՆՄԱՆ ՎԻՌԱՐԾԵՐԸ**

Թե՛ պատմականորեն և թե՛ ինտեգրման գործընթացների շարունակական, գործնական արդյունքների դրսնորման առումով, ՏՏՏ դասական օրինակը Եվրոնիությունն է: Ինտեգրման արևանտաեվրոպական մողելը արտադրության և կապիտալի միջազգային խաչաձևան, ազգային տնտեսությունների փոխլրացման, աշխատանքի տարածաշրջանային բաժանման գործընթացների կոորդինացման, տնտեսական հարաբերությունները կարգավորող վերաբետական ինստիտուտներիձևավորման, տնտեսական զարգացման ռազմավարական քաղաքականության մշակման եզակի դրսնորում է:

Եվրոմիության ծնավորումից ի վեր, մասնակից պետությունների տնտեսական հաջողությունները չեն կարող դուրս մնալ մնացած երկրների ուշադրությունից: Անցյալ դարի 60-ական թթ. Լատինական Ամերիկայում, Հարավարևելյան Ասիայում և Սերծավոր Արևելքում սկիզբ առած ինտեգրման գործընթացները մինչև այսօր դուրս չեն եկել մաքսային միություններին և ազատ առևտրային գոտիներին բնորոշ գործունեության շրջանակներից: Տարածաշրջանային ինտեգրման աշխարհագրությունն ավելի ընդլայնվեց 1990-ական թթ. սոցիալիստական համակարգի փլուզման և այդ համակարգի երկրների շուկայական կողմնորոշման վերադիրքավորումից հետո: Ներկայումս գոյություն չունի որևէ տարածաշրջան, որտեղ հարևան երկրների միջև տնտեսական հանգործակցությունը չընթանա ինտեգրման ռազմավարության տրամաբանությանը համահունչ: Այնուհանդերձ, դրանց գերակշռող մասի համագործակցությունը առաջման սահմանափակվում է համաձայնագրի կողմերի ամենամյա հանդիպումներով, որտեղ քննարկվում են ապագա գործողությունների ծրագրերը, սակայն մասնակից պետությունները ինտեգրման շոշափելի արդյունքներ դեռևս չեն գրանցում: Ներկայումս տարածաշրջանային ինտեգրումը կարող է, որոշ չափով, փոխհատուցել

առևտրային բանակցությունների «Ուրուգվայական ռառնդի» արդյունքների իրացման գործում ոչ բավարար առաջադիմությունը<sup>29</sup>:

Եվրոպական երկրների միավորման գաղափարը ծագել է դեռևս հեռավոր անցյալում: Այդ ժամանակներում նման գաղափարներով հանդես էին գալիս հասարակության հոգևոր վերնախավի ներկայացուցիչները՝ փիլիսոփաները, քաղաքագետները, գրողները, հաճախ նաև իշխանավորները: Այդ կապակցությամբ արժե հիշատակել 15-րդ դարի դոմինիկյան վանական Պիեռ Շյուրուայի այն միտքը, որ Եվրոպական կոմֆերերացիայի (համարաշնակցության) խորհրդի միասնական կառավարումը քրիստոնեական աշխարհի գոյության լավագույն ձևն է: Ուշյամ Պետրին 1693թ. իր հայտնի «Եվրոպան ներկա և ապագա աշխարհում» տրակտատում գրել է միասնական Եվրոպական պառլամենտի ծնավորման մասին, իսկ 19-րդ դարում Պիեռ Ժոզեֆ Պրուտոն զարգացրել է ընդհանուր Եվրոպական կոմֆերերացիայի ծնավորման գաղափարը: Սակայն Եվրոպական պետությունների միավորումն այդ ժամանակաշրջանում չկայացավ, քանի որ դեռևս չեն հասունացել բավարար պատմական նախադրյալներ, չեն ծնավորվել դրա շարժիչ ուժերը, թեև միավորման գաղափարներն իսպառ չեն մարտում՝ մերթընդերք դաշնալով բավականին հրատապ: Անբողջությամբ վերցրած, այն ժամանակ Եվրոպայում ստեղծված իրադրությունը չէր խթանում Եվրոպական երկրների ոչ միայն արագացված, այլև աստիճանական միության ծնավորումը: Դրան խոչընդոտում էր հատկապես հզոր տերությունների կողմից Եվրոպայում գերիշխանություն հաստատելու ձգուումը:

Միայն 20-րդ դարում, հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, եթե երկրների միջև նախկին հակասությունները սկսեցին թուլանալ, միավորման գաղափարները կրկին հայտնվեցին քաղաքական կյանքի բատերաբենում: Համաեվրոպականացումը դարձավ նորած հոսանք, ի հայտ եկան դրա կարգախոսները ակտիվորեն քարոզող քաղաքական գործիչներ և գաղափարախոսներ: Համաեվրոպականացման շարժման առաջնորդը դարձավ կոմս Ռիչարդ Կուլենիովե-Կալերգին, որը 1923թ. առաջ քաշեց Եվրոպայի Միացյալ Նահանգների ստեղծման ծրագիրը:

<sup>29</sup> Герчикова И.Н., Международные экономические организации, Москва, АО «Консалтбанкир», 2000, стр. 206.

Կուղենհովե-Կալերգին ոչ միայն համաեվրոպականացման տեսաբան էր, այլև դրա իրականացնողը. նա հիմնադրեց Համաեվրոպական միությունը: Այնուամենայնիվ, համաեվրոպականացման գաղափարները չարժանացան Եվրոպայի առաջատար Երկրների պետական գործիչների և քաղաքական կուսակցությունների առաջնորդների կողմից սպասվող աջակցությանը:

1927թ. Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Արիստիդ Բրիանը ընտրվեց համաեվրոպական միության պատվավոր նախագահ և Ազգերի լիգայի շրջանակներում ներկայացրեց Եվրոպական միության կազմավորման գաղափարը: Այդ ժրագրի համաձայն, Եվրոպական պետությունների միջև պետք է հաստատվեին դաշնային բնույթի փոխհարաբերություններ: Սակայն Բրիանի ժրագրերը Եվրոպայում չընդունվեցին: Միայն Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո արևմտաեվրոպական առաջատար տերությունները արժեքավորեցին միավորնան ճանապարհով քաղաքական և տնտեսական հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությունը:

Ժանանակակից արևմտաեվրոպական տնտեսական ինտեգրման առաջին քայլերն արվել են 1948թ. մայիսին, Դասագայի Վեհաժողովում, որին մասնակցում էին Արևմտյան Եվրոպայի բոլոր Երկրներից ավելի քան 800 ներկայացուցիչներ՝ նախարարներ, քաղաքական գործիչներ, ծեռներեցներ: Վեհաժողովում դրվեց միասնական Եվրոպայի ծեսավորման խմբիրը, որի կապակցությամբ արտաքին գործերի նախարար Ռոբերտ Շումանը արտահայտեց այն կարծիքը, թե միասնական Եվրոպան մեկ օրում կամ միասնական ծրագրով հնարավոր չէ ստեղծել. դա պետք է լինի Երկարատև ժամանակաշրջանում աստիճանական և փուլային համագործակցության արդյունք: Շումանի առաջարկությամբ 1951թ. ապրիլին Ֆրանսիան, Իտալիան, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը, Բելգիան, Նիդերլանդները, Լյուքսեմբուրգը Փարիզում ստորագրեցին Ածխի և պողպատի Եվրոպական միության համաձայնագիրը:

Արևմտաեվրոպական ինտեգրումը նոր բափ առավ 1957թ., երբ Հռոմում այդ նույն Երկրների կողմից ստորագրվեցին Եվրոպական տնտեսական համագործակցության (ԵՏՀ) և Ալտունային Էներգիայի Եվրոպական համագործակցության մասին փաստաթղթերը: Համագործակցության կազմի մեջ փաստորեն մտան զարգացման բարձր

մակարդակ ունեցող Երկրներ, որը և կանխորոշիչ դեր խաղաց հետագա 15 տարիների ընթացքում դրանց արտադրության աճի բարձր տեմպերի պահպանման գործում: 1973թ. տեղի ունեցավ ԵՏՀ առաջին ընդլայնումը. անդամների թիվը հասավ իննի՝ շնորհիվ Մեծ Բրիտանիայի, Դանիայի և Իռլանդիայի միացման: Սակայն դրանով էլ ԵՏՀ տնտեսական ցցումների և ճգնաժամների Երկարատև ժամանակաշրջանի սկիզբը դրվեց: ԵՏՀ նոր անդամների միացումը լրջորեն մեծացրեց Երկրների տնտեսական զարգացման մակարդակների միջև անհամանամասնությունները՝ ամենից առաջ Իռլանդիայի և Մեծ Բրիտանիայի մի քանի հինգ՝ արդյունաբերական տեսակետից հետամնաց շրջանների (Լանկաշիր, Յորքշիր, Արևմտյան Մերիլենը) պատճառով: Դրա հետևանքով 1970-ական թթ. մինչև 80-ական թթ. սկիզբը ԵՏՀ Երկրների տնտեսական զարգացման մակարդակների միջև խզումը մեծացավ: Եթե համեմատենք բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ԴՆԱ ծավալը ԵՏՀ «իննյակի» տասը առավել զարգացած և տասը առավել հետամնաց շրջանների միջև, ապա 1970թ. 2.9:1 հարաբերությունը 1977թ. հասավ 4:1 հարաբերության: 1981թ. ԵՏՀ-ին միացավ Հունաստանը: Համագործակցության Երկրների հետ համեմատած Հունաստանի տնտեսությունը գտնվում էր ավելի ցածր մակարդակի վրա: Հունաստանի մուտքը վերոհիշյալ ցուցանիշը հասցրեց 5:1 հարաբերակցության: 1986թ. Խսպանիայի և Պորտուգալիայի միացումով տեղի ունեցավ ԵՏՀ Երրորդ ընդլայնումը, որն էլ ավելի սրեց անհամանամասնությունները անդամ Երկրների միջև: Պորտուգալիայում և Խսպանիայում ցուլատնտեսության մեջ զբաղված էր աշխատող բնակչության հինգից մեկը, այն դեպքում, եթե ԵՏՀ Երկրներում այդ ոլորտում զբաղված էր աշխատող բնակչության 13-ից մեկը: Ավելին, միացման ժամանակ Պորտուգալիայում բնակչության մեկ շնչին բաժին ընկնող Եկամուտները կազմում էին ԵՏՀ Երկրների բնակչության մեկ շնչին բաժին ընկնող Եկամուտների միջինի կեսը, իսկ Խսպանիայում՝ 3/4-ը: 1990թ. հոկտեմբերին Եվրոպայում հայտնվեց նոր պետություն՝ միացյալ Գերմանիան, որին սպասվում էր սոցիալ-տնտեսական ինտեգրման բարդ ուղի: Այսպիսով, յուրաքանչյուր ընդլայնում այս կամ այն չափով խորացնում է համագործակցության ոչ միատարրությունը:

1992թ. Մաաստրիխտի պայմանագրով սկսվեց Եվրոպական ինտեգրման ժամանակակից փուլը: ԵՏՀ անդամ 12 Երկրները ստո-

րագրեցին պայմանագիր, որի համաձայն այն վերանվանվեց Եվրոպական միություն: Պայմանագիրը նախատեսում էր.

1. Միասնական Եվրոպական քաղաքացիություն, ըստ որի՝ ԵՄ անդամ պետությունների բոլոր քաղաքացիները ձեռք են բերում Եվրոպական քաղաքացիություն:
2. Տնտեսական և արտուրային միության ձևավորում:
3. Քաղաքական միության ձևավորում, ընդհանուր արտաքին քաղաքականության իրականացում, Եվրոպառլամենտի դեռի բարձրացում:

1994թ. սկսվեցին բանակցությունները Եվրոպական երկրների կազմը 12-ից 16-ի հասցելու մասին: Անդամակցության հայտ էին ներկայացրել Ավստրիան, Ֆինլանդիան, Նորվեգիան և Շվեդիան: Մասատրիխտի պայմանագրի համաձայն, մինչև վերջնական պայմանագրի ստորագրումը նոր անդամության թեկնածու երկրները պետք է իրենց երկրներում անցկացնեին հանրաքվե: Հանրաքվեի հաջողությունները մեծ չափով պայմանավորված էին նրանով, որ այդ երկրները նախկինում էլ սերտ կապված էին ԵՄ երկրների հետ՝ Եվրոպական տնտեսական տարածքի առումով: Դրանք առավել զարգացած և ժողովրդական ուղղով ընթացող երկրներ էին, հետևաբար՝ դրանց ինտեգրումը հեշտ կլիներ: Հանրաքվեների արդյունքում 1995թ. փետրվարից Ֆինլանդիան, Ավստրիան և Շվեդիան դարձան ԵՄ անդամներ, իսկ Նորվեգիայում ժողովրդով արտահայտեց բացասական վերաբերնունք:

1990-ական թթ. սկզբներին Եվրոպական ու Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի (ԿԱԵ) երկրների միջև կանգնեցին առևտուրի և համագործակցության համաձայնագրեր, ինչպես նաև հաստատվեց հատուկ տնտեսական ծրագիր՝ PHARE, որը սկզբում նախատեսված էր միայն Լեհաստանի և Հունգարիայի տնտեսական վերակառուցման համար, սակայն հետագայում ընդգրկեց նաև Չեխիան, Սլովակիան, Բուլղարիան, Ռումինիան և Բալթյան երեք պետությունները: Ծրագրի նպատակն էր նպաստել ԿԱԵ-ում տնտեսական և սոցիալական բարեփոխումների իրականացմանը և նրանց նախապատրաստել ինտեգրվելու Եվրոպական ընտանիքին:

Ինչպես թեկնածու, այնպես էլ ԵՄ անդամ երկրների շահերից է բխում ԵՄ-ի ընդլայնումը. բոլոր թեկնածու երկրները պետք է իրենց քաղաքական և տնտեսական համակարգերը համապատասխանեցնեն ԵՄ չափորոշչներին և ներքին շուկայում ներկայանան որպես

իրավահավասար անդամներ:

1993թ. հունիսին Կոպենհագենում Եվրոպական խորհուրդն ընդունեց մի սկզբունք, ըստ որի, հավակնորդ երկրները, ցանկության դեպքում, կարող են դաշնալ ԵՄ անդամներ. «Մուտքը դեպի ԵՄ կրացվի այն ժամանակ, երբ հավակնորդ երկիրն ի վիճակի կլինի իր վրա վերցնել անդամակցության պարտավորությունները՝ բավարարելով պահանջվող քաղաքական և տնտեսական պայմանները»:

Որպես մուտքի պայմաններ՝ սահմանվեցին, այսպես կոչված՝ «Կոպենհագենի չափանիշներ». դրանք են՝

1. Կայունություն, ժողովրդավարական և պետական իրավական կարգուկանոն, մարդու իրավունքների պաշտպանություն և փոքրամասնությունների նկատմամբ հարգանք ու պաշտպանություն,
2. Գործող շուկայական տնտեսություն և ԵՄ ներքին շուկայում մրցունակության ապահովում,
3. ԵՄ պարտավորությունները սեփականը համարելու կարողություն, այսինքն՝ միասնական կանոնների ընդունում:

Բացի այդ, պետք է թեկնածու երկրները բարիդրացիական հարաբերություններ վարեն հարևան երկրների հետ: Այդ առումով, թեկնածու երկրների վրա Եվրոպական ինտեգրման գործընթացների դրական ազդեցությունը շուտով հայտնի դարձավ. ամենից առաջ բարելավվեցին նրանց միջև երկողմանի հարաբերությունները, օրինակ, Հունգարիայի և Ռումինիայի միջև կապված հունգարական ազգային փոքրամասնությունների հետ Տրանսիլվանիայում, Չեխիայի և Լեհաստանի միջև՝ տնտեսական և սահմանային խնդիրների հետ կապված:

1997թ. Եվրոպական համանաժողովը Եվրոպական խորհրդարանին ներկայացրեց «Օրակարգ 2000» փաստաթուղթը, որը մանրամասն նկարագրում էր թեկնածու պետությունների անդամակցության նախապայմանները: Մանրամասն ուսումնասիրելով ԿԱԵ երկրների ինստիտուտների և ընթացիկ բարեփոխումների վերաբերյալ լրացված հարցաթերթիկները՝ հանձնաժողովը հավանություն տվեց Էստոնիայի, Հունգարիայի, Լեհաստանի, Չեխիայի և Սլովենիայի հետ բանակցություններ սկսելուն: Այս երկրները ամենամեծ հավանականությունն ունեին բավարարելու 1993թ. Կոպենհագենի չափանիշները:

Եվ, այսպիսով, թեկնածու երկրների նկատմամբ, 1998թ-ից սկսած, սկսեց կիրառվել անդամակցությանը նախորդող ռազմավարություն, և, այդ կապակցությամբ, մինչև 2000թ. տրամադրվեց 1.5 մլրդ եվրո, իսկ հետո այդ գումարը հասցվեց 3 մլրդ եվրոյի՝ մինչև 2006թ.:

Բանակցությունները, այսպես կոչված, Եվրոպական կոնֆերանսի շրջանակներում, իրականցվում էին ԵՄ անդամ պետությունների և ԿԱԵ 10 երկրների համապատասխան նախարարների մակարդակով: Այդ կոնֆերանսում քննարկվում էր, առաջին հերթին, օրենսդրության հարմարեցումը ԵՄ միասնական ակտին (բաղկացած է 33 բաժիններից): ԵՄ հանձնաժողովն այդ կապակցությամբ կազմել էր հատուկ գործ՝ յուրաքանչյուր հավակնորդ երկրի համար՝ ըստ հետևյալ չափանիշների:

1. «Համագործակցության փորձ»,
2. Տնտեսական վերակառուցում,
3. ԵՄ-ի ներսում որոշումների ընդունման մեխանիզմ:

«Համագործակցության փորձ» հասկացությունը ներառում էր ԵՄ-ի կողմից ընդունված պայմանագրերի, որոշումների, կանոնների և դիրեկտիվների ամբողջությունը, ըստ որի՝ ԵՄ յուրաքանչյուր նոր անդամ երկիր պետք է վերափոխվի միասնական շուկայի: Ըստ այդ չափանիշի՝ տարրեր են թեկնածու երկրների կարգավիճակները. Կիպրոսը, Հունգարիան կարգավիճել են իրենց հարաբերությունները 22 բաժնով, Սլովենիան՝ 20, Չեխիան, Էստոնիան, Սլովակիան՝ 19, Լեհաստանը՝ 16<sup>30</sup>:

Ըստ երկրորդ չափանիշի, Հունգարիան և Լեհաստանը բացառություն էին կազմում հեռահաղորդակցության ոլորտում՝ ի տարբերություն Սլովենիայի և Չեխիայի, որոնք ունեին արդեն կնքված պայմանագրեր ամերիկան կորարությաների հետ: Ինչ վերաբերում է ծանր արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներին, ապա թեկնածու երկրների ցուցանիշները լուրջ մտահոգություն էին պատճառում ԵՄ անդամ երկրներին:

Որոշ հետազոտություններ ցույց են տալիս, որ թեկնածու երկրները անգամ որոշակի դժվարություններ կրուն սկզբնական շրջանում: Օրինակ՝ ըստ Լիտվայի արտաքին գործերի նախարարության տվյալների, ԵՄ մաքսային սակագների կիրառումը կթան-

կացնի լիտվական արտադրության արտահանումը ավելի քան 2%-ով: Բացի այդ, յուրաքանչյուր թեկնածու երկիր ուներ նաև իր խնդիրները, օրինակ՝ Լիտվայի ատոռային էլեկտրակայանը, որն ապահովում է երկրի էլեկտրաէներգիայի 80%-ը, պետք է փակվի՝ ըստ Եվրոպական հանձնաժողովի որոշման: Նույն խնդիրը կա նաև Չեխիայում:

Եվրոպական հանձնաժողովը պահանջում էր նաև փոփոխություններ կատարել Լեհաստանի մետաղուրգիական արդյունաբերությունում: Այս առումով, ամենից առաջ անհանգստացնում է այն վտանգը, որ արտադրության ցածր ստանդարտները Լեհաստանում և այլ երկրներում արգելվ կիանդիսանան միասնական շուկայի ստեղծման համար:

Խնդիրներ կան նաև գյուղատնտեսության ոլորտում. օրինակ՝ Լեհաստանում, որտեղ զբաղված է աշխատուժի 1/4-ը, եկանուտները կազմում են ՀՆԱ-ի ընդամենը 10%-ը:<sup>31</sup>

Անդամակցման հետ կապված շատ դժվարությունների պատճառով թեկնածու երկրներում առաջանում էին դժգոհություններ հատկապես ազգային քաղաքական կուսակցությունների կողմից: Այսպես, օրինակ՝ Լատվիայում բնակչության ընդամենը 41%-ն էր պատրաստ քեարկելու ԵՄ անդամակցելու օգտին, իսկ Էստոնիայում՝ 37%-ը:

Այսպիսով, թեկնածու երկրները պետք է սկզբունքորեն հենց անդամակցման օրվանից ընդունեն ԵՄ բոլոր իրավական պարտավորությունները: Բանակցություններ հնարավոր են միայն բացառությունների կարգով այն անցումային որույթների մասով, որոնց կատարումը կարող է կարճ ժամկետների ընթացքում անիրականացնելի լինել: Սակայն ԵՄ-ն ջանում է այդպիսի բացառությունների թիվը հնարավորինս կրծատել:

Չնայած այն հանգամանքին, որ ԿԱԵ երկրներին հաջողվել էր սեղմ ժամկետներում ընդլայնել իրենց արտաքին տնտեսական կապերը ԵՄ-ի հետ (Հունգարիայի, Լեհաստանի, Չեխիայի, Սլովենիայի բաժինը ԵՄ արտաքին առևտորում կազմում է արդեն 70%), այնուամենայնիվ, շատ Եվրոպական հասարակական գործիչներ գգուշացնում էին, որ ԿԱԵ երկրների անդամակցումը, ԵՄ-ին

<sup>31</sup> С. Глинкина, Накануне вступления в Евросоюз// Современная Европа, 2001, N3, с. 45.

կիասցնի շոշափելի վնասներ, որն էլ իր հերթին կարի ներքին հակասությունները: Ինչպես հայտարարեց ժակ Դելորը՝ ԵՄ հանձնաժողովի նախագահը, «2004թ. ԵՄ-ի ծրագրված ընդլայնումը համարվում է չմտածված, հապեճ քայլ, որը հանգեցնելու է ԵՄ-ի ստեղծման գաղափարների իմաստագրկմանը»<sup>32</sup>:

Թե ինչպիսի հաջողությամբ կընթանար 100 մլն բնակչության ինտեգրումը, որը կազմում է Միության բնակչության 1/5-ը, սակայն Վերջինիս ՀՆԱ-ում ունի 5%-ից նվազ ներդրում, ոչ ոք չէր կարող կանխատեսել, ընդ որում, այդ առիթով գոյություն ունեին միանգամայն տարբեր գնահատականներ: Այսպես, Եվրոպական հետազոտությունների ասոցիացիայի նախագահ և Եվրոպական ինստիտուտի Եվրոպական ինտեգրման հետ կապված խնդիրների հետազոտության կենտրոնի ղեկավար Ցու. Բորկոն հույս ուներ, որ «ԵՄ-ն կիաղբահարի իր առջև դրված խնդիրները, որի շնորհիվ տարածաշրջանը առաջիկա տասնամյակում կստանա հնարավորություն՝ լինելու ժամանակակից աշխարհի երկրորդ քենցը»<sup>33</sup>: Իսկ նրա աշխատակից Բիխովսկին ավելի զգույշ էր իր գնահատականներում և կարծում էր. «Գործընթացն այն ժամանակ կարելի է անվանել բարեհաջող, եթե բանակցություններն իրականացվեն որոշակի ժամանակաշրջանի ընթացքում (10 տարում), իսկ հետո նաև 10 տարի պետք է աղապտացիայի (հարմարեցման) համար, այսինքն՝ ոչ քիչ, քան 20 տարի հետո կարող են թեկնածու ամենազարգացած պետությունները ասոցացված անդամներից դառնալ լիիրավ անդամներ»<sup>34</sup>:

Այնուամենայնիվ, 2004թ. մայիսի 1-ին կայացավ Եվրոպիության ամենամեծ ընդլայնումը: Անդամ պետությունների թիվը 15-ից հասավ 25-ի: Եվրոնիտության անդամ դարձան Չեխիան, Սլովակիան, Սլովենիան, Լատվիան, Լիտվան, Էստոնիան, Լեհաստանը, Յունական, Կիպրոսը և Մալթան:

## 2.2. Եվրոպական միության տնտեսական ինտեգրման իիմնական խնդիրները

Եվրոպական միության երկրների տնտեսական ինտեգրումը սկսվել է ազատ առևտրային գոտուց, անցել մաքսային միությանը բնորոշ քաղաքականության, միասնական ագրարային, բյուջետային և արժութային քաղաքականությանը, սոցիալ-քաղաքական ոլորտում ունիֆիկացված նորմերի ձևավորման նպատակով՝ Եվրոպական ակտի ընդունմանն ու 1993թ-ից Միության շրջանակներում արտադրության գործոնների՝ կապիտալի, աշխատուժի ազատ տեղաշարժին: Այդ նպատակով ԵՄ շրջանակներում նշակվել են ավելի քան 300 ծրագրեր:

ԱրևմտաԵվրոպական տնտեսական ինտեգրման գարգացումը կարելի է պայմանականորեն բաժանել չորս փուլի:

Առաջին փուլում (1950-ական թթ. մինչև 70-ական թթ.) ձևավորվեց մաքսային միությունը, ավարտին հասցվեց միասնական գյուղատնտեսական շուկայի ձևավորումը: Մաքսային միության ձևավորումը համարվեց ԵՏՀ հիմքը, որի շրջանակներում.

- Վերացվեցին մասնակից պետությունների միջև փոխադարձ առևտրային սահմանափակումները,
- սահմանվեց միասնական մաքսային սակագին երրորդ երկրների նկատմամբ,
- ձևավորվեց կապիտալի, վարկերի, դրամական փոխադարձությունների ազատ տեղաշարժի համակարգ,
- ապահովվեց աշխատուժի ազատ միգրացիայի (շարժ) և բնակավայրի ազատ ընտրության իրավունքը:

Այս միջոցառումները նպաստեցին ԵՄ երկրների արյունաբերական ինտեգրման արագացմանը: Ինչ վերաբերում է ագրարային հարցերին, ապա այս ոլորտում սահմանվեցին մասնակից երկրների համար մի շարք գյուղատնտեսական մթերքների ընդհանուր գները: Այսպես՝ ձևավորվեց Եվրոպական «Ընդհանուր շուկան», որը միաժամանակ նպաստեց Եվրոպական ազգային մոնոպոլիաների վերազգայնացման գործընթացին: Փակ ազգային տնտեսությունից անցում կատարվեց բաց տնտեսությանը:

Եվրոպական տնտեսական համագործակցության ձևավորման նպատակային խնդիրներն էին (երկարաժամկետ առումով):

<sup>32</sup> Независимая газета. 22. 03.2002.

<sup>33</sup> Европейский Союз на пороге 21 века, выбор стратегии развития, М.2001, с.461.

<sup>34</sup> Նույն աղյուրը, էջ 319:

- մասնակից պետությունների միջև առևտուրը սահմանափակող արգելակների աստիճանական վերացումը,
- երրորդ երկրների հետ առևտուր միասնական մաքսային սակագնի սահմանումը,
- մարդկանց, կապիտալի և ծառայությունների ազատ տեղաշարժի ապահովումը,
- գյուղատնտեսության և տրանսպորտի ոլորտում միասնական քաղաքականության մշակումն ու իրականացումը,
- արժութային միության ձևավորումը,
- վարկային համակարգի միօրինակացումը,
- օրենսդրությունների միասնականացումը,
- տնտեսական քաղաքականության սկզբունքների մշակումը:

Այս խնդիրների իրականացման նպատակով ստեղծվեց համալիր կառավարման կառուցվածք՝ ԵՄ նախարարների խորհուրդ, ԵՄ համագործակցության հանձնաժողով, Եվրոպական խորհուրդ, Եվրոպական դատարան և Եվրոպական պալամենտ:

**Երրորդ փուլը** (1970-ական թթ. մինչև 80-ական թթ.) հայտնի է որպես Եվրոպական տնտեսական համագործակցության լճացման շրջան: Չնայած այս շրջանում ԵՄ-ը հաջողվեց Եվրոպական արժութային համագործակցության ծրագիր մշակել, այնուամենայնիվ, 1970-ական թթ. սկզբին ծագած ճգնաժամը տարածվեց նաև Եվրոպական համագործակցության երկրների վրա: Դրան նպաստեց նաև Հունաստանի նույտը:

**Երրորդ փուլը** (1980-ական թթ. կեսերից մինչև 90-ական թթ. սկիզբը), որը համընկնում է Խաղանիայի և Պորտուգալիայի մուտքի հետ, էլ ավելի խորացրեց երկրների զարգացման անհամանանությունները: Սակայն հենց այս ժամանակահատվածում ընդունվեց Միասնական Եվրոպական ակտը, որը հաստատեց ԵՄ երկրների ընդհանուր նպատակը՝ ստեղծել միություն, որը պետք է դառնայի երկրների քաղաքական այսան: Այսինքն՝ տնտեսական, ֆինանսական, հումանիտար և արժութային համագործակցության հետ մեկտեղ առաջնակարգ նշանակություն է ստանում արտաքին քաղաքականության համաձայնեցումը, ներառյալ՝ անվտանգության ապահովումը: Միասնական Եվրոպական ակտի կենտրոնական դրույթը միասնական տնտեսական տարածքի ձևավորումն է, որտեղ մասնակից պետություններից յուրաքանչյուրը պետք է դառնա միասնական տնտեսական օրգանիզմի անբաժանելի մաս:

Միասնական Եվրոպական ակտի միջոցով էլ ավելի խորացան ինտեգրման գործընթացները՝ ներառելով միկրո- և մակրոտնտեսությունները, քաղաքականությունն ու իրավունքը, գիտությունն ու բնապահպանությունը, տարածաշրջանային և սոցիալական զարգացումը: 1990-ական թթ. սկզբին ԵՄ երկրները փաստորեն ավարտեցին ընդիհանուր շուկայի ձևավորումը և թևակողիսցին արժութատնտեսական և քաղաքական միությունների ձևավորումն էտապը:

**Դորրորդ փուլը** (1990-ական թթ. կեսերից մինչև 21-րդ դարի սկիզբը), ԵՄ դրույթներին համապատասխան, 1993թ. հունվարի 1-ից թույլատրվեց համագործակցության շրջանակներում արտադրության գործոնների ազատ տեղաշարժը: 1994թ. հունվարի 1-ից, երբ Եվրոպական տնտեսական համագործակցությունը վերանվանվեց Եվրոպական միություն, իրապարակվեցին նաև հետագա ինտեգրման գործընթացները: Դրանք են՝ 1998թ.-ին Միասնական Եվրոպական բանկի ձևավորումը՝ 2002թ. միասնական արժությի՝ Եվրոյի էմիսիայի իրավունքով, միասնական արևմտաԵվրոպական տարածքի ձևավորումը՝ առանց ներքին սահմանների:

Եվրանիության տնտեսական ինտեգրման նոր որակական զարգացումները կախված են Եվրոպական սահմանադրության ընդունումից, որը անդամ երկրներին համար կձևավորի քաղաքական ինտեգրման հիմք: 2004 թ. հոկտեմբերի 29-ին ԵՄ անդամ-պետությունները ստորագրեցին Եվրոպական սահմանադրություն ստեղծելու մասին համաձայնագիրը: Սահմանադրությունը հիմնված է Եվրոպական ժողովորակավարության վրա, որտեղ արտացոլվել են ԵՄ կառուցման բոլոր արժեքները՝ մարդկային արժանապատվությունը, ազատությունը, ժողովրդավարությունը, հավասարությունը, օրենքի գերակայությունը և մարդկանց իրավունքների հարգանքը:

Միասնական սահմանադրության ընդունման համար անհրաժեշտ է որ, այն վավերացնեն բոլոր անդամ 25 պետությունները, որոնցից 15-ում այդ լիազորությունը տրվել է ազգային պառլամենտներին, իսկ 10 երկրների կառավարություններ սահմանադրությունը ընդունելու են հանրաքվեի միջոցով: Հավանության արժանալու գործընթացի տևողությունը սահմանվեց երկու տարի, իսկ այն ուժի մեջ պետք է մտներ 2006թ. նոյեմբերի 1-ից:

Միասնական Սահմանադրության նախագիծը հավանության արժանացավ 13 երկրներում, դրանք են՝ Ավստրիան, Կիպրոսը, Գերմանիան, Հունաստանը, Հունգարիան, Իտալիան, Իսպանիան, Լատ-

վիան, Լիտվան, Լյուքսեմբուրգը, Մալթան, Սլովակիան, Սլովենիան: Ֆրանսիայի և Հոլանդիայի բնակչությունը, համապատասխանաբար, 2005թ. մայիսի 29-ին և հունիսի 1-ին անցկացված հանրաքենաների ժամանակ միասնական սահմանադրության ընդունումից հրաժարվեց:

Անդամ երկրների դեկավարմերը համաձայնության են եկել 2006թ. ընթացքում անդրադառնալ ազգային քննարկուների գնահատմանը և որոշել ապագա գործողությունների ընթացքը:

### 2.3. Եվրոպական միության կառավարման մարմինները

ԵՄ կառավարումը իրականացնում են հետևյալ հիմնական ինստիտուցիոնալ մարմինները՝ Եվրոպական խորհուրդը, Եվրոպական Միության հանձնաժողովը, Նախարարների խորհուրդը, Եվրոպական պառլամենտը և Եվրոպական դատարանը:

Եվրոպական խորհուրդը ԵՄ հիմնադիր մարմինն է, որը գումարվում է պարբերաբար, ոչ պակաս, քան տարին երկու անգամ: Եվրոպական խորհուրդի անդամ են երկրների դեկավարմերն ու վարչապետը, ինչպես նաև ԵՄ հանձնաժողովի նախագահը: Այս մարմինը գոյություն ունի 1974թ-ից սկսած, իսկ Միասնական Եվրոպական ակտի ընդունումից հետո ստացավ պաշտոնական կարգավիճակ և ներկայումն ԵՄ քաղաքական դեկավար մարմինն է: Այս մարմինն ընդունում է ինտեգրման առանցքային հարցերին վերաբերող որոշումներ՝ Եվրոպական պառլամենտի ընտրություններ, նոր անդամների ընդունում, Եվրոպական արժութային համակարգի ձևավորում, միասնական գիտական քաղաքականության ձևավորում, երրորդ երկրների հետ հարաբերությունների կարգավորում: Խորհրդի նախագահը ԵՄ անդամ երկրներից որևէ մեկի նախագահն է կամ վարչապետը, որը փոխվում է յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ:

Եվրոպական միության հանձնաժողովը ԵՄ վերպետական գործադիր մարմինն է: Բաղկացած է ԵՄ անդամների կառավարությունների կողմից հիմնա տարի ժամկետով նշանակված անդամներից: Սակայն ԵՄ հանձնաժողովի անդամները գործում են անկախ և չեն հրահանգավորվում իրենց կառավարության կողմից: Անդամներից

յուրաքանչյուր գրադիվում է իրեն հանձնարարած ոլորտների կառավարմամբ: Հանձնաժողովի նախագահը նշանակվում է ԵՄ երկրների կառավարությունների և Եվրոպական պառլամենտի համաձայնությամբ՝ ինչպես տարի ժամկետով: Հանձնաժողովը գրադիվում է ԵՄ ամենօրյա գործունեության կառավարմամբ, նշանակվում է առաջարկություններ Եվրոպական խորհրդում քննարկելու համար, վերահսկում է Եվրոպական խորհրդի որոշումների կատարման ընթացքը: Հանձնաժողովը, ԵՄ անունից, կարգավորում է նաև երրորդ երկրների հետ բոլոր փոխարարերությունները, հետևում է առանձին ոլորտներում ԵՄ միասնական քաղաքականության իրականացնանք: Հանձնաժողովի ապարատում աշխատում են 16.000 մարդ, իսկ նատավայոր գտնվում է Բրյուսելում:

Եվրոպական միության նախարարների խորհուրդը միջկառավարական մարմին է, որի ընդունած որոշումները պարտադիր են անդամ երկրների համար: Նախարարների խորհուրդը բաղկացած է քսանիհնագ անդամ պետությունների կառավարությունների ներկայացուցիչներից: Խորհրդի որոշումները հիմնականում գումարվում են Բրյուսելում, կախված քննարկվող հարցերից՝ նիստերին կարող են մասնակցել հանապատասխան նախարարները (արտաքին գործերի, ֆինանսների, գիտության և կրթության և այլն): Որոշումները ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ, իսկ որոշ հարցերի առնչությամբ որոշումներն ընդունելիս պահանջվում է միաձայն քվեարկություն:

Եվրոպական պառլամենտը ժողովրդավարական վերահսկողության մարմին է: Նրա պատգամավորները ընտրվում են համընդիանուր ուղղակի քվեարկության հիմնա վրա, ինչպես տարի ժամկետով և խմբավորվում են ըստ կուսակցական պատկանելության՝ անկախ քաղաքացիությունից: Յուրաքանչյուր երկրից ընտրված պատգամավորների քանակը կախված է տվյալ երկրի տնտեսության տեսակարար կշռից: Պառլամենտի քարտուղարությունը գտնվում է Լյուքսեմբուրգում, նատաշրջաններն անցկացվում են Ստրասբուրգում, իսկ կոմիտեները նիստերն անցկացնում են Բրյուսելում: Այն դեպքում, երբ քննարկվում են ներքին շուկայի, ԵՄ բյուջեի, նոր անդամության, զարգացող և անցման շրջանի երկրների հետ համագործակցելու նախին հարցեր, պառլամենտը որոշումներն ընդունում է Եվրոպական խորհրդի հետ միասին: Պառլամենտը իրավունք ունի անվատահության քվե ներկայացնելու ԵՄ հանձնաժողո-

վիճ, վետո դնել նաև որոշակի ոլորտների վերաբերյալ ընդունված որոշումների վրա (շրջակա միջավայրի պահպանություն, մշակույթ, կրթություն և այլն):

Եվրոպական դատարանը ԵՄ գերազույն դատական մարմինն է, որը բաղկացած է 13 դատավորներից: Նրանք նշանակվում են վեց տարի ժամկետով՝ ԵՄ երկրների կառավարությունների որոշումների հիման վրա: Դատարանը հետևում է ԵՄ իրավական փաստաթղթի կիրառման միանշանակությանը, պարզում է հանձնաժողովի և խորհրդի որոշումների համապատասխանությունը օրենսդրությանը, որոշում է կայացնում ԵՄ օրենսդրական նորմերի կիրառման մասին: ԵՄ յուրաքանչյուր երկիր, ինչպես նաև Եվրոպի կառավարության հանձնաժողովը իրավունք ունեն դատարանում հայց ներկայացնելու այս կամ այն երկրի կողմից օրենսդրական ակտերը չկատարելու դեպքում: Դատարան հայց կարող են ներկայացնել նաև իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք համարում են, որ ԵՄ օրենսդրական ակտերն իրենց վճար են պատճառել:

## 2.4. ԵՄ երկրների տնտեսական մոդելների առանձնահատկությունները

ԵՄ երկրներն այժմ ապահովում են բարձր տնտեսական աճի տեմպեր՝ գրեթե հավասար ԱՄՆ-ի տնտեսական աճի տեմպերին: ԵՄ ժամանակակից տնտեսությանը, ընդհանոր առմանը, բնորոշ են մի շարք միտումներ, որոնցից են:

1. Տնտեսության նոր ճյուղերի՝ բարձր տեխնոլոգիաների և տեղեկատվական համակարգերի զարգացում, որի հաշվին ԵՄ-ը ծգում է հասնել բնակչության գրաղվածության ապահովման անհրաժեշտ մակարդակի: Այժմ բնակչության 61%-ը զբաղված է այդ ոլորտում, և խնդիր է դրվել մինչև 2010թ. այդ թիվը հասցնել 70%-ի: Այդ կապակցությամբ Գերմանիայի կանցլեր Գ.Շրյուդերը 2000թ. լիսարույան հանդիպումից հետո հայտարարեց, որ 10 տարի հետո ԵՄ-ն կդառնա աշխարհի ամենազրակի տնտեսական գոտին:
2. Անդրատլանտյան տնտեսական հարաբերությունների զարգացում. երկու տնտեսական հսկաներ՝ ԵՄ-ը ու ԱՄՆ-ը, որոնք տնտեսական զարգացման մակարդակով գրեթե հա-

վասար են, ավելի ու ավելի են տնտեսապես մերձենում: ԱՄՆ-ի և ԵՄ-ի փոխադարձ առևտուրը այժմ կազմում է ավելի քան 450 մլրդ դոլար կամ համաշխարհային առևտուրի 6%-ը: Նկատվում է նաև համագործակցություն ուղղակի ներդրումների բնագավառում. ԱՄՆ-ի ուղղակի օտարերկրյա ներդրումների 66%-ը ԵՄ-ի կողմից է կատարվում: Ամերիկական ինտեգրման վառ օրինակ են Daimler և Chrysler ընկերությունների, ինչպես նաև Deutsche Bank և Bankers Trust բանկերի միաձուլումը:

3. Մի քանի երկրներում, հատկապես Իտալիայում և Ֆրանսիայում, իրականացվում է պետական հոլդինգների աստիճանական և կշռադատված մասնավորեցում:
4. Վերջին ժամանակներս արագացել են Եվրոպական երկրների խոշոր ընկերությունների միաձուլման գործընթացները: Օրինակ՝ 2000թ. սկզբերին Telecom Italia SPA և Deutsche Telekom ընկերությունների ղեկավարները հայտարարեցին իրենց միաձուլման մասին: Նոր ընկերությունը հեռահաղորդակցության ոլորտում այժմ հավասար մրցակից է այնպիսի հսկա ընկերությունների համար, ինչպիսիք են՝ ամերիկյան AT&T և ճապոնական NNT-ը<sup>35</sup>:

Այժմ կարելի է պնդել, որ ԵՄ-ն ունի ընդհանուր տնտեսական մոդել, որը էականորեն տարբերվում է ամերիկյան և ճապոնական տնտեսական մոդելներից: ԵՄ տնտեսական մոդելի հիմնական առանձնահատկություններից են.

1. ԵՄ գրեթե բոլոր երկրներում պետությունը, հատկապես շուկայի կարգավորման գործում, ունի ակտիվ դեր:
2. ԱՄՆ-ի և ճապոնիայի հետ համեմատած, ԵՄ-ի ՀՆԱ-ում բարձր է պետական հատվածի տեսակարար կշիռը, ընդ որում, պետությունները հանդես են գալիս ոչ միայն որպես շուկայի կարգավորողներ, այլ նաև ակտիվ ծերնարկատերեր:
3. ԵՄ տնտեսական մոդելն ունի սոցիալական ուղղվածություն, որի վառ ապացույցն է տարբեր սոցիալական ֆոնդերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում: Գործազրկությանն առնչվող թոշակները ԵՄ-ում այնքան բարձր են, որ մի կողմից քաղաքացիներին տալիս է հուսալի սոցիալական երաշխիք, մյուս

<sup>35</sup> <http://www.europa.eu.int/comm>

- կողմից՝ իջեցնում է քաղաքացիների կողմից նոր աշխատանքի փնտրման ազդակները:
4. ԵՄ-ին բնորոշ է արդյունավետ արտաքին տնտեսական մոդել, որը թույլ է տալիս, առանց տնտեսությանը վճառ հասցնելու, պահպանել զանգվածային պահանջարկ ունեցող ապրանքների գների բարձր մակարդակը ներքին շուկայում և, միաժամանակ, իրականացնել այդ ապրանքների շահավետ արտահանումը: Բանն այն է, որ ԵՄ սահմաններում որոշակի խումբ ապրանքների համար գանձվում են փոխհատուցման հարկեր, որոնց չափը սահմանվում է այնպես, որ այդ ապրանքների գների և փոխհատուցման հարկերի գումարը հավասար լինի ներքին շուկայի գներին: Այդ փոխհատուցման հարկերն ուղղվում են հատուկ արտարյուջետային հիմնադրամ: Եթե այդ ճյուղի ծերնարկությունները արտահանում են արտադրանք, ապա այդ հիմնադրամից ստանում են փոխհատուցում՝ համաշխարհային և ներքին գների տարբերության չափով:
- Չնայած այս ընդհանուր առանձնահատկություններին, ԵՄ յուրաքանչյուր երկիր ունի նաև իրեն ներհատուկ մոդել: Այժմ դիտարկենք այդ մոդելներն առանձին-առանձին:
- Այսպես, **Գերմանիայի տնտեսության զարգացման ժամանակակից մոդելին** բնորոշ է.
1. հետինդուստրիալ տնտեսական կառուցվածք, ընդ որում՝ ծառայություններին բաժին է ընկնում ՀՆԱ-ի 64.4%-ը, արդյունաբերությանը՝ 34.5%-ը, գյուղատնտեսությանը՝ 1.1%-ը,
  2. հզոր պետություն, որի բյուջեի տեսակարար կշիռը գերազանցում է ՀՆԱ-ի 50%-ը,
  3. տնտեսության սոցիալական ուղղվածություն. սոցիալական ֆոնդերը գերազանցում են աշխատավարձի ֆոնդերը,
  4. օտարերկրյա ներդրումների ցածր մակարդակ, որը կազմում է ընդհանուր ներդրումների ընդամենը 7.5%-ը, այն դեպքում, եթե Նիդեռլանդներում 35% է, իսկ Մեծ Բրիտանիայում՝ 25%,
  5. արտահանման բարձր տեսակարար կշիռ (10%),
  6. պետական վճասաբեր ճյուղեր՝ ածխի, պողպատի սուբսիդավորում,
  7. կապիտալի արտահանման բարձր մակարդակ,
  8. գործազրկության բարձր մակարդակ, որը կազմում է աշխատումակ բնակչության 10%-ը, թեև Գերմանիային բնորոշ է նաև էժան աշխատուժի ներմուծում,
  9. մեծ ծախսեր՝ կապված արևելյան և արևմտյան հողերի միացման հետ (մոտ 2 տրիլիոն մարկ):
- Գերմանիայի կանցլեր Գ.Շրյոդերն այժմ վարում է, այսպես կոչված, «նոր կենտրոնի» քաղաքականություն, որը նախատեսում է հետևյալ բարեփոխումները.
- ֆեդերալ բյուջեի ծախսերի կրճատում՝ ավելի քան 16 մլրդ դոլարով,
  - հարկերի կրճատում՝ 45-ից մինչև 35%,
  - թոշակների կրճատում,
  - աշխատանքային օրենսդրության փոփոխում և ճկուն աշխատանքային շուկայի ստեղծում:
- Ֆրանսիայի տնտեսական մոդել** ինչ-որ չափով նման է գերմանիականին.
1. Բացառությամբ՝ ավելի մեծ է պետության դերը. Ֆրանսիայի չիոնվճիկները ամենազդեցիկ խավն են,
  2. Ֆրանսիայի պետական հատվածում աշխատում է զբաղվածների 24%-ը,
  3. Ֆրանսիան ունի «սոցիալական բարեկեցության» ստեղծման ուղղվածություն. սոցիալական ծախսերն ամենաբարձրն են ամբողջ աշխարհում,
  4. բավականին բարձր է գործազրկության մակարդակը (12%),
  5. օտարերկրյա աշխատուժը, ընտանիքների հետ, կազմում է մոտ 4.5 մլն մարդ:
- 90-ական թթ. անցկացվեցին մի շարք բարեփոխումներ L. ժուանի կողմից, ըստ այդմ մասնավորեցվեցին մի շարք հսկա ընկերություններ և փոփոխվեց աշխատանքային ռեժիմը, որը դրականորեն անդրադապտ տնտեսության վրա:
- Իտալական տնտեսական մոդելն ունի հետևյալ առանձնահատկությունները.
1. Իտալիան, զարգացած երկրների հետ համեմատած, ունի մեծ պետական հատված, որը վերահսկում է տնտեսության 50%-ը և բանկային համակարգի 70%-ը:
  2. Իտալիան համարվում է Արևմտյան Եվրոպայի ամենակարգավորվող երկիրը, չնայած այստեղ գործում են ավելի քան

- 150 հզր տնտեսական օրենքներ, այնուամենայնիվ, կաշառակերությունը հտալիայի պետական համակարգի դժբախտությունն է. ստվերային շուկային բաժին է ընկնում ընդհանուր շրջանառության 30%-ը:
3. Իտալիայի տնտեսությանը բնորոշ է միջին և փոքր բիզնեսը. զբաղվածների 70%-ը աշխատում է 50-ից պակաս աշխատող ունեցող ընկերություններում, իսկ 30%-ը անհատ ձեռներեցներ են:
  4. Իտալիայում ակնհայտ է տարբեր շրջանների տնտեսությունների և կենսամակարդակների տարրերությունը: Երկրի հյուսիսը բոլոր ցուցանիշներով առաջ է հարավից. Իտալիայի 3 նահանգները՝ Լոմբարդինը, Պյեմոնտը և Վենետիկան ապահովում են երկրի ՀՆԱ-ի 40%-ը:
  5. Իտալիայի տնտեսությանը բնորոշ է արտադրության կուտակվող ձևը. այժմ Իտալիայի կենտրոնում առաջացել է մի հսկա կուտակում հազարավոր միջին և փոքր ձեռնարկություններից բաղկացած:

Անգլիական տնտեսական մոդելը եականորեն տարբերվում է մյուս երկրների տնտեսական մոդելներից և այժմ ավելի մոտ է ամերիկյանին: Մինչ 70-ական թթ. ավելի մոտ էր եվրոպականին՝ պետության ակտիվ դերով և պետական հատվածի մեջ տեսակարար կը ցով: 1979թ., եթե իշխանության գլուխ կանգնեց Ս. Թետչերը, իրականացվեց պետական ձեռնարկությունների զանգվածային ապապետականացում, կրծատվեց պետական ապարատը և նվազեցվեցին հարկերը, որի արդյունքում տնտեսությունը ուղղի կանգնեց: Անգլիայի տնտեսությանը բնորոշ են:

1. տնտեսության մեջ պետության ոչ մեջ տեսակարար կշիռ (ՀՆԱ-ի 20%-ը),
  2. գործազրկության ցածր մակարդակ (տնտեսապես ակտիվ բնակչության 4.9%-ը),
  3. արժեգոլման ցածր մակարդակ (3.3%),
  4. ձեռնարկության շահութահարկի ցածր մակարդակ,
  5. բարենպաստ ներդրումային միջավայր, որի շնորհիվ երկրում գործում են 13 հազարից ավելի արտասահմանյան ֆիրմաներ:
- Մեջ Բրիտանիայում ծառայությունները կազմում են ՀՆԱ-ի 66.8%-ը, արդյունաբերությունը՝ 31.4%-ը, գյուղատնտեսությունը՝ 1.8%-ը:

ԵՄ երկրների շարքում հատկապես ուշադրության է արժանի շվեյչական տնտեսական մոդելը: Պետական հատվածին բաժին է ընկնում ՀՆԱ 70%-ը, պետությունը երաշխավորում է նվազագույնը 1600 դոլար աշխատավարձ: Սակայն վերջին 30 տարիներին տնտեսությունը զարգանում է դանդաղ տեմպերով, որի հիմնական պատճառներից մեկը բարձր եկամտահարկն է: Շատ ընկերություններ սկսել են իրենց գրասենյակները տեղափոխել երկրի սահմաներից դուրս, որպեսզի դեկավար աշխատակազմը չվճարի բարձր հարկեր:

Ուշադրության է արժանի նաև իսպանական տնտեսական մոդելը: Արագ զարգացող իսպանիան ունի ԵՄ առաջատար երկրների շարքը դասվելու հավակնություն: Իսպանիայում հատկապես զարգացում են ապրում մերենաշխնությունն ու գիտատար ապրանքների արտադրությունը: Արտաքին տնտեսական ոլորտում իսպանիայի համար կարևոր են Լատինական Ամերիկայի հետ կապերը, իսկ երկրում մեծ տեսակարար կշիռ ունի օտարերկրյա կապիտալը: Չնայած այս ամենին՝ երկիրը գուրկ չէ մի շարք խնդիրներից. հատկապես մեծ է գործազրկության մակարդակը՝ մոտ 3.5 մլն մարդ, որը ամենաբարձր ցուցանիշն է ԵՄ երկրների շարքում: Բացի այդ, վերջին տարիներին կտրուկ նվազել է ծնելիությունը: Անբավարար է նաև կրթության մակարդակը, և այդ պատճառով իսպանիան գիտական հետազոտությունների բնագավառում ԵՄ երկրների շարքում ամենավերջինն է:

90-ական թթ. կտրուկ զարգացավ իռլանդիայի տնտեսությունը, որին նպաստեց օտարերկրյա կապիտալի համար օֆշորային պայմանների ստեղծումը: Այդ ժամանակահատվածում ՕՈՒՆ-երի թիվը հասավ 7 մլրդ դոլարի: Օգտագործելով այդ ներդրումները և համեմատաբար էժան աշխատում՝ իռլանդիան մեծ զարգացում ապեց տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում<sup>36</sup>:

Մնացած երկրների տնտեսական մոդելները նման են վերը նշվածներին. Ֆինլանդիայինը և Դանիայինը՝ շվեյչականին, Պորտուգալիայինը և Հունաստանինը՝ իտալականին և իսպանականին, Ավստրիայինը, Նիդեռլանդներինը և Լյուքսեմբուրգինը՝ գերմանականին:

<sup>36</sup>Ա. Գ. Մովսեսյան, Մировая экономика, Финансы и статистика, М., 2002, с. 488.

## 2.5. ԵՄ-ի սոցիալական և գյուղատնտեսական քաղաքականությունը

ԵՄ ժամանակակից սոցիալական քաղաքականության իրավական հիմքը կազմում է պայմանագիրը, ըստ որի նախատեսվում է:

- քաղաքացիների ազատ տեղաշարժ,
- անդամ երկրների գրադարձության քաղաքականության կողմինացում,
- տնտեսական և սոցիալական միասնության ամրապնդում,
- շրջակա միջավայրի պահպանման միասնական քաղաքականություն,
- առողջության պահպանման ձգտում,
- բարձրորակ կրթության կազմակերպում,
- սպառողների շահերի պաշտպանություն<sup>37</sup>:

ԵՄ զարգացման ժամանակակից փուլում կատարվել է սոցիալական գործառնությունների նոր վերաբաշխում՝ կառավարման խորհրդի և ազգային կառավարությունների միջև: Եվրոպական հանձնաժողովը պատրաստել է 3 ծրագրային փաստաթղթեր.

- Կանաչ գիրք «Միության համար այլընտրանքներ» (1993 նոյեմբեր),
- Սպիտակ գիրք «Եվրոպական սոցիալական քաղաքականություն: Միության համար ճանապարհներ» (1994 հուլիս),
- «Միջնաժամկետային ծրագիր սոցիալական գործողությունների համար» (1995-1997)<sup>38</sup>:

Այս բոլոր փաստաթղթերում առկա է երկու փոխադարձ նպատակների իրականացում. առաջին՝ արդյունավետ օգտագործել մարդկային ռեսուրսները, որպեսզի լիարժեք պաշտպանվեն աշխարհում խոշոր միասնական շուկայի շահերը, երկրորդ՝ բարձրացնել բնակչության գրադարձությունը:

Ընդհանրապես, ԵՄ գլխավոր քաղաքականությունը, 90-ական թվականներից սկսած, բնակչության գրադարձության խնդիրն է, որն այսպես է ձևակերպված սոցիալական քաղաքականության Սպիտակ գրքում. «Բավականին երկար ժամանակ Եվրոպան իր

հիմնական ուժերը կենտրոնացրել է գործազրկության կարգավորման խնդրի շուրջ, այն ժամանակ, երբ առաջնայնությունը պետք է տրվի նոր աշխատատեղերի ստեղծմանը»: Նման խնդրի լուծումը պահանջում է տնտեսական և սոցիալական քաղաքականությունների ուղղությամբ մի շարք համաձայնագրերի կնքում, քանի որ անհրաժեշտ է, մի կողմից, խթանել տնտեսական աճը և ներդրումները, որոնք ստեղծում են նոր աշխատատեղեր, իսկ մյուս կողմից՝ ավելացնել «մարդկային կապիտալի» ներդրումը, այսինքն՝ նոր որակի աշխատումի պատրաստումը: Այս մոտեցումը իր արտացոլումն է գտնել Եվրոպական խորհրդի 1993թ. Բրյուսելի նստաշրջանում հաստատված գրադարձության ռազմավարության մեջ, որտեղ ընդգծված են 7 հիմնական ուղղություններ.

- կրթական համակարգի և մասնագիտական վերապատրաստման կատարելագործում,
- ծեռնարկությունների և ընդհանրապես աշխատանքի շուկայի ավելի ճկուն քաղաքականություն,
- աշխատանքի կազմակերպման կատարելագործում՝ ըստ առանձին ծեռնարկությունների,
- պետական ֆոնդերի պելի արդյունավետ օգտագործում,
- գրադարձության աճի օժանդակում:

Զբաղվածության նման ռազմավարությունը պայմանավորված է ԵՄ միասնական շուկայի ստեղծմամբ<sup>39</sup>:

Այդ խնդրի լուծումը հեշտ չէ, քանի որ աշխատումի շարժունակությունը գիշում է կապիտալի շարժունակությանը: Այդ պատճառով ԵՄ սոցիալական քաղաքականությամբ նախատեսվում է վերանայել մի շարք այնպիսի միջոցառումների իրականացում՝ կապված աշխատումի շարժունակության մեծացման հետ, ինչպիսիք են՝ մասնագիտական դիմունների ճանաչումը և բոշակառուների իրավունքների պաշտպանությունը:

ԵՄ սոցիալական ծախսերը այժմ կազմում են մոտ 2011.3 մլրդ եվրո, իսկ ըստ որոշ կանխատեսումների դա կաճի՝ 2006թ. հասնելով 2800 մլրդ եվրոյի<sup>40</sup>: Միևնույն ժամանակ, ԵՄ սոցիալական ոլորտի հաշվետվությունները վկայում են այն նաև, որ սոցիալական քաղաքականության կարգավորման դերը գնալով մեծանում է:

<sup>37</sup> European Union.Consolidated Versions of the Treaty Com European Union und the Treaty Establishing the European Community, page43-44.

<sup>38</sup> MԹսМО, N 9,2000,cmp. 19.

<sup>39</sup> European employment und social policy, European Communities. 2000.

<sup>40</sup> MԹսМО, N 2, 2002.

Եվրոմիության ինտեգրման գործընթացները լուծեցին նաև գյուղատնտեսական արտադրանքի վաճառքին առնչվող խնդիրները, երբ ստեղծվեց միասնական գյուղատնտեսական շուկա, որը սկսել է գործել դեռևս 1968թ.: Այդ նպատակով մշակվեց միասնական գյուղատնտեսական քաղաքականության ծրագիր, որի արդյունքում հաճախ ԵՄ երկրները կարողանում էին իրենց արտադրանքը վաճառել 30% և ավելի բարձր գներով: Միասնական քաղաքականության շնորհիվ աճեց գյուղատնտեսական արտադրանքի բերքատվությունը, և զարգացավ միջին ֆերմերությունը: Միասնական գյուղատնտեսական քաղաքականության հիմնական լծակը գնագոյացման արդյունավետ մեխանիզմի կիրառումն է, որը մշակված է ինչպես յուրաքանչյուր գյուղատնտեսական արտադրանքի, այնպես էլ յուրաքանչյուր վայրի համար:

Միասնական գյուղատնտեսական քաղաքականության ծրագիրն ընդգրկում էր հետևյալ 5 կարևոր խնդիրները.

1. գյուղատնտեսական ապրանքների ծավալների անընդհատ աճ,
2. ֆերմերների և նրանց ընտանիքների կենսամակարդակի անընդհատ բարձրացում,
3. գյուղատնտեսական մթերքների կայուն մատակարարում,
4. գյուղատնտեսական մթերքների երաշխավորված գնումներ,
5. սպառողներին հասանելի գների մակարդակ:

Միասնական գյուղատնտեսական քաղաքականության իրականացման հիմնական տարրերն են.

1. Միասնական գների սահմանում և դրանց պաշտպանության միասնական մեխանիզմի ձևավորում, որն իրականացվում է կարևոր գյուղատնտեսական մթերքների գների նախնական սահմանամաս հիմնան վրա: Եթե այդ մթերքների գները շուկայում 10% և ավելի ցածր են լինում, ապա ԵՄ մարմիններն իրականացնում են մթերքների երաշխավորված գնումներ՝ գները սահմանված մակարդակին հասցնելու համար: Ընդհանուր առնամբ, գյուղատնտեսական մթերքների շուկայում գործում են 3 տեսակի գներ:
- Կողմնորոշիչ գին. սա այն գինն է, որով պետք է գյուղատնտեսական մթերքները վաճառվեն ներքին շուկայում:
- Միջամտիչ գին, որով գնվում կամ վաճառվում են ապրանքները, եթե գյուղատնտեսական մթերքների գինը շեղվում է

կողմնորոշիչ գնից:

- Արտաքին առևտորային գին, որի հիման վրա վաճառվում են գյուղատնտեսական մթերքները արտաքին շուկաներում:
- 2. ԵՄ երկրների միջև գյուղատնտեսական մթերքների ազատ տեղաշարժ առանց մաքսատուրքերի և քանակական սահմանափակումների: Սա, 3-րդ երկրների հետ գյուղատնտեսական մթերքների առևտուր իրականացնելիս, ենթադրում է սակագնային կարգավորման միասնական կանոններ և միասնական սակագնային դրույցներ, ընդ որում՝ ներմուծման ժամանակ գանձվում են կոմպենսացնող (փոխհատուցման) հարկեր, իսկ արտահանման դեպքում, եթե գործընկեր երկրներում արտադրության ծախքերն ավելի փոքր են, ֆերմերներին տրամադրվում են սուբսիդիաներ՝ արտահանված ապրանքները համաշխարհային շուկայում բարձր գներով վաճառելու համար: Բացի դրանից, որոշ երկրների հետ ԵՄ-ը կնքում է համաձայնագրեր, որով նրանք պարտավորվում են ապրանքների գները սահմանել կողմնորոշիչ գնի սահմաներում: Միասնական գյուղատնտեսական քաղաքականության իրականացման համար պատասխանատու են Եվրոպական խորհրդը և հանձնաժողովը:
- 3. Միասնական գյուղատնտեսական ֆինանսավորման իրականացում, որը կատարվում է Գյուղատնտեսական կողմնորոշման և երաշխիքների եվրոպական ֆոնդի (FEOGA) կողմից: Այս ֆոնդը ձևավորվում է ներմուծման կոմպենսացնող (փոխհատուցման) տուրքերի և բյուջեի միջոցների հաշվին: Կողմնորոշման ֆոնդը ծախսվում է գյուղատնտեսական մթերքների բերքատվության բարձրացման նպատակով, իսկ երաշխիքների ֆոնդը՝ գների մակարդակի պահպանման նպատակով:

Այսպիսով, ԵՄ-ը, ապահովելով գյուղատնտեսության ոլորտում աշխատողների աշխատանքի համար բարենպաստ պայմաններ, ստեղծելով բարձր արտադրողականություն ունեցող ճյուղ, նպատակադրվել է խորացնել 1992թ. բարեփոխումները՝ պլանավորելով մսի, կաթի գների հետագա նվազեցում, որն ուղեկցվելու է արտադրողներին ուղղակի վճարումների ձևով տրամադրվող փոխհատուցումներով:

## **2.6. ԵՄ ինտեգրման արդի մողելը և Եվրոպական արժութային համակարգի ձևավորումը**

Տնտեսական և արժութային միուրյունը միասնական շուկայի տրամաբանական ուղեկիցն է և հիմնական քաղաքական ուղեմիշն այն ճանապարհի վրա, որը տանում է դեպի միացյալ Եվրոպա: Միջազգային արժութային համակարգի անկայունության պայմաններում, հատկապես երբ անցում կատարվեց լողացող արժութային կուրսերին, ԵՏՀ երկրները փնտրում էին փոխադարձ ճշտական արժութային հարաբերությունների հաստատման ճանապարհներ, և, այսպիսով, ձևավորվեց Եվրոպական արժութային համակարգը (ԵԱՀ):

ԵՄ արժութային համակարգի ձևավորման պայմանը դարձավ անդամ երկրների կողմից «համատեղ լողացող փոխարժեքների ռեժիմ» կիրառումը, որը գործեց 1972թ-ից մինչև 1979 թիվը:

- Եվրոպական արժութային համակարգի հիմնական տարրերն են.
1. **Էքյուի ստանդարտը:** Սա տարածաշրջանային հաշվարկային արժութային միավոր էր և ներկայացնում էր արժութային գամբյուտ: Արժութային գամբյուդի մեջ յուրաքանչյուր երկրի տեսակարար կշիռը որոշվում է համագործակցող երկրների մեջ յուրաքանչյուր երկրի ՀՆԱ-ի և ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշռով: Այդ ցուցանիշն ամենաբարձր դրսնորումն ունեցել է Գերմանիայում, որի բաժինը արժութային բաղադրամասում մոտավորապես 33.3 % էր:
  2. **Արժութային փոխարժեքների լողացող մեխանիզմ:** Կախված համագործակցության մեջ մտնող երկրների տնտեսական զարգացման մակարդակից, այդ երկրների արժութային փոխարժեքների կայունությունից, փոխամեթեքների տատանման շրջանակները սահմանվեցին  $\sim 1,25\%$ -ի (իտալական լիրայի համար՝ բաղադրամասում  $\sim 6\%$ ) շրջանակներում: Էքյուի գամբյուրը սահմանելիս արժույթների փոխարժեքները միմյանց նկատմամբ ֆիքսվեցին: Սակայն փոխարժեքի տատանումների կենտրոնական մակարդակը սահմանվեց  $\sim 2,25\%$ : Այս սահմանների առկայությունը թույլ է տալիս խոսելու «Եվրոպական արժութային օճ» հասկացության մասին: 1993թ. Եվրոպական տնտեսական համագործակցու-

թյան արժութային համակարգում տեղի ունեցած ճգնաժամերի պատճառով՝ կապված իտալական լիրայի, իսպանական և պորտուգալական էվկաղոյի և պեսեդայի արժեզրկման հետ, թույլատրվեց արժութային փոխարժեքի տատանումները կարգավորել  $\sim 15\%$  համարժեքության շրջանակներում:

3. **Արժութային փոխարժեքի հաշվակների իրականացման կապակցությամբ ինտերվենցիաների մեխանիզմ:** Սա ենթադրում է, որ արժույթների փոխարժեքի տատանման դեպքում, նաև վճարային հաշվեկշռի պակասուրի փակման նպատակով, երկրների կենտրոնական բանկերը կարող են տրամադրել կարճաժամկետ վարկեր, իսկ փոխադարձ հաշվարկների իրականացման համար արժութային շուկաներում գնել կամ վաճառել օտարերկրյա արժույթներ:
4. **Եվրոն՝ որպես տարածաշրջանային արժութային միավոր:** Դելորը՝ Եվրոպական տնտեսական հանձնաժողովի նախագահը, առաջարկում էր աստիճանաբար անցում կատարել միասնական դրամաշրջանառության՝ ստեղծելով միասնական դրամական միավոր: Այդ նպատակով առաջին փուլում պետք է ձևավորվեր և ձևավորվեց Եվրոնիության կենտրոնական բանկը (ԵԿԲ)՝ 1998թ-ի գարնանը: Երկրորդ փուլում նախատեսվում, որ որոշել Եվրոյի գոտու երկրների շրջանակը և աստիճանաբար Եվրոն նայում էր շրջանառության մեջ, որպես հաշվարկային միավոր, էքյուի հետ 1/1 հարաբերությամբ: 1999թ. հունվարի 1-ին Եվրոն, որպես տարածաշրջանային արժութային միավոր, փոխարինեց էքյուին: Ոչ կանխիկ Եվրոն բարեհաջող կերպով մուտք գործեց դրամական և ֆինանսական շուկաներ: 2002թ. հունվարի 1-ին Եվրոն ներկայացվեց թղթադրամների և մետաղադրամների տեսքով՝ մտնելով շրջանառության մեջ: 2002թ-ի նարուի 1-ից Եվրոն դարձավ միակ օրինական արժույթն Եվրոնիության երկրների համար: Այս իրադարձությունը նշանակում է անցում մեկ միասնական արժութային միավորի: Փաստորեն, այս ամենը հետևողաբար հանգեցրեց «Դելորի պլանի» իրագործմանը՝ Եվրոպական տնտեսական ինտեգրումը տեղափոխել բարձրագույն՝ տնտեսական և արժութային միուրյան ձևավորման փուլ:

## **ԵՎՐՈՅԻՆ ԱՆԳՄԱՆ ԱԼԳՐՈՒԹՅՈՒՆԵՐԸ**

Մասատրիտի պայմանագրի համաձայն, երկիրը կարող էր մտնել Եվրոպական արժութային համակարգ միայն որոշակի պահանջների կատարման դեպքում: Դրանք են.

1. Արժեզրկման տեմպերը չպետք է գերազանցեն ամենաբարձր գների աճ ունեցող 3 երկրների ցուցանիշը՝  $^{\circ}1,5\%-ով$ ,
2. Բյուջեի պակասուրդը (դեֆիցիտը) չպետք է գերազանցի ՀՆԱ-ի ցուցանիշը  $3\%-ով$ ,
3. Արտաքին պարտքը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի ցուցանիշը  $60\%-ով$ ,
4. Արժութային փոխարժեքի տատանումները վերջին 3 տարիների ընթացքում չպետք է գերազանցեն ԵԱՀ-ի համար սահմանված ցուցանիշը  $^{\circ}15\%-ով$ :

Այս պահանջներն 100%-ով բավարարում էին միայն Գերմանիան, Ֆրանսիան, Բելգիան: Մնացած երկրները՝ միայն 50-70%-ով: Անգլիան, Վստահ չլինելով, չհամաձայնվեց մտնել այդ գոտու մեջ: Դանիան սահմանադրական հակասություններ ունի այս գոտու առնչությամբ: Շվեդիան պետք է ստանա ժողովրդի համաձայնությունը: Ներկայումս Եվրոյի գոտին ընդգրկում է 12 երկրներ՝ Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա, Նիդեռլանդեր, Բելգիա, Լյուքսեմբուրգ, Իռլանդիա, Իսպանիա, Պորտուգալիա, Ավստրիա, Ֆինլանդիա, Հունաստան:

Արժութային հարաբերությունները ԵՄ երկրների շրջանակներում, մինչև 1994թ., կարգավորվում էին Արժութային համագործակցության Եվրոպական ֆոնդի միջոցով: 1994թ-ից սկսած այդ գործառույթն իրականացնում էր Եվրոպական արժութային ինստիտուտը: 1998թ. հունիսի 1-ից մինչ այսօր այդ պարտավորությունը դրված է Եվրոպական կենտրոնական բանկի (ԵԿԲ) վրա: Բանկի հիմնական նպատակը գների կայունության պահպանումն ու միասնական դրամական քաղաքականության վարումն է Եվրոյի երկրների շրջանակներում:

Նշվածն իրագործվում է ուղղակիորեն ԵԿԲ-ի գործողությունների միջոցով և ազգային կենտրոնական բանկերի հետ համագործակցության ճանապարհով: ԵԿԲ-ի և Եվրոյի տարածքի երկրների ազգային կենտրոնական բանկերը միասին կազմում են Եվրոպակարգը, որի նպատակը գների կայունության պահպանումն է: Դա իրականացվում է հետևյալ գործառույթների միջոցով:

1. դրամական քաղաքականության մշակում և իրականացնում,
2. արժութային գործառնությունների վարում,
3. վճարային համակարգերի կառավարում:

Եվրոյի դրամանիշերի վրա պատկերված են պատուհաններ, դարպասներ և կամուրջներ: Բաց լինելու և հաղորդակցվելու այս խորհրդանիշները նպատակ ունեն ստեղծելու միասնականության զգացում Եվրոպայի երկրների միջև: Միաժամանակ այս խորհրդանշաններն արտացոլում են Եվրոպայի վերաբերմունքն աշխարհի մնացած երկրների նկատմամբ: Եվրոյն Եվրոպի հույսը երկրներում ունի մեկ ձևավորում: Դիմային մասում պատկերված է տվյալ երկրի խորհրդանիշը, իսկ մյուս կողմում՝ Եվրոպի հույսը 12 աստղերու: Գերմանիայի խորհրդանիշն արծիվն է, Ֆրանսիայինը՝ կյանքի ծառը, Իտալիայինը՝ Լեռնարդո դա Վինչիի նկարը, Իռլանդիայինը՝ իռլանդական քնարը, Իսպանիայինը՝ Խուան Կարպոս թագավորի պատկերը, Պորտուգալիայինը՝ 1100թ. Կնիքը՝ դոյչակներով և գերերով պատկերված, Ֆինլանդիայինը՝ 2 կարապ՝ լճի վրա, Բելգիայինը՝ Ալբերտ թագավորը:

Այսպիսով, Եվրոյն, որպես տարածաշրջանային արժութային միավոր, խորհրդանշում է միասնական շուկայի ստեղծման գործընթացի ավարտը և տնտեսական քաղաքականության նոր իրանի ստեղծումը:

## **ԵՎՐՈՅԻ ՊՐԱԵՍ ՄԻՋԱՋԱՅԻՆ ԱՐԺՈՒՅՐ և ԴՐԱ ԿԱՎՈՐ ԻԻՄՄԱԿԱՆ ՄԻՋԱՋԱՅԻՆ ԱՐԺՈՒՅՐՆԵՐԻ հետ**

Եվրոյի՝ որպես միջազգային տարածաշրջանային արժույթի հայտնվելը դարձավ տնտեսական կոնֆլիկտի լուծում: Անցյալում տնտեսական և քաղաքական պատճառներով որոշ երկրներ որդեգրում էին ակտիվ դիրք՝ կապված իրենց սեփական արժույթի միջազգայնացման հետ՝ խրախուսելով կամ խանգարելով դրա արտաքին օգտագործումը: Այս առումով, Եվրոպի միջազգայնացմանը՝ որպես քաղաքական նպատակ, ո՞չ էլ փորձում էր արգելվ դրա օգտագործումը ոչ ռեգիստրացների կողմից: Եվրոյի միջազգային դերը սահմանվել և շարունակվում է սահմանվել շուկայի մասնակիցների կողմից՝ շուկայի ազատականացման, ինտեգրման պայմաններում:

Քազմակի արժույթների և առևտի ներկայիս աշխարհում արտասահմանյան գործարքներով զբաղվողները բախվում են ար-

ժույթների գնման և վաճառքի խնդիրներին: Երբ որևէ արժույթով իրականացվող գործարքների ծավալը մեծ է, գնորդի և վաճառողի միջև գործարքի իրականացման ժամանակահատվածը ավելի կարծ կլինի, արժույթի ավելի փոքր քանակության պաշարներ կարող են պահպել: Այսպիսով, ավելի նպատակահարմար է միջազգային գործարքներն իրականացնել մեկ միասնական արժույթով՝ շրջանցելով մյուս արժույթների առաջարկը և պահանջարկը: Որքան մեծանում է մեկ արժույթով իրականացվող գործարքների թիվը, այնքան տվյալ արժույթը դառնում է ավելի ընդունելի միջազգային գործարքներում, քանի որ գնորդի և վաճառողի գների միջև տարբերությունը փոքրանում է, իսկ իրացվելիության մակարդակը մեծանում է: Քանի որ ցանկացած նմանատիպ արժույթի գրավչությունը մեծանում է՝ կապված դրա իրացվելիության մեծացման հետ, միջազգային արժույթը, բնականաբար մենաշնորհ ձեռք բերելու միտում ունի:

Եվրոն երկրորդ միջազգային ներդրումային և պահուստային արժույթն է ԱՄՆ դոլարից հետո: Եվրոյի շուկայի մասնաբաժինը բավականին գերազանցում է ճապոնական իենի բաժինը: Արտասահմանյան բանկի դիրքերի 1/4-ը տնօրինում է Եվրոն, ԱՄՆ դոլարի և իենի համապատասխան բաժինները կազմում են ավելի քան 40% և 10%: Շրջանառության մեջ գտնվող միջազգային արժեթղթերի 30%-ը հաշվարկվում է Եվրո միջազգային արժույթով, ԱՄՆ դոլարով՝ 48%-ը և ճապոնական իենով՝ 10%-ը<sup>41</sup>: Եվրոնիության դեռ համաշխարհային առևտորում օրեցօր ավելի է կարևորվում հաշվի առնելով նաև դրա գործառույթները ֆինանսական շուկաներում: Եվրոյի երկրների տնտեսությունը հասել է ԱՄՆ տնտեսության մակարդակին: Եվրոպական հեռահաղորդակցության և վճարային համակարգերի առաջարկացումները նպաստեցին միասնական ֆինանսական համակարգի ձևավորմանը, որը ներկայում գիշում է միայն ԱՄՆ-ին:

Եվրոյի շրջանառության ծավալը մեծանում է միջազգային ֆինանսական շուկաներում: Եվրոն շահույթ է ստանում ցածր տոկոսադրույթի շնորհիվ: Վերջինիս գումարվում է նաև Եվրոյի անկում ապրող փոխարժեքը և, այսպիսով, նպաստում օտարերկրյա թողարկողների ներգրավմանը ամբողջ աշխարհում: Եվրոյի փոխար-

ժեքի տատանումները համեմատելի են դոլարի պատմական տատանումների հետ, ինչը չի կարելի ասել Եվրոմիության արժույթների (հատկապես գերմանական մարկի) մասին մինչ Եվրոյի հայտ գալը: Դոլարը, չնայած տատանումներին, մինչ այժմ էլ պահպանում է իր դիրքը՝ որպես աշխարհի գլխավոր արժույթ:

Եվրոն, որպես պահուստային արժույթ, հաջողության կիասմի, երբ վստահություն ձեռք բերի մասնավոր շուկայի մասնակիցների շրջանում: Որոշ գործառույթներ դեռևս սահմանափակում են Եվրոյի՝ որպես միջազգային արժույթի դերը: Թեև Եվրոյի՝ որպես պահուստային արժույթի դերն ավելի արդիական է, ԱՄՆ դոլարը մնացել է գլխավոր պահուստային արժույթ: Դոլարը և՛ գննան, և՛ արժենշման գլխավոր միջազգային արժույթն է: Այս երկուսի միջև ճեղքածքը մեծ է: ԱՄՆ գնահատումների համաձայն, օտարերկրյա պահուստների 12.5%-ը բաժին է ընկնում Եվրոյին, ԱՄՆ դոլարի բաժինը կազմում է 66.2%, իսկ իենինը՝ 5.1%:

Եվրոյի՝ Վերջին շրջանի անկայունության պատճառները կապված են դրա փոխարժեքի տատանումների հետ, որը Ատլանտյան օվկիանոսի յուրաքանչյուր կողմի մակրոտնտեսական ցնցումների հետևանք էր: Այստեղ կարելի է նշել հետևյալ հանգամանքը: Եթե Գերմանիայի հարկային բարեփոխումների հաջող անցկացումը գորեք նկատելի չէր Եվրոյի փոխարժեքի առնչությամբ, ապա ԱՄՆ ՉՍԱ ծավալի զարմանալի մեծ աճն ավելի արագ արտացոլվեց Եվրոյի փոխանակային արժեքի վրա՝ հանգեցնելով դրա համապատասխան չափով անկմանը: Չետևաբար՝ Եվրոյի տարածքը դեռևս զգայում է աշխարհում տեղի ունեցող հրադարձությունների նկատմամբ:

Եվրոն շրջանառվում է Եվրոմիության տարածքից դուրս ևս 55 երկրներում՝ հատկապես Աֆրիկայում, Միջին Արևելքում, որոնք գտնվում են սերտ առևտրային կապերի մեջ Եվրոմիության հետ:

Եվրոյի հետագա ազդեցությունը կախված է Երկու գործոններից:

1. Եվրոյի տարածքից կամ չափի գործոնից,
2. ռիսկի գործոնից:

Ծնորհիվ չափի գործոնի՝ Եվրոմիության կապիտալի լայն շուկան կարող է նպաստել Եվրոյի օգտագործման ծավալների աճին, ավելի ցածր գործարքային ծախսներին: Սա, իր հերթին, կարող է հեշտացնել Եվրոյի՝ որպես առևտրի և ապրանքների գնագոյաց-

<sup>41</sup> ՄՅսМО. 2001. N 2, c. 74.

ման գործիքի զարգացումը: Եթե օտարերկրյա ներդրողները և բողոքողները եվրոն համարեն կայուն արժույթ, նրանք ավելի շատ եվրո ակտիվներ կպահեն, որպեսզի փոքրացնեն ռիսկը իրենց միջազգային պորտֆելում:

Ըստ որոշ կանխատեսումների՝ դոլարի նկատմամբ կայուն պահանջարկը, համեմատած եվրոյի հետ, կպահպանի իր դիրքերն ապագա մի քանի տարիների ընթացքում: Կապիտալի կայուն հոսքը եվրոպայից ԱՄՆ վերջին տարիներին դեռ պահպանվում է: Եվրոպացիների համար ներդրումները ԱՄՆ-ում ավելի գրավիչ են, քան տանը:

Դետագայում ինչպիսի<sup>42</sup> զարգացում կունենան դոլարը և եվրոն, ո՞ր արժույթը կզիջի իր տեղը, ինչպիսի<sup>43</sup> ազդեցություն կունենան շուկայի ճնշումներն այս երկու մրցակից արժույթների վրա՝ կարելի է միայն կանխատեսել:

Մինչ եվրոյի ներմուծումն, արդեն կանխատեսվում էին դրա հաջողությունները: Այդ էր վկայում հտալիայում կազմակերպած, «Դրամական փորձը»<sup>42</sup>: Եվրոն դեռ չեղ մտել շրջանառության մեջ որպես միասնական դրամական միավոր, երբ, ստանալով Եվրոմիության համաձայնությունը, հտալիայի կառավարության դրամական պալատը թողարկեց եվրոյի դրամանիշեր և մետաղադրամներ՝ 1 մլն եվրո արժողությամբ: «Դրամական փորձը» իրականացվում էր հտալիայի երկու փոքր քաղաքներում: Այդ քաղաքների դրամատները, բանկերը լցվեցին եվրո արժույթով, և բնակչությունը, ցանկության դեպքում, կարող էր փոխանակել իտալական լիրան կամ այլ արժույթներ եվրոյով: Խանութներում, ռեստորաններում, սրճարաններում, թերթերի կրպակներում կարող էին օգտագործել ինչպես լիրա, այնպես էլ եվրո: Գնանշումն իրականացվում էր և լիրա ազգային արժույթով, և՝ եվրո տարածաշրջանային արժույթով: Փոխարժեքը սահմանվում էր 1 եվրո = 2000 լիրա արժողությամբ: Վեցամյա փորձը հաջողվեց: Խնդիրը միայն այն էր, թե արդյո՞ք բավարար քանակությամբ էր թողարկվել եվրոն: Եվրոն մեծ քանակությամբ ձեռք էր բերվում կոլեկցիոներների կողմից:

Եվրոյի ներմուծումը մեծ փոփոխություններ առաջացրեց ֆի-

նանսական շուկաների ոլորտում: Այս փոփոխություններն արտացոլվեցին նաև այլ երկրներում, որոնք եվրոպական տնտեսական միության անդամ երկրների հետ գտնվում են ֆինանսական և տնտեսական հարաբերությունների մեջ: Այդ երկրները ներկայումս գործում են մեկ արժույթով: Եթե արժույթը լայնորեն ընդունվում է, ձեռք է բերում վստահություն, ապա կրծատում է գործարքի ծախսերը՝ այսպիսով գրավելով օտարերկրյա սպառողներին և տարածելով արժույթը իր երկրի սահմաններից դուրս: Եվրոմիության դժվարություններից են եղել կարևոր ֆինանսական շուկաների ընդլայնումն ազգային սահմաններից դուրս, միասնական առևտուրը և արժեթղթերի փոխառությունները: Վերջիններս սահմանափակված էին՝ կապված դժվար բանակցությունների և իրավական համակարգի տարբերությունների հետ: Եվրոյի ներմուծումը և նպատակային վճարային համակարգի հաջող հաստատումը նպաստեցին տարածաշրջանային Եվրոպական երկրների ֆինանսական շուկաների ավելի անուր կապերի ծևավորնանը: Վերջիններս նպաստեցին նաև վերջին երեք տարիների ընթացքում եվրոպական տարածքում պարտատոմների շուկայի հսկայական ծավալների աճին: Եվրոպական տարածքի ֆինանսական շուկաների խորությունը և իրացվելիության բարձր մակարդակը նպաստեցին այնպիսի ֆինանսական գործիքների զարգացմանը, ինչպիսիք են՝ փոխադարձ ֆոնդերը և կարճաժամկետ առևտուրային վարկերը:

Եվրոյի ներմուծման արդյունքներից են նաև գների պարզեցումը և մեծ մրցակցությունը: Փոխարժեքի ռիսկի նվազումը հաղորդեց աճ այնպիսի ֆինանսական շուկաների ինստեգրմանը, ինչպիսիք են պարտատոմների և արժեթղթերի շուկաները:

Եվրոյի ի հայտ գալն ապահովեց կայունություն, որն էլ նպաստեց այդ տարածքի տնտեսության բարելավմանը: Կայունություն ասելով այստեղ նկատի է առնվում գնի և ֆիսկալ կայունությունը.

1. Արժեգորկումը վաստ է անդրադառնում և՝ արտահանման, և՝ բարեկեցության վրա միջին ժամկետում, ծևախեղում է գների համակարգը, փոխում պայմանագրերի և խնայողությունների իրական արժեքը և մեծացնում անորոշությունը: Դա խախտում է ռեսուրսների բաշխվածությունը, ներդրումային գործընթացը և եկանտի բաշխումը: Եվրոպական կենտրոնական բանկը, որպես իր դրամական քաղաքականության ռազմավարության մի մաս, հրապարակել է գնի կայունության որա-

<sup>42</sup> [www.westelb.de/euro](http://www.westelb.de/euro)

- կական պարզաբանում: Դրա նպատակը կայուն գնի մակարդակի սպասման ստեղծումն է, որը հասարակության համար կիեշտացնի իր գործունեության վերաբերյալ որոշումների ընդունումը: Գնի կայունությունը սահմանվում է որպես տարեկան աճ սպառողական գնի համեմատվող ինդեքսում. Եվրոյի տարածքի համար 2%-ից էլ պակաս, որը պետք է պահպանվի միջին ժամկետում: Չնայած նշվածին, անխուսափելի են այնպիսի շոկերը, ինչպիսին միջազգային շուկայի ապրանքների ու ծառայությունների գների աճն է, որը հանգեցնում է ժամանակավոր արժեզրկման աճին: Երկրորդ անգամ կրկնվող ննանատիպ էֆեկտը պետք է կանխվի և երաշխավորվի, որ արժույթի ներքին արժեքը կպահպանվի միջին ժամկետում:
- Կայունության հետ կապված մեկ այլ տեսակետ է Եվրոմիության տնտեսական քաղաքականության հիմքում ընկած ֆիսկալ քաղաքականությունը, որը կարևոր դեր է խաղացել տնտեսական և դրամական միության վերջին փուլի իրագործման, նաև կայուն միջավայր երաշխավորելու համար: Դա իրագործվում է Եվրոմիության շրջանակներում գործող ինստիտուցիոնալ հաստատությունների կողմից: Ներկայունս դրամական քաղաքականությունը կենտրոնացված է, բայց ֆիսկալ քաղաքականությունն անդամ պետությունների մակարդակով վարվում է հանաձայն օգնության սկզբունքի՝ կախված ազգային տնտեսության առավելություններից և տարբերություններից: Ապակենտրոնացված ֆիսկալ քաղաքականությունը Եվրոմիության երկրների շրջանակներում պետք է հաշվի առնի վնասի հնարավոր հետևանքները: Կայունության և աճի ակտու առաջ է քաշում «չափազանց պակասուրդից» խուսափման պարտավորությունը. Եվրոմիության երկրները պետք է ձգտեն ունենալ «հավասարակշռությանը նոտ կամ ավելցուկով» բյուջե միջին ժամկետում: Այսպես կոչված «տնտեսական կարգավորիչները» կարող են գործել տնտեսական անկման ժամանակաշրջանում՝ հավասարակշռելով բյուջեն:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ Եվրոյի ներմուծման հետևանքները կրում են դրական բնույթ, և արդյունքները խթանում են ոչ միայն Եվրոմիության Եվրոյի տարածքի երկրների, այլ նաև աշ-

խարիի մյուս երկրների առևտորի և համագործակցության ոլորտների առաջխաղացումը՝ դնելով դրանք նոր, ավելի հուսալի և ամուր իմքների վրա:

### **Եվրոն ապագայում**

Եվրոյի ներմուծման տնտեսական հեռանկարը սկզբնական շրջանում դեռևս անորոշության առարկա էր, սակայն ԵՄ երկրներում վերջին մի քանի ամիսների ընթացքում համաշխարհային բիզնեսի նկատմամբ վստահությունը նշանակալիորեն մեծացավ, և ստեղծվեցին նպաստավոր, իրական պայմաններ երկարատև աճի ապահովման համար:

Դրամական միավորի միասնականցումը գլխավոր կառուցվածքային բարեփոխում է, որը խթանում է այլ բարեփոխումների իրականացումը: Ուստի հարց է ծագում, թե արդյո՞ք նպատակահարմար է ներմուծել դրամական միավոր Եվրոմիության տարբեր երկրների միջև՝ մինչ քաղաքական միավորումը: Այսպես՝ ԱՍԽ-ի քաղաքական միավորմանը նախորդում էր դրամական միավորի միասնականացումը: Այնուամենայնիվ, մեկ միասնական արժույթը ցանկալի բաղադրիչ էր միասնական շուկայի համար, և Եվրոպայի առաջատարները ձեռք բերեցին առավելություն սպասելի քաղաքական շարժումների նկատմամբ՝ 1980-ական թթ-ի վերջերին մտնելով դրամական միության մեջ:

Ապագայում Եվրոյի շրջանառության ծավալների մեծացումը կախված է Եվրոյի երկրների տարածքում ընդունված քաղաքական որոշումներից և Եվրոյի նկատմամբ շուկայի մասնակիցների վստահությունից: Առաջին անհրաժեշտությունը Եվրոյի ներքին կայունության երաշխավորումն է կապված արժեզրկման ռիսկերի հետ: Եվրոյի հուսալիությունը հիմնված է տարածքի տնտեսության հզորության և գնի կայունության վրա, որը ապահովում է Եվրոյի ներքին արժեքը, իսկ արտաքին արժեքն անխուսափելիորեն տատանվում է աճի և տոկոսադրույթի տարբերությունների հետևանքով, մասնավորապես՝ ԱՍԽ-ին հակառակ: Կարևոր դեր են խաղում տնտեսական և ֆիսկալ քաղաքականությամբ զբաղվողները, որոնք կարող են արագացնել տնտեսական անցումներն այդ տարածքում՝ համապատասխան կառուցվածքային բարեփոխումների միջոցով: Այդ նպատակով ձեռնարկվել և արդեն իրագործվել են որոշ գործողություններ: Այդպիսի օրինակ է հարկային քաղաքականությունը: Նույնը վերաբերում է նաև ֆինանսական շուկայի հատվածին:

Եվրոյի տարածքի ընդլայնման հեռանկարն ակնհայտ է. Եվրոպայի շատ երկրներ բակում են Եվրոպակցության դուռը:

## 2.7. «ԵՄ-Հայաստան» համագործակցություն

### Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը.

«Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը» (ԳՀՀ) Հայաստանի Հանրապետության և ԵՄ անդամ պետությունների միջև կնքված համաձայնագիր է և ընդգրկում է, պաշտպանությունից բացի, համագործակցության փաստորեն բոլոր հնարավոր ոլորտները: ԳՀՀ-ն հնարավորություն է ընձեռում Եվրոպակցության և ՀՀ-ի միջև հաստատելու ավելի սերտ քաղաքական, տնտեսական, մշակութային կապեր: Համաձայնագրում շարադրված են կողմների ընդհանուր քաղաքական և տնտեսական արժեքները, որոնցից են. ժողովրդավարական սկզբունքների պահպանումը, օրենքի գերակայությունը, անձի իրավունքների պահպանումը, ինչպես նաև շուկայական տնտեսություն զարգացնելու հանձնառությունը: Այս հիմնադրույթները պետք է ընկած լինեն կողմների արտաքին և ներքին քաղաքականությունների հիմքում: Եվրոպակցության պարագայում դրանք կազմում են Հայաստանի հետ համագործակցություն հաստատելու նախապայմանները: Անդամակցության նախապայմանով Հայաստանի դիմումը Եվրոպակցության մեջ ներկայացվել 1996թ. մարտի 7-ին: Նախարարների կոմիտեում հաստատվելուց հետո (որոշում (96) 21-15 մայիսի, 1996թ.) դիմումը փոխանցվել է Եվրոպակցության խորհրդի խորհրդարանական վեհաժողովին: Վերջինս պետք է քննության առներ Հայաստանում բազմակարծության, մարդու իրավունքների պաշտպանության և օրենքի գերակայության սկզբունքների առկայությունը: Այս առումով որոշիչ է նաև դարարադյան հակամարտության խաղաղ հանգուցալուժման նշանակությունը:

Եվրոպական համայնքը գործընկերության և համագործակցության համաձայնագրեր է ստորագրել նաև Հայաստանի երկու անմիջական հարևանների՝ Վրաստանի և Ադրբեյջանի հետ: Նախքան այս երեք երկրների հետ կնքված համաձայնագրերի ուժի մեջ մտնելը՝ 1999թ. հունիսի 22-ին Լյուքսեմբուրգում տեղի է ունեցել երեք հանրապետությունների և ԵՄ համատեղ գագաթաժողովը: Այս կարգի առաջին հանդիպումը կայացել է 1996թ. ապրիլին՝ վերո-

իշյալ համաձայնագրերի ստորագրման ժամանակ: Համաձայնագրերը հիմք են հանդիսացել քաղաքական, առևտրային, ներդրումային հարցերի շուրջ երկխոսություն ծավալելու համար, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի, Արքազիայի, Ղարավային Օսերիայի հակամարտությունների պատճառով վտանգված տարածաշրջանային համագործակցությունը խթանելու համար: ԳՀՀ շրջանակներում նախատեսված քաղաքական և տնտեսական համագործակցության հիմնական նպատակն է օգնել Հայաստանին և Հարավային Կովկասի նրա դրացիներին ավելի սերտ կապեր հաստատելու Եվրոպայի հետ: Այնուամենայնիվ, այս համաձայնագրերը միանշանակորեն հաստատում են, որ կովկասյան պետությունների համագործակցությունը Եվրոպակցության հետ կարող է հաջողվել միայն այն պարագայում, եթե այդ պետությունները խաղաղ ճանապարհով կարգավորեն միմյանց միջև առկա հակամարտությունները:

ԳՀՀ-ում արտացոլված են Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) կողմից հաստատված սկզբունքները: ԵԱՀԿ-ն նպատակ է հետապնդում օժանդակելու իր անդամներին անվտանգության, զինարարակիման, տնտեսական, գիտական, տեխնոլոգիական և շրջակա միջավայրի ոլորտներում առաջընթաց ունենալու, ինչպես նաև նարդասիրական և այլ բնագավառներում համագործակցության զարգացման նպատակով: Կողմների միջև քաղաքական երկխոսությունը պետք է տեղի ունենա նախարարական մակարդակով՝ Համագործակցության խորհրդում և խորհրդարանական մակարդակով՝ Եվրոպակցության:

ԳՀՀ հիմնական նպատակն է օժանդակել Հայաստանին արագ հաղթահարելու շուկայական տնտեսությանն անցման փուլը: Դա, իր հերթին, պահանջում է ընդունել որոշակի «խաղի կանոնները». օրենքներ, կանոնակարգեր, գործունեության կանոններ և վարկեցողության նորմեր: Վերջին տարիներին Հայաստանը լուրջ առաջընթաց քայլ է կատարել իր իրավական նորմերը Եվրոպական շուկայի պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ: ԱՀԿ-ին անդամակցելու Հայաստանի վճռականությունը, ինչպես նաև այդ անդամակցությամբ պայմանավորված պարտականությունները կատարելու հաստատակամությունը փաստում են առաջընթացի մասին:

Այնուամենայնիվ, օրենսդրական բարեփոխումներ իրականացնելուց բացի, ՀՀ-ն պետք է ստեղծի նաև այնպիսի հաստատություն-

ներ, որոնք կերաշխավորեն շուկայական տնտեսավարման հարթ ընթացքը և կիրառման մեջ կդնեն վերը նշված խաղի կանոնները: Անհրաժեշտ է ստեղծել նաև պետական առողջիւ և դատական ամուր համակարգեր, բարձրացնել վարչական համակարգի գործունեության արդյունավետությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով պետության ֆինանսների ավելի արդյունավետ կառավարման վրա: Աշխատանքի կանոնակարգման բարելավումը և պետական հաստատությունների գործունեության վերահսկողության խստացումը համարվում են առաջնահերթ խնդիրներ: Օրենքի գերակայությունն ամրապնդելու և շուկան աշխուժացնելու նպատակով ԳՀՀ-ն մի շարք հնարավորություններ է ընձեռում ՀՀ-ին՝ օգտվելու Եվրոպի կողմից տրամադրվող օժանդակությունից: Գերազույն նպատակն է ձևավորել այնպիսի տնտեսական միջավայր, որտեղ տեղացի և արտասահմանցի օրինապահ գործարարներն օգտվելու են նույն իրավունքներից և վստահ են, որ վեճերի առկայության դեպքում հնարավոր է դիմել համապատասխան քայլերի:

ԳՀՀ շրջանակներում կողմերը պարտավորվել են համագործակցություն ծավալել մի շարք ոլորտներում: Համագործակցությունը զարգացնելու ենթատերաստում նվազ կարևոր չէ նաև ԵՄ կողմից Հայաստանին տրամադրվող տեխնիկական օժանդակությունը: Որպես հարավովկայան տարածաշրջանում գտնվող պետության՝ Հայաստանին տարածաշրջանային մակարդակով նման օժանդակություն արդեն տրամադրվում է տեղական հակամարտությունները կարգավորելու, ինչպես նաև կայունության և խաղաղության հաստատման օժանդակելու նպատակով: ԵՄ ներառյալական ծրագրերը հետամուտ են վստահության մթնոլորտ ստեղծելու ողջ Հարավային Կովկասում և խրախուսելու ամբողջ տարածաշրջանի զարգացման գործընթացը: ԵՄ օժանդակության արդյունավետությունը մեծապես կախված է տարածաշրջանում խաղաղության հաստատման գործընթացից:

ՀՀ արտադրական ճյուղերը վերակազմավորելու նպատակով պահանջվում է զգալի ներդրումներ կատարել նոր տեխնոլոգիաների և «նոու-հաուների» բնագավառներում: Երկիրը պետք է կարողանա ապահովել այնպիսի քաղաքական և տնտեսական պայմաններ, որոնք հիմք կծառայեն զգալի տնտեսական աճի և ներդրումների համար: ԳՀՀ շրջանակներում ստանձնած պարտավորությունները հետևողականորեն իրագործելու դեպքում Հայաստանը կա-

րող է վստահ լինել ԵՄ օժանդակությամբ ամուր և ժողովրդավարական սկզբունքների վրա հիմնված շուկայական տնտեսություն կառուցելու գործում: Այս ամենն իր նպաստը կրերի Եվրոպական կառույցներին և համաշխարհային տնտեսական համակարգերին Հայաստանի ինտեգրման գործում:

### ***Տափս (Taxis) ծրագիրը***

ԵՄ-ը Հայաստանում իրականացնում է Տափս ծրագիրը, որի նպատակն է նպաստել ժողովրդավարության և շուկայական տնտեսության հաստատմանը: Տափս ծրագիրը ապահովում է նախկին խորհրդային պետությունների (բացառությամբ՝ երեք Բալթյան երկրների) և Մոնղոլիայի շուկայական տնտեսության ու ժողովրդավարական հասարակության զարգացումը խրախուսելու նպատակով ֆինանսական օժանդակություն՝ դրամաշնորհի ձևով: Տափսի ներկա իրավական հիմքը 2000թ-ի հունվարի 1-ից մինչև 2006 թվականը գործող Եվրոպական խորհրդի «Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի գործընկեր երկրներին օժանդակության ապահովման մասին» կանոնակարգն է, որի հիմնական նպատակն է խրախուսել երկրների՝ շուկայական տնտեսության, անցումը, ինչպես նաև ժողովրդավարական և օրենքի գերակայության սկզբունքների ամրապնդումը: Տափսի վեց տարվա (2000-2006 թթ.) ընդհանուր բյուջեն կազմում է մոտավորապես 3.138 միլիոն եվրո, և անդամ պետություններից բաղկացած կոմիտեն պետք է օժանդակի հանձնաժողովին՝ այդ ռեսուրսները առավելագույնս շահավետ կիրառելու գործում: Կանոնակարգը նախատեսում է Գործընկերության և հանագործակցության հանաձայնագրի (ինչպես նաև Արևելյան տնտեսական համաձայնագրի) սկզբունքների և նպատակների վրա և հիմնված օժանդակության ծրագիր:

Յուրաքանչյուր երկրի համար ուղենշային գործողության ծրագրերը պետք է ընդգրկեն հանագործակցության հետևյալ ոլորտները.

- կառուցվածքային, իրավական և վարչական բարեփոխումների օժանդակություն,
- օժանդակություն նաևնավոր հատվածին և օգնություն տնտեսության զարգացման գործընթացում,
- օժանդակություն անցումային գործընթացի հետ կապված սոցիալական հետևանքների լուծնան հարցում,

- Ենթակառուցվածքային համակարգի զարգացում,
- շրջակա միջավայրի պահպանություն և բնական ռեսուրսների կառավարում,
- գյուղատնտեսության զարգացում:

Անհրաժեշտության դեպքում կերաշխավորվի նաև օժանդակություն միջուկային ապահովության բնագավառում:

Ըստ նոր կանոնակարգի, հատուկ ուշադրություն է սևեռվելու հետևյալ հարցերին.

- բնապահպանության ռիսկի կրծատման անհրաժեշտություն,
- բնական ռեսուրսների նպատակային օգտագործման խթանման անհրաժեշտություն:

Նոր ծրագրով հստակեցված տեխնիկական օժանդակությունն ընդգրկում է հետևյալ միջոցառումները.

- փորձի փոխանակում և վերապատրաստում,
- Եվրոպի անդամակից պետությունների հասարակական և մասնավոր կազմակերպությունների միջև հաստատությունների ստեղծման համար համագործակցություն և գործընկերություն,
- օժանդակություն իրականացնելու համար անհրաժեշտ նատակարարումներ, որոնք առնչվում են միջուկային անվտանգությանը, արդարադատությանը և ներքին գործերին,
- Անդրդրումներ և հարակից գործունեություն, այդ թվում՝ տեխնիկական օգնությունը խթանող ներդրումներ:

Համայնքի օժանդակությունից օգտվողները պետք է ներգրավված լինեն ծրագրի նախապատրաստման և իրագործման գործընթացներին: Ծրագրերի իրականացման գործընթացում ընդգրկվելու են տեղական փորձագետներ:

Տասիսի ծրագրերն իրականացվում են Եվրոպական հանձնաժողովի կողմից ընտրված ընկերությունների միջոցով: Ընկերությունները հավաքագրում են տեղական և միջազգային փորձագետներ, գնում են սարքավորումներ ու գույք և պարբերաբար գեկուցում են հանձնաժողովի ծրագրի դեկավարին արդյունքների և խնդիրների մասին: Տասիսի նպատակներին հասնելու համար հանձնաժողովը ստեղծել է վերահսկող և գնահատող համակարգեր, որոնց աշխատանքի արդյունքները հասանելի են անդամ պետություններին, Եվրոխորհրդարանին և Առողջության նպատական դատարանին:

## **Ազգային Տասիսի**

Տասիսի ղեկավարությունը սերտորեն համագործակցում է Հայաստանի կառավարության հետ՝ որոշելով, թե ինչպես պետք է ծախսվեն օժանդակության նպատակով հատկացված միջոցները: Ընդհանուր առնամբ, վերջին տարիներին Տասիսի գործունեությունը սևեռվել է համագործակցության երեք կարևոր բնագավառների վրա. Ենթակառուցվածք (Էներգետիկա և տրանսպորտ), մասնավոր ծեռնարկությունների զարգացում և մարդկային ռեսուրսներ, սակայն դարձյալ ուշադրության կենտրոնում են պահպում շուկայական տնտեսության և կայուն ժողովրդավարության անցնելուն ուղղված քայլերը:

Ժողովրդավարությունը և մարդու իրավունքներ. ԳՀՀ-ն հիմք է ապահովում ժողովրդավարության և օրենքի գերակայության ամրապնդման համար: Նախատեսում է համագործակցություն օրենքի իշխանությունն ամրապնդող և մարդու իրավունքների ու իշխանարար ազտությունների պաշտպանության նպատակով ժողովրդավարական հաստատությունների հիմնադրման և ամրապնդման գործում: Ըստ ԵՄ տեսակետի, օրենքի իշխանության ամրապնդումը պետք է դառնա երկարաժամկետ համագործակցության գերակայություններից մեկը: Նպատակը դատաիրավական համակարգի գործունեության բարելավումն է, արդարադատության ապահովման գործում և ընտրական համակարգի կիրառման հարցում պետության ների խթանումը:

Կառավարական բարեփոխումներ. Տասիսը աջակցում է ՀՀ կառավարությանը ԳՀՀ-ի կողմից առաջարկված խնդիրների իրականացման գործում: Սպասվում է, որ կիմնվի Յայաստան-Եվրոպա քաղաքականության և օրինական խորհրդատվական կենտրոն՝ օգնելու ՀՀ միջազգային պայմանագրային պարտավորությունների տեղափոխմանը ներքին օրենսդրության դաշտ՝ ԳՀՀ և ԱՐԿ շրջակներում: Սա կօգնի մոտենալ Եվրոպական նորմերին: Տասիսը օգնում է նաև ՀՀ հասարակական գործերի կառավարման զարգացմանը՝ աջակետով հայկական դպրոցներին: Այս գործընթացը ներառում է փորձագետների տրանսպորտ՝ նպատակ ունենալով բարձրացնելու տեղական ուսումնական պլանի և դասավանդող անձնակազմի պատրաստվածության աստիճանը: Բացի այս ամենից, Տասիսը աշխատում է տեղական նախարարությունների հետ,

օգնում է հիմնել մասնագիտացված սոցիալական ծառայություններ և ժողովրդավարությունը զարգացնել տեղական մակարդակով:

**Գյուղատնտեսություն**. Գյուղատնտեսությունը ՀՀ տնտեսության ամենակարևոր ճյուղերից է: Սրանով է պայմանավորված այն փաստը, որ այս ճյուղի կարգավորումը և կայունացումը ուղղակի ազդեցություն է ունենում ՀՀ բնակչության մեծամասնության վրա: Տասիսը տարածաշրջանային գյուղատնտեսական բիզնեսի ուսուցման և խորհրդատվական կենտրոններ է հիմնել՝ նպատակ ունենալով օգնել գյուղատնտեսներին և նրանց միություններին՝ հարմարվելու շուկայական տնտեսությանը բնորոշ մրցակցության պայմաններին: Տասիսի կողմից լյանքի կոչված ամենակարևոր ծրագրերից մեկը Տարածաշրջանային գյուղատնտեսական բարեփոխման ծրագիրն է, որն, ի դեպ, հաջողությամբ կիրառվում է նաև տարածաշրջանի մյուս երկրներում:

**Էներգետիկա**. ՀՀ օգտվում է ԵՄ աջակցությունից՝ կարգավորելու էներգետիկ սեկտորը: 1996թ. սկսած՝ ակտիվ օգնություն է ցուցաբերում Մեծամորի ատոմակայանի կարգավորմանը: Տասիսը նպատակ ունի բարելավելու ՀՀ էներգետիկ պահանջները՝ փոխարինելով դրանք այլ ռեսուրսներով, քանի որ ատոմակայանը տեղակայված է սեյսմիկ գոտում և կարող է փակվել: Եվ, վերջապես, էներգիայի ռազմավարական կենտրոնը հիմնվել է Տասիսի օգնությամբ:

**Մասնավոր հատվածի զարգացումը**. Տասիսը մեծ դեր է խաղացել Երևանի պետական համալսարանում հաշվապահական կենտրոնի ստեղծման գործում: Սա ապահովում է կառավարման, շուկայագիտության և հաշվապահական մեթոդների մասնագիտացում: Աջակցում է հատկապես հետսեփականաշնորհման փուլում գտնըվող ձեռնարկություններին: Տասիսը օգնում է նաև ապահետականացված ձեռնարկություններին՝ վերակառուցվելու, տարեկան եկամուտները բարձրացնելու և իրենց հաճախորդների հետ հարաբերությունները զարգացնելու գործում: Այս ծրագրով ՀՀ են գործուղվել մի շարք փորձագետներ՝ խորհրդատվություն իրականացնելու նպատակով: Տասիսը աջակցում է նաև տեղական ձեռներեցներին՝ զբոսաշրջության ոլորտում ծառայություններ կազմակերպելու համար:

### Աղյուսակ 3 ՀՀ-ում Տասիս ծրագրով տեղաբաշխված ֆոնդերը (մլն եվրո) <sup>43</sup>

|  | 1991       | 1992        | 93/94       | 1995     | 96/97     | 98/99     | Ընդամենը     |
|--|------------|-------------|-------------|----------|-----------|-----------|--------------|
| Ատոմային անվտանգություն և շրջակա միջավայրի պահպանություն         | 0.3        | 0.0         | 0.0         | 0.0      | 0.0       | 0.0       | 0.3          |
| Պետական ձեռնարկությունների վերակառուցում                         | 0.7        | 3.54        | 2.3         | 2.0      | 5.7       | 2.0       | 16.24        |
| Հասարակական բարեփոխումներ, սոցիալական ծառայություններ կրթություն | 0.0        | 1.5         | 1.8         | 1.5      | 2.0       | 4.0       | 10.8         |
| Գյուղատնտեսություն   | 0.0        | 1.66        | 0.0         | 0.0      | 0.0       | 0.0       | 1.66         |
| Էներգետիկա   | 1.3        | 0.0         | 4.1         | 2.0      | 0.0       | 1.0       | 8.4          |
| Տրանսպորտ  | 0.0        | 0.0         | 0.0         | 0.0      | 0.0       | 0.0       | 0.0          |
| Քաղաքական խորհրդատվություն                                       | 0.0        | 2.85        | 0.0         | 0.0      | 5.35      | 2.4       | 10.6         |
| Հեռահաղորդակցություն   | 0.0        | 0.0         | 0.0         | 0.0      | 0.0       | 0.0       | 0.0          |
| Այլ ոլորտներ   | 0.0        | 0.0         | 0.0         | 0.5      | 0.95      | 0.6       | 11.5         |
| <b>Ընդամենը</b>  | <b>2.3</b> | <b>9.55</b> | <b>17.2</b> | <b>6</b> | <b>14</b> | <b>10</b> | <b>59.05</b> |

**Հեռահաղորդակցություն և տրանսպորտ**. Տասիսն աջակցում է ենթակառուցվածքային համակարգերի (ճանապարհների և երկաթուղիների) վերակառուցմանը, որը Հայաստանի բարգավաճման և ազատ շուկայի զարգացման անբաժանելի մասն է: Այս ծրագիրն իրականացվում է Տրանսպորտի և կապի նախարարության միջոցով՝ շեշտը դնելով հեռահաղորդակցության կառույցների զարգացմանը:

<sup>43</sup> Ըստ Հայաստանում և Վրաստանում Եվրոպական հանձնաժողովի պատվիրակության տվյալների կատարած ուսումնասիրությունների:

ման վրա: Տասիսը նաև խորհրդակցություններ և վերապատրաստման դասընթացներ է կազմակերպում փոստային ծառայությունների, օդային տրանսպորտի ոլորտներում:

Տասիսի միջազգային պետական ծրագրեր. Միջազգային ծրագրերի նպատակը հիմնականում նախկին ԽՍՀՄ երկրների համախմբումն է որոշ հիմնահարցերի լուծման նպատակով: Այս համախմբումն, իհարկե, ավելի դյուրին կդարձնի է տարածաշրջանային հիմնախնդիրների լուծումը և կկարգավորի տարածաշրջանային համագործակցությունը նախկին ԽՍՀՄ բոլոր երկրների միջև:

Ինոգեյք՝ Միջազգային պետական նավթ և գազ ղեպի Եվրոպա (INO-GATE -Inter State Oil and Gas Europe). Ինոգեյքը Եվրոպա գագի և նավթի մատակարարման միջազգային ծրագիր է: Դա մշակվել է Տասիս ծրագրի շրջանակներում էներգետիկ ճգնաժամում գտնվող ԱՊՀ երկրներին աջակցելու նպատակով: Այս ծրագիրը սկսել է գործել 1995թ. ԵՄ նախարարների խորհրդի որոշմամբ (Բրյուսել, նոյեմբերյան նիստ): Ինոգեյքը ծրագրով նախատեսվում է ստեղծել նավթատար և գազատար համակարգ, որը կկապի նախկին ԽՍՀՄ և Արևմտյան Եվրոպայի երկրները: Բացի այդ, Կովկասի և Միջին Ասիայի արտահանողները մեծ հնարավորություն են ստանում դուրս գալու արևմտյան շուկաներ: Ինոգեյքը ծրագիրը դիտվում է որպես միջազգային ֆինանսական կազմակերպությունների և մասնավոր ծեռնարկությունների կողմից մեծամասշտար ներդրումների անցնան նախապատրաստական փուլ:

Ինոգեյքի նախագծերից են՝ նավթատար և գազատար խողովակների կառուցումը, որոնք ուղղակիորեն կվապեն Միջին Ասիայի և Անդրկովկասի պետությունները Կասպից ծովով, էներգետիկ ռեսուրսները Միջին Ասիայից կարտահանվեն Արևմտյան Եվրոպա:

Աջակցություն կցուցաբերվի արտահանվող և տարանցիկ երկրներին, այդ թվում՝ նաև՝ Հայաստանին:

Տրասեկա-Եվրոպա, Կովկաս, Ասիա տրանսպորտային միջանցք (TRACECA-Transport Corridor Europe-Caucasus-Asia). Տրասեկան Տասիսի ծրագիր է, որը կոչված է զարգացնելու տրանսպորտային կապերը Կենտրոնական Ասիայի, Կովկասի և Եվրոպայի միջև: ՀՅ-ն այս նախագիծի հիմնական գործընկերն է: Տրասեկայի նպատակն է ստեղծել երկկողմանի տրանսպորտային միջանցք՝ Եվրոպայից Աև ծովով մինչև Կենտրոնական Ասիա և Կենտրոնական Ասիայից ու Կովկասից մինչև Եվրոպա ամենաարագ ճանապարհը:

Տրասեկա ծրագիրը ֆինանսավորել է 22 տեխնիկական ճյուղեր և ներդրումային նախագծեր ինֆրակառուցվածքի վերականգնման համար, ներգրավել է ավելի շատ ներդրումներ այլ կազմակերպություններից, ինչպիսիք են՝ Զարգացման և վերակառուցման եվրոպական բանկը և Համաշխարհային բանկը: Վերջինս Հայաստանում և Վրաստանում նոր կապիտալ ճանապարհների կառուցման համար տրամադրել է 40 մլն ԱՄՆ դոլար: Սա, իր հերթին, ներգրավել է արտաքին հարվածի ներդրումներ: ԵՄ-ն աջակցում է անդրկովկասյան երեք պահանդիների հիմնմանը և օդային տրանսպորտի կառավարման համակարգին. օգնությունը կազմում է 5 մլն եվրո: Կա ևս մեկ խոշոր ծրագիր Կովկասյան երկարգծերի վերականգնման համար (5 մլն եվրո), որը տրվում է ՀՅ-ին 7.5 կմ երկարգի վերանորոգման համար:

Ըստ Տրասեկա հիմնական բազմակողմ համաձայնագրի, նախատեսված է ստեղծել միջկառավարական հանձնաժողով, որի նիստերի անցկացումը պետք է կրի պարբերական բնույթ՝ տարին 1-2 անգամ: 2000թ. մարտի 10-11-ը Թբիլիսիում կայացավ Տրասեկայի միջկառավարական հանձնաժողովի առաջին կոնֆերանսը: Թուրքիան, Ռումինիան և Բուլղարիան, որոնք Բարձրում ընդունված հիմնական բազմակողմ համաձայնագրի ստորագրող կողմն են, այս կոնֆերանսի ժամանակ հայտ ներկայացրեցին դաշնալու Տրասեկայի լիիրավ անդամ: Տրասեկայի տարեկան երկրորդ հանդիպումը տեղի ունեցավ 2002թ. ապրիլին՝ Ռուբեկստանի մայրաքաղաք Տաշքենդում:

Պարենային ծրագիր. ԵՄ-ն աջակցում է Հայաստանին պարենային ծրագրի շրջանակներում: Դա ընդգրկում է բնակչության կարիքավոր խավի համար նախատեսված մարդասիրական օգնությունը՝ ներառյալ սննդամթերքի օգնություն: Առ այսօր ԵՄ-ը ՀՅ-ին մատակարարել է մոտավորապես 68 մլն եվրոյի սնունդ և հումանիտար օգնություն<sup>44</sup>: Այս աջակցությունն ուղղված է հասարակության ամենաաջքատ խավին օգնելուն:

<sup>44</sup> Coperation that counts Southern Caucasus. European Communities, 2002.

## ՏԱՐԱԾՈՐՉԱՆԱՅԻՆ ԻՆՏԵԳՐԱԾԱՆ ԳՈՐԾՄՆԹԱՑՆԵՐԸ ԱՇԽԱՐՀԻ ԱՅԼ ՏԱՐԱԾՈՐՉԱՆՆԵՐՈՒՄ

### 3.1. NAFTA-ի ծևավորման քաղաքական և տնտեսական նախադրյալները

1994թ. հունվարի 1-ից սկսվեց Հյուսիսամերիկյան ազատ առևտության (North American Free Trade Association) գործունեությունը: Դա 1992թ. դեկտեմբերի 17-ին ԱՄՆ-ի, Կանադայի և Մեքսիկայի միջև կնքված ազատ առևտության համաձայնագրի իրականացման սկիզբն էր նշանավորում:

Համաձայնագրի ենթադրում էր ոչ միայն գործող առևտության պատմեշների վերացում, այլև արտասահմանյան ներդրումների ազատականացում, աշխատուժի միգրացիայի, ինչպես նաև այլ տնտեսական հարաբերությունների նկատմանը սահմանների վերացում: Մինչև 1994թ. վերջը, տնտեսական հարաբերությունների զարգացումը արգելակող մի շարք պատճեններ վերացվեցին, իսկ դրանց լրիվ վերացումը և երեք ազգային շուկաների միաձուլումը տեղի կունենա մոտակա 15 տարիների ընթացքում: Այս միաձուլման արդյունքում ստեղծված գոտին կընդգրկի 375 մլն բնակչություն և տարեկան 8 տրլն դոլար ՀԱԱ: Դա հսկայական ազդեցություն կունենա ողջ արևմտյան կիսագնդի վրա՝ առաջ բերելով տնտեսական և քաղաքական խորը տեղաշարժեր: Այսօր արդեն NAFTA-ի կազմում ընդգրկվելու ցանկություն են հայտնել Չիլին, հարավամերիկյան այլ երկրներ:

Հյուսիսամերիկյան ինտեգրման մեջ վճռական դեր պատկանում է ԱՄՆ-ին, քանի որ ամերիկյան վերազգային կորպորացիաները, ունենալով տնտեսական և գիտատեխնիկական հզոր ներուժ, հեշտորեն նվաճում են ցանկացած երկիր՝ տապալելով գրեթե բոլոր առևտության պատճենները:

Երկար ժամանակ պահանջվեց, որպեսզի Կանադան և Մեքսիկան հասնեն այնպիսի մակարդակի, որ տնտեսական առավելությունները գերազանցեն քաղաքական և սոցիալ-հոգեբանական առավելությունները: Այդ ժամանակահոգ Կանադան ավելի հեշտ ան-

ցավ, քանի որ վաղուց արդեն դուրս էր եկել քաղաքակրթության մայրուղի, ակտիվություն գործում էր արտաքին շուկաներում: Առաջին համաշխարհային պատերազմից հետո Կանադայի արտաքին տնտեսական կապերը շրջվեցին հիմնականում ԱՄՆ-ի կողմը: Միացյալ Նահանգները գրավեցին հյուսիսային հարևանի հարուստ ռեսուրսները: Ամերիկյան ներդրումները աստիճանաբար թափանցեցին կանադական տնտեսության առաջատար ճյուղերը: Երկրորդ համաշխարհային պատերազմն էլ ավելի ամրապնդեց ԱՄՆ-Կանադա տնտեսական կապերը՝ հատկապես ռազմաարդյունաբերական համալիրի ճյուղերում: 1965թ. ԱՄՆ-ը Կանադայում ներդրել էր մոտ 15.2 մլրդ դոլար, որը կազմում էր այդ երկրում կատարվող ուղղակի կապիտալ ներդրումների 70%-ը: Կանադական վերազգային կորպորացիաները ևս սկսեցին ակտիվ ներդրումներ իրականացնել իրենց հարավային հարևանի տնտեսությունում: Երեք տասնամյակների (1960-1990թթ.) ընթացքում ԱՄՆ-ի արտաքին առևտության շրջանառության 1/5 մասը կապված էր Կանադայի հետ, իսկ Մեքսիկայի տեսակարար կշռու այդ ժամանակամիջոցում 3.5%-ից հասավ 7.7%-ի: Սակայն ոչ Վաշինգտոնը և ոչ Էլ Օստավան չէին շտապում խորացնել և ընդլայնել իրենց տնտեսական կապերը:

Հիմնական պատճառն այն էր, որ Կանադան իր տնտեսական զարգացման մակարդակով հետ էր մնում ԱՄՆ-ից, իսկ տեղական գործարար շրջանները վախենում էին հայտնվել հարավային հարևանի հզոր կորպորացիաների ճնշման տակ: Իհարկե, ճյուղային բնույթի որոշ համաձայնություններ ԱՄՆ-ի և Կանադայի միջև կնքվեցին: Դրանցից առաջինը 1959թ. էր, որը վերաբերում էր ռազմական արդյունաբերությանը, իսկ մյուսը 1965թ-ին՝ ավտոմեքենաների, հանգույցների, պահեստամասերի վաճառքին: Այս համաձայնագրերը նպաստեցին երկու պետությունների ինչպես արտադրության ընդլայնմանն ու գործարար ակտիվության բարձրացմանը, այնպես էլ դրական ազդեցություն ունեցան գիտատեխնիկական առաջընթացի զարգացման վրա: Թվում էր, թե ամերիկականադական կապերը կտարածվեն այլ ճյուղերի վրա ևս, սակայն 1970թ. արժութային հարաբերությունների և էներգետիկայի ոլորտում սկսված ճգնաժամը ստիպեց երկու պետություններին վերանայել իրենց արտաքին առևտության քաղաքականությունը՝ ի օգուտ հովանավորչության:

Կանադայում գլուխ բարձրացրեցին արդյունաբերության առաջատար ճյուղերի «կանադիզացիայի» տրամադրությունները: Այդ պայմաններում խոսք անգամ լինել չէր կարող մաքսային պատճեշների վերացման մասին: Միայն մեկ և կես տասնամյակ անց, ինչպես հյուսիսամերիկյան, այնպես էլ համաշխարհային տնտեսությունում առկա օբյեկտիվ պայմանները ստիպեցին Կանադայի իշխանություններին վերանայել ազատ առևտրից հրաժարվելու իրենց նախկին որոշումը:

Առավել բարդ էր Մեքսիկայի՝ դեպի NAFTA ընթանալու ուղին: Մեքսիկան երկու համաշխարհային պատերազմների տարիներին և նույնիսկ մինչև 60-ական թթ. համարվում էր ազգարահումքային տնտեսական կառուցվածք ունեցող երկիր: Ինչպես Մեքսիկան, այնպես էլ լատինամերիկյան մյուս երկրներն իրենց սոցիալ-տնտեսական հետամնացությունը հաղթահարելու նպատակով ավելի ուժեղացրեցին պետական հատվածը՝ ազգայնացնելով արտադրության հիմնական միջոցները և արնատավորելով խիստ հովանավորչական ռեժիմը:

Սակայն այդ պայմաններում էլ ԱՄՆ-ին հաջողվեց թափանցել մեքսիկական տնտեսություն: 1960թ. ԱՄՆ-ի ուղղակի ներդրումների հաշվարկային արժեքը կազմեց 795 մլն դոլար: 1961-73թթ. ԱՄՆ-ի վերազգային կորոպորացիաները այստեղ ստեղծեցին 361 նոր մասնաճյուղեր: Բացի դրանից 60-ական թթ. կեսերին Մեքսիկայի հյուսիսային շրջաններում ստեղծվեցին հատուկ միջսահմանային տնտեսական գոտիներ, որտեղ հյուսիսից բերված հումքի և մեքսիկական էժան աշխատուժի օգտագործման հիման վրա կազմակերպվում էր հումքի վերամշակում: 1980թ.-ին այդպիսի ձեռնարկությունների թիվը հասավ 620-ի, 1990թ.՝ 1700-ի, որտեղ զբաղված էր 450 հազար մարդ:

70-ական թթ. կեսերին նոր նավթամբերի հայտնաբերումն ու յուրացումը շրջադարձային դեր խաղացին Մեքսիկայի տնտեսության համար: Մի կողմից մեծացան արտահանումն ու արտահանումից ստացված եկամուտները, որոնց շնորհիվ ավելացան բազմաթիվ տնտեսական ծրագրերին ուղղված ներդրումները, մյուս կողմից էլ մեծացավ արտասահմանյան ներդրողների հետաքրքրությունը այդ երկրի նկատմամբ: Սակայն նավթային դոլարների հոսքից շլացած Մեքսիկան ընկավ արտաքին փոխառությունների ծանր լծի տակ և 1982թ. կանգնեց միջազգային սնանկության սահմանաեզ-

րին: Երկիրը միարժվեց երկարատև սոցիալ-տնտեսական և պարտքային ճգնաժամի մեջ: 1987թ. արտաքին պարտքը հասավ 99.3 մլրդ դոլարի, որը կազմում էր Մեքսիկայի ՀՆԱ-ի 70.7%-ը: Մեքսիկայի համագործակցությունը լատինամերիկյան երկրի հետ ոչ մի դրական տեղաշարժի չհանգեցրեց, ուստի, հաղթահարելով դեկավար շրջանների մտավախությունները, ձեռնարկվեց մասնակցությունը NAFTA-ի կազմավորման բանակցություններին:

ԽՄՀՄ փլուզումը, միջուկային պատերազմի վտանգի վերացումը Վաշինգտոնին ևս ստիպեցին վերանայելու իր դիրքորոշումը արևմտյան կիսագնդի նկատմամբ: Բանն այն է, որ Արևմտյան Եվրոպայի երկրները և ճապոնիան այլև չեն ցանկանում հանդես գալ «կրտսեր» գործընկերների դերում: Արևմտյան Եվրոպան, սկսած 90-ական թթ., ընդլայնեց ինտերացման իր սահմանները: 1994թ. Եվրոպական միության 12 երկրներ և ազատ առևտրի ասոցիացիայի երկրներ ձևավորեցին ազատ առևտրի Եվրոպական տնտեսական տարածք՝ ամբողջ Արևմտյան Եվրոպայի երկրների համար: Ակնհայտ է, որ Եվրոպական երկրների կուռ միությունը թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական առումով ԱՄՆ-ին կարող է մղել երկրորդ պլան:

ԱՄՆ-ի համար հզոր հակառակորդ են նաև Արևմտյան Ասիայի երկրներ՝ ճապոնիան, Չինաստանը, Ինդոնեզիան, Կորեան, Թայվանը, Հնդկոնցը: Պրակտիկան ցույց է տալիս, որ, ժամանակակից պայմաններում, զարգացման միջին մակարդակ ունեցող երկրները, համեմատաբար ավելի արագ յուրացնելով նորագույն տեխնոլոգիան և դրան միացնելով աշխատուժի, հումքային ռեսուրսների վրա կատարվող էժան ծախքերը, հասնում են ավելի բարձր տնտեսական արդյունավետության: Դրա համար ճապոնիան և, մասնավորապես՝ Չինաստանը ամերիկյան ավտոմոբիլային, էլեկտրատեխնիկական, հագուստի և այլ արդյունքների արտադրության գլխավոր մրցակիցներն են ոչ միայն համաշխարհային շուկայում, այլև նույնիսկ ԱՄՆ-ի ներքին շուկայում: Ուստի Միացյալ Նահանգներին մնում է միայն բարձրացնել ապրանքի որակը: Սակայն որակի բարձրացումը ուղեկցվում է ծախքերի բարձրացմանը, իսկ մրցակից կողմը ևս, բարձրացնելով արտադրանքի որակը, համաշխարհային շուկայում շահում է՝ շնորհիվ արտադրության ցածր ինքնարժեքի: Միացյալ Նահանգների համար ելքը սեփական գիտատեխնիկական ներուժի միացումն է մրցունակության

մյուս կարևոր գործոններին: Այդ գործոններով էլ հենց հարուստ են լատինամերիկյան երկրները:

ԱՄՆ-Կանադա-Մեքսիկա եռակողմ բանակցությունները, որոնց ընթացքում յուրաքանչյուր երկիր ձգտում էր զնալ իր ուղիով՝ իրականացնելով սեփական նպատակները, վերջին հաշվով, հանգեցրին շահերի հաշվեկշռային վիճակի:

Պայմանագրի սկզբունքային դրույթները հանգեցրին հետևյալին.

1. 15 տարվա ընթացքում երեք պետությունների միջև լրիվ վերացմել առևտորային պատմեշները,

2. Էներգառեսուրսների, տեքստիլ արդյունաբերության արտադրանքի, գյուղատնտեսական մեքենաների և մթերքների առևտորի համար սահմանվեց, «լողացող ազատականացում»:

Այսպես, մեքսիկական գյուղատնտեսական մթերքի առևտորի համար կնքվեց երկկողմանի համաձայնագիր՝ յուրաքանչյուր գործընկերոց հետ առանձին-առանձին: Ըստ պայմանագրի, միանգամից իշեցվեցին այդ ապրանքների վրա սահմանված մաքսատուրքերը 25%-ի չափով, իսկ մնացած սակագնային և քանակական սահմանափակումները կվերացվեն առաջիկա 10-15 տարիների ընթացքում:

3. Կապիտալի միգրացիայի կապակցությամբ իրականացվել են հետևյալ փոփոխությունները. ԱՄՆ-ը և Կանադան կշարունակեն վարել փոխադարձ ներդրումների ավելի փափուկ քաղաքականություն, իսկ Մեքսիկան 1992թ. դեկտեմբերի 29-ին ընդունեց օրենք, համաձայն որի, ընդլայնվելու են Միացյալ Նահանգների և Կանադայի ներդրումների հնարավորությունները: Արդյունաբերության և գյուղատնտեսության մի շարք ճյուղերում թույլատրվում է ներդնել կապիտալ՝ ցանկացած համամասնությամբ: Դեռևս արգելվում են օտարերկրյա ներդրումները ռադիոակտիվ նյութերի ու էներգակիրների արդյունահանության և կոմունալ ինֆրակառուցվածքում:

Մեքսիկան պարտավորվել է նաև վերացնել բանկային և ապահովագրական ընկերությունների կազմավորման ճանապարհին առկա սահմանափակումները:

4. NAFTA-ի կարևոր մասն են կազմում շրջակա միջավայրի պաշտպանության և աշխատանքի շուկայի օգտագործմանը վերաբերող համաձայնագրերը:

Կառավարման ոլորտում NAFTA-ի կառուցվածքն այսպիսին է. կենտրոնական ինստիտուտը Ազատ առևտորի հանձնաժողովն է, որի մեջ մտնում են երեք երկրների նախարարական մակարդակի ներկայացուցիչները: Յանձնաժողովը հետևում է Յամաձայնագրի իրականացմանը և զարգացմանը, օգնում կողմերի միջև առևտորի կարգավորման ընթացքում ծագած վեճերի լուծմանը: Յանձնաժողովների անդամների ընդհանուր ժողովը տեղի է ունենում տարեկան մեկ անգամ:

Յամաձայնագրի շրջանակներում գործում են նաև 30 աշխատախմբեր, կոմիտեներ և այլ օժանդակ մարմիններ: Դրանց նպատակը առևտորի և ներդրումների հեշտացումն է, ապրանքների ծագման և մաքսային կանոնների պահպանումը, գյուղատնտեսական ապրանքների առևտորի, սուբսիդիաների, ստանդարտների, պետական գնումների, ծառայությունների շուկայի կարգավորման ուղղությամբ աշխատանքների վերահսկումն ու կարգավորումն է: NAFTA-ի աշխատախմբերը և կոմիտեները հետազոտություններ են իրականացնում անդամ-երկրների միջև առևտորի հետագա ազատականացման ուղիների բացահայտման ուղղությամբ:

Յամաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո՝ 1994-1999 թթ. Կանադայում տնտեսական ցուցանիշները աճեցին 2.8%-ով, իսկ ԱՄՆ-ում և Մեքսիկայում, համապատասխանարար՝ 3.3% և 3%-ով: Ընդհանուր առմանք, Յուտիսային Աներիկայում 1999 թ. առևտուրն աճել է մոտ 75%-ով և կազմել 507 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ 2003թ.՝ 929,9 մլրդ ԱՄՆ դոլար: Յամագործակցության տարիներին ամերիկան ապրանքաշրջանառությունն աճել է 2 անգամ, տարեկան աճելով 17%-ով, ԱՄՆ-ի և Կանադայի միջև ապրանքաշրջանառության միջին տարեկան աճը կազմել է 10%, իսկ Կանադա-Մեքսիկա առևտուրն աճել է 13%-ով: Փոխադարձ ներդրումների ծավալը կազմել է 169 մլրդ ԱՄՆ դոլար:

### 3.2. Տնտեսական ինտեգրման դերը զարգացող երկրներում

Զարգացող երկրների շրջանակներում համագործակցության զաղափարը ծագել է արևմտաեվրոպական տնտեսական ինտեգրման

հաջողությունների հիման վրա: Սակայն, եթե Արևմտյան Եվրոպայի երկրների համագործակցությունը տնտեսական աճի բարձր տեմպերու ունեցող երկրների փոխլրացման համաձայնությունն է, ապա զարգացող երկրների համար ինտեգրումն արտադրողական ուժերի զարգացման ցածր մակարդակը հաղթահարելու, ներքին շուկայում զարգացած երկրների մրցակցությանը դիմակայելու, համաշխարհային շուկայում իրենց դիրքերը ամրապնդելու ձգտում է:

Զարգացող երկրների տնտեսական ինտեգրումը չի կարելի համարել երկրների միջև անընդհատ խորացող տնտեսական կապերի օրենսդրական, հարկային, սոցիալական ոլորտների միջպետական կոռորդինացման գործընթաց: Այսօր, զարգացող երկրների տնտեսական համագործակցությունը կարելի է գնահատել որպես ինտեգրման գործընթացների նախապատրաստական աստիճան: Դամագործակցության շարժիք ուժը ազգային տնտեսական ներուժի որոշակի առավելությունների միավորման օգտագործումն է, տնտեսական կյանքի միջազգայնացումն ու կապերի ինտենսիվացումը, իսկ վերջնական նպատակը լայնածավալ տնտեսական տարածքի ձևավորման պայմաններում հետամնաց տնտեսությունների արդիականացումն է: Միևնույն ժամանակ, զարգացող երկրների համագործակցության նպատակը տնտեսական աճի համար բարենքպատ պայմանների ձևավորումն է (ավելի տարողունակ ներքին շուկան տնտեսության արդիականացման ու կառուցվածքային վերափոխումների հաջողության կարևոր պայմանն է), որին կարելի է հասնել համատեղ գործելու դեպքում:

Չուտ ձևական առումով, զարգացող երկրների շրջանակներում գործող ինտեգրման միավորումները հանդես են գալիս հետևյալ ձևերով՝ մաքսային միություն, ընդհանուր շուկա, ազատ առևտուրի, բնական ռեսուրսների յուրացման, տարածաշրջանային և ենթատարածաշրջանային միավորումներ, արժույթաֆինանսական և վճարման միություններ: Ըստ եռթյան, զարգացող երկրներում ինտեգրման գործընթացները ևս (բավականաչափ պայմանականորեն) բաժանվում են մի քանի տեսակների.

- Ներտարածաշրջանային կապերի առավելագույն ազատականացում միասնական մաքսային պաշտպանության պայմաններում (լատինամերիկյան և որոշ աֆրիկյան խմբավորումներ):

- Սկզբունքորեն համագործակցության նույն ձևն է, ինչ որ՝ առաջինը, սակայն ուժեղացված արտադրական կոռոպերացիայի և մասնագիտացման ճյուղային ծրագրերով, որը հաշվարկված է ներքին շուկայի համար:
- Զարգացող երկրների միջև նախկինում ստեղծված քաղաքական միությունը տնտեսականի վերածելու փորձեր (Հարավարևելյան Ասիայի ասոցիացիա):

Այս բոլոր խմբավորումներում օրենսդրախրավական բազայի մշակումը, միջկառավարական համաձայնությունների կնքումն ու նմանատիպ այլ գործողությունները առաջ են անցնում համագործակցող երկրների միջև իրական տնտեսական կապերից:

Զարգացող երկրների ինտեգրումն ավելի շուտ մասնակից պետությունների տնտեսական քաղաքականության համաձայնեցում է, քան տնտեսական փոխկապվածության և փոխլրացման օբյեկտիվ գործընթաց: Այսպես, ներտարածաշրջանային առևտուրի ազատականացումը և լայնածավալ տնտեսական տարածքի ստեղծումը, որն արտաքին մրցակցությունից պաշտպանված էր միասնական մաքսային պատմեշով, սկզբնական շրջանում խթանեցին մասնակից պետությունների ընդգրկումը փոխարինող արտադրությունների զարգացմանն ու արդյունաբերական ձեռնարկությունների թվի ավելացմանը: Այդ ճանապարհով բացառապես բավարարվում էին ներքին շուկայի պահանջնունքները, որի շնորհիվ էլ ներտարածաշրջանային ապրանքաշրջանառությունը բավականին աճեց: Ինչ վերաբերում է տնտեսական միություններին, ապա դրանց մեջ մասն անցավ այն փուլը, որի ժամանակ փոխարժեած առևտուրի տեսակարար կշիռը գերազանցում էր սեփական ապրանքաշրջանառության ծավալը: Սակայն, քանի որ նման ինտեգրման բոլոր արդյունքներից հիմնականում օգտվում էին առավել զարգացած մասնակից պետությունները, դա տնտեսապես հետամնաց գործներ երկրի կողմից հանդիպում էր դիմադրության և դժգոհության տեղիք էր տալիս: Տարածաշրջանային միություններում հենց վերջիններս էին տուժում ինտեգրման եկամուտների անհավասարաչափ բաշխումից, որն, ի վերջո, հանգեցնում էր կամ միության փլուզմանը, կամ լճացմանը:

Եկամուտների հավասարաչափ վերաբաշխման, երկրների տնտեսական զարգացման մակարդակների համահարթեցման ցանկացած փորձ, ի վերջո, մատնվում էր անհաջողության: Որոշ

ժամանակ անց ներքին մաքսային արգելակների այս կամ այն ձևով վերականգնումը տանում էր ներտարածաշրջանային առևտորի ժավալների կրծատմանը, ինտեգրման գործընթացների կտրուկ դանդաղեցմանը: Դենց այս արդյունքներին հանգեցին լատինամերիկյան մի շարք երկրների տնտեսական միուրյունները 1970-ական թթ. կեսերին և 1980-ական թթ. սկզբներին: 1990-ական թթ. զարգացող երկրների ինտեգրման հիմնական խմբավորումների փոխադարձ առևտորի բաժնին, 1980թ. համեմատությամբ, կամ չփոխվեց, կամ նույնիսկ նվազեց, որը հիմք տվեց խոսելու երրորդ աշխարհում ինտեգրացիայի ճգնաժամի մասին:

Խոսելով զարգացող երկրների համագործակցության մասին՝ պետք է հաշվի առնել, որ երրորդ աշխարհի առանձին տարածաշրջաններում ընթացող ինտեգրման գործընթացները տարբերվում են ինչպես իրենց բնույթով, այնպես էլ շարժման գործոններով և զարգացման տեմպերով: Լատինամերիկյան ինտեգրումը շատ գերով տարբերվում է աֆրիկյանից, իսկ սրանք միասին՝ Ասիա-խաղողակիանույան տարածաշրջանի կամ արաբական երկրների ինտեգրման փորձերից:

LAFTA-ը<sup>45</sup> սկզբում ներկայացնում էր բազմաթիվ պետությունների համագործակցություն, որոնց հիմնական նպատակներն էին՝ փոխադարձ առևտորի ազատականացումը, ներտարածաշրջանային շուկայի պաշտպանությունը հովանավորչական մաքսային պատճենների միջոցով և փոխադարձ ապրանքաշրջանառության խթանումը: LAFTA-ի ներսում (որը հետագայում վերանվանվեց Ինտեգրման լատինամերիկյան ասոցիացիա) ձևավորվել է Անդյան պակտի խումբը<sup>46</sup>, որի շրջանակներում մշակվեցին արդյունաբերական համագործակցության զանազան ճյուղային ծրագրեր: Սակայն, փոխադարձ առևտորային կապերի նշանակալից ակտիվացման շրջանից հետո, խմբավորման ներսում սկսվեց անկումը, սրվեցին հակասությունները: ճյուղային ծրագրերը չիրականացվեցին, որը կասկածի տակ դրեց ընդհանրապես ինտեգրման ողջ գործընթացի դրական ելքը: 1980-ական թթ. ճգնաժամը հանգեցրեց նաև բազմաթիվ մասնակիցների շահերի անհամատեղելիությանը, որի հե-

տևանքով ձևավորվեցին ավելի փոքրաթիվ խմբավորումներ՝ եռյակներ (Վենեսուելա, Կոլումբիա, Մեքսիկա), քայլակներ, ինչպես նաև տարածաշրջանային ինտեգրման այլընտրանքային տարբերակներ:

Լատինամերիկյան ինտեգրման ժամանակակից մողելն ավելի լայն է և ծկուն. կողմնորոշվում է դեպի համաշխարհային տնտեսության մեջ ավելի մեծ մասնակցությունն ու ավելի սերտ կապերը զարգացած երկրների հետ: Ներկայում Լատինամերիկայում տնտեսական ինտեգրման հետևողականությունը պահպանում են Շարավամերիկյան ընդհանուր շուկայի (MERCOSUR)<sup>47</sup> երկրները, որոնք իրենց միավորված շուկայի պաշտպանությունը թուլացնում են աստիճանաբար, իսկ ներտարածաշրջանային տնտեսական կապերի ազատականացման գործընթացներն ընթանում են բավականին արագ:

Կենտրոնական Ամերիկայի ընդհանուր շուկայի (CACM)<sup>48</sup> երկրները, որոնց գործունեությունը վերջին տասը տարիներին, փաստորեն, հավասարվել էր զրոյի (անդամ երկրների միջև խորը տնտեսական և քաղաքական հակասությունների պատճառով), ծրագրել են իրենց տնտեսությունների վերականգնմանը մասնակից դարձնել NAFTA-ին՝ Մեքսիկայի միջոցով: Այդ ծրագրի հիմքում ընկած է «ասիմետրիկ փոխադարձության» սկզբունքը, որի դեպքում, նախ մեքսիկական շուկայուն բարենպաստ պայմաններ կստեղծվեն Կենտրոնական Ամերիկայի ընդհանուր շուկայի երկրների համար, իսկ այնուհետև մեքսիկականի համար՝ CACM երկրներում: Այսպիսով, կարելի է ամեն, որ լատինամերիկյան ինտեգրմանը բնորոշ է խառը համագործակցությունը, որի դեպքում միևնույն երկրները համարվում են տարբեր ինտեգրման միավորումների անդամներ:

Աֆրիկյան երկրների տնտեսական ինտեգրումը ներկայացնում է միանգամայն այլ բնույթի համագործակցություն: Սա հետանաց, միմյանց հետ գործնականում ոչ մի տնտեսական կապ չունեցող երկրների միջև արդյունաբերության զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումն է, որի նպատակը ներքին շուկայի պահանջների բավարարումն է: Այդ նպատակները հրապարակվեցին այնպիսի միավորումների ստեղծման ժամանակ, ինչպիսիք

<sup>45</sup> LAFTA՝ Արգենտինա, Բրազիլիա, Մեքսիկա, Պարագվայ, Պերու, Չիլի, Կոլումբիա, Էկվադոր, Վենեսուելա, Բոլիվիա:

<sup>46</sup> Անդյան պակտի խումբ՝ Պերու, Չիլի, Կոլումբիա, Էկվադոր, Վենեսուելա, Բոլիվիա:

<sup>47</sup> MERCOSUR՝ Արգենտինա, Բրազիլիա, Պարագվայ, Չիլի, Ուրուգվայ:

<sup>48</sup> CACM՝ Կոստա Ռիկա, Սալվադոր, Գվատեմալա, Հոնդուրաս, Նիկարագուա:

Են՝ Արևմտյան Աֆրիկայի երկրների տնտեսական համագործությունը (ECOWAS)<sup>49</sup> և Կենտրոնական Աֆրիկայի մաքսային և տնտեսական միությունը (UDEAC)<sup>50</sup>: Այս միությունները պլանավորել էին նպատակառողկած պետական քաղաքականության հիման վրա զարգացնել փոխադարձ տնտեսական կապերը՝ ներքին տարրողունակ շուկա ստեղծելու համար: Ինտեգրումն այստեղ դիտվում է որպես զարգացման այլընտրանքային ուղի կամ, ավելի շուտ՝ «սեփական ուժերի հենարան»<sup>51</sup>: «Սեփական ուժերի վրա հենվելու» հայեցակարգը ենթադրում է, որ տնտեսության կառուցվածքային բարեփոխումները կարող են ձեռք բերվել ամենից առաջ տեղական ռեսուրսների օգտագործման, զարգացման ներքին գործոնների հնարավորինս կենտրոնացման ճանապարհով՝ բնակչության հիմնական կարիքների բավարարման նպատակով: Այդ միության հեռահար պլանների մեջ մտնում է մինչև 2025թ. աֆրիկյան տնտեսական համագործակցության ստեղծումը: Սակայն առայժմ այդ միությունները գործունակ չեն. դրանց նպատակները միայն «քարի ցանկություններ» են: Իրականում ոչ մի հավանականություն չկա, որ այդքան աղքատ և հետամնաց երկրների տնտեսական համագործակցությունը ինչ-որ շոշափելի արդյունքներ կտա: Այնուամենայնիվ, մի շարք աֆրիկյան դեկավարներ փակուղուց դուրս գալու միակ ելքը դեռևս համարում են առանձին խմբավորումների շրջանակներում ինտեգրման գործընթացների զարգացումը: Այդ գաղափարները հատկապես զարգացման դրսում, ավանդական ձևով, Աֆրիկյան պետություններին ցույց տրվող ֆինանսական օգնության կրծատման, արտաքին պարտքի աճի հետևանքով: Աֆրիկյան ընդհանուր շուկայի գաղափարը, չնայած անհաջողություններին, շարունակում է մնալ շատ իրատապ խնդիր: Սակայն այդ աշխարհամասի երկրների տնտեսական համագործակցության ճանապարհին կան այնպիսի արգելակներ, ինչպիսիք են՝ ներքին շուկաները, արտահանման միատիպ հումքային մասնագիտացումը, ազգային տնտեսական համալիրների թույլ փոխլրացվելիությունը:

<sup>49</sup>ECOWAS՝ Բենին, Բուրկինա Ֆասո, Կապո Վերդե, Կոտուֆուար, Գամբիա, Գանա, Գվինեա, Գվինեա-Բիսաու, Լիբերիա, Մալի, Սավահանիա, Նիգեր, Նիգերիա, Սենեգալ, Սերա-Լեոնե, Տող (1975թ.):

<sup>50</sup> UDEAC՝ Կոնգո, Կամերուն, Գաբոն, Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետություն, Ուգանդա, Ռուլանդի, Էկվադորյան Գվինեա, Սան Տոնս և Պրինսիպի, Անգոլա (որպես դիտող):

<sup>51</sup> African Economic Report, 1998, page 7.

Նույն պատճառաբանությամբ էլ բացատրվում է մերձարևադարձային Աֆրիկայի երկրներում օտարերկրյա ուղղակի ներդրումների կրծատումը, որը այդքան շատ անհրաժեշտ է տարածաշրջանի սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացման համար: Պատահական չէ, որ ներտարածաշրջանային արտահանումը ECOWAS-ի, Արևելյան և Հարավային Աֆրիկայի ընդհանուր շուկայի (COMESA) երկրների միջև չի գերազանցում դրանց համախառն արտահանման 8%-ը, իսկ UDEAC-ի ձևավորումից հետո ներտարածաշրջանային առևտությունը ոչ թե աճեց, այլ նույնիսկ կրծատվեց:

Այսպիսով, 21-րդ դարի շեմին Աֆրիկան համարվում է՝ համաշխարհային համագործակցության մարգինալ, խտրականացված մասը, որը չի տնօրինում առաջընթացի ոչ մի հնարավորությունների՝ հավատարիմ մնալով իր գաղութային ժառանգականությանը:

Այլ ճակատագիր ունեն այն զարգացող երկրների ինտեգրվող խմբավորումները, որոնք սկզբնապես ձևավորվեցին գուտ քաղաքական շարժաւիթներով: Այսպես, 1967թ-ից գոյություն ունեցող Հարավարևելյան Ասիայի երկրների ասոցիացիան՝ ASEAN-ը<sup>52</sup>, մինչև վերջին ժամանակները փոխադարձ տնտեսական կապերի զարգացմանը առանձնապես աչքի չէր ընկնում: ASEAN-ի երկրների համար երկար տարիներ, որպես համախմբող գործոն, հանդես էր գալիս Կամբոջայի հիմնախմնդիրը և Վիետնամին դիմակայելու անհրաժեշտությունը: Տնտեսական համագործակցությունը արգելակվում էր առանձին երկրների անհանաչափ զարգացման, անհրաժեշտ ենթակառուցվածքի բացակայության, այդ երկրների տնտեսությունների աննշան փոխակապվածության պատճառով: Ներկայումս քաղաքական գործոնների դերը նշանակալից չափով բուլացել է, իսկ Թաիլանդի, Մալայզիայի, Ինդոնեզիայի և Բրունեյի տնտեսություններում կառուցվածքային տեղաշարժերը հանգեցրել են դրանց տնտեսական զարգացման մակարդակների միջև տարբերությունների կրծատման և տնտեսական կապերի ակտիվացման: Ստեղծվել են առավել բարենպաստ պայմաններ աշխատանքի ներտարածաշրջանային բաժանման զարգացման և խմբավորման ներսում դրական տեղաշարժերի համար: Դրա վառ ապացույցը արտահանման տեխնոլոգիատարության բաժնեմասի ցուցանիշն է:

<sup>52</sup>ASEAN՝ Մինչապար, Մալայզիա, Թաիլանդ, Ֆիլիպիններ, Ինդոնեզիա, 1984թ-ից Բրունեյ, 1995թ.-ից Վիետնամ:

Ինչ վերաբերում է այնպիսի տնտեսական կազմակերպություններին, ինչպիսիք են՝ Արարական երկրների լիգան, Պարսից ծոցի երկրների համագործակցության խորհուրդը, Արարական Մագրիբի խորհուրդը, որտեղ գլխավոր դերը պատկանում է քաղաքական գործուներին, տնտեսական ինտեգրացում գործնականում տեղի չունի: Արարական ընդհանուր շուկայի ձևավորման փորձերը նույնիսկ ինչ-որ չափով լուրջ չեն ընդունվում, քանի որ արարական երկրների մեծ մասը փոխադարձ տնտեսական կապերի զարգացմանը ոչ մի նշանակություն չի տալիս, բացառությամբ՝ Նավթ արտահանող երկրների կազմակերպության (OPEC) շրջանակներում իրականացվող համագործակցության: 1989թ. Արարական Մագրիբի երկրները (Մավրիտանիա, Մարոկո, Ալժիր, Թունիս, Լիբիա) փորձեցին ձևավորել ընդհանուր շուկա՝ Եվրոմիության նմանությամբ: Սակայն այսօր Յյուսիսային Աֆրիկայի տարածաշրջանը ներկայացնում է ազգային տնտեսության շրջանակներում ներփակված, միմյանցից կտրված հինգ շուկաներ:

Այսպիսով, զարգացող երկրներում ընթացող ինտեգրման գործընթացները, միջպետական միավորումների, խմբավորումների, մջությունների ձևավորման ճանապարհով, ընթանում են շատ բարդ, հակասական և ոչ հետևողական: Տնտեսական ինտեգրացումը դեռևս չի կարողանում դառնալ բոլոր չարիքների դեմ այնպիսի համադարձան, ինչպիսին համարվում էր 1960-ական թթ., եթե նոր էր ձևավորվել: Այնուամենայնիվ, ինտեգրացումն աստիճանաբար թափ է հավաքում, և, դատելով երկրների տնտեսական կապերի քանակական աճից, կարելի է ենթադրել, որ Եվրոմիության «Վերատադրությունը» կդառնա ինտեգրման ուղեկիցը բոլոր այն տարածաշրջաններում, որտեղ երկրների զարգացումը դիմանիկ է:

Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանային համագործակցությունը (APEC), Անկախ պետությունների համագործակցությունը և Սևծովյան տարածաշրջանային տնտեսական համագործակցությունը, ի տարբերություն տարածաշրջանային այլ ինտեգրման խմբավորումների, ներառում են տարբեր աշխարհանական տեղաբաշխված երկրներ, հետևաբար՝ դրանք կարելի է անվանել **միջուրածաշրջանային խմբավորումներ**:

Ինչպես արդեն նշվել է, APEC-ի մեջ մտնում են 21 երկրներ, որոնք գտնվում են տնտեսական զարգացման տարբեր մակարդակների վրա, այդ թվում արդյունաբերական այնպիսի հսկաներ:

Ինչպիսիք են՝ ԱՄՆ-ը, ճապոնիան և Կանադան: Ուստի տնտեսական զարգացման տարբեր մակարդակների վրա գտնվող երկրների համագործակցությունից գործնականում սպասումները կլինեն անցան: Բացի այդ, դրանք տեղաբաշխված են տարբեր աշխարհանական, ուստի և շրջանցվում են տարածաշրջանային տնտեսական ինտեգրման բոլոր նախադրյալները: Այն, որ այդ խմբավորման համագործակցությունը սահմանափակվում է միայն անդամ երկրների մասնակցությամբ ձևավորված կառույցների գործունեությամբ կամ երկրների ղեկավարների համոլիպումներով, արդեն փաստում է, որ դասական ինտեգրման գործընթացները խեղաթյուրված են: Նույնիսկ ազատ առևտուրային գոտու ձևավորումը տարբերակված է ըստ երկրների տնտեսական զարգացման մակարդակների. մինչև 2010թ.՝ ազատ առևտուրի գոտու ձևավորում զարգացած երկրների, 2015թ.՝ նոր ինդուստրիալ երկրների, իսկ 2020թ.՝ մնացած երկրների շրջանակներում: APEC-ը, որպես միջտարածաշրջանային ինտեգրման խմբավորում, դրսնորում է որոշ առանձնահատկություններ, որոնք բնորոշ են միայն այդ խմբավորմանը.

- տեղի է ունենում տնտեսության միջազգայնացման գործընթացի խորացում՝ ապրանքների և կապիտալի ներտարածաշրջանային հոսքերի ակտիվացման հիման վրա,
- անդամ երկրների տնտեսական մակարդակների տարբերությունների պահպանումը հանգեցնում է ներտարածաշրջանային ինտեգրման խորացմանը՝ զարգացման մոտավորապես հավասար մակարդակ ունեցող երկրների միջև:

Մոտ ապագայում դժվար է սպասել, որ APEC-ը կդառնա վերազգային կարգավորման մեխանիզմ ունեցող տարածաշրջանային ինտեգրման խմբավորում, հաշվի առնելով ինչպես աշխարհագրական, այնպես էլ տնտեսական ու քաղաքական գործուների հակագեցությունը:

Այսպիսով, զարգացող երկրներում տարածաշրջանային տնտեսական ինտեգրացումը դեռևս գտնվում է ձևավորման փուլում: Այստեղ տեղ գտած գործընթացները կարելի է որակել որպես ինտեգրման ջանքեր, քանի որ այդ երկրները դեռևս չեն հասել զարգացման այնպիսի մակարդակների, որոնց դեպքում վերատադրողական գործընթացների միավորումը օրգանական անհրաժեշտություն է: Գիտատեխնոլոգիատար ապրանքների ներմուծման առու-

մով, զարգացած երկրներից կախվածությունն ամբողջովին ջլատում է երրորդ աշխարհի երկրների տնտեսական ներուժը: Եժան հումքային ապրանքների և բանկարժեք բարձր տեխնոլոգիաների փոխանակության հետևանքով, փաստորեն, առաջանում է զարգացող երկրների ռեսուրսների թալան, որը, հեռանկարում, վերջիններիս համար տնտեսական զարգացման հնարավորությունների անվերատադրելի կորստի պատճառ կարող է դառնալ: Զարգացող երկրների ծգտումը՝ տարածաշրջանային տնտեսական ինտեգրման ճանապարհով հասնել կայուն և արդյունավետ զարգացման, արդարացված է: Սակայն ինտեգրացիայի արդյունքների արդարացի բաշխումը համագործակցող բոլոր երկրների միջև հնարավոր է միայն որոշակի տնտեսական վերելքի դեպքում:

### **3.3. ԱՊՀ շրջանակներում ՀՀ տնտեսական ինտեգրման արդյունքների ու հեռանկարային միտումների գնահատականը**

ԽՍՀՄ կազմալուծումից հետո ՀՀ-ում սկսված տնտեսական բարեփոխումները չտվեցին ակնկալվող արդյունքները, որի պատճառը, մի կողմից՝ 1988թ. երկրաշարժն էր, մյուս կողմից այն, որ Հայաստան անմիջապես կորցրեց իր շուկաների մեջ մասը, իսկ հետո սկսվեց հականարտությունն Աղբենքանի հետ: Մեկ այլ պատճառ էլ կարելի է համարել անցունային շրջանի տնտեսական ռազմավարությունը, որում առաջնային նշանակություն տրվեց «շոկային թերապիային»՝ առավելագույն կարծ ժամանակահատվածում մասշտաբային բարեփոխումների իրականացմանը: Այդ բարեփոխումների նպատակն արտադրության կառուցվածքային փոփոխությունների հաջվին տնտեսության կայունացումն էր, տնտեսական աճը և ռեսուրսների արդյունավետ օգտագործումը: Ֆիշտ է, 1995թ-ից հետո որոշ չափով հաջողվեց արժեգործման տեմպերը զապել, սակայն դա չուղեկցվեց արտադրության ծավալների աճով, բնակչության եկամուտները նվազեցին ու տնտեսությունը հայտնվեց ծանր իրավիճակում: Նման պայմաններում անհնարին էր նաև սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծումը, որն արգելակվում էր նաև ներդրումային դաշտի թույլ զարգացմամբ պայմա-

նավորված օտարերկրյա ներդրումների հոսքերի կրծատումով: Արդյունաբերական զարգացած և նոր ինդուստրիալ երկրների փորձը վկայում է, որ կայուն ու դիմանիկ տնտեսական զարգացման համար համախառն կապիտալ ներդրումների բաժինը ՀՆԱ-ի մեջ պետք է հասնի 25-30%-ի, մինչդեռ ՀՀ-ում այդ ցուցանիշը, նույնիսկ 2001թ., երբ գրանցվել է համախառն կապիտալ ներդրումների ամենաբարձր մակարդակը, չի անցել 9%-ից:

Կատթարացել է նաև ներդրումային աղյուրների կառուցվածքը, որի մասին վկայում են մի կողմից՝ հումանիտար ներդրումների տեսակարար կը ո՞ւ ավելացումը, մյուս կողմից՝ օտարերկրյա ներդրումների ցածր մակարդակը:

Անցումային շրջանի առաջին հինգ տարիներն ամենադժվարն էին Հայաստանի համար. հինգ տարի անընդհատ արժեգործման ած և չորս տարի ՀՆԱ կտրուկ նվազում: 1992թ-ից Հայաստանը թևակոխեց գերարժեգործման շրջան, և 1994-ին արժեգործման տեմպերը հասան մինչև 5273%-ի<sup>53</sup>: 1995թ-ը տնտեսական բարեփոխումների պատմության մեջ մտավ որպես տնտեսական աճի տեմպերի ավելացման և շարունակական կայունացման շրջան, որի կարևոր նախապայմաններն էին. մի կողմից՝ կոչտ դրամավարկային և բյուջետային քաղաքականությունը, մյուս կողմից՝ միջազգային ֆինանսական կազմակերպությունների վարկերը (Համաշխարհային բանկ, ԱՊՀ): Հաճախ ստեղծվում է այնպիսի տպավորություն, որ երկրները ֆինանսական կազմակերպությունների օգնությունների արդյունքում հասնելով կայունացման, դառնում են վերջիններիս «գերին», և նրանց հետագա զարգացումն ու կայունացման պահպանումն անմիջականորեն կախված են լինում ֆինանսական հոսքերի չափից ու հաճախականությունից: Այս պնդումը հատկապես ճիշտ է Հայաստանի դեպքում:

Տնտեսական և ֆինանսական կայունացման, սոցիալ-տնտեսական առաջընթացի, ներդրումային դաշտի աշխուժացման, արտաքին առևտորի մասշտաբների մեծացման և, վերջապես, համաշխարհային տնտեսությանը սերտաճման առավել արդյունավետ ուղին տարածաշրջանային տնտեսական ինտեգրացումն է: Անշուշտ, ՏՏԻ դեպքում երկրները պետք է կանգնած լինեն զարգացման ուղղությունում:

<sup>53</sup> 10 лет, СНГ, 1991-2000 статистический сборник, Межгосударственный статистический комитет содружества независимых стран, Москва, 2001, стр. 200.

Վրա, սակայն այս կամ այն երկրի կամ երկրների հետ ինտեգրման ձգումը ինքնին կանխորշում է դեպի տնտեսական աճի բավարար պայմանների ձևավորման կողմը: Համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցող տարածաշրջանային ինտեգրացման գործընթացների ակտիվացումը, եթե ոչ այսօր, ապա վաղն, անխուսափելիորեն, կարճվի նաև մեր երկրին: «Արտաքին աշխարհի ցանկացած երկրի հետ ուղղակի տնտեսական կապերի հաստատումը, դրանց հետագա ծավալումը Հայաստանում նախ պետք է իրականացնել նախկինում քննություն բռնած կապերը նոր հիմունքներով, փոխահավետության սկզբունքներով վերահաստատելու, հարևանների և աշխարհի շատ երկրների հետ նոր սերտ կապեր ձևավորելու հիման վրա, բացառելով ինտեգրվող կողմերից մեկի թելադրող, մյուսի ականա կամակատար իրավիճակում հանդես գալու դերը»<sup>54</sup>: Այս առօնով, Հայաստանն այլընտրանքներ ունի: Ներկայում մեր երկիրը միջտարածաշրջանային երկու կազմակերպությունների՝ ԱՊՀ և ՍԾՏ անդամ է, ինչպես նաև ունի բավարար իհմքեր ինտեգրվելու կամ համագործակցելու հարևան պետությունների հետ:

Տնտեսական բազմակողմ գնահատականների և վերլուծությունների միջոցով պարզ է դառնում, որ տնտեսական ինտեգրացման գործընթացներն առավել հեռանկարային են ԱՊՀ երկրների հետ, քանի մինչև ամենահացումը Հայաստանը տնտեսական կյանքի բոլոր ոլորտներով, այդ թվում նաև ֆինանսական, ինտեգրված էր ԽՄՀՍ երկրների հետ, որոնց գերակշռող մասն այսօր ԱՊՀ անդամ է: Ուստի, տնտեսական ինտեգրացման նախադրյալներից երկուսը՝ ինտեգրվող երկրների աշխարհագրական մերձությունը, ընդհանուր սահմանի առկայությունը և պատմականորեն ձևավորված տնտեսական կապերն, այս տարածաշրջանի երկրներում առկա են:

Սակայն ԱՊՀ ձևավորմանը հաջորդող տարիների ընթացքում համագործակցության անդամ երկրներն անհաջող փորձեր են անում ինտեգրացումն իրական, գործնական ուղի փոխադրելու համար, որոնք, ցավոք, ավարտվում են ակնհայտ անհաջողությամբ:

Այսպես, ASEAN-ին համանման, ԱՊՀ-ն և ձևավորվեց որպես բաղաքական միություն, իսկ տնտեսական համագործակցության

խնդիրը ծագեց ավելի ուշ: 1992-1993թթ. համագործակցություն ձևավորելու բանակցությունները չտվեցին բավարար արդյունքներ, ավելին՝ համագործակցության հեռանկարները գնահատվում էին բավականին հորեւտեսական երանգներով: Չնայած այս ամենին, ԱՊՀ բոլոր երկրների դեկավարները շարունակում էին խոսել տնտեսական միության ստեղծման անհրաժեշտության մասին: Դրա հիմքում ընկած էին հետևյալ փաստարկները.

1. ԽՄՀՍ կազմակությունից հետո տնտեսական կապերի քայլական հետևանքով վատրացավ համագործակցության անդամ երկրների տնտեսական դրությունը: Սեփական շուկան պաշտպանելու նպատակով Ռուսաստանը սահմանեց բարձր մաքսատուրեր՝ հատկապես էներգետիկ ռեսուրսների և կարևոր հումքային ապրանքների վրա, որը բարձրացրեց այս ապրանքների գները՝ հասցնելով դրանք համաշխարհային նակարդակի: Դա ստեղծեց լրացուցիչ բարդություններ համագործակցության անդամների համար:
  2. ԱՊՀ անդամ երկրները, կանգնելով սոցիալ-տնտեսական դժվարությունների առջև, վերջնականապես հասկացան, որ քաղաքական անկախության պայմաններում տնտեսական հիմնախնդիրները սեփական ուժերով լուծելը գուտ պատրիարք է:
  3. ԱՊՀ երկրներն սկսեցին ավելի սրափ գնահատել նաև արդյունաբերական զարգացած երկրների և միջազգային տնտեսական խմբավորումների կողմից տրվող օգնությունների դերն ու հետևանքները:
- Նման պայմաններում կարևորվեց տնտեսական փոխարաբերությունների կարգավորման և երեմնի միասնական տնտեսական տարածքի վերականգնման անհրաժեշտությունը, սակայն արդեն նոր՝ շուկայական հիմքի վրա: Արդյունքում՝ 1992թ. հոկտեմբերին Բիշբեկ քաղաքում նախկին ԽՄՀՍ ութ հանրապետությունների կողմից կնքվեց համաձայնագիր «Միասնական արժութային համակարգ ստեղծելու և փոխանականացնեցված դրամավարկային քաղաքականություն իրականացնելու» մասին:

Ինտեգրման գործընթացների խորացման նկատմամբ նման տրամադրվածությունը հանգեցրեց այն բանին, որ 1993թ. մայիսի 14-ին Մոսկվայում կայացած վեհաժողովի ընթացքում ԱՊՀ անդամ երկրների (Հայաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Մոլ-

<sup>54</sup> Մարկոսյան Ա., Տնտեսագիտություն բոլորի համար, Երևան, 2001, էջ 299:

դուքս, Ռուսաստան, Տաջիկստան, Ուզբեկստան, Ուկրաինա, բացի Թուրքմենիայից, որն այս գործընթացին հետաքրքրություն էր ցուցաբերում միայն որպես դիտորդ՝ նախագահները ստորագրեցին համաձայնագիր, ըստ որի, պետք է աստիճանաբար ընթանային տնտեսական նիության ծևավորման ուղիղվ։ Փաստաթուրում արտացոլված էին ընդհանուր շուկայի ստեղծման պայմանները. ապրանքների, ծառայությունների, կապիտալի, արտադրության գործոնների ազատ տեղաշարժ՝ պետությունների փոխադարձ շահերի պահպանմանք, ինչպես նաև տնտեսական քաղաքականության այլ ոլորտների, մասնավորապես՝ տնտեսական բարեփոխումների իրականացման համաձայնեցումը։ 1993թ. սեպտեմբերին կնքվեց համաձայնագիր ԱՊՀ միջազգային բանկի, այնուհետև ԱՊՀ տնտեսական նիության ստեղծման մասին<sup>55</sup>։

Ավելի ուշ, Մոսկվայում, կնքվեց պայմանագիր, որը ենթադրում էր դրամապարկային, ֆինանսական քաղաքականության կողորդնացում և հարկային համակարգի ունիփիկացում<sup>56</sup>։ Սակայն պայմանագրում խոսվում էր նաև ԱՊՀ շրջանակներում երկու արժութային համակարգերի՝ բազմաթութային համակարգի և ռուբլու գոտու ստեղծման մասին։ Բազմաթութային համակարգի համար պայմանագիրը նախատեսում էր արժութային նիության փոխակերպման հետևյալ փուլերն ու մեխանիզմները։

1. Փոխակերպման առաջին փուլում պայմանագրով նախատեսվում էր վճարային նիության ստեղծում, որը ենթադրում էր բոլոր հանրապետությունների արժույթների փոխադարձ ճանաչում ու պաշտոնական գնանշում, Միջազգային բանկի միջոցով բազմակողմ քլիրինգի իրականացում, վճարային հաշվեկշռի պակասուրդի ծածկման նպատակով փոխադարձ վարկավորման կողրդինացված մեխանիզմների կիրառում՝ ըստ ընթացիկ հաշվների ազգային արժույթների փոխադարձ փոխարկելիություն։
2. ԱՊՀ միջազգային բանկը ստեղծվեց 1993թ. դեկտեմբերին։ Ռուսաստանի փայաբաժինն այդ բանկում կազմում էր 50%։

<sup>55</sup> Декларация глав государств-участников об основных направлениях развития Содружества Независимых Государств; “Содружество. Информационный вестник Совета глав государств и совета глав правительств СНГ”, N 1(31), 1999, стр. 65.

<sup>56</sup> Белова В. Я., Быкова М. А., Регионовидение. Некоторые проблемы региональной экономической реинтеграции стран СНГ, Социально-гуманитарные знания, N 1, 1999.

Բանկը պետք է վարկեր տրամադրեր անդամ երկրների կենտրոնական բանկերին՝ Միջազգային բանկում հաշվների լիմիտին համամասնորեն։ 1994թ. բանկը պետք է ապահովեր բազմակողմ քլիրինգ ռուսական ռուբլով, կայուն արժույթներով կամ բանկի խորհրդի որոշմանը՝ երրորդ արժույթներով։

3. Հաջորդ փուլում նախատեսվում էր վճարային նիությունից անցում կատարել արժութային նիության՝ ազգային արժույթների լողացող փոխարժեքների սահմանման, դրանց տատանումները համաձայնեցված մակարդակի վրա պահպանելու և լրիվ փոխարկելությունն ապահովելու միջոցով։
4. Արժութային «քահանցիկության» հասնելուց հետո նախատեսվում էր բազմաթութային համակարգը փոխարինել միարժութայինով։ Ամենալայն կիրառություն ունեցող և քիչ թե շատ կայուն արժույթը (փաստացի դա ռուսական ռուբլին է) հետագայում պետք է կատարեր ընդհանուր արժույթի դերը։

Միջազգային արժութային կոմիտեն, որը պետք է կատարեր ազգային արժութային մարմնի դերը, իր գործունեությունը ծևականորեն սկսեց 1994թ-ին, սակայն նշված համաձայնագրերն այդպես էլ մնացին թղթի վրա։ Նման միջազգային բանկային մեխանիզմի կենսագործման համար անհրաժեշտ են այնպիսի ինստիտուտներ, որոնք կապահովեն բավականին էժան և երկարաժամկետ վարկավորում (ինչպիսին է Եվրոպական ինվեստիցիոն բանկը)՝ առաջին հերթին անդամ երկրների տնտեսական մակարդակները հավասարեցնելու համար։ Այդ առումով էլ Միջազգային արժութային կոմիտեի անհրաժեշտությունը խստ արդիական է, և պատահական չէ, որ 1999թ. ԱՊՀ միջազգային արժութային կոմիտեն վերսկսեց ԱՊՀ երկրների արժութային բնագավառի հայեցակարգի մշակումը։ 2000թ. ապրիլին կոմիտեի վեհաժողովի ընթացքում նշվեց, որ ԱՊՀ երկրներին որոշ չափով հաջողվել է գալ ընդհանուր հայտարարի և համաձայնեցնել համագործակցության համար անհրաժեշտ մի շարք տեսանկյուններ։ Հայեցակարգի առավել հետաքրքրություն ներկայացնող դրույթները հանգում են հետևյալին՝

- համագործակցության երկրների փոխադարձ ապրանքաշրջանառության ընթացքում ազգային արժույթների համախառն բաժնի ավելացում,

- ԱՊՀ երկրների ազգային արժույթների փոխադարձ փոխարկելիության և կայունության ապահովում,
- ընդանուր շուկայի ստեղծում,
- արդյունավետ վճարային համակարգի ձևավորում, որը պետք է հենված լինի կայուն փոխարկելի ազգային արժույթների վրա:

ԱՊՀ երկրների տնտեսական ինտեգրման մեկ այլ սուր հիմնախնդիր կարելի է համարել փոխադարձ հաշվարկների իրականացումը: Այս հիմնախնդրի լուծումն ԱՊՀ տնտեսական միության ձևավորման անհրաժեշտ նախադրյալն է: Տարածաշրջանի համար ընդունելի դրամահաշվարկային մոդելի փնտրութքը վաղուց է ընթանում: Անդամ երկրներից շատերը դուրս եկան ռուբլու գոտուց՝ ձևավորելով սեփական արժույթները: 1991թ. չեր բացառվում հատուկ տիպի ռուբլու գոտու ձևավորումը, որը ենթադրում էր ազգային արժույթների օգտագործում համրապետությունների ներսում և ռուբլու, որպես պահուստային արժույթի, օգտագործում երկրների միջև անկանխիկ հաշվարկներ իրականացնելիս: Արժութային հարաբերությունների այդ մոդելը տեղ գտավ նաև Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Արտաքին տնտեսական հետազոտությունների ինստիտուտի 1992թ-ին արված առաջարկություններում: Ռուբլու գոտու ձևավորման համաձայնագիրը, որը կնքվեց 1993թ. սեպտեմբերի 7-ին,<sup>57</sup> վեց երկրների՝ Ռուսաստանի, Յայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Տաջիկստանի և Ղրղզստանի միջև, որում հայտարարվեց միասնական դրամական համակարգ ունեալու ձգտման մասին, մեկ տարի անց տապալվեց: Վճարային միության ձևավորման մասին համաձայնագրի տապալման պատճառներից մեկն այն էր, որ համագործակցությունը, փաստորեն, կտրված էր տնտեսական և քաղաքական արագընթաց վերափոխումների այն իրողությունից, որոնք տեղ էին գտել նախկին Խորհրդային Սիության երկրներում (արտադրության տեմպերի, բնակչության կենսամակարդակի կտրուկ նվազում, միջտարածաշրջանային ռազմական բախումներ), երկրորդ համաձայնագիրը ժամանակին չամրագրվեց անհրաժեշտ իրավական հիմքերով և

երրորդ՝ վճարային միությունը չեր կարող կայանալ այն դեպքում, եթե ապրանքների և կապիտալի շուկան բավականաչափ ազատականացված չեր:

Տնտեսական և արժութային միության ձևավորման պայմանների և օրինաչափությունների վերլուծության ժամանակ բավական օգտակար կլիներ հենվել եվրոմիության փորձի վրա, որը նպատակալա ընթացավ միասնական արժույթի ձևավորման ուղիով՝ չնայած համագործակցության երկրների միջև առկա տարածաշրջություններին և ճգնաժամային իրավիճակին: Այդ նախադրյալների վերլուծության համար կարևոր է տերմինաբանության վերլուծությունը, քանի որ դրանց տարբեր բացատրություններն եւ գործնականում տարածայնությունների և նպատակների անորոշության տեղիք են տալիս: Այսպես, «արժութային միությունը» բոլորին չի ենթադրում մեկ միասնական արժույթ: Դրա համար բավական է միայն փոխարժեների սահմանում: Մասնագետների կարծիքով, սա արժութատնտեսական ինտեգրացիայի ամենացածր և ամենատարրական ձևն է, որը չի ենթադրում ընդհանուր շուկայի գոյություն<sup>58</sup>: Մինչև 1979թ. արժութային միություն գոյություն է ունեցել Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի միջև, որն այդպես էլ չհանգեցրեց դրանց տնտեսությունների ինտեգրմանը: 1922թ-ից նաև միություն կազմել էին Բելգիան և Լյուքսեմբուրգը, բայց մինչև Եվրոպական միության ստեղծումը, որտեղ այդ երկու պետությունները հանդես եկան որպես հիմնադիրներ, ավելի խոր ինտեգրման հարաբերություններ դրանց միջև չձևավորվեցին: Նետեաբար, արժութային միությունը երկրներին բույլ է տալիս կիրառել և արժութային սահմանափակումներ, և մաքսային արգելմեր, և խոչընդոտել կապիտալի ազատ շարժմն: ԱՊՀ երկրների նկատմամբ այդպիսի արժութային միությունը նշանակում էր «իին ռուբլու գոտու» պահպանում, որի շրջանակներում 1992թ-ի ընթացքում միասնական արժույթը պահպանվեց, իսկ տնտեսական բարեփոխումների, մակրոտնտեսական քաղաքականության ուղղությունների, հիմնական տնտեսական ցուցանիշների (ամենից առաջ արժեգուման տեմպերի) տարբերությունները փոխառուցվում էին ներքին շուկայի պաշտպանության միջոցառումներով, այսինքն՝ ուղղակի

<sup>57</sup> Соглашение о создании Межгосударственного экономического Комитета Экономического союза; "Содружество, Информационный вестник Совета глав государств и Совета глав правительства СНГ", N3(16), 1994, стр. 49.

<sup>58</sup> Петраков Н., Шагалов Г., Валютный фактор в экономической интеграции стран СНГ. Вопросы экономики, 2003, N2, стр. 64-68.

Վարչական արգելակների ձևավորմամբ: Ուստի նման պարզագույն արժութային միությունը չէր կարող համապատասխանել ԱՊՀ երկրների արմատական շահերին, քանի որ չէր նպաստում դրանց հիմնական նպատակի իրագործմանը՝ միասնական տնտեսական տարածքի վերականգնմանը:

Այլ է տնտեսական միության խնդիրը: Դա ենթադրում է ինչպես մաքսային միություն, այնպես էլ ապրանքների, ծառայությունների, կապիտալի ու աշխատուժի ազատ տեղաշարժ, այսինքն՝ ընդհանուր շուկայի ձևավորում՝ առանց կոորդինացված մակրոտնտեսական քաղաքականության սահմանափակումների: Եվրոպական մշության փորձի համաձայն, ընդհանուր շուկայի ձևավորումն անխուսակելիորեն երկրներին մորում է դեպի միասնական արժութայի կիրառումը: Ըստ Եվրոպական փորձագետների գնահատականի, տնտեսական ինտեգրացիայի առավելություններն ամբողջովին դրսւուրդում են այն ժամանակ, եթե զուգահեռ ստեղծվում է արժութային միությունը: Վերջինս էլ հանդես է գալիս ոչ թե վերը նշված տարրական ձևով, այլ որպես տնտեսական համալիրների իրական ինտեգրման, արտադրության գործոնների շարժի ճանապարհին գոյություն ունեցող բոլոր արգելակների վերացնան ջանքերի արդյունքը: Այսպես է ծնվում տնտեսական և արժութային միության գաղափարը:

«Տնտեսական և արժութային միությունը» նույնպես անցնում է զարգացման մի քանի փուլերով: Նախ ապահովում է միասնական շուկայի գործունեությունը կապիտալի ազատ տեղաշարժի և ազգային արժույթների փոխանակային կուրսերի սահմանների կրծատման, մակրոտնտեսական քաղաքականության կոորդինացման պայմաններում: Երկրորդ փուլում մակրոտնտեսական քաղաքականության կոորդինացումն աստիճանաբար հանգեցնում է հիմնական տնտեսական ցուցանիշների մակարդակների մերձեցման և միայն երրորդ փուլում է ձևավորվում միասնական արժությն ու ստեղծվում միասնական Կենտրոնական բանկը:

Այսպիսով, ՏՏԻ հիմնական օրինաչափությունը դրա դասական փուլերի պահպանումն է՝ անցումը ազատ տնտեսական գոտուց դեպի մաքսային միություն, ընդհանուր շուկա, այնուհետև՝ արժութային և տնտեսական միություն: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, ինտեգրման որևէ փուլի անտեսումն անվերապահորեն մատնվում է անհաջողության: 1991թ. կնքված համաձայնագ-

րում խոսվում էր հենց աստիճանական ինտեգրման մասին: Սակայն, գործնականում, համաձայնագրի տրամաբանական, աստիճանական ինտեգրման գծանկարը չպահպանվեց: Ուուրլու գոտու վերականգնումը, այն պայմաններում, երբ ինտեգրման նախորդ փուլերն ապահովված չէին, հանգեցրին դրա վերջնական փլուզմանը:

Կարելի է ասել, որ գոյություն ունեցող միասնական տնտեսական տարածքը դեռ չի կորցրել իր կենսունակությունը: Այսօր էլ ԱՊՀ երկրները շարունակում են պահպանել արտադրության գործոնների ազատ տեղաշարժի բավականին բարձր մակարդակ: Սակայն տնտեսական տարածքը գործում է ինքնաբերաբար՝ «իներցիայով»՝ լուրջ օրենսդրական բազայի բացակայության պայմաններում:

Նախկին Խորհրդային Միության երկրների միջև տնտեսական համագործակցությունն արդիական է, կարևոր, և դա հիմնավորված է արժեքավոր փաստարկներով: Նախ, այդ երկրները տնօրինում են նշանակալից բնական ռեսուրսների և գիտատեխնիկական ներուժի, ունեն բարձր որակավորում ունեցող մասնագետներ, կապված են միասնական տրանսպորտային ցանցով, ունեն միասնական էներգետիկ համակարգ, նավթագազամուղ ձևավորելու և շահագործելու փորձ: Եվ երկրորդ, ունեն միասնական պատմական երկարատև անցյալ, մի քանի, որ չի կարելի ասել աշխարհում գոյություն ունեցող և ոչ մի ինտեգրված խմբավորման մասին: Այստեղ հաղթահարվել է ին լեզվական արգելքները: Սակայն արդեն փլուզված տնտեսական կապելով նախկին մակարդակով վերականգնելը բավականին դժվար գործընթաց է: Դրա ապացույցը վերջին տարիներին ԱՊՀ շրջանակներում ձևավորված տնտեսական մի քանի խմբավորմների ու տարածաշրջանային միավորումների (Եվրոպական տնտեսական ընկերակցությունը՝ ԺՇՌԾՆի, Կենտրոնական Ասիայի տնտեսական ընկերակցությունը, Բելառուս-Ռուսաստան) գործունեությունն է, որոնց կողմից հայտարարված տնտեսական ինտեգրացումը գործնական հաջողությունների չի հանգեցրել: Եվրասիական տնտեսական ընկերակցության և Կենտրոնական Ասիայի տնտեսական ընկերակցության գործունեությունը դեկլարատիվ հայտարարություններից այն կողմ չի անցնում: Ավելին, ԱՊՀ անդամ երկրների տնտեսությունների դեկինտեգրման գործընթացները գնալով ավելի ու ավելի են խորանում: 2002թ., 2001թ. համե-

մատությամբ, ԱՊՀ երկրների փոխադարձ արտահանումը կրծառվել է 7%-ով: Փոխադարձ ապրանքաշրջանառության տեսակարար կշիռը ԱՊՀ երկրների ընդհանուր ապրանքաշրջանառության մեջ կազմում է 30%, այն դեպքում, երբ 1991թ. կազմում էր մոտ 60%<sup>59</sup>: Միանգամայն ընդունելի է Յու. Շիշկովի ակնարկը, թե՝ «որքան ԱՊՀ քաղաքական և ռազմական տարածաշրջանում ավելանում են ճեղքերը, այնքան ուժգնանում է տնտեսական տարածքի վերահսկորման ցանկությունը»<sup>60</sup>: Բելառուսի և Ռուսաստանի համագործակցությունն այսօր չի համապատասխանում նույնիսկ մաքսային միության չափանիշներին: Կասկածի տակ էր նաև ԱՊՀ շրջանակներում 2003թ. փետրվարին Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի և Ուկրաինայի միջև ձևավորված տարածաշրջանային հիմներացիոն կազմակերպության ճակատագիրը<sup>61</sup>: Այդ նոր կազմակերպությունը<sup>62</sup> հայտարարեց մինչև տարեվերջ մաքսային միության ձևավորման մասին: «Նոր քայլակը» պարտավորվեց մշակել միասնական տնտեսական տարածքի ձևավորման նախադրյալները: Այդ նպատակով անդամ երկրները որոշեցին ձևավորել առևտուրի և սակագների միջազգային կարգավորման հանձնաժողով, հասնել համապատասխան օրենսդրության ներդաշնակեցման, համապատասխանեցնել տնտեսական քաղաքականության մի շարք ուղղություններ:

Տպագրությունն այնպիսին է, որ համագործակցության երկրներն այդպես էլ չեն կարողանում ձևավորել գիտականորեն հիմնավորված հայեցակարգեր, միասնական ծրագիր՝ տարածաշրջանային գործուն ինտեգրացիոն խնդրավորում ստեղծելու կապակցությամբ: Համագործակցող երկրները չեն գնահատում իրենց հնարավորություններն ու առկա տնտեսական իրավիճակը, չեն արժեքավորում այն նախադրյալներն, որոնց բացակայությունն արդեն սկսած գործընթացները կվերածի շարունակական դեգերունների օղակի: Եթե խախտվում է ՏՏԻ ռազմավարության տրամաբանությունն, ապա համագործակցությունը մատնվում է անհաջողության:

<sup>59</sup> Вопросы экономики, 2003, N2, стр. 65.

<sup>60</sup> Шишков Ю., “Интеграционные процессы на пороге XXI века. Почему не интегрируются страны СНГ?”, М.: НП “III тысячелетие”, 2001, стр. 413, 416.

<sup>61</sup> Kozlov S., “Ex-Soviet Republics Plan for Free Trade; 4 Countries Agree on Integration”, The Washington Times, February 25, 2003.

<sup>62</sup> Կազմակերպությունը պայմանականորեն անվանենք «Նոր քայլակ»:

Դա միանշանակ է. այդ մասին է վկայում տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիայի համաշխարհային փորձը: Ավելին, եթե ինտեգրվում են զարգացման տարբեր ընդ որում՝ ցածր մակարդակների վրա գտնվող երկրները, անհեռանկարային է դառնում նույնիսկ ազատ առևտուրային գոտու ձևավորումը: Անհրաժեշտ է նաև մշակել փոխադարձ համագործակցության միասնական ծրագիր, որը թույլ կտա փոխադարձ համագործակցությունը եւ կամուտների տարբերությունները: Մի շարք զարգացող երկրներում տնտեսական միությունների անհաջող փորձը ցույց է տալիս, որ այդ հիմնախնդրի լուծումը բավականին բարդ է և միջպետական ձևական (ֆորմայ) համաձայնագործի մակարդակով գործնականում անհրագործելի: Եթե ազատ առևտուրային գոտու ձևավորումը համագործակցող երկրների միջև առևտուրի սակագնային արգելակների վերացում է նշանակում, ապա մաքսային միության ձևավորումը պահանջում է միավորել ազգային մաքսային տարածքները, մշակել սակագնային և այլ պաշտպանության միասնական միջոցառումներ: Առաջանում է նաև արտաքին տնտեսական հարաբերությունների կոլեկտիվ կարգավորման անհրաժեշտություն, ստեղծվում է կարգավիրման վերաբետական մարմին:

ՀՀ-ն դիտորդի կարգավիճակով մասնակցում է «Նոր քայլակի» աշխատանքներին: Այս պահին «Նոր քայլակի» կողմից ձևավորվող մաքսային միությունը միակ կազմակերպությունն է, որ փորձում է որոշակի քայլեր կատարել տնտեսական համագործակցության խորացման ուղղությամբ: Ուստի նպատակահարմար է քննարկել այս ինտեգրացիոն կազմակերպության հնարավոր կայացումը և անդամ երկրների միջև ձևավորված առևտուրային կապերն ու դրան ՀՀ մասնակցության տեսակետներն այսօր և ապագայում:

Մաքսային միության ձևավորման հիմքը համագործակցող երկրների միջև փոխադարձ ապրանքաշրջանառության բարձր մակարդակն է: Սակայն, ինչպես ցույց է տալիս պաշտոնական վիճակագրությունը, «Նոր քայլակի» շրջանակներում փոխադարձ ապրանքաշրջանառության ծավալում առաջատարը Ռուսաստանն է, որին բաժին է ընկնում Բելառուսի ներմուծման 93.6%-ը, Ղազախստանի 88.7%-ը, Ուկրաինայի 65.8%-ը: Նշված երկրների արտահանման գերակշռող մասը ևս կապված է Ռուսաստանի հետ, որը, համապատասխանաբար, կազմում է 87.0, 69.0 և 80.0%: Բելառուսի արտահանման և ներմուծման միայն 0.1%-ն է կապված Ղա-

զախստանի հետ: Բելառուսի և Ղազախստանի հետ Ուկրաինայի փոխադարձ ապրանքաշրջանառության ծավալը նույնպես բավականին փոքր է (աղյուսակ 4):

#### Աղյուսակ 4

**Բելառուսի, Ղազախստանի, Ռուսաստանի և Ուկրաինայի փոխադարձ առևտուրը 2001թ. (տոկոսներով՝ համագործակցության երկրների առևտուրի ընդհանուր ծավալի նկատմամբ)<sup>63</sup>**

| Համագործակցութ. երկրները        | Բելառուս     | Ղազախստան    | Ռուսաստան    | Ուկրաինա     | Համագործ. այլ երկրներ |
|---------------------------------|--------------|--------------|--------------|--------------|-----------------------|
| Բելառուս արտահանում ներմուծում  | --           | 0.1          | 87.0<br>93.6 | 10.7<br>5.0  | 2.2<br>1.4            |
| Ղազախստան արտահանում ներմուծում | 0.2<br>1.4   | --<br>--     | 69.8<br>88.7 | 16.8<br>4.1  | 13.2<br>5.8           |
| Ռուսաստան արտահանում ներմուծում | 35.8<br>33.9 | 19.6<br>18.3 | --<br>--     | 37.0<br>35.0 | 7.6<br>12.8           |
| Ուկրաինա արտահանում ներմուծում  | 4.9<br>5.2   | 2.4<br>8.0   | 80.0<br>65.8 | --<br>--     | 12.7<br>21.0          |

Դա որոշ չափով բացատրվում է այդ երկրների հեռավորությամբ և բեռնափոխադրումների ժամանակ կիրառվող բարձր երկարության սակագներով: Այսպես օրինակ՝ Ղազախստանից ապրանքների ներկրությունը Բելառուս ներկայում 1.4-1.6 անգամ ավելի թանկ է, քան Լեհաստանից կամ Գերմանիայից: Ակնհայտ է, որ այս միությունը հիմնականում բարենպաստ կլինի Ռուսաստանի ապրանքային շուկայի համար: Սակայն, եթե հաշվի առնվի նաև ԱՊՀ երկրների արտահանման և ներմուծման ապրանքային կառուցվածքը (աղյուսակ 5), որում գերակշռում են գյուղատնտեսական, հումքային ապրանքներն ու ոչ թանկարժեք մետաղներն ու դրանցից պատրաստված իրերը (ներենաների և սարքավորումների, քիմիական արդյունաբերության ապրանքների արտահանման բաժինը

<sup>63</sup> Содружество Независимых Государств в 2001году. Статистический справочник, стр. 70-71.

ԱՊՀ շրջանակներում կազմում է համախառն արտահանման 22.3%-ը), ապա հասկանալի է, որ արտահանման տեխնոլոգիատարությունը, որը տարածաշրջանային տնտեսական ինտեգրման նախադրյալն է, չի կարող համապատասխանել սահմանված չափանիշին<sup>64</sup>: ԱՊՀ շրջանակներում առևտուրի ապրանքային կառուցվածքը մոտավորապես համապատասխանում է զարգացող երկրների շրջանակներում գործող տարածաշրջանային ինտեգրման խնբավորումների ապրանքաշրջանառության կառուցվածքին: Նմանօրինակ ապրանքաշրջանառության կառուցվածքը նվազեցնում է ԱՊՀ անդամ առևտուրյունների տնտեսությունների փոխլրացման մակարդակը, նվազեցնում է նաև միմյանց նկատմամբ տնտեսական հետաքրքրությունը, իսկ հաճախ նույնիսկ դարձնում հակառակորդներ նույնատիպ ապրանքային շուկաների համար պայքարում: Համագործակցության երկրների ապրանքաշրջանառության կառուցվածքային իինախնդիրները դրանց տեխնիկատնտեսական զարգացման ոչ բարձր մակարդակի հետևանքն են:

Այսպիսով, «նոր քայլակի» շրջանակներում մաքսային միության ձևավորումն անհեռանկարային է, քանի որ տնտեսական ինտեգրման համար համագործակցող երկրների ապրանքային շուկաները բավարար ինտեգրված չեն, ուստի և մաքսատուրբերի վերացումը շահավետ կլինի հիմնականում Ռուսաստանի համար, իսկ մնացած երկրների համար՝ միմյանց Ռուսաստանի հետ առանձինառանձին համագործակցելու դեպքում: Համագործակցության նախընտրելի տարբերակը մաքսային միության տրոհումն է մի քանի երկվորյակ ազատ առևտուրային գորոտ համաձայնագրերի, փոխադարձ ապրանքաշրջնառության ծավալների աճի դեպքում՝ անցում «նոր քայլակի» ներկայիս դիրքորոշմանը:

Քայլակի երկրներից և ոչ մեկն այսօր բաղաքական, բարոյահոգեբանական շարժառիթներից զատ, ինտեգրման այլ շարժառիթներ չունի, ավելին, չունի մաքսատուրբերին փոխարինող բյուջետային մուտքերի համալրման այլ աղբյուր: Տնտեսապես հետամնաց երկրները հեշտությամբ չեն կարող հրաժարվել եկամուտների նման աղբյուրից:

<sup>64</sup> ԱՊՀ շրջանակներում արտահանման տեխնոլոգիատարության բաժնեմասը կազմում է 2.4%. տես էջ 41, աղյուսակ 2:

**ԱՊՀ Երկրների արտահանման և ներմուծման ապրանքային  
կառուցվածքը 2001թ. (տոկոսներով)<sup>65</sup>**

| Ապրանքային խմբերը                                    | Արտահանում   |              | Ներմուծում   |              |
|--|--------------|--------------|--------------|--------------|
|  | ԱՊՀ Երկրներ  | Այլ Երկրներ  | ԱՊՀ Երկրներ  | Այլ Երկրներ  |
| Գյուղատնտեսական ապրանքներ                            | 8.9          | 2.1          | 11.4         | 20.2         |
| Հումքային ապրանքներ                                  | 33.5         | 51.3         | 28.6         | 2.0          |
| Քիմիական արդյունաբերության ապրանքներ                 | 10.2         | 7.1          | 12.8         | 17.3         |
| Փայտանյութեր և դրանց պատրաստված ապրանքներ            | 2.9          | 4.2          | 3.4          | 3.3          |
| Տեքստիլ նյութեր և արտադրանք                          | 4.8          | 3.4          | 4.8          | 3.9          |
| Ոչ քանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված ապրանքներ | 15.3         | 18.5         | 11.9         | 5.2          |
| Մեթենաներ և սարքավորումներ                           | 12.1         | 4.1          | 14.0         | 31.2         |
| Տրամադրության միջոցներ                               | 4.1          | 3.1          | 7.3          | 7.8          |
| Այլ ապրանքներ  | 5.2          | 6.2          | 5.8          | 9.1          |
| <b>Ընդամենը</b>                                      | <b>100.0</b> | <b>100.0</b> | <b>100.0</b> | <b>100.0</b> |

Զարգացած Երկրներն այդ կորուստները փոխհատուցում են արտադրության մասնագիտացման և կոռակրացման խորացմանը պայմանավորված տեխնիկական և տեխնոլոգիական բարդ արտադրությունների փոխլրացման միջոցով: Տնտեսական ինտեգրումն այս դեպքում իրականացվում է առանց կառավարությունների միջամտության: Վերջիններիս հիմնական պարտականությունները հանգում են իրավական բարենպաստ մթնոլորտի ձևավորմանը, համաձայնեցված ոլորտների անխափան գործունեությունը:

<sup>65</sup> Содружество Независимых Государств в 2001году. Статистический справочник, стр. 45, 72-83.

թյունն ապահովող ազգային օրենսդրությունների միօրինականացմանը:

Ինչ վերաբերում է «Նոր քայլակի» աշխատանքներին ՀՀ-ի՝ դիտողի կարգավիճակով մասնակցությանը, ապա, եթե նշված մաքսային միությունն այնուամենայնիվ կայանա, միևնույն է, Հայաստանը չի կարող դառնալ այս կամ այն մաքսային միության անդամ, եթե համագործակցող Երկրներից որևէ մեկի հետ ընդհանուր սահման չունի: Մեր հարևան հանրապետություններից Երկուսը Ռուսաստանի հետ ընդհանուր սահման ունեն, սակայն մաքսային միության աշխատանքներին մասնակցելու ցանկություն նրանք դեռևս չեն հայտնել: Եթե նույնիսկ վերանանք ընդհանուր սահմանի գաղափարից, ապա միևնույն է, «Նոր քայլակի» Երկրների հետ փոխադարձ ապրանքաշրջանառության ներկա ծավալները միանգանայն անբարենպաստ են իրական ինտեգրման գործընթացներ ծավալելու համար: Այսպես, «Նոր քայլակի» Երկրների հետ փոխադարձ ապրանքաշրջանառության վերլուծությունը ցույց է տալիս, որ 1999-2003թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ-ի թե՛ արտահանման և թե՛ ներմուծման ծավալներում Ռուսաստանն ունի ամենամեծ տեսակարար կշիռը (աղյուսակ 6):

**Աղյուսակ 6**  
**«Նոր քայլակի» Երկրների հետ ՀՀ արտաքին առևտրային շրջանառությունը 1999-2005թթ. (նլն ԱՍՍ դոլար)<sup>66</sup>**

| Երկրները  | ԱՐՏԱՀԱՆՈՒՄ |      |      |      |      |      | ՆԵՐՄՈՒԾՈՒՄ |       |      |      |      |      |      |      |
|-----------|------------|------|------|------|------|------|------------|-------|------|------|------|------|------|------|
|           | 1999       | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005       | 1999  | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 |
| Ռուսաստան | 33.9       | 44.6 | 60.5 | 64.6 | 94.6 | 78.0 | 119.1      | 149.9 | 137  | 174  | 193  | 209  | 188  | 260  |
| Ուկրաինա  | 2.1        | 3.3  | 10.9 | 8.1  | 7.3  | 10.5 | 13.7       | 7.9   | 12.3 | 22.1 | 45.7 | 44.1 | 58.7 | 67.7 |
| Բելառուս  | 1.1        | 0.9  | 1.2  | 1.5  | 2.1  | 2.0  | 2.5        | 0.64  | 0.62 | 1.1  | 2.04 | 5.06 | 6.5  | 11.5 |
| Ղազախստան | 0.5        | 1.3  | 1.1  | 0.8  | 1.0  | 1.7  | 2.6        | 0.6   | 0.9  | 0.5  | 1.7  | 1.9  | 1.1  | 0.8  |

<sup>66</sup> Հաշվարկները կատարվել են «ՀՀ արտաքին առևտրություն 2002թ.» (էջ 13) և «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը. 2003թ. հունվար-դեկտեմբեր» (էջ 148) տվյալների հիմնա վրա:

Այսուսակում ներկայացված տվյալները նաև ցույց են տալիս, որ Ուսուաստանի Դաշնության հետ ՀՀ արտաքին առևտրային շրջանառությունը կայուն կերպով աճում է, թեև 2000թ-ին ներմուծումը փոքր ինչ կրճատվել է (8.5%-ով):

Բազիսային տարվա համեմատությամբ՝ 2003թ-ին ՀՀ արտահանումն աճել է 90.6%-ով, որին համապատասխանում է ներմուծման 38.6% աճ: Ուկրաինայի հետ արտահանման ամենամեծ ծավալները դրսորդվել են 2005թ-ին, որը կազմել է 13.7 մլն դոլար: Ուկրաինայից ներմուծվող ապրանքների ծավալները ոչ միայն ունեցել են աճի բարձր տեմպեր, այլև ներմուծումը մի քանի անգամ գերազանցել է արտահանմանը (չնայած 2003թ-ին, նախորդ տարվա համեմատությամբ, ներմուծումը կրճատվել է 3.6%-ով): Մյուս երկու երկրների՝ Բելառուսի և Ղազախստանի հետ արտահանման-ներմուծման ծավալներն աննշան են, 2005թ-ին համապատասխանաբար կազմում են ԱՊՀ երկրների հետ ՀՀ արտահանման 1.4 և 1.4%-ը, ներմուծման՝ 2.9 և 0.2%-ը (այսուսակ 7):

#### Այսուսակ 7

##### ՀՀ արտահանման և ներմուծման մեջ «Նոր քառյակի»

Երկրների տեսակարար կշիռը 1999-2004թթ.

(տոկոսներով՝ ԱՊՀ համախառն ապրանքաշրջանառության  
նկատմամբ) <sup>67</sup>

| Երկր-ները | 1999 |      | 2000 |      | 2001 |      | 2002 |      | 2003 |      | 2004 |      | 2005 |      |
|-----------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|------|
|           | ս    | ն    | ս    | ն    | ս    | ն    | ս    | ն    | ս    | ն    | ս    | ն    | ս    | ն    |
| Ուսաս-տա  | 59.9 | 80.1 | 60.7 | 79.0 | 68.0 | 79.5 | 67.0 | 63.9 | 74.6 | 67.0 | 62.8 | 60.8 | 66.2 | 65.7 |
| Ուկրաինա  | 3.7  | 4.2  | 4.4  | 7.0  | 12.2 | 10.1 | 8.3  | 15.1 | 5.8  | 14.2 | 8.4  | 18.9 | 7.6  | 17.1 |
| Բելառուս  | 1.9  | 0.3  | 1.2  | 0.3  | 1.3  | 0.5  | 1.6  | 0.7  | 1.6  | 1.6  | 1.6  | 2.1  | 1.4  | 2.9  |
| Ղազախստան | 0.8  | 0.3  | 1.7  | 0.5  | 1.2  | 0.2  | 0.8  | 0.6  | 0.8  | 0.6  | 1.4  | 0.3  | 1.4  | 0.2  |

ԱՊՀ երկրների հետ մեր հանրապետության արտաքին առևտրային շրջանառության գերակշռող նաև փաստորեն կապված է

<sup>67</sup> Այսուսակը կազմվել է «Հայաստանի վիճակագրական տարեգիրը 2002» (էջ 496-499) և «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը. 2003թ. հունվար-դեկտեմբեր» (էջ 148) տվյալների հիման վրա:

Ուսուաստանի հետ, և դա բավականին ծանրակշիռ փաստարկ է Ուսուաստանի հետ տնտեսական համագործակցության խորացման համար: Ուկրաինայի դիրքը Հայաստանի առևտրային գործնկերների շարքում 10-րդն է, ուստի կարելի է ենթադրել, որ բարենպաստ պայմանների առկայության դեպքում փոխադարձ ապրանքաշրջանառության ծավալները ավելի կաստիվական: «Բարենպաստ պայմաններ» ասելով, առաջին հերթին պետք է հասկանալ եժան տրանսպորտային միջոցներով՝ ամենից առաջ երկարուղային տրանսպորտով միջազգային բեռնափոխադրումների իրականացումը, որն առայժմ անհնարին է: Եվ նկատի ունենալով, որ ՀՀ բեռնափոխադրումների 52%-ն իրականացվում է ավտոմոբիլային տրանսպորտով, կարելի է ենթադրել, որ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում տրանսպորտային ծախսերն ինչ-որ չափով ուղարկվում են իրական ցուցանիշները:

ՀՀ 1999-2002թթ. արտահանման և ներմուծման ապրանքային կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս (հավելված 2), որ, 2001թ. համեմատությամբ, 2002թ-ին հանքահումքային ապրանքների արտահանումն աճել է, իսկ մեքենաշինական ապրանքների բաժինը նվազել մոտ 14%-ով: Համախառն արտահանման մեջ, ուսումնասիրվող ժամանակահատվածում, կայուն բարձր է թանկարժեք քարերի և մետաղների բաժինը: Եթե 1999թ. այդ խմբի ապրանքներին բաժին էր ընկնուն ՀՀ արտահանման 43.1%-ը, ապա 2002թ. հասավ 51.1%-ի: Նույն բվականին պատրաստի սննդի ապրանքների, հանքահումքային ապրանքների և ոչ թանկարժեք մետաղների ու դրանցից պատրաստված իրերի բաժինը ՀՀ արտահանման 28.0%-ն է կազմում: Մեքենաների, սարքավորումների և պապատների, ինչպես նաև քիմիական արդյունաբերության ապրանքների արտահանման բաժինը կազմում է 8.4%:

Ներմուծման ապրանքային կառուցվածքը եապես չի տարբերվում արտահանման կառուցվածքից: Այսուղե ևս մեծ է թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի բաժինը, որը կազմում է համախառն ներմուծման 21.6%-ը: Նախորդ տարվա համեմատությամբ, այս խմբի ապրանքների ներմուծումը կրկնակի աճել է, այն դեպքում, եթե ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի ներմուծումը, որը 2001թ., նախորդ տարիների համեմատությամբ, ուներ ամենաբարձր մակարդակը, 2002թ. կրճատվեց 32.7 մլն դոլարով: Քիմիական ապրանքների ներմուծումը ամե-

նաբարձր մակարդակն ուներ 2000թ.՝ հասնելով 82.4 մլն դոլարի, սակայն հետագա տարիներին աստիճանաբար նվազելով՝ 2002թ. կազմել է 62.8 մլն դոլար: Ի տարբերություն քիմիական ապրանքների ներմուծման, մեքենաների, սարքավորումների, սարքերի և ապարատների ներմուծումը, ուսումնասիրվող ժամանակահատվածում, կտրուկ նվազել է միայն 2001թ.: 2000թ. համախառն արտահանման մեջ կազմելով 14.2%, 2001թ-ին այդ ցուցանիշը նվազել է մինչև 4.4%-ի մակարդակը, 2002թ. դարձյալ աճելով՝ կազմել 12.6%:

Ինչպես ցույց են տալիս հաշվարկները, ԱՊՀ երկրների հետ ՀՀ արտահանման ծավալները դրսկորում են աճի միտում: 1999թ-ի համեմատությամբ, 2005թ-ին ՀՀ արտահանումն աճել է 210.8%-ով, իսկ ներմուծման համապատասխան աճը կազմել է 124.8%: ԱՊՀ երկրներ ՀՀ արտահանումը 2005թ. կազմել է համախառն արտահանման 18.9, իսկ ներմուծման 22.3%-ը<sup>68</sup>: ԱՊՀ երկրների հետ 1999-2002թք. արտահանման տեխնոլոգիատարությունը 15.7%-ից իջել է մինչև 11.4%-ի, սակայն ներմուծման տեխնոլոգիատարությունը շատ ավելի ցածր է. 1999թ-ի 3.8%-ից դարձյալ նվազելով՝ 2002թ-ին կազմել է 3.2%: Փաստորեն, ՀՀ արտահանումը ԱՊՀ երկրներ 8.2%-ով ավելի տեխնոլոգիատար է, քան ներմուծումը, այն դեպքում, եթե ներմուծումը 3.1 անգամ գերազանցում է արտահանումը<sup>69</sup>:

«Նոր քայլակի» երկրներից ՀՀ արտահանման տեխնոլոգիատարությունը բավականին բարձր է Ուկրաինայի հետ (29.5%), որին համապատասխանում է ներմուծման 3.1% մակարդակ (այսուսակ 8): Բելառուսի հետ փոխադարձ առևտում պատկերը հակառակն է. ներմուծման տեխնոլոգիատարության բաժնեմասը գերազանցում է արտահանումը 8.2%-ով: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է փաստել, որ նշանակած բոլոր երկրների հետ էլ ՀՀ արտահանման տեխնոլոգիատարության բաժնեմասը նվազում է: Սակայն, հաշվի առնելով համագործակցության երկրների տնտեսական զարգացման ցածր մակարդակը, այդ ցուցանիշը կարող էր լինել շատ ավելի պակաս: ՀՀ արտահանման տեխնոլոգիատարության բարձր մակարդակը նախ

բացատրվում է այդ խնդիր ապրանքների նկատմամբ ձևավորված համաշխարհային պահանջարկով, ուստի և բնական է, որ հարուստ բնական ռեսուրսներ տնօրինող հիմնական գործընկերոջը՝ Ռուսաստանի պետք է հետաքրքրի միայն Հայաստանի տեխնոլոգիատար ապրանքների շուկան: Այդ խնդիր ապրանքների արտադրության զարգացումն էլ հետագայում հիմք կհանդիսանա ԱՊՀ երկրներին ինտեգրվելու համար: Եվ երկրորդ որքան ՀՀ արտահանման ծավալները մեծ են, այնքան փոքր է, տվյալ դեպքում, արտահանման տեխնոլոգիատարության բաժնեմասը, և հակառակը: Այսինքն, Բելառուսի և Ուկրաինայի հետ արտահանման տեխնոլոգիատարության բարձր բաժնեմասը պայմանավորված է արտահանման-ներմուծման փոքր ծավալներով: Համենայնդեպս, թե՛ տարածաշրջանային ինտեգրացիայի նախադրյալների և թե՛ հեռանկարային համագործակցության առունու Հայաստանի առավել նախընտրելի գործընկերը մնում է Ռուսաստանը, ինչպես նաև այն երկրները, որոնք կգտնեն Ռուսաստանի հետ համագործակցելու փոխշահավետ ուղի:

#### Աղյուսակ 8

«Նոր քայլակի» երկրների հետ ՀՀ փոխադարձ առևտությունը տեխնոլոգիատարությունը 1999-2002թք. (տոկոսներով)<sup>70</sup>

| Երկրներ   | ՀՀ արտահանման տեխնոլոգիատարությունը |      |      |      | ՀՀ ներմուծման տեխնոլոգիատարությունը |      |      |      |
|-----------|-------------------------------------|------|------|------|-------------------------------------|------|------|------|
|           | 1999                                | 2000 | 2001 | 2002 | 1999                                | 2000 | 2001 | 2002 |
| Ռուսաստան | 10.7                                | 14.1 | 9.2  | 8.0  | 3.7                                 | 3.6  | 2.5  | 3.4  |
| Ուկրաինա  | 35.3                                | 11.4 | 21.9 | 29.5 | 10.8                                | 10.9 | 6.4  | 3.1  |
| Ղազախստան | --                                  | --   | --   | --   | --                                  | --   | --   | --   |
| Բելառուս  | 22.4                                | 23.9 | 18.3 | 11.4 | 47.5                                | 41.6 | 38.7 | 19.6 |

Այսպիսով, կարելի է տեսականորեն ձևակերպել այն անհրաժեշտ քայլերը, որոնք պետք է իրագործել ԱՊՀ երկրներում արդյունակացնելու համար:

<sup>68</sup>Հաշվարկները կատարվել են «ՀՀ արտաքին առևտություն 2002թ.» (էջ 13) և «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը. 2003թ. հունվար-դեկտեմբեր» (էջ 148) տվյալների հիմնա վրա:

<sup>69</sup>Հաշվարկները կատարվել են «ՀՀ արտաքին առևտություն 1999թ.» (էջ 32-34), 2002թ. (էջ 26-28) տվյալների հիմնա վրա:

<sup>70</sup>Հաշվարկված է ՀՀ արտաքին առևտություն 1999թ. (էջ 29-36), 2000թ. (էջ 37-43), 2001թ. (էջ 38-43), 2002թ. (էջ 35-40) տվյալների հիմնա վրա:

նավետ տնտեսական ինտեգրում կազմակերպելու համար: Անհրաժեշտ է սկսել արտոնյալ համաձայնագրերի կնքումից, և այս փուլը կտևի բավականին երկար: Արտոնյալ համաձայնագրերի կնքման նպատակը պետք է լինի երկրների արտաքին առևտրային շրջանառության փոխլազգման ընդլայնումը: Երկրորդ փուլում համագործակցող երկրներն աստիճանաբար կանցնեն ազատ առևտրային գոտու ձևավորմանը, փոխադարձ ապրանքաշրջանառության ծավալների աճին գործադրության մաքսային միության ստողծմանը: Այս երկու փուլերը միասին կտևեն առնվազն 10 տարի, որի ընթացքում համագործակցող երկրները կանցնեն շուկայական հարաբերությունների արմատավորման տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում, կահղթահարվեն տնտեսական մեխանիզմների և օրենսդրությունների տարբերությունները և կծևավորվեն կարգավորման միասնական համակարգեր, կստեղծվեն նպաստավոր պայմաններ տեխնոլոգիատար ապրանքների արտադրության համար, քանի որ համագործակցող երկրների ներքին շուկան պաշտպանված կլինի երրորդ երկրներից, և դա թույլ կտա բարձրացնել ազգային տնտեսական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը: Վերջին հաշվով, նպաստավոր պայմաններ կծևավորվեն արտահանման տեխնոլոգիատարության բարձրացման համար, որն էլ, ժամանակակից գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում, համարվում է տարածաշրջանային համագործակցության գլխավոր խթանը:

Ներկայում ԱՊՀ շրջանակներում արտոնյալ առևտրային համաձայնագրի նակարդակով ինտեգրվելու իրական հնարավորություն ունեն Ռուսաստանը, Ուկրաինան և Բելառուսը: ԱՊՀ մնացած երկրները քաղաքական համագործակցության ամրապնդմանը գործադրություն կարող են խորացնել տնտեսական համագործակցությունը երկողմ համաձայնագրերի շրջանակներում:

ԱՊՀ ընդհանուր շուկայի ծևավորումը կարող է ընթանալ ճիշտ նույն ուղիով, որով ընթացան Եվրոպիության երկրները: Այս փուլում անենակարևոր գոյություն ունեցող հիմնախնդիրների վերանայումն է և համապատասխան օրենսդրական ակտերի ընդունումը: Այսպես, Եվրոպիության երկրներում 1980-ական թթ. պաշտոնապես քննարկվում էր այն հարցը, որ շուրջ 30 տարի գործում էր ընդհանուր շուկա, սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ընդհանուր շուկա, որպես այդպիսին, դեռևս գոյություն չուներ:

Կնքվել էր մաքսային միության պայմանագիրը, սակայն շարունակվում էր մաքսային գննումը սահմանի վրա, կար քաղաքացիների ազատ տեղաշարժի իրավունք, սակայն շարունակվում էր անձնագրային վերահսկումը և այլն: Դրա պատճառը համապատասխան օրենսդրական ակտերի բացակայությունն էր, և արդյունքում՝ անդամ երկրները կրում էին լուրջ տնտեսական վնասներ: Ուսումնասիրելով հիմնախնդիրը՝ Եվրոպիության ներկայացուցիչները կազմեցին այն 300 օրենսդրական ակտերի ցանկը, որոնց կիրառումը թույլ կտար վերացնել ապրանքների, ծառայությունների, կապիտալի և քաղաքացիների շարժի ժանապարհին առկա ֆիզիկական, տեխնիկական և հարկային խոչնդուսները: Սա էլ հենց դրվեց ընդհանուր շուկայի ծևավորման ծրագրի հիմքում: Կարելի է եզրակացնել, որ նմանատիպ աշխատանք պետք է կատարել և ԱՊՀ շրջանակներում: Ելնելով այն հանգամանքից, որ ընդհանուր ներքին շուկայի մի շարք տարրեր դեռ, փաստորեն, գոյություն ունեն, կարելի է ասել, որ ընդհանուր շուկան հնարավոր կլինի ծևավորել առավել կարծ ժամանակամիջոցում: Սակայն ընդհանուր ներքին շուկայի գոյությունն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է տնտեսական միության ստեղծման համար: Տնտեսական միության ծևավորման ընթացքում առաջնահերթ նշանակություն են ստանում անդամ երկրների կողմից համաձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության իրականացումն ու հիմնական տնտեսական ցուցանիշների միևնույն մակարդակը: Այս ցուցանիշների մակարդակների մերձությունն էլ արժութատնտեսական ինտեգրման հատկանշական օրինաչափությունն է: Այս առումով կարևոր է նաև մեկ այլ իրողության գնահատումը, որը չափազանց ցուցադրական է նաև ԱՊՀ երկրների համար: Ընդհանուր արժույթին անցնան ընթացքում Եվրոպական միությունը մշակել էր այն չափանիշները, որոնք պարտադիր պետք է լինեին ինտեգրվող երկրների համար: Ըստ ԵՄ փորձագետների, միայն այդ չափանիշներով օժտված երկրների միջև տնտեսական ինտեգրումը կարող է տալ դրական արդյունքներ: Ցավոք, նման մշակված հայեցակարգը բացակայում է ԱՊՀ երկրներում: Ոչ որ նույնիսկ չփորձեց գնահատել «բիշբեկյան խմբի»<sup>71</sup> ինտեգրման միատարրությունը: Եթե փորձենք այդ հա-

<sup>71</sup>Բիշբեկյան խումբ՝ 1992թ. Բելառուսը, Հայաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Մոլդովան, Ռուսաստանը, Տաջիկստանը ստորագրեցին համա-

մածայնագիրը դիտարկել Մաաստրիխստյան համաձայնագրի<sup>72</sup> տեսանկյունից, ապա հասկանալի կլինի, որ այստեղ նշված ոչ բոլոր չափանիշները կարելի է կիրառել մեր պայմաններում: Թեև դրանք անթերի չեն, սակայն մանրակրկիտ մշակումների, ինտեգրման իրական փորձի ուսումնասիրության արդյունք են: Եվ եթե ԱՊՀ տնտեսական միության նաև համաձայնագիրը մենք փորձում ենք հարմարեցնել եվրոպական տնտեսական ինտեգրման մոդելին, ապա պետք է հետևողականություն ցուցաբերենք նաև դրա իրականացման մեխանիզմների խնդրում:

Այսպես, ըստ Մաաստրիխստյան համաձայնագրի, ընդհանուր արժութային միության ծզտող երկրները պետք է բավարարեն հետևյալ պահանջները.

- ոչ պակաս, քան երկու տարի մասնակցեն արժութային փոխարժեքների համատեղ տատանման համակարգին,
- համագործակցող երկրներում արժեգրկման տեմպերը չպետք է գերազանցեն արժեգրկման ամենացածր տեմպեր ունեցող երկրի միջին ցուցանիշը 1.5%-ով,
- բյուջեի պակասուրդը և արտաքին պարտքը չպետք է գերազանցեն, համապատասխանաբար, ՀՆԱ-ի 3 և 60 %-ը,
- տոկոսադրույթները չպետք է գերազանցեն ամենացածր արժեգրկման տեմպեր ունեցող երկրներում առկա տոկոսադրույթները ավելի քան երկու տոկոսային կետով<sup>73</sup>:

Անկասկած, այս ցուցանիշներն ԱՊՀ երկրներում ուղղակիորեն կիրառելն անհնար կլիմեր, քանի որ բիշեքելյան համաձայնագիր կնքման պահին այդ երկրներում դեռ գործում էր ռուբլին, հետևաբար՝ արժույթների փոխարժեքների տատանումները և տոկոսադրույթների տարրերությունները գնահատելն անհնար կլիմեր: Նույնքան էլ դժվար էր գնահատել բյուջեի պակասուրդը՝ հակասական տվյալների պատճառով:

Սակայն արժեգրկման տեմպերի վերլուծությունը բավականին հետաքրքիր է: ԱՊՀ վիճակագրական կոմիտեի տվյալների համաձայն, 1992թ. ամենացածր արժեգրկման տեմպեր ունեին Հայաստանի պահանջմանը:

<sup>72</sup> Սակայն ամենացածր արժութային միության ստեղծման մասին:

<sup>73</sup> Սակայն ամենացածր արժեգրկման տեմպերը կազմել է 1992թ. հոլանդական Մաաստրիխստյան մասին:

<sup>74</sup> Միրօնով Հ, Политика экономического и социального сплочения после Маастрихта, МЭИМО, N1, 1997.

տանը, Ղազախստանը և Ուզբեկստանը: Եթե հաշվի առնվեն արժեգրկման բացարձակ մասշտաբները ԱՊՀ երկրներում, դրանք համեմատվեն Մաաստրիխստյան չափանիշի 1.5 տոկոսային կետի հետ, մեծացնելով մինչև 150%-ի սահմանում, այս դեպքում նույնպես եռյակի ցուցանիշներին ոչ մի երկիր չի մտտենա: Եվ Ուստաստանում, և ԱՊՀ այլ երկրներում արժեգրկման տեմպերն այդ պահին շատ անգամ ավելի բարձր էին: 1993թ. «լավագույն եռյակ» դարձան Ուզբեկստանը, Ուստաստանը և Ղրղզստանը, և կրկին ոչ մի այլ երկրում նման ցուցանիշներ չկի գրանցվում: Արժեգրկման տեմպերի նման տարրերություններն անխուսափելի էին, քանի որ գների ազատականացումն ԱՊՀ երկրներում ընթանում էր տարրեր տեմպերով: Եթե ժամանակին ԱՊՀ ամդամ երկրների զարգացման մակարդակների տարրերությունների մոտավոր վերլուծություն կատարվեր, ապա անմիջապես պարզ կդառնար ընդհանուր արժությի կիրառման անհնարինությունը: Տնտեսական ինտեգրման շարունակական փորձերն իրենց տեղը կզիշեն առավել գործնական և հեռանկարային գործընթացների ծևավորմանը:

Կասկածից վեր է, որ ԱՊՀ շրջանակներում ինտեգրման գործընթացների ծավալման համար վճռական դերը պատկանում է Ուստաստանին: Ուստաստանը համագործակցության երկրների արտաքին ապրանքաշրջանառության առաջատարն է, ուստի համագործակցության ապագան կախված է հենց վերջինիս դիրքորոշումից: Սակայն Ուստաստանն այսօրվա իր դիրքորոշումով տնտեսական, քաղաքական, մշակութային, տեղեկատվական ձգողության կենտրոն չէ: Ուստաստանն այսօր չի կարող ստանձնել ոչ միայն բարձր, այլև նույնիսկ արդյունավետ տեխնոլոգիաներ մատակարարողի դերը, որի կարիքն ունեն համագործակցության բոլոր անդամ երկրները: Ուստի որքան էլ որ մեծ լինի Ուստաստանի ձգտումը՝ չկորցնել նախկին տնտեսական կապերն ու պահպանել առաջատարի իր դիրքերը, այնուամենայնիվ, միասնական տնտեսական տարածքի ձևավորման՝ որպես ռամապարական խնդրի լուծման հիմքում պետք է դրվի անդամ պետությունների միջև տնտեսավարման պայմանների համահարթեցումն ու հավասար պայմանների տրամադրումը: ԱՊՀ երկրների ինտեգրման տեմպերը կախված կլիմեն դրանց տնտեսություններում շուկայական բարեփոխումների որակից և, ամենակարևոր՝ ժողովրդավարության հաստա-

տումից<sup>74</sup>: Տարածաշրջանային տնտեսական ինտեգրման ձևավորման առումով, ԱՊՀ ցանկացած երկրի ազգային տնտեսության կայացումն անհրաժեշտություն է: Սակայն զարգացած շուկայական տնտեսության ձևավորումը միանգամից տեղի չի ունենում. դա երկարաժամկետ գործընթաց է, ուստի ԱՊՀ շրջանակներում իրական տնտեսական ինտեգրման համար անհրաժեշտ նախադրյալների ձևավորումը նույնպես ապագայի խնդիր է:

ՀՀ-ն ԱՊՀ շրջանակներում հնարավոր ինտեգրման գործընթացներում կարող է ընդգրկվել առայժմ կնքված մի շարք երկկողմ և բազմակողմ առևտրատնտեսական համաձայնագրերի հետևողական իրականացման ճանապարհով (հավելված 3):

### **3.4. Անձովյան տնտեսական համագործակցությունը և ՀՀ-ն**

1980-ական թթ. վերջերին տեղի ունեցած քաղաքական վերաձևական առաջնորդությունը Անձովյան տարածաշրջանի երկրների մեջ մասը կանգնեց իր փոխարարերությունները վերանայելու և, համաշխարհային զարգացումներին համապատասխան, համագործակցության նոր ուղիներ գտնելու ընտրության առջև: Փնտրելով իրենց ազգային զարգացման ուղիները՝ Անձովյան տարածաշրջանի երկրները հանգեցին ջանքերը միավորելու գաղափարին՝ առաջնորդվելով խաղաղության, կայունության, բարգավաճման և համանարդկային այլ սկզբունքներին համապատասխան համագործակցություն ձևավորելու ձգտումով: Դիմնադիր երկրներն էին Թուրքիան, նախկին ԽՍՀՄ երկրները, Ռուսական և Բուլղարիան, որոնք էլ 1990թ. դեկտեմբերի 19-ին Անկարայում՝ Թուրքիայի նախաձեռնությամբ, մշակեցին և ներկայացրեցին համագործակցության ձևավորման հիմնարար սկզբունքները: ԽՍՀՄ փլուզումից հետո ԱՊՀ երկրներից կազմակերպությանն անդամագրվեցին Ռուսաստանը, Ուկրաինան, Մոլդովան, Վրաստանը, Հայաստանը, Ադրբեյջանը: Ավելի ուշ Անձովյան տնտեսական համագործակցութ-

յան անդամ դարձան Հունաստանն ու Ալբանիան: 1992թ. հունիսին Ստամբուլում կայացած բարձր մակարդակով հանդիպման ժամանակ Ալբանիայի, Ադրբեյջանի, Հայաստանի, Բուլղարիայի, Վրաստանի, Հունաստանի, Մոլդովայի, Ռուսականի, Ռուսաստանի, Թուրքիայի և Ուկրաինայի պետությունների և կառավարությունների դեկավարները ստորագրեցին Անձովյան տնտեսական համագործակցության մասին Հռչակագիրը, որում հատկապես ուշադրությունը քերաված էր երկրների տնտեսական ներուժի և փոխահավետ տնտեսական համագործակցության բարձրացման հնարավորությունների վրա, որոնց բվում հատուկ նշվեցին աշխարհագրական մերձությունն ու տնտեսական հիմնախնդիրների ընդհանրությունը<sup>75</sup>: 1993թ. փետրվարին, Ստամբուլում, համագործակցության անդամ պետությունների խորհրդարանների նախագահները ստորագրեցին Հռչակագիր ՍՕՏՀ խորհրդարանական վեհաժողով ստեղծելու մասին: Կազմակերպության գործունեությունը շատ շուտով դարձավ աշխարհի մի շարք երկրների ուշադրության առարկան: Դրա արդյունքում, մի քանի տարի հետո, ձևավորվեց ՍՕՏՀ դիտորդների ինստիտուտը, որի կազմի մեջ մտած՝ Գերմանիան, Իտալիան, Իսրայելը, Ավստրիան, Ֆրանսիան, Եգիպտոսը, Լեհաստանը, Սլովակիան, Թուրքիաը: Դիտորդ երկրները մասնակցում են այն միջոցառումներին, որոնք նրանց հետաքրքրում են: ՍՕՏՀ-ին անդամագրվելու հայտ են ներկայացրել նաև՝ Իրանը, Սակերոնիան, Բունիան, Խորվաթիան, Ղազախստանը, Ուգրեկստանը, Կիպրոսը, Բելառուսը, Հունգարիան և այլ երկրներ ու քանա՞ո՞չ կառավարական կազմակերպություններ տարբեր երկրներից<sup>76</sup>: ՍԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1999թ. 55-րդ վեհաժողովը քաջակերպությունը և ՍՕՏՀ-ի և ՍԱԿ-ի համագործակցությունը՝ ՍԱԿ-ի գլխավոր քարտուղարին, հատուկ գործակալություններին և ՍԱԿ-ի այլ կազմակերպություններին պարտավորեցնելով իրականացնել ՍՕՏՀ կայացման և զարգացման խորհրդատվությունը, ինչպես նաև մշակել ՍԱԿ-ի և ՍՕՏՀ-ի ընդհանուր շահերը արտացոլող համատեղ ծրա-

<sup>74</sup> Մասատրիխտյան համաձայնագրի F հոդվածում նշվում է, որ ԵՄ անդամ կարող են դարձնալ ժողովրդավարության ուղիղով ընթացող այն երկրները, որտեղ պահպան վում են մարդու իրավունքները:

<sup>75</sup> «The Summit Declaration on Black Sea Economic Cooperation, Istanbul, 25 June 1992», Black Sea Economic Cooperation. Handbook of Documents. Vol. 1, Istanbul, July 1995, page 3.

<sup>76</sup> «Black Sea Economic Cooperation Economic Agenda for The Future. Towards a More Consolidated, Effective and Viable Black Sea Economic Cooperation Partnership», BSEC agenda, Istanbul Sep. 2002, page 15.

գրեթե: Այսպիսով՝ ՍԾՏՀ-ն միացավ միջազգային կազմակերպությունների ընտանիքին՝ որպես տարածաշրջանային հիմնախնդիրներով գրաղուղի հավասար գործընկեր՝ գլոբալացման և խորացող փոխկապավորության պայմաններում:

1998թ. հունիսի 5-ին Յալթայում կայացած ՍԾՏՀ բարձր մակարդակի համբարձման ժամանակ ստորագրվեց ՍԾՏՀ խարտիան, որի շնորհիվ տնտեսական համագործակցությունը վերածվեց լիիրավ տարածաշրջանային կազմակերպության: Դա լայն հեռանկարներ է բացում տարածաշրջանային ինտեգրման ճանապարհին, ամրացնում է կազմակերպության իրավական դիրքը և միջազգային հեղինակությունը: Այսպիսով, ՍԾՏՀ-ն անդամ երկրների տնտեսական և քաղաքական հիմնախնդիրների լուծման, տարածաշրջանի մակարդակով գլոբալացման և ինտեգրման գործընթացներ իրականացնելու նպատակ հետապնդող կազմակերպություն է:

Ներկայումս ՍԾՏՀ կազմակերպությունը բաղկացած է յոթ հիմնական ինքնուրույն մարմիններից:

- ՍԾՏՀ /միջկառավարական մարմին/,
- ՍԾՏՀԽՎ /միջխորհրդարանական մարմին/,
- ՍԾՏՀ բիզնես խորհուրդ /բիզնես մարմին/,
- Սևոլյան առևտուրի և գարգացման բանկ /ֆինանսական մարմին/,
- Սևոլյան հետազոտությունների միջազգային կենտրոն /գիտական համայնքներ/,
- Սևոլյան մայրաքաղաքների ասոցիացիա,
- Սևոլյան մշակութային այսան:

ՍԾՏՀԽՎ-ում նախագահի պաշտոնը վարում են անդամ երկրների խորհրդարանների նախագահները, որոնք փոխվում են վեց ամիսը մեկ՝ անգերեն լեզվի այբբենական կարգով, շրջապտույտի (ռոտացիոն) սկզբունքով:

ՍԾՏՀԽՎ միջազգային քարտուղարությունը գտնվում է Ստամբուլում, նեկավարվում է գլխավոր քարտուղարի կողմից, որն ունի երկու տեղակալ: Յուրաքանչյուր հանձնաժողովը միջազգային քարտուղարությունում ունի մեկական քարտուղար: Վեհաժողովի պաշտոնական լեզուներն են՝ անգլերենը, ֆրանսերենը, ռուսերենը և թուրքերենը: Փաստաթթերի և նամակագրությունների պաշտոնական լեզուն անգլերենն է:

ՍԾՏՀԽՎ-ը (ՍԾՏՀ միջխորհրդարանական խորհրդատվական մարմինը), ազգային խորհրդարանների ջանքերը միավորում է հետևյալ նպատակների իրականացման համար.

- ապահովել համագործակցության երկրների ազգաբնակչության կողմից ՍԾՏՀ նպատակների ու գաղափարների ընդունումն ու ընթացումը,
- ստեղծել իրավական հիմքեր անդամ երկրների միջև տնտեսական, առևտորային, բնապահպանական, սոցիալական, մշակութային, կրթական համագործակցության համար,
- ընդունել օրենսդրություն՝ պետության, կառավարության ղեկավարների, արտաքին գործերի նախարարների կողմից ընդունված որոշումների իրագործման համար,
- աջակցել ազգային խորհրդարաններին՝ ժողովրդավարությունն իրենց երկրներում անշրջելի դարձնելու համար,
- զարգացնել համագործակցությունն այլ միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ:

ՍԾՏՀԽՎ աշխատանքային մարմինները դրա երեք մասնագիտացված հանձնաժողովներն են.

- տնտեսական, առևտուրի, տեխնոլոգիական և շրջակա միջավայրի հարցերի հանձնաժողովը,
- իրավական և քաղաքական հարցերի հանձնաժողովը,
- մշակութային, կրթության և սոցիալական հարցերի հանձնաժողովը:

Իր ձևավորումից ի վեր, ՍԾՏՀԽՎ-ն շարունակում է այլ տարածաշրջանային և միջխորհրդարանական կազմակերպությունների հետ ակտիվ համագործակցության գործընթացը: Կապեր են հաստատվել Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի, ԵԱՀԿԽՎ-ի, ԱՊՀ ՄԽՎ-ի, ՍԱԿ-ի, Փախստականների գերագույն հանձնակատարի և Միգրացիայի միջազգային կազմակերպության հետ:

ՍԾՏՀԽՎ-ում ՀՀ պատվիրակությունը, ՀՀ-ին հատկացված քվտայի համաձայն, կազմական է չորս անդամից: Պատվիրակությունն ունի նաև մեկ քարտուղար: Ազգային պատվիրակության անդամները պետք է լինեն պատգամավորներ, որոնք նշանակվում են առնվազն մեկ տարի ժամկետով:

ՍԾՏՀ Ստամբուլի հանդիպման ժամանակ նշվեցին նաև այն ոլորտները, որոնք պետք է գտնվեն համագործակցող երկրների

ուշադրության կենտրոնում՝ տրանսպորտ, կապ, տեղեկատվություն, ապրանքների ստանդարտացում և սերտիֆիկացում, բնական հումքի արդյունահանում և վերամշակում, գյուղատնտեսություն, անասնաբուժություն և սանհիտարական պաշտպանություն, տուրիզմ, առողջապահություն, գիտություն և տեխնիկա, դեղագործություն, տնտեսական և կոմերցիոն տեղեկատվության փոխանակություն, եներգետիկա:

Ըստ Եռության, ՍԾՏՀ-ն ոչ միայն տնտեսական, այլ նաև սոցիալ-առողջապահական, գիտական համագործակցության լայնածավալ ծրագրերով առաջնորդվող համագործակցություն է, որը միանգամայն տարբերվում է ներկայումս գոյություն ունեցող տնտեսական այն խնճավորումներից, որոնք համագործակցում են շեշտված տնտեսական ծրագրերով:

Այսօր ՍԾՏՀ անդամ պետությունների մեջ մասը բախվում է շուկայական տնտեսությանն երկարատև անցնան շրջանի բազմաբնույթ հիմնախնդիրներին, և ամբողջ տարածաշրջանը միշրճվել է փոխակերպման բազմաթիվ ցավոտ գործընթացների և վերակառուցման աշխատանքների մեջ: Տեղական չլուծված տարածայնությունները քայլայում են տարածաշրջանի քաղաքական, տնտեսական և սոցիալական միատարրությունը և արգելակում բազմակողմանի տնտեսական համագործակցության գործընթացը: Թեև ՍԾՏՀ անդամ երկրներն աշխատում են իրենց համագործակցության զարգացման և բարգավաճման ուղղությամբ, նրանք նաև քաջ գիտակցում են բոլոր այն դժվարությունները, որոնց առջև իրենք կանգնած են: Այսպես.

- ՍԾՏՀ անդամ պետությունների շրջանակներում համատեղ ծրագրերի իրականացմանը խանգարում են ֆինանսական ռեսուրսների անբավարարությունը և համագործակցող երկրներում բարենպաստ ներդրումային միջավայրի բացակայության պատճառով օտարերկրյա մեծածավալ ներդրումների ներգրավման անհնարինությունը,
- համագործակցող երկրների նպատակների ընդհանրության և տնտեսական զարգացման երկարաժամկետ ծրագրերի բացակայությունը,
- ընդունված որոշումների իրագործման ցածր արդյունավետությունը, որի պատճառը ազգային հեղինակավոր մասնագետներին դրանցում ներգրավելու գործելակերպի բացա-

կայությունն է, որոնք պետք է նաև պատասխանատու լինեն այդ որոշումների իրականացման համար,

- կազմակերպության վերոհիշյալ ստորաբաժանումների միջև գործունեության կոորդինացման բացակայությունը,
- չափից ավելի ձևապաշտությունը:

Դեռևսաբար, որպեսզի ՍԾՏՀ-ն ապագայում վերածի դիմանիկ զարգացող տարածաշրջանային տնտեսական կազմակերպության, անհրաժեշտ է տնտեսական և քաղաքական հարաբերությունները կառուցել փոխադարձ վստահության վիճ: Այն բոլոր հակասությունները, որոնք այսօր գոյություն ունեն համագործակցության անդամ երկրների միջև (Հայաստան-Ադրբեյջան, Հայաստան-Թուրքիա, Վրաստան-Արևիանա, Վրաստան-Աջարիա) հնարավոր չելուծել երկիր-երկիր հիմքի վրա: Դրանց լուծման համար, հավանաբար, անհրաժեշտ կլինի միավորել բոլոր երկրների ջանքերը: Առանց ներքաղաքական հակասությունների համահարթեցման, հազիվ թե կազմակերպությունը առաջիկայում տնտեսական հաջողություններ ձեռք բերի:

Այնուամենայնիվ, անդամ երկրների նախագահները 1998թ. հունիսին Յալթայում հրավիրված կոնֆերանսում նշեցին նոր տնտեսական ծրագրի մշակման անհրաժեշտության մասին ընդգելով փոխշահավետ տնտեսական համագործակցության ճանապարհով անդամ պետությունների տնտեսական նակարդակի բարձրացման, համաշխարհային տնտեսության ավելի լիարժեք ինտեգրվելու անհրաժեշտությունը: Այստեղ կարևորվեց նաև համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցող սրընթաց փոփոխություններին և տեղաշարժերին ՍԾՏՀ երկրների կողմից համարժեք արձագանքի նախադրյալների ձևավորումը: Դա մեջ չափերով պայմանավորված է երկրների տնտեսական զարգացման աննախընթաց աճով: Այս դեպքում կարևորվում են զբաղվածության մակարդակի բարձրացումը, գիտատեխնիկական առաջադիմության ներդրումը տնտեսության բոլոր ոլորտներում, սոցիալական ծրագրերի հետևողական իրականացումը, ինչպես նաև քաղաքական հանդուժողականության մբնուրությունը:

ՍԾՏՀ նպատակներից մեկն էլ շուկայական հարաբերությունների ձևավորմանն ուղղված նախագծերի և պլանների իրացման կոորդինացումն է՝ անդամ երկրների հեղինակավոր մասնագետների պատասխանատվության ներքո: Դրա իրականացումը թույլ

կտա համատեղ հասնել միասնական նպատակին, ձևավորել տարածաշրջանային ինտեգրման հղոր խմբավորում՝ երկրների համեմատական առավելությունների հաշվառմանը: ՍԾՀ ձևավորման սկզբնական փուլի համեմատությամբ, համագործակցող մի շարք երկրներում դիտվում է տնտեսության կայունացում, ձևավորվում են օտարերկրյա ներդրումների բարենպաստ պայմաններ, արժեգրկման տեմպեր դանդաղում են: Սակայն ազնիվ մրցակցության վրա հենված, սոցիալական կողմնորոշում ունեցող շուկայական տնտեսության արագ ձևավորումը, որպես ՍԾՀ կայուն զարգացման նախապայման, շարունակում է մնալ առաջնային հիմնախնդիր:

Մոտակա տարիների ընթացքում ՍԾՀ տարածաշրջանի նշանակությունը համաշխարհային քաղաքականության և գլոբալ տնտեսական զարգացումների մեջ նշանակալիորեն կավելանա: Դա պայմանավորված է տարածաշրջանի աշխարհառազմավարական տեղաբաշխմամբ, զբաղեցրած տարածքներով՝ 20 միլիոն քառակուսի մետր, բնակչության թվով՝ 340 միլիոն մարդ, հարուստ բնական՝ նախավորապես ածխաշրածնային ռեսուրսներով, որոնք կազմում են աշխարհի բնական գազի, ածխի և նավթի պաշարների մեծ մասը:

Պետք է ուշադրություն դարձնել այն իրողությանը վրա, որ ՍԾՀ ստեղծման նախաձեռնության ամենաշահագործի կողմն ի սկզբանե եղել է Թուրքիան, որի նպատակը տարածաշրջանում իր ազդեցության ոլորտների մեջացումն է: Սա բնական է, քանի որ ցանկացած երկիր, համագործակցության անդամ դառնալով, հետապնդում է որևէ շահ՝ լինի տնտեսական, թե քաղաքական: Թուրքիան, օգտագործելով իր տնտեսական լծակները, փորձում է գերիշխող տեղ գրավել տարածաշրջանում, իսկ մնացած երկրներն իրենք են որոշում, թե որքանով կարող են հակակշռել կամ համապատասխանեցնել իրենց ազգային շահերը Թուրքիայի այդ ձգտումներին: Այսպես, Ռուսաստանը, համաշխարհային տնտեսության մեջ ունեցած իր տնտեսական և քաղաքական դիրքով, Թուրքիային հակակշռում է, Աղրբեջանը, լինելով Թուրքիայի էքնիկական գործընկերը, չունի որևէ տարածայնություն վերջինիս հետ, ավելին, Աղրբեջանը Թուրքիային համարում է տարածաշրջանի իր գլխավոր գործընկերը: Վրաստանը, կոչտ դիրքորոշում ունենալով Ռուսաստանի նկատմամբ, փորձում է Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորել այդ ենթաքստում: Պնդել, թե տնտե-

սական համընդիանուր նպատակների իրականացումը թույլ կտա շրջանցել քաղաքական նման բարդությունները, միամտություն կլիներ: Ինչ վերաբերում է ՀՀ-ի՝ այս համագործակցության անդամակցությանը, ապա դա ունի ոչ միայն տնտեսական, այլ նաև քաղաքական, բարոյահոգեբանական նշանակություն: ՍԾՀ հիմնադիր անդամ Թուրքիայի հետ ՀՀ պատմական պահանջատիրության, ինչպես նաև Աղրբեջանի հետ հայտնի ռազմական բախումների և դրանց հաջորդող շրջափակման հետևանքով, մեր երկիրը կրում է շատ ավելի սոցիալ-հոգեբանական, բարոյական, քան թե տնտեսական կորուստները: Այդ կորուստները քիչ թե շատ փոխհատուցելու ուղին հավասար գործընկերոց կարգավիճակով համագործակցության շրջանակներում ազգանպաստ գործումներությունն է: ՀՀ դիրքորոշումը ՍԾՀ շրջանակներում ակտիվ և շահագործի քաղաքականության իրականացումն է, որը բխում է համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելու, տարածաշրջանի երկրների հետ փոխշահակետ համագործակցություն ձևավորելու անհրաժեշտությունից: Փաստորեն, ՍԾՀ-ն Հայաստանի համար պատուհան է ոչ միայն համագործակցելու եվրոպական երկրների հետ, այլև կարգավորելու միջտարածաշրջանային տարածայնությունները:

ՍԾՀ-ն նպատակ ունի նաև դառնալու տարածաշրջանային ինտեգրման կազմակերպություն, ավելին՝ ՍԾՀ խորհրդարանական վեհաժողովի՝ 1998թ. հունիսին Բուխարեստում կայացած նատաշրջանում արդեն ընդունվել է ազատ առևտորի գոտու ստեղծման գործողությունների պլանի մշակման մասին առաջարկությունը: Վայ թե ուշ ազատ առևտորային գոտու ձևավորումը ՍԾՀ անդամ երկրների շրջանակներում կդառնա անհրաժեշտություն, սակայն որքանո՞վ է դա արդիական և գործնականում իրագործելի, կպարզվի վերլուծության արդյունքում:

ՍԾՀ երկրների համախառն արտահանման ու ներմուծման (հավելված 4) և համագործակցության անդամ երկրների հետ ՀՀ արտահանման ու ներմուծման ծավալների վերլուծության հիման վրա (այսուսակ 9) կարելի է գնահատել համագործակցության երկրների միջև ազատ առևտորային գոտու ձևավորման նախադրյալների առկայության հարցը:

## Աղյուսակ 9

**1999-2003թթ. ՀՀ արտահանումն ու ներմուծումը՝ ըստ ՍԾՏՀ  
երկրների (մլն դոլար)՝<sup>77</sup>**

| Երկրները  | 1999 |      | 2000 |       | 2001 |      | 2002 |      | 2003 |      | 2004 |       | 2005 |      |
|-----------|------|------|------|-------|------|------|------|------|------|------|------|-------|------|------|
|           | Ա    | Ն    | Ա    | Ն     | Ա    | Ն    | Ա    | Ն    | Ա    | Ն    | Ա    | Ն     | Ա    | Ն    |
| Աղբյեցան  | 0    | 0    | 0    | 0     | 0    | 0    | 0    | 0    | 0    | 0    | 0    | 0     | 0    | 0    |
| Ալբանիա   | 0    | 0    | 0    | 0     | 0    | 0    | 0    | 0    | 0    | 0    | 0    | 0     | 0    | 0    |
| Բուլղարիա | 0.8  | 12.1 | 0.7  | 7.2   | 0.3  | 6.4  | 1.6  | 49.5 | 1.5  | 30.3 | 4.7  | 18.2  | 0.8  | 11.7 |
| Թուրքիա   | 1.12 | 40.2 | 1.53 | 40.5  | 1.13 | 33.7 | 1.1  | 38.2 | 1.03 | 38.1 | 2.0  | 38.2  | 2.5  | 57.9 |
| Հոմաստան  | 0.2  | 13.0 | 2.9  | 54.0  | 2.0  | 13.6 | 1.2  | 12.2 | 5.2  | 30.6 | 0.8  | 32.3  | 0.8  | 37.9 |
| Մոլդովա   | 0.2  | 0.07 | 0.13 | 0.9   | 0.2  | 0.4  | 0.08 | 1.3  | --   | --   | 0    | 0     | 0    | 0    |
| Ռուսաստան | 33.8 | 150  | 44.6 | 137.2 | 60.5 | 170  | 64.6 | 193  | 94.6 | 208  | 78.0 | 188.2 | 119  | 260  |
| Ռումինիա  | 0    | 0.5  | 0.4  | 0.3   | 0    | 0.2  | 0.09 | 7.2  | 0.02 | 6.8  | 0.2  | 6.1   | 0.3  | 3.8  |
| Վրաստան   | 15.0 | 11.8 | 13.7 | 13.5  | 12.4 | 10.4 | 16.6 | 31.5 | 15.9 | 38.3 | 28.6 | 49.4  | 38.7 | 50.0 |
| Ուկրաինա  | 2.1  | 7.9  | 3.2  | 12.3  | 10.9 | 22.1 | 8.1  | 45.7 | 7.3  | 44.1 | 10.5 | 58.7  | 13.7 | 67.7 |

Այսպես, Հունաստանին, Թուրքիային, Ռուսաստանին և Ուկրաինային 2000թ-ին բաժին էր ընկնում ՍԾՏՀ երկրների համախառն արտահանման 44.7%-ը, իսկ ներմուծման 83.0%-ը։ Այս երկրներն ունեն համեմատաբար լայն ներքին շուկա, հարուստ են բնական ռեսուրսներով, տնօրինում են գիտատար և տեխնոլոգիատար ապ-

րանքներ արտադրելու ներուժի։ Հունաստանն ու Թուրքիան բավկանաչափ ինտեգրված են՝ համաշխարհային տնտեսական կապերի առումով, բայց են օտարերկրյա ներդրումների առջև, լայնորեն կիրառում են համատեղ ձեռնարկությունների ձևավորման ճանապարհով հիմնական կապիտալի նորացման պրակտիկան, ուստի ազատ առևտրային գոտու շրջանակներում համագործակցության օգուտներն ամբողջովին կվերաբաշխվեն այս երկրների միջև։ Մնացած յոթ երկրները, որդեգրելով զարգացող երկրներին բնորոշ կեցվածք, կրածնամ համագործակցության հումքային կցորդները։ Ազատ առևտրային համաձայնագիր, սկզբնապես, կարող են ստորագրել միայն վերոհիշյալ չորս երկրները։ Մնացած երկրների՝ համաձայնագրին միանալու գործընթացը կարող է տեղի ունենալ այլ ոլորտներում համագործակցության ընդլայնման և խորացման ճանապարհով, որը թույլ կտա նաև ստեղծել փոխադարձ ապրանքաշրջանառության բավարար պայմաններ։ Իրոք, հենց թեկուզ ՍԾՏՀ երկրների հետ ՀՀ արտահանման և ներմուծման ծավալների վերլուծությունը ցույց է տալիս, որ համագործակցության անդամ չորս երկրներից երկուսի՝ Ալբանիայի և Աղբյեցանի հետ արտաքին առևտրային կապեր դեռևս չեն ձևավորվել, իսկ Մոլդովայի և Ռումինիայի հետ ապրանքաշրջանառությունն աննշան է։ Համագործակցության մյուս անդամների հետ փոխադարձ առևտրում ՀՀ ներմուծումը մի քանի անգամ գերազանցում է արտահանումը։ Միայն Վրաստանի հետ է, որ 2001թ. ներմուծման և արտահանման ծավալները մոտավորապես հավասարակշռում են, սակայն հետագա տարիներին ներմուծումը կտրուկ գերազանցեց արտահանմանը։ Այնուամենայնիվ, ՀՀ ապրանքաշրջանառության ծավալները ՍԾՏՀ երկրների հետ ունեն աճի միտում, այսպես՝ 2004թ. 266.3 մլն դոլարի համեմատությամբ դրանք 2005թ. կազմել են 312.6 մլն։

Դաշվի առնելով այդ և այն, որ ՍԾՏՀ ձևավորման նախաձեռնությունը պատկանում է Թուրքիային, և որ վերջինս տարածաշրջանի ամենահզոր պետությունն է ու կարող է Հայաստանի հետ համագործակցության երկրների հարաբերությունները տանել մեզ համար ոչ բարենպաստ ուղղությամբ<sup>78</sup>, շատ ավելի կարևորվում է

<sup>77</sup> Այսուսակը կազմվել է “Статистический ежегодник Южно-Кавказских республик, 2002” (стр. 267-276) և «ՀՀ տոնիալ-տնտեսական վիճակը. 2003թ. հունվար-դեկտեմբեր» (էջ 13 և 148) տվյալների հիման վրա։

<sup>78</sup> <http://www.icbss.gr/news/index.html> ՍԾՏՀ թուրքական ինտերնետային էջում Հայաստանի վերաբերյալ ոչ մի վիճակարգական տվյալ չի ներկայացվում, և Հայաստան անվանվում է ազրեսոր երկիր։

հարևան Երկրների՝ Աղոքեցանի և Թուրքիայի հետ քաղաքական հակամարտությունների լուծման հարցում ազգային տնտեսության հզորացման խնդրի արժուրումը: Դա աշխարհաքաղաքական հիմնախնդիրների լուծման, խաղաղ գոյակցության համար նպաստավոր պայմանների ձևավորման միակ ճանապարհն է: Այդ խնդրում Հայաստանն այլընտրանք չունի:

ՀՀ տնտեսական հզորացման առումով հսկայական դեր կարող է խաղալ ակտիվ համագործակցությունը հենց Սևծովյան հետազոտությունների միջազգային կենտրոնի (ՄՀԱԿ) հետ<sup>79</sup>, որին կից 2000թ. մայիսին ձևավորվեց նաև ինովացիոն-տեխնոլոգիական կենտրոնը:

Համագործակցության բոլոր Երկրների համար, առանց բացառության, հիմնարար գիտական մշակումների և կիրառական հետազոտությունների արդյունքներն արտադրության մեջ ներդնելու արդյունավետության բարձրացումը չափազանց սուր հիմնախնդիր է: ՍԾՀ ինովացիոն քաղաքականությունը կարող է հզոր լծակ դառնալ մասնակից պետությունների մտավոր և գիտատեխնիկական ներուժի արագ և արդյունավետ արտադրողական կիրառման համար: Թերևս գիտությանը հարկ եղած ուշադրություն չդարձնելու է պատճառը, որ և ֆիզիկապես, և՝ բարոյապես մաշվել են սարքավորումները, տեխնոլոգիական գծերը, մերենաները<sup>80</sup>: ԱՊՀ Երկրներից միայն Ռուսաստանում են ձևավորվել ինովացիոն-տեխնոլոգիական յոթ կենտրոններ:

Հայաստանն, ունենալով հզոր գիտատեխնիկական ներուժ, բարձր որակավորված գիտական անձնակազմ, ներկայում ինովացիոն քաղաքականության նկատմամբ պետական հովանավորչության և պետական հայեցակարգի բացակայության պայմաններում ոչ միայն ի գորու չէ փոխահավետ համագործակցելու ՄՀԱԿ-ի հետ, այլև ակտիվացնելու ինովացիոն գործունեությունը ազգային տնտեսության տարբեր ճյուղերում և ոլորտներում: ՀՀ ինովացիոն քաղաքականության մեջ կարևոր տեղ պետք է զբաղեցնեն պակաս կապիտալատար փոքր ձեռնարկությունները, որոնք կմշակեն և

կարտադրեն գիտատար, բարձր պահանջարկ ունեցող ապրանքներ: Դայտնի է, որ զարգացած Երկրներում բոլոր նորամուծությունների մոտ կեսն ապահովում են հենց փոքր ընկերությունները, որոնք աչքի են ընկնում նաև դրանց յուրացման արագությամբ:

Նոր տեխնոլոգիաների օգտագործման և ինովացիոն գործունեության ակտիվացման համար խթան կարող է հանդիսանալ վեճաչության կապիտալի զարգացումը: Այդ նոր ֆինանսական ինստիտուտուր ևս մեր հանրապետությունում չի ձևավորվել: Վեճչության կապիտալը լավագույն միջոց է նաև օտարերկրյա կապիտալ ներդրումների հոսքերի մեծացման համար: Օտարերկրյա ներդրողները ներդրումներ կարող են կատարել փակ բաժնետիրական փոքր և միջին ձեռնարկություններում՝ միաժամանակ դաշնալով տվյալ ձեռնարկության բաժնետեր: Շեշտը դրվում է փոքր և միջին ձեռնարկությունների վրա, քանի որ խոշոր ձեռնարկությունների համար դեռ չկա համապատասխան ֆինանսական կապիտալ, որը կապված է արդյունքի իրացումը կազմակերպելու մեջ ոխսկի հետ: Այսօր խոշոր ձեռնարկության արտադրուվ բավականին դժվար է մտնել միջազգային շուկա, մինչդեռ փոքր ձեռնարկության արտադրանքը ավելի հեշտ է համապատասխանեցնել շուկայի պահանջներին<sup>81</sup>: Վեճչության ներդրողի սկզբունքային տարբերությունն այլ ներդրողներից այն է, որ նա չի գտնում ձեռք բերել բաժնետոմսերի հսկիչ ծրաբը: Նման գործելանքը թույլ է տալիս մշակել պատասխանատվության ստույգ համակարգ, որում օտարերկրյա ներդրողը կրում է միայն ֆինանսական ռիսկը: Մնացած՝ կառավարչական, տեխնիկական, գնային և այլ ռիսկերը կրում են տեղացի ներդրողները: Հայաստանում վեճչության ձեռնարկությունների զարգացման համար կարելի է նաև օգտվել ինչպես տեղական բանկերի, այնպես էլ Սևծովյան առևտուրի և զարգացման բանկի ծառայությունից: Սա ուղիներից մեկն է, որը հնարավորություն կտա ՍԾՀ անդամ Երկրների հետ ՀՀ համագործակցությունը ծառայեցնել տնտեսության կայունացման և հետագա տնտեսական աճի պահովման հիմնախնդրի լուծմանը:

Այսպիսով, ՍԾՀ-ն, որն ի սկզբանե նպատակ ուներ կողորդի-նացնելու անդամ Երկրների տնտեսական և արտաքին առևտուրային

<sup>79</sup> ՄՀԱԿ՝ ձևավորվել է ՍԾՀ Երկրների արտաքին գործերի նախարարների 5-րդ (Աթենք, 1995թ. ապրիլ), 6-րդ (Քիշնե, 1995թ. նոյեմբեր) և 8-րդ (Մոսկվա, 1996թ. հնկումներ) հանդիպումների ժամանակ ընդունված որոշումների հիման վրա:

<sup>80</sup> Անամյան Լ., Հայաստանի տնտեսական պատմության որվագծեր, Երևան, 2003, էջ 212:

<sup>81</sup> Կիրակոսյան Գ., Անցումային տնտեսության վերափոխումներ, Երևան, 2002, էջ 128:

բազմաբնույթ խնդիրների լուծման նախաձեռնությունները, իր ձևավորման ժամանակաշրջանից ի վեր, զարգացող երկրների ինտեգրացիոն խնդիրներին համանման, իրական տնտեսական հաջողությունների չի հասել: Դա հատկապես վերաբերում է փոխադարձ առևտորի ծավալների ավելացմանը, ներդրումային քայլաքականության ակտիվացմանն ու գիտատեխնիկական համագործակցության ընդլայնմանը: Այստեղ խախտվել է նաև տարածաշրջանային տնտեսական ինտեգրացիայի ռազմավարությունը: Դա նաև ավարտապես վերաբերում է ՍԾՀ անդամ երկրների տնտեսական զարգացման մակարդակների տարրերությանը, որոնցից Հունաստանը Եվրոպի անդամ է, Թուրքիան արդեն հայտ է ներկայացրել անդամակցելու ինտեգրման այդ ազդեցիկ միավորմանը, մնացած երկրները՝ Հայաստանը, Ադրբեյջանը, Վրաստանը, Ռուսաստանը, Ուկրաինան, Մոլդովան, Ալբանիան, Բուլղարիան և Ռումինիան դեռևս շարունակում են տնտեսական բարեփոխումների, շուկայական հարաբերությունների ձևավորման գործընթացները: 1992թ. ՍԾՀ անդամ երկրների համատեղ ստորագրած հռչակագրում ընդգրկեց, որ այդ տնտեսական համագործակցությունը դիտվում է որպես ներդրում ընդհանուր Եվրոպական տարածքի ձևավորման ճանապարհին, ինչպես նաև համաշխարհային տնտեսության ինտեգրվելու աստիճանը բարձրացնելու ուղի: Ուստի, ներկայում, ՍԾՀ-ն չի կարելի դիտարկել որպես տարածաշրջանային տնտեսական ինտեգրման խնդրավորում, և ավելի ընդունելի է դրա հենց «կազմակերպություն» կարգավիճակը, կազմակերպություն, որն օժտված է անդամ պետությունների փոխհարաբերությունները կարգավորելու վերաբետական իրավասություններով: Սակայն ամենահին չի բացառվում, որ մոտ ապագայում ՍԾՀ շրջանակներում գործնական քայլեր արվեն տարածաշրջանային ինտեգրման ձևավորման ուղղությամբ: Այնուամենայիվ, Սևծովյան տարածաշրջանի երկրների հաջողությունները կախված կլիմենսկագրունքորեն նոր արտադրատեսակների արտադրությունից, նոր տեխնոլոգիաների շուկայի ձևավորումից, որոնց առկայությամբ տարածաշրջանը կդառնա մրցունակ և հեշտությամբ կինտեգրվի համաշխարհային տնտեսության գլոբալ գործընթացներին:

## ԳԼՈՒԽ IV

### ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԻՄԱԽԱՆԴԻՐՆԵՐԸ

#### 4.1. ՀՀ տնտեսական ինտեգրումը Վրաստանի հետ

ՀՀ տնտեսության կայունացման գործում վճռական դերը պատկանում է արտաքին տնտեսական կապերի՝ հատկապես արտաքին առևտորի զարգացմանը: Սակայն, ոչ բարենպաստ աշխարհագրական դիրքն ու բնական ռեսուրսների սահմանափակությունը մեր երկրում գուգորդվում են արտաքին տնտեսական քայլաքականության անհետուղականության և գործողությունների հստակ ծրագրերի բացակայության հետ: Այս առումով ոչ միայն կարևորվում է զարգացման արտաքին գործոնների նշանակությունը, այլև փոխահավետ համագործակցության չօգտագործված յուրաքանչյուր հնարավորություն ավելի է խորացնում ՀՀ տնտեսական կտրվածությունը համաշխարհային տնտեսությունից: Ավելին, Հայաստանը չի կարող գոյատել նաև ավտորեկիական (տնտեսական առանձնացվածություն) քայլաքականության պայմաններում, ուստի հարևան երկրների հետ ՀՀ տնտեսական ինտեգրումը կարելի է դիտարկել որպես առաջընթացի այլընտրանքային ուղի, որում կարևորվում է երկարաժամկետ և փոխահավետ համագործակցության զարգացումը: Այդ նկատառումով էլ հարևան երկրների հետ ՀՀ տարածաշրջանային տնտեսական ինտեգրման հնարավորությունները և նախադրյալները կդիտարկվեն Հայաստան-Վրաստան, Հայաստան-Իրան, Հայաստան-Ադրբեյջան-Թուրքիա երկողմ և եռակողմ համաձայնագրերի շրջանակներում: Իհարկե, չի կարելի բացառել նաև Իրան-Հայաստան-Վրաստան, Անդրկովկասյան երյակ կամ տարածաշրջանային հնգյակ համագործակցությունը ևս, սակայն առավել կարևոր է բացահայտել ՀՀ-ի հարևան երկրների հետ ինտեգրման առավել իրական և հերանկարային տարբերակը:

Ներկա ժամանակաշրջանում Հայաստանի արտաքին տնտեսական քայլաքականությանը բնորոշ են երկու հիմնական միտուներ.

1. փոխհարաբերություններ միջազգային տնտեսական կազմակերպությունների հետ,

2. համագործակցություն հարևան երկրների հետ:

Եթե միջազգային տնտեսական կազմակերպությունների հետ փոխհարաբերությունները համակարգվում և կարգավորվում են ըստ համապատասխան համաձայնագրերի, ապա հարևան երկրների հետ համագործակցության ձևերը և ուղղությունները դեռևս հե-

ու են փոխհամաձայնեցված գործումեռլիքան ցանկալի մակարդակից:

Տարածաշրջանային տնտեսական ինտեգրման առումով Հայաստանի առավել հեռանկարային, քիչ թե շատ վստահելի գործընկերը Վրաստանն է: Հայաստանի և Վրաստանի միջև գոյություն չունենայնպիսի լուրջ տարածայնություններ, որ սպառնան երկրների խաղաղ գոյակցությանը: Ավելին, այս երկու պետությունները կապված են դարավոր բարեկամությամբ, ունեն ընդհանուր թշնամուն համատեղ դիմակայելու և ազգային տնտեսությունները վերականգնելու միասնական երկարատև պատմություն:

Այսօր, ավելի քան երեկ, Հայաստանի համար ձևավորվել են Վրաստանի հետ համագործակցելու առավել բարենպաստ պայմաններ՝ կապված այնտեղ իրականացված իշխանափոխության հետ: Հետևելով մեր հարևան հանրապետությունուն ընթացող քաղաքական զարգացումներին, կարելի է եզրակացնել, որ մոտ ապագայում տնտեսական բարեփոխումները ևս կընթանան քաղաքակիրք հասարակության չափանիշներին համահունչ:

Թվում է, թե ոչինչ չի խանգարում այս երկու երկրների ջանքերի համատեղմանը, երկողով հիմքի վրա սոցիալ-տնտեսական, ինչու չէ, նաև քաղաքական փոխահավետ համագործակցության զարգացմանը: Այնուամենայնիվ, ներկայումս այդ համագործակցությունը դեկլարատիվ նպատակներից այն կողմ չի անցնում: Դրա պատճառներից գլխավորը երկու երկրների արտաքին քաղաքական ծայրահեղ տարբեր կողմնորոշվածությունն է, որը, վերջին հաշվով, արտացոլվում է հետևյալում:

1. Վրաստանը բացահայտ ցուցադրում է արևմտամետ քաղաքականություն, իսկ Հայաստանը նախընտրում է պահպանել հավասարագոր հարաբերություններ աշխարհի խոշոր տերությունների հետ:
2. Վրաստանն, Ադրբեյջանի ննան, աշխատում է ԱՊՀ շրջանակներում իր մասնակցությունը հասցնել նվազագույնի, այն դեպքում, եթե Հայաստանը չի շրջանցում ԱՊՀ ոչ մի նախաձեռնություն:

Վրաստանը տարածաշրջանային համագործակցության շրջանակներում նախապատկությունը տալիս է Ադրբեյջանին և Թուրքիային, որոնց հետ կապված է տնտեսական և քաղաքական հարաբերությունների բարձր մակարդակով: Այդ հարաբերություններում

հատկապես արժեքավորվում է Բաքու-Թբիլիսի-Ձեյխան նավթամուղը, որը շատ անհրաժեշտ է Վրաստանի տնտեսության վերականգնման համար<sup>82</sup>, որանով իսկ ավելի է ամրապնդվում այդ երկրների հետ սերտ համագործակցելու Վրաստանի դիրքորոշումը:

Չնայած այս ամենին, Վրաստանը շարունակում է մնալ ՀՀ ռազմավարական գործընկերը, մնացած աշխարհի հատկապես ԱՊՀ երկրների հետ կապող ծովային, մասամբ էլ ցամաքային ուղին: Հետևաբար, անհրաժեշտ է ըստ ամենայնի ընդլայնել ու ամրապնդել Վրաստանի հետ տնտեսական կապերն՝ անկախ ՀՀ գործընկեր երկրների (հատկապես Ռուսաստանի) նկատմամբ Վրաստանի դիրքորոշումից: Այս համագործակցության շարժիչ ուժը պետք է լինի աշխարհաբարձրական և աշխարհատնտեսական շահերի ապահովումը:

Վրաստանի հետ տնտեսական ինտեգրման ելակետային նողելը կարող է կառուցվել ազատ առևտրային գոտու համաձայնագրի հիման վրա, որը թույլ կտա ոչ միայն ակտիվացնել արտահանման ներմուծման ծավալները, այլև հենց այս փուլում, օգտվելով Հայաստան-Ռուսաստան առավել նպաստավոր տնտեսական կապերից, նախ ձևավորել բարենպաստ նախադրյալներ Ռուսաստանի հետ Վրաստանի փոխհարաբերությունները կարգավորելու համար, այնուհետև, նախային միության ձևավորմանը գուգահեռ, երրորդ երկրների հետ նիաննական մաքսային քաղաքականության իրականացնան շրջանակներում, Ռուսաստանից ներկրվող բեռների տարանցիկ մաքսատուրքերը վերացնել, որն, իր հերթին, կիանգեցնի ներմուծման էժանացման: Վրաստանի հետ վերջին տարիներին հարաբերությունների լարվածությունը պատճառ է դարձել նաև Ռուսաստանից ապրանքների ներկրման նվազմանը: Եթե 1998թ. Ռուսաստանից Վրաստանի ներմուծման ծավալները կազմում էին 127.2 մլն դոլար, ապա 2001թ. այդ թիվը հասավ 91.3 մլն դոլարի, որը կազմում է, նույն թվականի համենատությամբ, ՀՀ ներմուծման ծավալի 53.6 %-ը<sup>83</sup>:

Ազատ առևտրային գոտու ձևավորման համաձայնագրի շրջանակներում նախապատկությունը վերացումը կնպաստի նաև երկու երկրների ներքին շուկաներում ապրանքների գների նվազմանը,

<sup>82</sup> Georgian Economic Trend – 2001, N 3-4, page 20.

<sup>83</sup> Статистический ежегодник Южно-кавказских стран, 2002, стр. 268.

սպառումը կավելանա՝ համապատասխանաբար մեծացնելով ներմուծման նկատմամբ պահանջարկը: Ներքին շուկայում ապրանքների գների նվազումը բարենպաստ մրցակցային դաշտ կծնավորի ներքին արտադրողների համար: Մաքսատուրքերի վերացումը թույլ կտա նաև փակել մաքսանենգության ճանապարհը և վերացնել տարբեր ճանապարհներով մաքսային հարկումից խուսափելու դեպքերը: Ինքնըստինքան հասկանալի է, որ ստվերային տնտեսությունը որոշ չափով մուտք կգործի հարկային դաշտ՝ համապատասխանաբար մեծացնելով բյուջետային մուտքերը:

Տնտեսական ինտեգրման իիմնախնդրի լուծումը պայմանավորված է ինտեգրվող երկրների տնտեսական զարգացման մակարդակներով: Բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ ցուցանիշը որոշակի պատկերացում կարող է տալ Հայաստան-Վրաստան տնտեսական փոխհարաբերությունները ինտեգրման ուղիղվ տանելու որոշում կայացնելու համար: Այսպես, 2001թ. բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ ցուցանիշը ՀՀ-ում կազմում էր 557.1 դոլար, իսկ Վրաստանում՝ 644.7 դոլար: Ելնելով նույնիսկ այս ցուցանիշից, կարելի է պնդել, որ Հայաստանն ու Վրաստանը, գտնվելով զարգացման միևնույն ցածր մակարդակի վրա, չեն կարող դեռևս տարածաշրջանային տնտեսական ինտեգրումից ակնկալել բարձր արդյունավետություն: Այնուամենայնիվ, կարելի է գտնել այլ տնտեսական իիմնավորումներ Հայաստան-Վրաստան համագործակցությունն ավելի արդյունավետ և իրագործելի հիմքերի վրա տեղափոխելու համար:

Հայաստան-Վրաստան երկկողմ ազատ առևտորային համաձայնագրի համար, ներկայումս, առաջնայինը կարելի է համարել աշխարհագրական մերձությունն ու տնտեսական նպատակների (շուկայական հարաբերությունների արմատավորում տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում, տնտեսական կայուն աճի ապահովում, զբաղվածության մակարդակի աճ և այլն) ընդհանրությունը: Այս դեպքում, երկկողմանի համաձայնագրի շրջանակներում, համագործակցությունը կդառնա «միասնական առևտորային տարածքի» ձևավորման մոդելով զարգացման հենակետը, որը թույլ կտա օգտագործել յուրաքանչյուր երկրում առկա համենատական առավելություններն՝ արտադրական կրկնություններից խուսափելու, ներֆիրմային մասնագիտացման մակարդակը խորացնելու նպատակով: «Միասնական առևտորային տարածքի» մոդելը թույլ կտա

նաև ընդլայնել տնտեսական վերափոխումների հետևանքով այս երկրների նեղ ներքին շուկաները, ավելի արդյունավետ օգտագործել ամի ներքին գործոնները, քանի որ «Անդրկովկասի փոքր հանրապետությունները չեն կարող իրենց թույլ տալ ավտարկիայի նույնիսկ տարրեր՝ «սեփական ուժերի վրա հենվելու» քաղաքականություն, որը շատ հայտնի էր զարգացող աշխարհում 1970-ական թվականներին: Դրանք, միևնույն ժամանակ, ունեն արտաքին տնտեսական կապերը օգտագործելու սահմանափակ հնարավորություններ, քանի որ դրանց արդյունաբերական արտադրանքը մոտակա և միջին ժամկետ ապագայում համաշխարհային շուկայում կլինի անմրցունակ»<sup>84</sup>: Միասնական առևտորային տարածքի ձևավորումը թույլ կտա ինչ-որ չափով հաղթահարել «փոքր հանրապետության» կարգավիճակը, որը կընդգրկի 99.5 հազար քառակուսի մետր տարածք, որտեղ բնակվում են 8.745,3 հազար մարդ (դա մի փոքր ավելի է Ադրբեյջանի զբաղեցրած տարածքներից և բնակչության թվաքանակից): Սա զուտ վիճակագրություն չէ: Այս վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ Հայաստանի և Վրաստանի համագործակցությունը հնարավորություն կտա հակաշռելու նավթային ռեսուրսներով ապահովված, զարգացման ավելի մեծ ներուժ ունեցող հարևանին: Այդ համագործակցությունն, ամենից առաջ, անհրաժեշտ է մեզ:

Ուսումնասիրվող երկրների արտաքին առևտորային փոխադարձ կապերի վերլուծության հիմն վրա կարելի է հիմնավորել միասնական առևտորային տարածքի ձևավորումը (աղյուսակ 10):

#### Աղյուսակ 10 ՀՀ և ՎՀ արտահանման և ներմուծման փոխադարձ ծավալները 1998-2001թթ. (մլն դոլար)<sup>85</sup>

| Երկրները | 1998 |   | 1999 |   | 2000 |   | 2001 |   |
|----------|------|---|------|---|------|---|------|---|
|          | Ա    | Ն | Ա    | Ն | Ա    | Ն | Ա    | Ն |
|          |      |   |      |   |      |   |      |   |

<sup>84</sup> «Россия и Закавказье: реалии независимости и новое партнерство» ( под ред. Авакова Р.М. и Н. Г.Лисова), Москва, ЗАО “Финстатинформ” 2000, стр. 101.

<sup>85</sup> Статистический ежегодник Южно-кавказских стран, 2002, стр. 267.

|                                |       |       |       |       |       |       |       |       |
|--------------------------------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|-------|
| <b>Հայաստան<br/>ընդամենը</b>   | 220.5 | 902.4 | 231.7 | 811.3 | 300.5 | 884.7 | 324.8 | 874.3 |
| <b>այդ թվում՝<br/>ՎՀ-ի հետ</b> | 17.8  | 10.1  | 15.0  | 11.8  | 13.7  | 13.5  | 12.4  | 10.4  |
| <b>Վրաստան<br/>ընդամենը</b>    | 192.3 | 880.4 | 238.2 | 601.9 | 329.8 | 650.7 | 320.0 | 684.1 |
| <b>այդ թվում՝<br/>ՀՀ-ի հետ</b> | 9.6   | 26.8  | 11.1  | 26.9  | 16.0  | 19.8  | 12.4  | 18.4  |

Ըստ ներկայացված տվյալների, Հայաստանի և Վրաստանի փոխադարձ առևտորի ծավալները մոտավորապես հավասարակշռում են: 2001թ-ին Վրաստանին բաժին էր ընկնում ՀՀ համախառն արտահանման 3.8 և ներմուծման 1.19%-ը: Վրաստանի համախառն արտահանման 3.8%-ը ևս կապված է մեր երկրի հետ, իսկ ներմուծումը կազմում է 2.9%: Տեսականորեն ՀՀ արտահանումը պետք է հավասար լիներ Վրաստանի ներմուծմանը, և հակառակը: Սակայն, այդուսակում բերված տվյալները ցույց են տալիս, որ այդ ցուցանիշների միջև գոյություն ունի խզում: Դա բացատրվում է հետևյալով:

1. ՀՀ արտահանումը մաքսային հարկման չի ենթարկվում, իսկ Վրաստանը փաստացի ներմուծվող ապրանքների արժեքը գնահատում է հաշվի առնելով ավելացված արժեքի հարկը՝ 20%:
2. 2000-2001թթ. վրացական արտահանումից ՀՀ ներմուծման արժեքային տարբերությունը բացատրվում է նրանով, որ, ՀՀ մաքսային օրենսդրության համաձայն, արտահանման երկրում վճարված անուղղակի հարկերը չեն ներառվում ապրանքների մաքսային արժեքի մեջ:
3. Արժեքային տարբերության հաջորդ պատճառն էլ կարելի է համարել ՀՀ կառավարության՝ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիներին չունեցող անձանց կողմից ՀՀ տարածքում ձեռք բերված ապրանքների արտահանման ժամանակ ավելացված արժեքի հարկի գումարների վերադարձման կարգը հաստատելու մասին որոշումը (թիվ 372, 17.06.98):

Դատելով 1998-2001թթ. ՀՀ և ՎՀ արտահանման և ներմուծման բաժնեմասերի վերլուծությունից (այսուսակ 11) կարելի է պնդել, որ տնտեսության բացությունը երկու երկրներում էլ ունի միակողմանի բնույթ, քանի որ այլ երկրներից ապրանքների ներհոսքը մի քանի անգամ գերազանցում է համախառն արտահանմանը:

#### Այլուսակ 11

ՀՀ և ՎՀ արտահանման և ներմուծման բաժնեմասերը (քվոտա)  
1998-2001թթ. (տոկոսներով՝ ԴՆԱ-ի նկատմամբ)<sup>86</sup>

| Երկրներ-<br>ով | Արտահանման բաժնեմասը |      |      |      | Ներմուծման բաժնեմասը |      |      |      |
|----------------|----------------------|------|------|------|----------------------|------|------|------|
|                | 1998                 | 1999 | 2000 | 2001 | 1998                 | 1999 | 2000 | 2001 |
| Հայաս-<br>տան  | 11.6                 | 12.5 | 15.7 | 15.3 | 47.6                 | 43.9 | 46.2 | 41.3 |
| Վրաս-<br>տան   | 5.3                  | 8.3  | 10.9 | 10.1 | 24.3                 | 21.2 | 21.5 | 21.7 |

Ցաշվի առնելով նաև ուսումնասիրվող երկրներում տնտեսության զարգացման համար անհրաժեշտ ներքին ռեսուրսների անբավարարությունն ու օտարերկրյա ներդրումների նվազ հոսքերը՝ դժվար է պատկերացնել, թե տնտեսական ինչպիսի ռազմավարությունը կարող է նպաստել այս երկու երկրների առաջընթացին: Այդ առումով նպատակահարմար է վերլուծել նաև Հայաստանի և Վրաստանի փոխադարձ ապրանքաշրջանառության կառուցվածքը, որը թույլ կտա պատկերացում կազմել հյա-վրացական առևտորային կապերի արդի մակարդակի, դրանց հիմնական միտումների և հետագա զարգացման հնարավոր ուղիների մասին: Այսպես, 1999թ-ի համեմատությամբ, 2002թ. Վրաստանի հետ ՀՀ արտահանման կառուցվածքում (այսուսակ 12) գյուղատնտեսական ծագում ունեցող ապրանքների ու սննդամթերք, այդ թվում՝ կենդանի կենդանիների, կաթի և կաթնամթերքի, բնական մեղրի, թռչնի ձվի, սուրճի, թեյի և այլ համեմունքների արտահանումը 132 հզր դոլարից հասել է 1138.2 հզր դոլարի: Նշված ապրանքատեսակների արտահանումը, համապատասխան տարիներին, կազմել է գյուղատնտեսական

<sup>86</sup> Статистический ежегодник Южно-кавказских стран, 2002, стр. 137, 267.

ծագմանը 24 ապրանքախմբերի արտահանման ծավալի 12.4 և 93.7%-ը: Վրաստանից ներմուծվող գյուղատնտեսական ծագման ապրանքների կառուցվածքում 2002թ.-ին 20.8%-ը բաժին է ընկնում մասին և դրա ենթամբերներին, կերային հատապտուղներին, բանջարեղնին, ընկույզին, ցիտրուսային արմատներին և այլ բուսանային մշակաբույսերին, սուրճին, թեյին և այլ համեմունքներին: Վերը նշված գյուղատնտեսական ծագման 24 ապրանքախմբերի ներմուծումը կազմում է ՀՀ համախառն ներմուծման 24.4%-ը: Գյուղատնտեսական ծագման մնացած ապրանքատեսակների և ներմուծման, և արտահանման ծավալները չնշին են: Բացառություն է կազմում Վրաստանից հացահատիկի և ծխախոտի ու ծխախոտի արդյունաբերական փոխարինիչների ներմուծումը, որը կազմում է ՀՀ համախառն ներմուծման 18.1%-ը: Նետաքրքիր է, որ Հայաստանն այսօր, համարվելով ծխախոտ արտադրող Երևան, փասոռեն, հարևան Երևանից ծխախոտ է ներմուծում: Դա մի կողմից դրական երևույթ է, քանի որ նպաստում է ծխախոտի ներքին շուկայի բազմազանեցմանը, որը բխում է սպառողի շահերից, մյուս կողմից էլ մեծացնում է ՀՀ բյուջետային մուտքերը, քանի որ ծխախոտը հարկվում է ակցիզային հարկով: Սակայն, նկատի ունենալով այն, որ 1999թ. ծխախոտի արտահանումը, որը կազմում էր 393.8 հզր դոլար և գերազանցում էր նույնիսկ 2002թ. ներմուծման մակարդակը, իսկ դրան հաջորդող տարիներին կտրուկ նվազելով՝ 2002թ. հասել է 0%-ի, կարելի է ենթադրել, որ Վրաստանի ներքին շուկայում հայկական ծխախոտն անմրցունակ է:

## Աղյուսակ 12

### ՀՀ արտաքին առևտուրը Վրաստանի հետ 1999-2002թթ. (հազ ԱՄՆ դոլար) <sup>87</sup>

| Օգոստական ամիս | ԱՊՐԱՆՔԱԽՄԱՆԻ ԽՄԲԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ  | ԱՐՏԱՔԱՍՈՒՄ |         |         |         | ՆԵՐՄՈՒԾՈՒՄ |         |         |         |
|----------------|--|------------|---------|---------|---------|------------|---------|---------|---------|
|                |  | 1999       | 2000    | 2001    | 2002    | 1999       | 2000    | 2001    | 2002    |
|                | Ընդամենը   | 11100.1    | 15989.3 | 12412.5 | 16606.9 | 26855.6    | 19801.1 | 18502.9 | 31470.1 |
| 1              | Կենդանի կենսանիմեր   | 4.9        | 2.6     | 107.8   | 316.7   | 0.0        | 0.6     | 3.5     | 7.5     |
| 2              | Միս և մսից ներամբեր  | 6.4        | ---     | ---     | 8.6     | 179.0      | 34.6    | 48.1    | 1008.1  |
| 3              | Զովկ և խեցգետնավորներ, մանրուքներ և այլ ծովային անողնաշարավորներ                   | 0.0        | 5.4     | 10.6    | 6.4     | 3.1        | 12.1    | 0.8     | 4.3     |
| 4              | Կաթ և կաթնամթեր, թռչնի ծով, բնական մելք և այլ կենդանագման սննդամթեր                | 0.0        | 88.6    | 354.2   | 384.1   | 41.3       | 6.5     | 12.0    | 5.4     |
| 5              | Այլ կենդանական ծագման ապրանքներ  | ---        | ---     | ---     | ---     | ---        | ---     | 0.2     | ---     |
| 6              | Կենդանի ծառեր, թփեր և այլ բույսեր  | 0.0        | ---     | ---     | 1.1     | 6.5        | 38.6    | 49.1    | 71.6    |
| 7              | Բանջարեղն և այլ կերային արմատապտուղներ և եւսպոտու                                  | 32.0       | 13.9    | 0.2     | ---     | 5.4        | 7.1     | 52.3    | 12.5    |
| 8              | Կերային հատապտուղներ և ընկույզ, ցիտրուսների արմատներ և այլ բուսանային մշակաբույսեր | 2.1        | 47.2    | 27.2    | 15.8    | 1043.7     | 250.3   | 161.7   | 471.8   |
| 9              | Սուրճ, թեյ և այլ համեմունքներ  | 86.6       | 96.8    | 134.7   | 406.6   | 35.4       | 7.3     | 55.3    | 16.4    |
| 10             | Հացահատիկներ   | 35.0       | 12.0    | 2.3     | 2.3     | 4221.5     | 428.5   | 2039.8  | 5305.0  |
| 11             | Ալուղացային-ծավալբեղնային արտադրանք, ածիկ, օսլա, ինուկին և այլն                    | 3.5        | ---     | 17.9    | 0.3     | 116.5      | 0.17    | 2.9     | 1.8     |
| 12             | Զիթառու սերմեր և պտուղ-  | 0.0        | ---     | 7.0     | ---     | 50.5       | 14.1    | 47.1    | 34.5    |

<sup>87</sup> Կազմված է «ՀՀ արտաքին առևտուրը 1999թ.» (էջ 36-38), 2000թ.(էջ 43-45), 2001թ.(էջ 44, 45), 2002թ. (էջ 40-42) տվյալների հիման վրա:

|    |   |        |        |        |       |       |      |      |       |
|----|---|--------|--------|--------|-------|-------|------|------|-------|
|    | Ներ, դեղաբույսեր և տեխնիկական բույսեր, ծղոտ                               |        |        |        |       |       |      |      |       |
| 15 | Կենդանական և բուսական ծագման յուղեր և ծառվեր, մեղրամոն                    | 4.8    | ---    | ---    | 0.6   | 34.7  | 2.3  | 19.8 | 2.9   |
| 16 | Մսից, ձկներից և այլ ծովային անողնաշարավորներից արտադրանք                  | 0.1    | ---    | ---    | 0.7   | 6.7   | 9.2  | 3.2  | 4.4   |
| 17 | Շաքար և հրուշակեն շաքարից   | 0.0    | 1.2    | 4.5    | 0.1   | 4.1   | 9.6  | 91.3 | 30.2  |
| 18 | Կակաո և դրանց պատրաստված մթերք  | 0.0    | 12.1   | 10.3   | 14.0  | 68.7  | 15.5 | 61.5 | 4.0   |
| 19 | Ցորենից, այլուրից, օսայից և կաթից պատրաստված ապրանք, այլուրից հրուշակեն   | 0.0    | ---    | 2.8    | 16.5  | 25.5  | 7.1  | 31.2 | 15.0  |
| 20 | Բանջարեղենի, պսուղների, ընկույզների և բույսերի նասերի վերամշակումից մթերք | 3.5    | 36.4   | 0.2    | 5.4   | 30.3  | 0.7  | 1.9  | 0.9   |
| 21 | Այլ տարրեր սմնդամթերք   | 6.1    | ---    | 1.8    | 1.4   | 11.0  | 7.6  | 99.4 | 104.5 |
| 22 | Ոգելից և ոչ ոգելից ըմպելիք և քացախ  | 484.2  | 1790.0 | 2125.3 | 14.7  | 4.4   | 8.0  | 4.1  | 116.4 |
| 23 | Սննդարդյունաբերության մասնագործներ, պատրաստի աճանակեր                     | 0.0    | ---    | 7.7    | 19.9  | 17.0  | 16.3 | 65.2 | 80.9  |
| 24 | Ծխախոտ և ծխախ. արդյուն. փոխարինչներ                                       | 393.8  | 24.0   | 49.8   | ---   | 505.7 | 69.5 | 78.1 | 376.5 |
| 25 | Աղ, ծծումբ, հող և քար, սկալման նյութեր, կրաքար և ցեմենտ                   | 1033.2 | 786.9  | 201.3  | 397.1 | 112.4 | 14.0 | 36.2 | 63.0  |
| 26 | Դամքաքար,   | ---    | 4.1    | ---    | ---   | ---   | ---  | ---  | ---   |

|    | Խարամ և մոլոր  |        |        |        |        |         |        |        |        |
|----|--|--------|--------|--------|--------|---------|--------|--------|--------|
| 27 | Վարշելամութեր, նավե և նավամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր                                      | 7003.1 | 9424.6 | 6265.7 | 4835.5 | 12696.7 | 8593.8 | 4454.9 | 7530.2 |
| 28 | Անօրգանական քիմիական միացություններ, ռագիդակտիվ էլեմենտներ և հզոտուպներ                                | 130.3  | 42.6   | 200.2  | 50.2   | 1181.9  | 899.8  | 882.8  | 1438.9 |
| 29 | Օրգանական քիմիական միացություններ  | ---    | 1.8    | 1.7    | 3.1    | ---     | 1.1    | 2.1    | 0.2    |
| 30 | Դեղագործական մթերք   | 242.8  | 825.9  | 625.2  | 303.3  | 287.0   | 332.4  | 480.5  | 494.5  |
| 31 | Պարարտամյութեր   | ---    | ---    | 1.6    | ---    | ---     | 1514.1 | 1953.3 | 1694.1 |
| 33 | Եթերային յուղեր, հարդարանքի և լոգարանային միջոցներ   | ---    | 22.2   | 4.0    | 1.0    | ---     | 7.1    | 291.1  | 179.7  |
| 34 | Օճառ, մակերեսային ակտիվ օրգանական միջոցներ, մաքրող միջոցներ և բաւրենք, մոմեր և հարդարանքի այլ միջոցներ | ---    | 2.7    | 26.0   | 142.5  | ---     | 4.2    | 108.3  | 72.6   |
| 35 | Սալակուցային նյութեր, սուխնձ, մողիֆիկացված օսլա, ֆերմենտներ  | ---    | ---    | 0.7    | ---    | ---     | 3.1    | 0.1    | 0.1    |
| 36 | Պայթուցիկ նյութեր, լուցկի և այլ վառվող նյութեր   | ---    | ---    | ---    | 0.0    | ---     | ---    | 15.1   | 5.2    |
| 37 | Լուսանկարչական և կինոյի ապրանքներ  | ---    | ---    | ---    | ---    | ---     | ---    | 15.1   | 7.1    |
| 38 | Այլ քիմիական ապրանքներ   | ---    | 3.4    | 14.9   | 9.4    | ---     | 0.7    | 4.3    | 28.3   |
| 39 | Պլաստամագված մթանից  | ---    | 62.3   | 182.6  | 198.6  | ---     | 642.4  | 456.0  | 615.2  |

|    | հրեր  |     |      |      |      |      |        |        |        |
|----|---|-----|------|------|------|------|--------|--------|--------|
| 40 | Կառչուկ և<br>ռեսինե հրեր  | --- | 9.0  | 0.5  | 24.0 | ---  | 8.4    | 39.1   | 4.8    |
| 41 | Կաշի և կաշվե<br>հումք   | --- | ---  | ---  | 20.7 | ---  | ---    | ---    | ---    |
| 42 | Կաշվե հրեր,<br>կենդանիների<br>աղիքից հրեր   | --- | ---  | ---  | ---  | ---  | 6.3    | 0.2    |        |
| 44 | Փայտ և փայ-<br>տից հրեր,<br>փայտածուխ   | --- | ---  | 17.8 | 8.9  | ---  | 1241.5 | 1819.7 | 2839.2 |
| 48 | Թուրք և ատլա-<br>րաբութեր, հրեր<br>քղթից  | --- | 40.5 | 8.8  | 52.5 | ---  | 106.5  | 138.0  | 140.0  |
| 49 | Գրեր, լրագրեր,<br>տպագրական<br>արտադրանք  | --- | 39.4 | 0.7  | 61.1 | ---  | 0.7    | 0.2    | 0.1    |
| 50 | Մետարք  | --- | ---  | ---  | ---  | 0.0  | ---    | ---    |        |
| 51 | Բուրք, նուրք և<br>կոպիտ կենդա-<br>նական մազեր,<br>ձիու մազից<br>հյուսվածք և<br>կտոր           | --- |      | ---  | ---  |      | 19.8   | 18.0   |        |
| 52 | Բամբակ  | --- | ---  | ---  | ---  | ---  | 4.9    | 54.9   | ---    |
| 54 | Քիմիական<br>թեթեր   | --- | ---  | ---  | ---  | ---  | 0.18   | 1.1    | 0.1    |
| 55 | Քիմիական<br>շաքելային<br>գործվածք   | --- | ---  | ---  | ---  | ---  | 1.4    | 4.9    |        |
| 56 | Թաղիք,<br>բամբակ, հա-<br>տուկ գործվածք,<br>ծոպան, առա-<br>սանուկ, պա-<br>ռան և հրեր<br>դրամից | --- | ---  | ---  | ---  | 26.0 | 0.5    | 2.2    |        |
| 57 | Գորգեր և հա-<br>տակի այլ տերս-<br>տիլ ծածկոցներ   | --- | ---  | ---  | 0.1  | ---  | 0.4    | ---    | 24.3   |
| 59 | Տեքստիլ<br>կրկնագրծված<br>և հարստացված<br>ծածկույթով<br>հրեր և դրամից<br>տեխ. հրեր            | --- | ---  | ---  | ---  | ---  | ---    | 30.1   |        |
| 60 | Մերժանով կամ<br>ձեռքով գործած<br>տրիկ. կտուպ  | --- | ---  | ---  | ---  | ---  | 0.9    | 5.6    | 6.7    |
| 61 | Տրիկոտաժե<br>հագուստ և  | --- | 64.6 | 33.1 | 23.7 | ---  | 8.2    | 35.6   | 25.3   |

|    | հարակից հրեր  |      |        |       |       |       |       |       |       |
|----|---|------|--------|-------|-------|-------|-------|-------|-------|
| 62 | Տեքստիլ հա-<br>գուստ և հարա-<br>կից հրեր  | ---  | 0.0    | ---   | 4.9   | ---   | 2.5   | 5.4   | 27.1  |
| 63 | Այլ պատրաստի<br>տեքստիլ հրեր,<br>օգտագործած<br>հագուստ և<br>տեքստիլ հրեր                            | ---  | 16.0   | 47.3  | 622.4 | ---   | 1.6   | 3.2   | 5.1   |
| 64 | Կոշիկ, զուգա-<br>գուլպա և նմա-<br>նատիա հրեր  | ---  | ---    | ---   | ---   | ---   | 54.1  | 44.4  | 47.1  |
| 65 | Գիշարկներ   | ---  | ---    | ---   | ---   | ---   | 0.0   | 0.9   | ---   |
| 68 | Իրեր քարից,<br>գիպսից, ցեմեն-<br>տից և նմանա-<br>տիա հրերից   | ---  | ---    | 26.2  | 2.8   | ---   | 1.3   | ---   | 0.5   |
| 69 | Կերամիկական<br>հրեր   | ---  | 14.0   | 10.1  | 10.1  | ---   | 0.8   | 6.4   | 33.9  |
| 70 | Ապակի և<br>ապակե հրեր   | ---  | 1448.0 | 657.5 | 567.0 | ---   | 98.7  | 43.6  | 35.8  |
| 71 | Բնական և ար-<br>հեստական<br>մարզարիտ,<br>քանկարծ. և կի-<br>սաթամկ. քա-<br>րեր, քանկարծ.<br>մետաղներ | ---  | 1.8    | ---   | 21.3  | ---   | ---   | ---   | 0.3   |
| 72 | Սև մետաղներ   | ---  | ---    | 11.6  | 9.1   | ---   | 228.7 | 482.0 | 750.0 |
| 73 | Իրեր սև<br>մետաղից  | ---  | 4.5    | 30.2  | 37.4  | ---   | 34.9  | 11.9  | 3.0   |
| 74 | Պղինձ և իրեր<br>դրամից  | ---  | ---    | ---   | ---   | ---   | 7.4   | ---   | 30.5  |
| 75 | Նիկել և դրամից<br>իրեր  | ---  | ---    | ---   | ---   | ---   | 0.2   | ---   |       |
| 76 | Այսումին և իրեր<br>դրամից   | ---  | 3.7    | 47.4  | 6.9   | ---   | 5.6   | 49.9  | 1.3   |
| 82 | Գործիքներ, դա-<br>ճամաներ, գրալ-<br>ներ, պատրա-<br>քաղաքներ ոչ թան-<br>կարժեք մետա-<br>ղից          | ---  | 0.3    | ---   | ---   | ---   | 0.1   | 0.0   | 5.0   |
| 83 | Այլ իրեր ոչ թան-<br>կարժեք մետա-<br>ղից   | ---  | ---    | ---   | ---   | ---   | 6.3   | 54.0  | 80.8  |
| 84 | Միջուկային<br>ռեակտորներ,<br>կարսաներ,<br>սարքավ. և մեխ.<br>մասեր                                   | 43.6 | 50.3   | 196.7 | 186.3 | 107.9 | 136.0 | 102.5 | 114.0 |

|    |  |        |       |       |        |       |       |        |        |
|----|--|--------|-------|-------|--------|-------|-------|--------|--------|
| 85 | Եթեկոր. մեքենաներ և սարքավորումներ, ձայնագորող ապարատներ և դրանց մասեր                             | 1093.9 | 812.2 | 771.0 | 139.6  | 6.6   | 15.2  | 38.5   | 98.5   |
| 86 | Լոկոմոտիվներ, տրամվայներ, դրանց մասեր  | 20.0   | 4.0   | 0.1   | 10.0   | 0.0   | 4.0   | 0.8    | 156.0  |
| 87 | Վերգետնյա տրաստորսի միջոցներ և մասեր   | 59.3   | 37.5  | 41.4  | 7525.2 | 298.7 | 499.5 | 3866.9 | 7008.3 |
| 89 | Նավեր, նավակներ և այլ լուսացող միջոցներ  | ---    | ---   | ---   | ---    | ---   | ---   | ---    | 0.4    |
| 90 | Սարքեր և ապարատներ՝ օպտիկական, լուսանկարչ., չափիչ բժշկական և վիրաբուժական, դրանց մասեր և հարմարներ | 0.0    | 13.0  | 40.5  | 45.4   | 46.0  | 24.9  | 48.2   | 90.9   |
| 91 | Ժանացույցներ և դրանց մասեր   | ---    | ---   | ---   | ---    | ---   | 0.0   | ---    | 11.3   |
| 92 | Երաժշտական գործիքներ և դրանց մասեր   | 0.6    | ---   | ---   | ---    | 0.0   | 1.5   | 0.1    | 0.6    |
| 94 | Կահույք, անկողնային պարագաներ և դրանց հարակից մասեր  | 9.4    | 0.6   | 3.7   | 25.3   | 14.4  | 9.7   | 1.8    | 63.3   |
| 95 | Խաղալիքներ, խաղեր և սպորտային գույք, դրանց մասեր և հարմարներ                                       | 6.5    | 97.6  | 8.0   | ---    | 0.0   | 0.0   | 0.3    | 0.9    |
| 96 | Ուրիշ խճբերի մեջ չմտած ապրանքներ   | 0.0    | ---   | 0.1   | 0.9    | 1.1   | 0.2   | 2.8    | 4.0    |
| 97 | Արվեստի ստեղծագործություններ, հնագույքներ  | ---    | ---   | ---   | 16.9   | ---   | ---   | 2.0    | ---    |

Ուշագրավ է այն, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում ՀՀ արտահանման և ներմուծման ծավալներում մեծ տեղ են զբաղեցնում վառելանյութերը, նավթը և նավթանթերքը, բիոտունային միջոցները, մոմանյութերը: Սա կարելի է բացատրել միայն նրանով, որ երկու երկրների միջև առևտուրն ունի անկազմակերպ բնույթ, իենքում է այս կամ այն շուկայի կոնյունկտուրայի փոփոխությունների վրա: Քիմիական արդյունաբերության ապրանքների փոխադարձ առևտուրում 2002թ. ՀՀ արտահանման մեջ որոշ չափով բարձր է դեղագործական մթերքների ծավալը, սակայն, նախորդ տարիների ամենաբարձր մակարդակի՝ 2000թ. համեմատությամբ, դա նվազել է 63.3%-ով, այն դեպքում, եթե ներմուծումը, նույն թվականի համեմատությամբ, աճել է 170.5%-ով: Դայաստանը Վրաստանից ներկրում է պարարտանյութեր (1694.1 հզր դոլար), եթերային յուղեր, հարդարանքի և լոգարանային միջոցներ (179.7 հզր դոլար): Քիմիական արդյունաբերության արտադրանքի արտահանման ընդհանուր ծավալը կազմում է 538.2 հզր դոլար, իսկ ներմուծումը՝ 3850.3 հզր դոլար: ՀՀ ներմուծման մեջ բարձր է պլաստզանգվածի և դրանցից իրերի, փայտի և փայտից իրերի, փայտածուխի, սև մետաղների տեսակարար կշիռը: Արտահանման կառուցվածքում համեմատաբար մեծ է այլ պատրաստի տեքստիլ իրերի, օգտագործված հագուստի և տեքստիլ իրերի, ապակու և ապակե իրերի տեսակարար կշիռը: Ինչ վերաբերում է մեքենաշինության ճյուղերի արտադրանքին, ապա ՀՀ արտահանման մեջ դրանց բաժինը հասնում է 7570.6, իսկ ներմուծումը՝ 7468.1 հզր դոլարի (այսուսակի 84-90 ապրանքային խմբերը): Թեև մեքենաշինության ճյուղերի արտահանման մեջ տեխնոլոգիատար ապրանքների բաժինը փոքր է, այնուամենայնիվ, դրանց և դեղագործական նյութերի արտահանման ծավալների հիման վրա կարելի է հաշվարկել նաև Վրաստանի հետ Դայաստանի արտահանման տեխնոլոգիատարության ցուցանիշը<sup>88</sup>: Այսպես, եթե 1999թ-ին դա կազմել է 12.0, 2000թ-ին՝ 10.3, 2001թ-ին՝ 11.6%, ապա 2002թ. նվազելով, հասել է 2.9%-ի: Ակնհայտ է, որ ՀՀ տնտեսական զարգացման տեխնոլոգիական ներուժը ունի անկանոն միտում: Այսինքն՝ ստեղծվել է մի իրավիճակ, որն ահազանգ կարելի է համարել ոչ միայն տարածաշրջանի

<sup>88</sup>Տեխնոլոգիատար ճյուղեր են աղյուսակ 11-ի 30, 85 և 90 ապրանքախմբերը:

Երկրների հետ մեր հանրապետության արդյունավետ համագործակցության, այլև ազգային անվտանգության տեսանկյունից:

Արտահանման տեխնոլոգիատարության նման անբավարար մակարդակը թուլացնում է երկու երկրների տնտեսական ինտեգրման հնարավորությունները: Վրաստանի հետ ՀՀ արտաքին առևտրային կապերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ

1. Երկու երկրների միջև առևտրային կապերը կրում են անկազմակերպ, իրավիճակային բնույթ, չեն նպաստում, համեմատական առավելությունների սկզբունքին համապատասխան, փոխշահավետ, կայուն և երկարաժամկետ փոխհարաբերությունների ձևավորմանը,
2. Երկու երկրներում էլ վերամշակող արդյունաբերությունը, հատկապես դրա տեխնոլոգիատար ճյուղերը՝ քիմիական արդյունաբերությունն ու մեքենաշինությունը, գտնվում են զարգացման ցածր մակարդակի վրա,
3. Դրանց փոխադարձ ապրանքաշրջանառությունն ունի զարգացող երկրներին բնորոշ հումքային ուղղվածություն,
4. արտաքին առևտրային շրջանառությունը հաճախ ներառում է նույնատիպ ապրանքների հակադիր հոսքեր:

Նկատի ունենալով այն, որ տարածաշրջանային տնտեսական ինտեգրման վերոհիշյալ նախադրյալներին զուգահեռ, Վրաստանի հետ այսօր ՀՀ-ն ունի մի շարք այլ, ոչ տնտեսական չափանիշների ընդհանրություն, որոնց թվում հատկապես կարևորվում է ավանդույթների, ՎՀ-ում հայկական հզոր համայնքի առկայությունը, ինտեգրման այլ նախադրյալները կարելի է ձևավորել «Ինտեգրման միջկառավարական ժամանակավոր խորհրդի» միջոցով: Որքան ավելի շուտ երկու երկրների միջև ձևավորվի տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացները համակարգող մարմին, որն իրավասու կինի արտաքին առևտրային հարաբերությունները կառուցել փոխլրացման, մասնագիտացման խորացման հիմքի վրա, այնքան ավելի կրծատվի կայուն զարգացման ուղի թևակոխելու, տարածաշրջանի երկրների հետ հավասար գործընկերոջ կարգավիճակը համագործակցելու ժամկետը: «Ինտեգրման միջկառավարական ժամանակավոր խորհրդի» կազմում կը նոր կը եմ ոչ միայն պետական ծառայողները, այլև գործարար մարդիկ, առևտրա-արդյունաբերական պալատների, ձեռնարկատերերի

միության ներկայացուցիչներ, գիտնական-տնտեսագետներ, որոնք կարող են իրենց գործնական մասնակցությունը բերել ոչ միայն Վրաստանի հետ ինտեգրման կառավարմանը, այլ նաև հարևան մյուս երկրների՝ Իրանի, Թուրքիայի և Ադրբեյջանի հետ համագործակցության կարգավորմանը:

Տարածաշրջանային տնտեսական ինտեգրումը երկու երկրների համար էլ անհրաժեշտություն է: Ինտեգրման ելակետային փուլ՝ արտոնյալ առևտրային համաձայնագրերի կամ ազատ առևտրային գոտու տրամաբանությանը համապատասխան, համագործակցությունը թույլ կտա հասնել նույնատիպ ապրանքների գների աստիճանական հավասարեցման, որոշ չափով կնվազեն արտահանման-ներմուծման կրկնությունները, որ էլ, իր հերթին, ինվեստորներին կմղի ներդրումներ կատարելու տնտեսության այն ճյուղերում, որոնք համարվում են ժամանակակից գիտատեխնիկական առաջինության կրողներ և որոշում են յուրաքանչյուր երկոր տեղը համաշխարհային տնտեսության և միջազգային մրցակցության մեջ:

ՀՀ և ՎՀ արտաքին առևտրային կապերի վերլուծությունը թույլ է տալիս միանշանակորեն պնդել, որ այդ երկրները հեռու են նույնիսկ ազգային անվտանգության պաշտպանության խնդրի լուծումից, որը ենթադրում է գյուղատնտեսության, արդյունահանող արդյունաբերության, ինչպես նաև վերամշակող արդյունաբերության որոշ ճյուղերի զարգացում: Պաշտոնական վիճակագրության աղբյուրները վկայում են, որ 2001թ. ՀՀ-ում գյուղատնտեսության հիմնական կապիտալի նորացման համար կատարվող կապիտալ ներդրումները կազմել են 13.1 մլն դրամ, իսկ Վրաստանում դրանք եղել են աննշան՝ 0.3 մլն դրամ, լեռնահանքային արդյունաբերության մեջ համապատասխան ցուցանիշները կազմել են 1.2 և 16.4 մլն դրամ, այն դեպքում, երբ 2001թ. ՀՀ-ում գրանցվել են 53, իսկ Վրաստանում 84 լեռնահանքային արդյունաբերության ձեռնարկություններ: Այս պարզ օրինակով ակնհայտ են դաշնում ներկա փուլում երկու երկրների համեմատական առավելությունները: ՀՀ-ի համար այսօր նպաստավոր է գյուղատնտեսության զարգացումը, իսկ ՎՀ-ում ունի արդյունահանող արդյունաբերության զարգացման ներուժ: Սրանից հետևում է, որ ազատ առևտրային գոտու շրջանակներում համագործակցությունը կարող է ընթանալ միջնադարի մասնագիտացման խորացման ճանապարհով: Հայաստանում գյուղատնտեսական ապրանքների արտադրության մասնագիտացման ճանա-

պարհով կարելի է զարգացնել նաև գյուղատնտեսական հումքի վերամշակման արտադրությունները՝ ձևավորելով սննդի զարգացած արդյունաբերություն: Գյուղատնտեսության զարգացումը մեր երկրի տնտեսական զարգացման ամենակարևոր ոլորտն է, որը պետք է գտնվի պետական հովանավորության ներքո: ճիշտ է, ԱՐԿ անդամակցությունն արգելում է սուբսիդիաների՝ որպես խթանան գործիքի օգտագործումը, այնուամենայնիվ, յուրաքանչյուր պետություն տնօրինում է բավարար լծակների՝ գյուղացիական տնտեսություններին անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու համար: Այդ լծակները ներառում են՝ արտոնյալ բանկային վարկերը, հարկային արտոնությունները, պետության ուղղորդված քաղաքականությունը՝ խրախուսելու և աջակցելու ազգային արտադրուներին՝ արդյունաբերական վերամշակման նապատակով օգտագործվող գյուղատնտեսական հումքը գնելու ներքին շուկայում, գյուղատնտեսական ծեռնարկություններին՝ պետական գնումների շրջանակներում (բանակի պահանջնունքների բավարարում, սոցիալական տարբեր ծրագրերի կենսագործում) պատվերների հրականացումը և այլն:

Արտաքին առևտրային շրջանառության ակտիվացման, երկու երկրների փոխադարձ առևտրում կրկնությունների բացառնանկամ գոնե դրանց նվազման տեսանկյունից չափազանց կարևոր դեր կարող է խաղալ ներծյուղային մասնագիտացման խորացումը՝ հատկապես գիտատեխնիկական առաջընթացը խթանող ճյուղերում: Ինչպես Հայաստանը, այնպես էլ Վրաստանը խորհրդային ժամանակաշրջանում ունեին զարգացած քիմիական և մեքենաշինական արդյունաբերություն: Շուկայական հիմքի վրա տնտեսական բարեփոխումների արդյունքում նախկին կոռպերացված տնտեսական կապերի քայլայումն ու դրան հաջորդող մասնավորեցումը հատկապես հարվածեցին հենց այս ճյուղերին: Այսպես, 2001թ-ին ՀՀ-ուն մեքենաշինության ծեռնարկությունների թիվը կազմում էր 191, իսկ քիմիական արդյունաբերության ծեռնարկություններինը՝ 50, Վրաստանում՝ համապատասխանաբար՝ 89 և 65: Այդ ծեռնարկությունները, բարձր կապիտալատարության պատճառով, ոչ միայն չեն աշխատում լրիվ հզորություններով, այլև, գիտատեխնիկական մաշվածությունից, ենթարկվում են ավելի մեծ բարոյական մաշվածից: Եթե ՀՀ-ն նպատակ ունի վերանայելու իր դիրքերը

համաշխարհային տնտեսության մեջ՝ հումքային կցորդից վերածվելով զարգացած արդյունաբերական երկրի, ապա հնարավորինս արագ պետք է վերանայի ներքին քաղաքականությունը՝ նշված տեխնոլոգիատար ճյուղերի զարգացումը խթանելու ուղղությամբ: Դա ներկա համընդգրկուն զարգացումների հրամայականն է: Այդ ճյուղերի զարգացման համար ևս գյուղուն ունեն բազմաթիվ փորձված ճանապարհներ, որոնք վաղուց ի վեր օգտագործել են ներկայիս զարգացած երկրները, որանք շարունակում են օգտագործել նոր ինդուստրիալ և մի շարք զարգացող երկրների կողմից:

Արտադրության տեխնիկատնտեսական մակարդակի բարձրացման բավականին իրական և արդյունավետ ճանապարհ է միջազգային լիգինգային ընկերություններից վարձակալական հիմունքներով առավել արդիական մեքենասարքավորումների ձեռք բերումը: Ընդ որում, լիգինգի համաշխարհային շուկայում հնարավոր է ձեռք բերել առավել բարենպաստ պայմաններով վարձակալայության պայմանագրեր, որոնք ապահովագրական ծառայությունների, հումքի և նյութերի մատակարարմանը գուգահեռ իրականացնում են նաև մասնագետների պատրաստում և վերարակավորում<sup>89</sup>:

Անեն դեպքում, տեխնիկական առաջընթացի հիմքի վրա տնտեսության վերակառուցումը պետք է դրվի պետության տնտեսական քաղաքականության ծրագրային գործողությունների հիմքում: Պետությունը տնօրինում է բազմաթիվ մեխանիզմների, որոնց միջոցով կարող է խթանել լիգինգային ընկերությունների ձևավորումը հանրապետության ներսում: Այսպես, ֆինանսապես հզոր ազգային ընկերությունները կարող են ստեղծել լիգինգային հիմնադրամ, որի միջոցով կծևավորվի արդիականացված մեքենասարքավորումների պարկ՝ այն ծեռնարկությունները վերագործարկելու նպատակով, որոնց զարգացումը տվյալ ժամանակահատվածում առաջնային է: «Լիգինգային հիմնադրամը» կարող է մի քանի տարի ազատվել շահութահարկից, կամ, արտադրության և արտահանման խթաննան նկատառումներով, արտադրական հզորությունների առավել արդյունավետ օգտագործմանը, կրօնատվեն անորտիզացիոն ժամկետները: Ապրանքների արտադրության ծավալների աճի դեպքում ոչ միայն փոքր կլինեն միավոր արտադրանքին բաժին

<sup>89</sup> Красавина Л. Н., Международные валютно-кредитные и финансовые отношения”, Москва, «Финансы и статистика», 1994, стр. 270-280.

ընկնող ամորտիզացիոն հատկացումներն, այլև կվրճատվեն մեքենասարքավորումների վարձակալության ժամկետները, վարձակալ ձեռնարկություններն այնուհետև կարողանան ավելի կարծ ժամկետներում, մնացորդային արժեքով դրանք գնել լիզինգային հիմնադրամից:

Այսպիսով, տարածաշրջանային տնտեսական ինտեգրումը միանգամից, ամենագրագետ և մանրակրկիտ մշակված համաձայնագրերով չի հրականացվում: Դա կառուցվում է արդեն ձևավորված և խորացված տնտեսական կապերի հիմքի վրա: Սակայն ՀՀ տնտեսական զարգացման համար, սուր արտադրական ռեսուրսների պայմաններում, տնտեսական ինտեգրումը հարևան երկրների հետ առաջնահերթ խնդիր է, որը պետք է գտնվի պետության և կառավարության կարևորագույն նշանակության հարցերի շարքում: Երկու երկրներն էլ պարտադրված են ընդունելու հարցի կարևորությունը, փոխհամաձայնեցված տնտեսական քաղաքականության շնորհիվ հասնելու զարգացման այնպիսի մակարդակի, որից հետո իրավունք կունենան հայտ ներկայացնելու՝ եվրոպական ընտանիքին անդամագրվելու համար:

## 4.2. ՀՀ տնտեսական համագործակցությունը Իրանի հետ

Իրանի՝ որպես ՀՀ ռազմավարական գործընկերոջ դերը տարածաշրջանային տնտեսական համագործակցության զարգացման գործընթացներում չի կարելի բերագնահատել: Հարևան երկրների հետ տնտեսական համագործակցությունն անխուսափելի է, առավել ևս այնպիսի հարևանի, որի հետ առկա են բարիդրացիական հարաբերություններ: Ավելին, Վրաստանից հետո, Իրանը համարվում է աշխարհի հետ մեզ կապող երկրորդ ցամաքային ճանապարհը:

Թեև հազարամյակներ շարունակ հայ և պարսիկ ժողովուրդներն ապրել են կողք կողքի, նրանց միջև սերտ քաղաքական, տնտեսական, գիտամշակութային հարաբերություններ հաստատվել են միայն վերջին 10-15 տարիների ընթացքում: Եթե գիտամշակութային հարաբերությունների էլ ավելի խորացման համար խո-

չընդուներ չկան, ապա քաղաքական և տնտեսական կապերի ընդլայնմանը խանգարում են հետևյալ հանգամանքները.

1. արևմուտքի երկրների կողմից Իրանի նկատմամբ լարված քաղաքական հարաբերությունները,
2. իրանական արտադրության ապրանքների անորակությունը:

Այս, որ Իրանից արտահանվող ապրանքները մրցակցային առավելություններ ունեն միայն ցածր ինքնարժեքի առումով, ակնհայտ երևաց հայ-իրանական արտաքին առևտորային կապերում: ՀՀ անկախության հօչակմանը հաջորդող մի քանի տարիների ընթացքում Իրանը դարձավ մեր երկրի արտաքին առևտորային գլխավոր գործընկերներից մեկը: Մեր ներքին շուկան միանգամից ողողվեց իրանական ծագման սննդամբերքով, հատկապես գյուղատնտեսական ապրանքներով: Սակայն տնտեսական անկման տարիներին սննդամբերքի ներքին պահանջմունքների բավարարման տեսանկյունից դրական այդ երևույթը շատ կարծ ժամանակամիջոցում դրսևորեց նաև բացասական հետևանքներ: Էժան սննդամբերքի ներմուծումը ոչ միայն վնաս պատճառեց համանման ապրանքների ներքին արտադրության զարգացմանը, այլև իրանցիների կողմից առևտորային կետերի, խանութների, պահեստների ձեռք բերման ճանապարհով խթանվեց Իրանից աշխատուժի ներհոսքը, այն դեպքում, եթե աշխատատեղեր չլինելու պատճառով մեծարիվ հայեր աշխատանք էին փնտրում այլ երկրներում: Աշխատուժի ներհոսքի գործընթացներն այսօր էլ բավականաչափ ակտիվ են, թեև, սկսած 1996թ-ից, Իրանի հետ ՀՀ արտաքին առևտորային շրջանառությունը նվազման միտում ունի: Այսպես, եթե 1996թ-ին ՀՀ համախառն արտահանման մեջ Իրանի բաժինը կազմում էր 15.1%, ապա 2002թ. կազմեց 6.2%: Իրանից ներմուծվող ապրանքների բաժինը, ՀՀ համախառն ներմուծման մեջ, նշված տարիներին կազմել է 17.5 և 9.7%: Փաստորեն, ուսումնասիրվող ժամանակահատվածում Իրանի հետ ՀՀ արտահանումը կրճատվել է 28.0, իսկ ներմուծումը՝ 58.2%-ով: 1999թ. արտահանումը և ներմուծումը, նախորդ տարվա համեմատությամբ, որոշակի աճ են դրսևորել, սակայն հաջորդ երեք տարիների ընթացքում նվազման միտումը պահպանվել է: 2003թ-ին Իրանի հետ ՀՀ արտահանումը կրճատվել է 28.5%-ով, սակայն ներմուծումը, նախորդ տարվա համեմատությամբ, աճել է 6.7%-ով, իսկ 2004թ., 2003թ-ի համեմատությամբ, աճել են և արտահանման, և ներմուծման ծավալները,

համապատասխանաբար՝ 35.9 և 8.6%-ով: 2002թ., 1999թ. համեմատությամբ, հարևան պետության հետ էական տեղաշարժեր են արձանագրվել նաև արտաքին առևտորային շրջանառության կառուցվածքում: Եթե Իրանից ներմուծումը ներառում է 76 ապրանքախմբեր, ապա արտահանվող ապրանքների տեսականին սահմանափակվում է 20-21 ապրանքախմբերի շրջանակներում: Իրանից ներմուծվող ապրանքների գերակշռող մասը սննդամբերը է, որը 1999թ. կազմում էր ներմուծման 42.2%-ը, իսկ 2002թ.՝ 38.6%-ը: Նույն թվականի համեմատությամբ, վառելանյութերի, նավթի և նավթանբերքի, բիոտումային միջոցների, մոմանյութերի ներմուծումը կրճատվել է 42%-ով: Դեռաքրքիր է, որ Իրանի հետ արտաքին առևտում, Վրաստանին համանման, Հայաստանը դարձյալ վերոհիշյալ ապրանքախմբի արտահանողն է: Թեև 2002թ.-ին դրանց արտահանումը, 1999թ. համեմատությամբ, կրճատվել է, այնուամենայնիվ, Իրանի հետ մեր երկիր համախառն արտահանման 23%-ը բաժին է ընկնում այդ ապրանքախմբին:

Իրանից ներմուծվող ապրանքների կառուցվածքում բավականին բարձր է օճառի, մաքրող միջոցների, քսուքների, հարդարանքի միջոցների, պլաստնասայի և դրանից պատրաստված իրերի տեսակարար կշիռը (13%): Հայաստանից արտահանվող ապրանքների կառուցվածքում նշանակալից տեղ են զբաղեցնում հանքահոլմքային ապրանքները, որոնց ծավալը 2002թ. կազմել է 12.2 մլն դոլար, այդ նույն ապրանքների ներմուծման ծավալը հասնում է 2.4 մլն դոլարի: Որոշ չափով բարձր է նաև հանքաքարի, խարամի և մոխրի, տեքստիլ հագուստի ու հարակից իրերի, ինչպես նաև մեթենաշինության ճյուղերի արտադրանքի և վերգետնյա տրանսպորտի միջոցների ու մասերի արտահանման բաժինը: Այնուամենայնիվ, եթե 1999թ. ՀՀ արտահանումը կազմում էր ներմուծման 43.5%-ը, ապա 2002թ.-ին այդ ցուցանիշը հասավ 50.2%-ի:

Հայ-Իրանական առևտորային կապերի թուլացումը պայմանավորված է որոշակի օբյեկտիվ պատճառներով: Նախ, 90-ական թթ. սկզբին, շրջափակման հետևանքով, Իրանը Հայաստանի միակ առևտորային գործընկերն էր: Դրանից հետո հայկական շուկա մուտք գործեցին ոռւսական ապրանքներ, որոնք ավելի որակյալ և «հարազատ» էին Հայաստանի համար: Դետագայում Հայաստանի

շուկա ներկրվեցին եվրոպական ապրանքներ, որոնք ինչ-որ առումով դուրս մղեցին թե՛ պարսկական և թե՛ ռուսական ապրանքները<sup>90</sup>:

Իրան-Հայաստան արտաքին առևտորային կապերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ:

1. Հարևան պետության հետ առևտորային կապերը բավականաչափ ակտիվ չեն և չեն կարող բարենպաստ դեր խաղալ ՀՀ տնտեսության զարգացման համար, քանի որ ցածր ինքնարժեք ունեցող իրանական ապրանքները նվազեցնում են նույնանուն ապրանքների (հատկապես սննդամբերքի) մրցունակությունը ներքին շուկայում:
2. Արտաքին առևտորի հիմքում ընկած է ոչ թե երկրների՝ համեմատական առավելություններով պայմանավորված փոխահավետ համագործակցությունը, այլ թույլ զարգացած ներքին շուկայի չարդարացված բացությունը, որը և անհասկանալի ապրանքային հոսքերի պատճառ է դառնում:
3. Իրանից ներկրվող ապրանքները ցածրորակ են և չեն ձևավորում բավարար սպառողական շուկա, մյուս կողմից էլ ՀՀ տնտեսական հետամնացությունը թույլ չի տալիս արտահանել տեխնիկահագեցված ապրանքներ, որի արդյունքում հարևան երկրի տարրողունակ շուկան շարունակում է մնալ հայկական ապրանքների համար աննատչելի:

Իրանի հետ ձևավորված արտաքին առևտորային կապերը, հատկապես ներմուծման կառուցվածքի առումով, չեն կարող բավարար լինել SSI գործընթացների ծավալման համար: Ներմուծվող ապրանքների գերակշռող մասի արտադրության կազմակերպման համար մեր երկիրը հնարավորություններ ունի: Բացի դրանից, եթե Վրաստանի և ԱՊՀ երկների հետ ՀՀ արտահանումը բավականաչափ բազմազան էր, ապա նույնը չի կարելի ասել Իրանի հետ առևտորային կապերի մասին: Արտահանման տեսականու սահմանափակությունը, սննդամբերքի և կենցաղային ապրանքների մեջածավալ ներմուծումը ոչ միայն տանում է Իրանի հետ արտաքին առևտորային հաշվեկշռի սալդոյի՝ ոչնչով չարդարացված ավելացմանը, այլև ռազմավարական կարևոր ճյուղերի զարգացումը մղվում է հետին պլան: Ուստի Իրանի հետ համագործակցությունը անհրաժեշտ է զարգացնել այնպիսի ուղիով, որպեսզի պահպանվեն

<sup>90</sup> Թորոսյան Թ., Միջազգային տնտեսագիտություն, Երևան, ԱՊՏ, 2003, էջ 232:

դժվարությամբ ձեռք բերված և մեզ համար չափազանց կարևոր երեք արժեքներ՝ տնտեսական անկախությունը, ժողովրդագրական միատարրությունը և ազգային անվտանգությունը: Յանաշխարհային փորձը վկայում է, որ SSI գործընթացներում հակվածությունը կրոնական ընդհանրությունների հիմքի վրա զարգացող փոխարարերությունների կողմն է: Այսպես, տարածաշրջանային տնտեսական ինտեգրման երրորդ՝ ընդհանուր շուկայի ձևավորման փուլում ապրանքների և կապիտալի ազատ տեղաշարժն ուղեկցվում է նաև աշխատուժի ազատ տեղաշարժով, որը նպաստում է համագործակցության անդամ երկրների աշխատավորների աշխատանքային հավասար իրավունքի ձևավորմանը: Օրինակ՝ Եվրոպի տեղաշարժան սահմաններում աշխատուժի տեղաշարժը պաշտպանված է համապատասխան խարտիայով, որի շրջանակներում ամրագրված է անդամ երկրների աշխատուժի իրավահավասարությունն՝ անկախքաղաքացիությունից: Այդ իմաստով, ընդհանուր շուկայի ձևավորումը մահմեղական պետությունների հետ, պարունակում է ազգային անվտանգությունը կորցնելու սպառնալիք: Պատահական չեն, որ Եվրոպի տեղաշարժանը թուրքիայի հետ 1995թ. կնքելով մաքսային միության պայմանագիր, այնուհետև գտնում է փաստարկներ՝ մերժելու վերջինիս անդամակցությունն այդ ազդեցիկ կառույցին: Ֆրանսիայի հանրային կարծիքի հետազոտման վերջին տվյալները վկայում են, որ ֆրանսիացինների 56%-ը դեմ է Թուրքիայի անդամակցությանը: «Ֆիգարո» թերթում հրապարակված արդյունքները ցույց են տալիս, որ ֆրանսիացինները չեն ուզում Եվրոպայում տեսմել 65 մլն բուրքեր, որոնց թիվը 20 տարի հետո կհասնի 100 մլն-ի<sup>91</sup>: Ըստ «Ֆիգարոյի», Թուրքիայի անդամակցության հարցում քրիստոնեության ինքնության պաշտպանության փաստարկը դրվում է միայն երրորդ տեղում, իրական վտանգը ներգաղթողների զանգվածային ներհոսքի հեռանկարն է: Այնուամենայնիվ, փաստն այն է, որ աշխարհի տարբեր տարածաշրջաններում ձևավորված բազմաթիվ ինտեգրման խճառավորումներից և ոչ մեկը կրոնական «խռովություն» չի պարունակում, ընդհակառակը՝ մուսուլմանական աշխարհն այսօր հակված է հենց կրոնական հիմքի վրա միավորվելու կողմը (օրինակ՝ Իսլամական պետությունների միությունը):

<sup>91</sup> “Figaro” journal, 10.12.2003.

Իրանի հետ առևտրային կապերի կարգավորման համար անհրաժեշտ է ստեղծել պետական կառույց, որը կգրադարձի Իրանից ոչ միայն մասնավոր, այլև պետական ներդրումների խրախուսման և պաշտպանության հարցերով<sup>92</sup>: Այդպիսի կառույց կարող է դառնալ վերը նշված «Ինտեգրման միջկառավարական ժամանակավոր խորհրդություն», որը նաև արտաքին առևտրային կապերի զարգացումը կտանի առավել փոխշահավետ համագործակցության ուղղով: Իրանի և Յայաստանի միջև արտոնյալ կամ ազատ առևտրային գոտու ձևավորման մասին խոսելը դեռևս վաղ է: ճիշտ կլինի ավելի ուժեղացնել գյուղատնտեսության, թերև և սննդի արդյունաբերության որոշ ճյուղերի հովանավորչությունը, որա փոխարեն խթանել ներդրումների ներհոսքը՝ փոքր ու միջին ձեռնարկությունների գործունեության աշխուժացման նպատակով: Միանգանայն ընդունելի է, որ «Յայաստանում մասնավոր ձեռներեցության խողովակով արտահանության համար համապատասխան օրենսդրական դաշտ ապահովելու, որա նկատմամբ պետական հովանավորչություն իրականացնելու հետ մեկտեղ, անհրաժեշտ է ընդլայնել երկկողմանի պետական համաձայնագրերի մակարդակով առևտրական շրջանառության ծավալները, որոնք իրական պայմաններ կստեղծեն երկու երկրների տնտեսության առանձին ճյուղերի փոխարժեության համար»<sup>93</sup>:

Ներկայումս հարավային հարևանի հետ տնտեսական հարաբերությունները ավելի շատ կողմնորոշված են դեպի էներգետիկայի ոլորտում դրանք խորացնելը: 2003թ. վերջին Յայաստանի կառավարության վերին օլյակներում նորից վերսկսվեցին խոսակցությունները գազամուղի շինարարության մասին<sup>94</sup>: Սուտ տասը տարի ձգձգվող բանակցությունները Իրան-Յայաստան գազամուղի շինարարության շուրջ կասեցվում էին երկու պատճառով. նախ համապատասխան ֆինանսավորման բացակայության և երկրորդ՝ Իրանի էներգետիկ համակարգում ցանկացած ներդրում, որը գերազանցում է տարեկան 20 մլն դրամ սահմանագիծը, չի կարող իրականացվել առանց Վաշինգտոնի թույլտվության: Սակայն Ուսւա-

<sup>92</sup> Թորոսյան Թ., Միջազգային տնտեսափառություն, Երևան, ԱՊՏ, 2003, էջ 235:

<sup>93</sup> Խոջաբեկյան Վ., Զբաղվածության հիմնախնդիրները Հայաստանում անցման շրջանում, էջ 217:

<sup>94</sup> «Հայկական ժամանակ» օրաթերթ, 40(1062), 06.03.2004, էջ 1:

տանը վերջին ժամանակներս հետաքրքրություն է ցուցաբերում զազամուլի շինարարությունը մասնակի ֆինանսավորելու առումով: Մոտ 70-90 մլն դոլար գնահատվող այդ շինարարության համաֆինանսավորումը Հայաստանի, Իրանի և Ռուսաստանի կողմից, թերևս չի արժանանա ԱՄՆ-ի կշտամբանքին:

Իրան-Հայաստան զազամուլի շինարարությունը Հայաստանի համար ունի ռազմավարական նշանակություն, քանի որ մեր Երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը ներկայումս, կարելի է ասել, կախված է մեկ զազամուլից, որն անցնում է Վրաստանի տարածքով: Նոր զազամուլը կդառնա Հայաստանի էներգետիկ անվտանգության գործոնը:

Ծատ ավելի խոշոր նախագիծ ներկայում գտնվում է մշակման փուլում: Սահմանային Արաքս գետի վրա Հայաստանը և Իրանը նախատեսում են կառուցել հիդրոէլեկտրակայան, որը գնահատվում է 155-160 մլն դոլար: Արդեն սկսվել են տեղանքի ուսումնասիրության և այլ նախնական աշխատանքներ: Այս նախագիծի իրականացմանը ևս Ուսուսատանը դրսնորել է իր հետաքրքրությունը: Նախագիծի իրականացումը չափազանց կարևոր դեր կարող է խաղալ Երկրի հարավային շրջանները էներգետիկ հզորություններով ապահովելու առումով: Դա թույլ կտա նաև կարգավորել այլումնին և պղնձի հանքանյութի վերամշակման լրիվ պարբերաշրջանը, տարածքում կճնավորվեն տնտեսական զարգացման անհրաժեշտ նախադրյալներ:

Փոխշահավետ համագործակցությունը Երկու Երկրների միջև կարող է ձևավորվել տրամադրութային համագործակցության ուղիների զարգացման և կատարելագործման միջոցով: Քաջարանի լեռնացքով նոր ճանապարհի շինարարությունը լայն հնարավորություններ է բացում Իրանի աշխատավոր Հայաստանով մուտք գործելու Վրաստանի, ԱՊՀ և արևմուտքի մի շարք Երկրների շուկաներ:

Այսպիսով, Իրանի հետ տարածաշրջանային տնտեսական ինտեգրման որոշակի քայլերի ձեռնարկումն այսօր հեռանկարային չէ: Ավելի նախընտրելի է Իրանի հետ տնտեսական լայնածավալ համագործակցության զարգացումը:

#### 4.3. ՀՀ տնտեսական համագործակցության ուղիները Աղրբեջանի և Թուրքիայի հետ

Տարածաշրջանի մյուս հարևան Երկրների՝ Թուրքիայի և Աղրբեջանի հետ ՀՀ տնտեսական ինտեգրումը ևս բախվում է բազմաթիվ հիմնախնդիրների: Դրան ամենից առաջ խոչընդոտում են ոչ թե տնտեսական կամ կրոնական գործոնները, այլ ձևավորված բարդ ու առայժմ անլուծելի քաղաքական իրավիճակը: Սակայն, որքան էլ քաղաքական հարաբերություններն այս Երկրների հետ լարված լինեն, վաղ թե ուշ դրանք պետք է մղվեն հետին պլան տնտեսական հարաբերությունների զարգացման ճանապարհով, քանի որ Թուրքիան և Աղրբեջանը Հայաստանի աշխարհագրական հարևաններն են: Եթե Թուրքիայի հետ Երկխոսություններում նախկինում էլ Հայաստանը բախվել է խոչընդոտների, ապա յոթ տասնամյակ հայադրեցանական հարաբերությունները հասարակական կյանքի բոլոր բնագավառներում եղել են սերտաճած: Խորհրդային իշխանության տարիներին, Հայաստանի արտաքին առևտուրային կապերում, Ուսուսատանից և Ուկրաինայից հետո կարևոր տեղը պատկանում էր Աղրբեջանին: ՀՀ ներմուծման արտադրանքի ընդհանուր ծավալի շուրջ 15%-ը, իսկ նավթամբերքի 80%-ը բաժին էին ընկնում այս Երկրին: Հայաստանի վառելիքաներգետիկ տնտեսության համար անհրաժեշտ բնական գազը ևս ներմուծվում էր Աղրբեջանից: Ներմուծվող ապրանքների մեջ, իրենց ծավալներով, նշանակալից էր թերևն և սանոնի արդյունաբերության ապրանքների բաժինը, ինչպես նաև ՀՀ տնտեսության համար կարևոր նշանակություն ուներ պղղատայա խողովակների և թերթավոր պղղատի ներմուծումը:

Հայաստանը հարևան Երկիր էր արտահանում շուրջ 150 տեսակ արդյունաբերական ապրանքներ, որոնք մեծ կիրառություն ունեին նավթային և քիմիական արդյունաբերության, մեքենաշինության և գյուղատնտեսության մեջ: ՀՀ արտահանման մոտ 40%-ը բաժին էր ընկնում արդյունաբերական արտադրանքին:

Արտահանվում էին 60-ից ավելի մեքենաշինական և էլեկտրատեխնիկական ապրանքներ, այդ թվում՝ գեներատորներ, էլեկտրաշարժիչներ, ճշգրիտ չափից գործիքներ, հիդրոպոմագեր, ունիվերսալ, բարձր ճշտությամբ ջրահելող և ֆրեզերային հաստոցներ: Այս խմբի ապրանքատնտեսակների արտահանումը կազմում էր համա-

խառն արտահանման ծավալի 30%-ից ավելին<sup>95</sup>: Տնտեսության մնացած ոլորտների մեջ ևս առկա էր նման փոխկապվածություն: Նախկին տնտեսական կապերի խզումը, Աղրբեջանի կողմից տրանսպորտային շրջափակումը ծանր հարված հասցրեցին Երկու երկրների տնտեսություններին: Սակայն նավթային ռեսուրսներով հարուստ Աղրբեջանը օտարերկրյա ներդրումների համար բավականին բարձր գրավչություն ունեցող երկիր է համարվում: Պատահական չէ, որ 2000թ. Աղրբեջանում կատարված ՕՌԽ ծավալը 5.5 անգամ գերազանցում է ՀՀ տնտեսության մեջ կատարված ՕՌԽ-ներին: Դրանց 89.8%-ը բաժին էր ընկնում լեռնահանքային արդյունաբերությանը<sup>96</sup>:

2003թ. լուս տեսած «Կորսված ներուժ Հարավային Կովկասում. միջայտական առևտություն» գրքում, որը հրատարակվել է հարավկովկասյան երեք պետությունների մասնակցությամբ, վերջիններիս արտահանման և ներմուծման ապրանքային կառուցվածքի մանրանասն ուսումնասիրության հիման վրա հեղինակները եկել են այն եզրակացության, որ Աղրբեջանի և Հայաստանի միջև առևտությունը երկու պետություններին էլ խոշոր տնտեսական վճարում: Ասածն ավելի պատկերավոր դարձնելու համար գրքում բերվում են մի քանի օրինակներ, որոնք հիմնավորում են Հայաստանի և Աղրբեջանի միջև փոխադարձ առևտությունը: Այսպես, կաք և կաթնամթերք, քոչնի ձու, բնական մեղր և այլ կենդանական ծագման սննդամթերք ապրանքախմբի արտադրանք թողարկող ոլորտները ՀՀ-ում վերջին տպրիներին արագ զարգանում են: Տվյալ ապրանքախմբի տեղական արտադրանքը գրավել է ոչ միայն հայկական շուկայի գերակշռող մասը, այլ նաև աճում են դրա արտահանման ծավալները: 2001թ. ՀՀ-ն արտահանել է կես միլիոն դոլարից ավելի, իսկ Աղրբեջանը ներմուծել 15 մլն դոլարի նշված ապրանքախմբի արտադրանք: Ասկածից կարելի է եզրակացնել, որ տվյալ ապրանքախմբի փոխադարձ առևտուրը կավելացնի ՀՀ-ից արտահանման ծավալները, որը դրականորեն կանդրադառնա մեր վճարային հաշվեկշռի վրա, ինչպես նաև էապես կրծատի Աղրբեջանի ներմուծ-

ման արժեքը: Նմանատիպ օրինակ կարող է համարվել նաև վառելանյութերի, նավի և նավթամթերքի, բիտումային միջոցների, մոնախութերի ապրանքախումբը, որը առանցքային կարևորություն ունի Աղրբեջանի արդյունաբերության մեջ: Կասպյան վառելիքը ունի ահռելի ներուժ, այդ պատճառով էլ վերջինիս արտահանումը շարունակ աճում է: 2001թ. այս ապրանքախմբի արտահանումը Աղրբեջանից կազմել է ավելի քան 2 միլիարդ դոլար: Մինչեւ Հայաստանը «Վառելիք ներմուծող երկիր» է և կարող է հասանելի շուկա դառնալ աղրբեջանական վառելիքի համար:

Նմանատիպ օրինակների շարքը կարելի է անվերջ շարունակել: Ավելին, ասվածն ավելի հիմնավոր դարձնելու համար, մեծ ապրանքախմբերից բացի, համեմատություններ կարելի է կատարել ավելի մանրանասնեցված ապրանքների միջոցով: Սակայն մի քանի մեծ ապրանքախմբերի ուսումնասիրությունն արդեն ցույց է տալիս, որ այս երկու երկրների միջև փոխադարձ առևտությունը հաճեցնում է տարեկան մոտ 3-4 մլն դոլար «Կորսված ներուժի»:

Ինչ վերաբերում է Վրաստանին, ապա կարելի է մտածել, թե այս անենից նա է շահում: Մինչեւ ակնհայտ է, որ ծավալված իրադրությունը, լայն առումով, ձեռնտու չէ նաև Վրաստանին, քանի որ փոխադարձ շահավետ տնտեսական հարաբերությունների բացակայությունը երկու հարևան երկրների միջև, ամբողջ տարածաշրջանում կդառնա վստահության կորստի պատճառ, որը իր հերթին, կդանդաղեցնի տարածաշրջանի տնտեսական զարգացումը<sup>97</sup>:

Աղրբեջանը արևմուտքի երկրների համար մեծ հետաքրքրություն ներկայացնող երկիր է և որքան ապագայում տնտեսապես հզորանա, այնքան մեզ համար ավելի կբարդանա տնտեսական հարաբերությունների վերահաստումը: Ուստի քաղաքական հակամարտությունները, փոխադարձ մեղադրանքներն ու աօճակատումը ավելի են խորացնում տնտեսական հարաբերությունների խզման մակարդակը: Դա չի բխում տարածաշրջանային տնտեսական զարգացման՝ համաշխարհային տնտեսության մեջ ձևավորված և առկա պահանջներից: Հայ-աղրբեջանական հակամարտությունների հարթեցնան համար բեկումնային դեր կարող է խաղալ

<sup>95</sup>Հայկական սովետական հանրագիտարան, Համագործակցություն, Երևան, 1974, էջ 82-83:

<sup>96</sup>Статистический ежегодник Южно-кавказских стран, 2002, стр. 234.

<sup>97</sup>“Lost potential in the South Caucasus. Aspects of interstate trade” International Center of Human Development, Armenia; “AREAT” Center, Azerbaijan; The Strategic Research Institute, Georgia; Yerevan-Baku-Tbilisi, 2003, p.181-183.

Վրաստանի նորընտիր իշխանությունը: Այդ տեսանկյունից հուսադրող է հատկապես Ադրբեջան և Հայաստան կատարած այցերի ժամանակ Վրաստանի նախագահ Մ. Սահակաշվիլու հետևյալ հայտարարությունը. «Վրաստանն ի զորու է ստեղծել միասնական տնտեսական տարածություն Ադրբեջանի և Հայաստանի հետ միասին: Առանձին, առանց միասնական տնտեսական դաշտի, մեր պետությունները չեն կարող զարգանալ»<sup>98</sup>.

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա նա ոչ միայն տարածաշրջանում, այլև համաշխարհային քաղաքական և տնտեսական արդի զարգացումներում ունի իր կայուն և բավականաչափ ազդեցիկ տեղը: Դա ակնհայտ դրսուրպում է հայկական սփյուռքի ջանքերի ծախողման մեջ, ջանքեր, որոնք երկար տարիներ ուղղված են համաշխարհային հանրության, աշխարհի հղոր տերությունների կողմից հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելուն: «Թուրքիայի հետ այսօրվա հարաբերություններում Հայ Դատը չպետք է դառնա շահարկման թեմա: Պետք է ընդմիշտ հիշել, որ պահանջատիրությունը ոչ միայն Հայաստանում ապրող հայ ժողովրդի, այլև սերունդների, ամբողջ աշխարհում սփռված հայ ժողովրդի հանագգային խնդիրն է, որի լուծումը մնում է պատմությանն ու սերունդներին և այն էլ ոչ թե ուժի դիրքերից՝ առճականամբ, այլ պատմական տրամաբանական զարգացման ընթացքում դիվանագիտական ճանապարհով մարդկային առողջ բանականությանը լուծելու համար»<sup>99</sup>:

Մեկ ազգի նկատմամբ հանցավոր գործողություններ իրականացնելու պարագայում համապատասխան քաղաքական գնահատականների հնչեցումը՝ դրանից բխող բոլոր հետևողություններով, անհրաժեշտություն է: Այնուհանդերձ, հարևան երկրի հետ տնտեսական համագործակցության հնարավոր ուղիների որոնումը, այդ համագործակցությունից ստացվող տնտեսական օգուտները մեր երկրի օգտին վերաբաշխելը կենսական անհրաժեշտություն են, «քանի որ երկու երկրներն էլ ունեն երկկողմ առևտորատնտեսական հետաքրքրություն ներկայացնող ռեսուրսներ, ոլորտներ և բնագավառներ»: Այդ ճանապարհով ընթանալու դեպքում, օգտագործելով

տնտեսական զարգացման ներքին ռեսուրսներն ու տարածաշրջանային համագործակցության զարգացման մի շարք միջոցառումներ, կկարողանանք խեղճ ու թույլ, պահանջատեր գործընկերոց կարգավիճակից վերաճել հղոր և ազգային արժանապատվությունը գնահատող պետության: Ուստի անհասկանալի է այն քաղաքական գործիչների դիրքորոշումը, որոնք տնտեսությունն ու քաղաքականությունը նույնացնում են, ընդ որում այն մակարդակով, որ կտրականապես մերժում են նաև Թուրքիայի հետ երկարուղային ճանապարհի՝ Հայաստանի համար հոված կարևոր «տնտեսական երակի» վերաբացման հարցը: Յենց նման քաղաքական գործիչներն են, աչք փակելով արդեն ծևավորված տնտեսական իրականության առջև, Հայաստանի տնտեսական զարգացումները տանում փակությի: Արդեն ծևավորված տնտեսական իրականությունն այն է, որ մինչ քաղաքական այրերը գրադարձ են Թուրքիայի հետ համագործակցությունը մերժելու փաստարկներ հորինելով, այսպես կոչված տնտեսական սուբյեկտները՝ իրավաբանական և ֆիզիկական անձինք, հայկական շուկան հեղեղել են թուրքական ապրանքներով: Հայաստանում վաճառվող ապրանքների՝ սննդամթերթի, հագուստի, կենցաղային օգտագործման ապրանքների, կաշվե իրերի, ավտոպահեստամասերի և այլ բազմատեսակ ապրանքների հիմնական մասը ներնուժվում է Թուրքիայից: Բեռների գլխավոր բաժինը Հայաստան է մուտք գործում Վրաստանի և Իրանի տարածքներով, մյուս մասն էլ՝ ինքնարիով: Ստացվում է այնպես, որ երկու ճանապարհներն ել, վերջին հաշվով, հանգեցնում են ներկրվող ապրանքների թանկացմանը: Նույն ապրանքը հայսպառողը ձեռք է բերում կրկնակի թան՝ վրաց սպառողի համեմատությամբ: Եթե Վրաստանից ներկրվող տեղական արտադրության ապրանքները հարկվում են միայն ավելացված արժեքի հարկի դրույթաշափով, ապա Թուրքիայից Հայաստան ներկրվող բեռներից գանձվում է նաև ադվալորային մաքսատուրք՝ 10%-ի չափով: Ներկրողն այդ ծախսերին ավելացնում է նաև իր շահույթը, իսկ սպառողը մեկ դոլար արժողությամբ ապրանքը ձեռք է բերում երկու և ավելի դոլարով: Ի վերջո, տնտեսական հարաբերությունների քաղաքականացումը, քաղաքական գործիչների մեջքով, պատճառ է դառնում մեր երկրի էլ ավելի աղքատացման:

Թուրքիայի հետ առևտորային հարաբերությունների զարգացումը մեզ է անհրաժեշտ, առևտուրն այդ երկրի հետ, ոչ պետական մա-

<sup>98</sup> «Արավոտ» օրաթերթ, 44/2178/ 10.03.2004, էջ 2:

<sup>99</sup> Խոջաբեկյան Վ. Ե., Զբաղվածության հիմնախնդիրները Հայաստանում անցման շրջանում, Երևան, 1998, էջ 219:

կարդակով, ընթացել ու ընթանում է բավականաչափ ակտիվ: Թուրքիան շահում է, իսկ մենք՝ ազգովի ավելի շատ վճարում ներկրման շարժարացված ծախսերի պատճառով: Հետևաբար, արտաքին առևտրային ճիշտ քաղաքականության իրականացման գործում երկու երկրների միջև առևտրատնտեսական պայմանները, ձևերը և հնարավորություններն անհրաժեշտ է ամրագրել առևտրատնտեսական համապատասխան պայմանագրերի միջոցով, ինչպես դա տեղի է ունենում, օրինակ՝ Հայաստան-Ռուսաստան, Հայաստան-Իրան և այլ երկրորդ տնտեսական համագործակցության ընթացքում:

Մինչև այսօր երկու երկրների միջև, պետական նակարդակով, գոյություն չունեն ոչ դիվանագիտական, ոչ առևտրային և ոչ էլ տնտեսական հարաբերությունները: 1993թ. Թուրքիան նույնիսկ անբողջովին փակեց իր սահմանները ՀՀ-ի առջև: Մեկ տարի անց օդային ճանապարհներն, այնուամենայնիվ, բացվեցին: Այսօր հայկական և թուրքական զանգվածային լրատվական միջոցները տեղեկություններ են հաղորդում այն մասին, որ նոտ ժամանակներս բացվելու է Կարս-Գյումրի երկարուղային ճանապարհահատվածը:

Թուրքիան Հայաստանի հետ հնարավոր երկխոսության համար և առաջ է քաշում որոշ պայմաններ.

- հրաժարում հայերի ցեղասպանության միջագային ճանաշումից և Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջատիրությունից,
- դարաբառյան կոնֆլիկտի լուծում:

Սակայն վերջին ժամանակներս թուրքական պաշտոնական անձանց հարցագրույցներում Ղարաբաղի հարցը չի հիշատակվում: Ըստ որոշ կանխատեսումների, Թուրքիայի հետ երկարուղային գծի բացման արդյունքում Հայաստանը տարեկան կշահի 600մլն-1մլրդ դոլար: Դա նաև ձեռնուու է Թուրքիային, քանի որ Կարսի շրջանի տնտեսությունը, որն այժմ գտնվում է ծայրահեղ վատ վիճակում, և բնակչությունն այնտեղից զանգվածաբար տեղաշարժվում է դեպի տնտեսապես ավելի զարգացած շրջաններ, կամսի զարգանալ:

Անկախ երկու երկրների պաշտոնական շրջանակներում փոխադարձ մեղադրանքներից, արտաքին առևտրային հարաբերությունները մեր երկրների միջև զարգանում են: Անցած ժամանակամիջոցում Թուրքիա-Հայաստան առևտրային կապերում ձևավորված իրավիճակը (այսուակ 13) ցույց է տալիս, որ եթե 1996թ. ՀՀ ար-

տահանման 2.07%-ը կապված էր Թուրքիայի հետ, իսկ ներմուծումը չէր կազմում նույնիսկ 1%, ապա 1997թ. որոշ աճից հետո, հաջորդող տարիներին արտահանման ծավալներն աստիճանաբար նվազեցին և 2005թ. կազմեցին մոտ 0.2%: Ինչ վերաբերում է ներմուծմանը, ապա դա մի քանի անգամ ավելին է, քան արտահանմումը: Այսպես, ըստ պաշտոնական վիճակագրության տվյալների, Թուրքիայից ներմուծումը 2003թ., 2002թ. համեմատությամբ, նվազել էր, սակայն հետագա երկու տարիների ընթացքում աճելով՝ 2005թ. կազմեց 57.9 մլն դոլար: Թեև ըստ առանձին տարիների՝ Թուրքիայից ներմուծումը կրճատվում է, այնուամենայնիվ, դա ունի կայուն բնույթ:

### Այսուակ 13

Թուրքիայի բաժնեմասը ՀՀ համախառն արտահանման և ներմուծման մեջ 1996-2005թթ. (տոկոսներով)<sup>100</sup>

| ԱՐՏԱՀԱՆՄԱՆ |      |      |      |      |      |      |      |      |      |
|------------|------|------|------|------|------|------|------|------|------|
| 1996       | 1997 | 1998 | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 |
| 2.07       | 3.07 | 1.35 | 0.48 | 0.50 | 0.33 | 0.28 | 0.2  | 0.3  | 0.2  |
| ՆԵՐՄՈՒԾՄԱՆ |      |      |      |      |      |      |      |      |      |
| 1996       | 1997 | 1998 | 1999 | 2000 | 2001 | 2002 | 2003 | 2004 | 2005 |
| 0.72       | 4.37 | 6.29 | 4.95 | 4.57 | 3.84 | 3.87 | 3.0  | 2.9  | 3.2  |

Թուրքիայի հետ ՀՀ արտահանման և ներմուծման կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարածաշրջանային տնտեսական ինտեգրման համար դեռևս բավարար նախադրյալներ չեն ձևավորվել (այսուակ 14): Հայաստանը Թուրքիայի համար ամենին հետաքրքրություն չի ներկայացնում: Արտահանման կառուցվածքում թե՛ ապրանքային տեսականու և թե՛ ծավալների առումով վիճակն աննշիթար է:

<sup>100</sup> Կազմված է «ՀՀ արտաքին առևտրություն 1999թ.» (էջ 12, 13), 2002թ. (էջ 13, 14) տվյալների հիման վրա:

**Աղյուսակ 14**  
**Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը Թուրքիայի  
հետ 1999-2002թթ. (հազ. ԱՄՆ դոլար) <sup>101</sup>**

| Ծածկագիր | ԱՊՐՎԱՔԱՅԻՆ<br>ԽՄԲԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ  | ԱՐՏՎԱՎԱՌՈՒՄ |        |        |        | ՆԵՐՆՈՒԾՈՒՄ |         |         |         |
|----------|---|-------------|--------|--------|--------|------------|---------|---------|---------|
|          |   | 1999        | 2000   | 2001   | 2002   | 1999       | 2000    | 2001    | 2002    |
|          | Ընդամենը  | 1128.49     | 1527.9 | 1130.0 | 1435.8 | 40152.15   | 40462.4 | 33755.9 | 38232.0 |
| 1        | Կենդանի<br>կենդանիներ   | ---         | ---    | ---    | ---    | 1093.0     | 557.7   | 611.6   | 596.6   |
| 2        | Միս և մսից<br>ենթամթերք   | ---         | ---    | ---    | ---    | 36.5       | ---     | ---     | ---     |
| 4        | Կաթ և կաթնա-<br>մթերք, թթվա-<br>նի ծու, բնական<br>մեղր և այլ<br>կենդ. ծագման<br>սննդամթերք              | ---         | ---    | ---    | ---    | 1642.3     | 4.5     | 17.1    | 69.8    |
| 5        | Այլ կենդանական<br>ծագման<br>ապրանքներ   | ---         | ---    | ---    | ---    | 6.2        | ---     | ---     | ---     |
| 6        | Կենդանի ծառեր,<br>բիեր և այլ բույսեր  | ---         | ---    | ---    | ---    | 0.3        | 0.6     | 4.5     |         |
| 7        | Բանջարեղեն և այլ<br>կերպի արմատա-<br>պտուղներ և<br>ելապուլուղ   | ---         | ---    | ---    | ---    | 43.3       | 17.0    | 51.6    | 49.3    |
| 8        | Կերային հատա-<br>պտուղներ և ըն-<br>կույզ, ցիտրու-<br>սների արմատներ և<br>այլ բուտանային<br>մշակաբույսեր | ---         | ---    | ---    | ---    | 824.4      | 746.9   | 892.4   | 669.6   |
| 9        | Սուրճ, թեյ և այլ<br>համեմունքներ  | ---         | ---    | 5.8    | ---    | 12.6       | 113.2   | 73.5    | 64.9    |

<sup>101</sup> Կազմվել է << արտաքին առևտուրը 1999թ. (էջ 118-120), 2000թ. (էջ 115-117),  
2001թ. (էջ 115-116), 2002թ. (էջ 111-113) տվյալների հիման վրա:

|    |  |     |     |     |     |        |        |        |        |
|----|--|-----|-----|-----|-----|--------|--------|--------|--------|
| 10 | Հացահատիկներ   | --- | --- | --- | --- | 397.1  | 32.7   | 911.4  |        |
| 11 | Ալրաղացային-<br>ձավարեղենային<br>արտադ., աժիկ,<br>օւլա, ինուլին և<br>այլն                    | --- | --- | --- | --- | 488.1  | 92.0   | 69.0   | 67.9   |
| 12 | Զիրասու սերմեր և<br>պտուղներ, ղեղա-<br>րույսեր և տեխնիկ.<br>բույսեր, ծղոտ                    | --- | --- | --- | --- | 128.6  | 151.8  | 1094.2 | 1.6    |
| 15 | Կենդանական և<br>բուսական ծագման<br>յուղեր և ճարպեր,<br>մնուրամոն                             | --- | --- | --- | --- | 1302.0 | 679.2  | 0.6    | 600.4  |
| 16 | Մսից, ձկներից և<br>այլ ծովային անող-<br>նաշարավղոներից<br>արտադրանք                          | --- | --- | --- | --- | ---    | ---    | 358.2  | ---    |
| 17 | Շաքրար և հրուշա-<br>կեղեն շաքրարից   | --- | --- | --- | --- | 387.6  | 164.6  | 300.0  | 1785.0 |
| 18 | Կակաո և դրամից<br>պատրաստված<br>մթերք  | --- | --- | --- | --- | 1211.8 | 1472.9 | 813.6  | 754.5  |
| 19 | Ցորենից, այուրից,<br>օւլայից և կաթից<br>պատրաստված<br>ապրանք, այուրից<br>հրուշակեղեն         | --- | --- | --- | --- | 1613.3 | 751.4  | 409.3  | 165.9  |
| 20 | Բանջարեղենի,<br>պտուղների, ըն-<br>կույզների և բու-<br>յսերի մասերի<br>վերամշակումից<br>մթերք | --- | --- | --- | --- | 354.1  | 149.3  | 221.2  | 158.3  |
| 21 | Այլ տարրեր<br>սմնմանմթերք  | --- | --- | --- | --- | 237.1  | 744.1  | 191.2  | 419.4  |
| 22 | Ողելից և ոչ ողելից<br>ընաենիք և քացախ  | --- | --- | --- | --- | 2.4    | 21.9   | 1.5    | 1.0    |
| 23 | Սննդարդյունքե-<br>ռության մնացորդ-<br>ներ, պատրաստի<br>անասնակեր                             | --- | --- | --- | --- | 2292.5 | 2593.3 | 2034.0 | 2491.2 |
| 24 | Ծխախոտ և ծխա-<br>խոտի արդյունա-<br>թերական փոխա-<br>րինչներ                                  | --- | --- | --- | --- | 6289.1 | 741.8  | 438.7  | 34.4   |

|    |  |     |     |     |     |        |        |        |        |
|----|--|-----|-----|-----|-----|--------|--------|--------|--------|
| 25 | Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ  | --- | --- | --- | --- | 24.0   | 12.4   | 25.3   | 33.7   |
| 26 | Քանքաքար, խարամ և մոլսիր   | --- | --- | --- | --- | ---    | ---    | ---    | ---    |
| 27 | Վառելանյութեր, նավթ և նավթանքեր, բիոտինային միջոցներ, մոմանյութեր                                      | --- | --- | --- | --- | 1723.3 | 2040.0 | 957.0  | 241.3  |
| 28 | Անօրգանական քիմիական միացություններ, ռադիոակտիվ էլեմենտներ և իզոտոպներ                                 | --- | --- | --- | --- | 308.8  | 359.1  | 185.7  | 391.3  |
| 29 | Օրգանական քիմիական միացություններ  | --- | --- | --- | --- | 64.4   | 38.6   | 43.5   | 21.1   |
| 30 | Դեղագործական մերեր   | --- | --- | --- | --- | 0.5    | 3.0    | 15.3   | 31.6   |
| 31 | Պարարտանյութեր   | --- | --- | --- | --- | 0.02   | ---    | ---    | ---    |
| 32 | Ներկանյութեր, պիգմենտներ և այլ ներկող նյութեր, լաքեր, բանար  | --- | 0.9 | --- | --- | 2495.4 | 3093.4 | 1613.6 | 1182.6 |
| 33 | Եթերային յուղեր, հարդարանքի և լոգարանային միջոցներ   | --- | --- | --- | --- | 755.9  | 859.1  | 551.4  | 378.6  |
| 34 | Օճառ, մակերեսային ակտիվ օրգանական միջոցներ, մաքոռ միջոցներ և քսուրներ, մոմեր և հարդարանքի այլ միջոցներ | --- | --- | --- | --- | 1135.5 | 1096.4 | 593.3  | 371.3  |
| 35 | Սպիտակուցային նյութեր, սոսինձ, մորիֆիկացված օսլա, ֆերմենտներ   | --- | --- | --- | --- | 437.6  | 508.6  | 298.5  | 183.4  |
| 36 | Պայթուցիկ նյութեր, լոցկի և այլ վարվող  | --- | --- | --- | --- | 0.1    | 0.8    | 8.3    | 5.1    |

|    |  |       |        |       |       |        |        |        |        |
|----|--|-------|--------|-------|-------|--------|--------|--------|--------|
| 37 | Նուսանկարչական և կինոյի ապրանքներ                                  | ---   | ---    | ---   | ---   | 4.3    | 11.6   | 7.5    | 13.0   |
| 38 | Այլ քիմիական ապրանքներ   | ---   | ---    | ---   | ---   | 376.9  | 529.8  | 430.7  | 350.7  |
| 39 | Պլաստզանգված և դրամին իրեր   | 1.6   | ---    | ---   | ---   | 1615.4 | 2864.8 | 2212.9 | 1797.2 |
| 40 | Կառւչով և ռետինե իրեր  | ---   | ---    | ---   | ---   | 53.7   | 80.0   | 118.5  | 128.0  |
| 41 | Կաշի և կաշվե հոմը  | 819.4 | 1354.8 | 976.7 | 419.6 | 134.2  | 238.8  | 380.4  | 316.6  |
| 42 | Կաշվե իրեր, կենդանիների աղիքից իրեր                                | 35.7  | ---    | ---   | ---   | 53.1   | 106.4  | 195.1  | 324.8  |
| 43 | Բնական և արհեստական մորթի և դրամին իրեր                            | ---   | ---    | ---   | ---   | 32.6   | 81.9   | 54.9   | 68.9   |
| 44 | Փայտ և փայտից իրեր, փայտաքուն                                      | 9.9   | 3.6    | 1.7   | 23.5  | 320.4  | 385.8  | 588.2  | 753.3  |
| 46 | Ծղոսից իրեր  | ---   | ---    | ---   | ---   | 2.5    | 2.3    | 0.6    | ---    |
| 48 | Թուրպ և սովորաբուրպ, իրեր թղթից                                    | ---   | ---    | ---   | ---   | 3184.1 | 4745.2 | 2453.3 | 2933.5 |
| 49 | Գրքեր, լրագրեր, տպագրական արտադրանք                                | 99.5  | ---    | 0.1   | ---   | 308.3  | 139.3  | 12.9   | 8.4    |
| 50 | Մետաքս   | ---   | ---    | ---   | ---   | 7.0    | 7.0    | 0.1    | ---    |
| 51 | Բուրո, նուրք և կոսիտ կենդանական մազեր, ձիու մազից հյուսվածք և կտոր | ---   | ---    | ---   | ---   | 4.9    | 52.9   | 17.9   | 27.2   |
| 52 | Բամբակ   | ---   | ---    | ---   | ---   | 290.2  | 458.5  | 196.3  | 532.1  |
| 53 | Այլ բուսական մանրագործական գործվածք, թղթա գործվածք և դրամին կտոր   | ---   | ---    | ---   | ---   | 2.2    | 0.02   | 0.1    | ---    |
| 54 | Քիմիական թելեր   | ---   | ---    | ---   | ---   | 13.3   | 069.9  | 117.1  | 186.5  |
| 55 | Քիմիական շտապելային գործ   | ---   | ---    | ---   | ---   | 8.6    | 15.8   | 2.5    | 64.8   |

|    | Վածը  |     |     |     |     |       |       |        |        |
|----|---|-----|-----|-----|-----|-------|-------|--------|--------|
| 56 | Թաղիք, բամբակ, հատովն գործվածք, ճոպան, ծառասանուկ, պարուան և իրեր դրանից  | --- | --- | --- | --- | 762.2 | 803.8 | 113.1  | 51.5   |
| 57 | Գորգեր և այլ տեքստիլ հատակի ծածկոցներ                                     | --- | 0.3 | 2.0 | 2.9 | 358.2 | 439.0 | 451.8  | 502.9  |
| 58 | Յատովն կտորներ, ասեղնագործ կտորներ, գորելեն ներ, հարդարման նյութեր և այլն | --- | --- | --- | --- | 13.4  | 21.5  | 26.8   | 20.9   |
| 59 | Կրկնագործված և հարստացված ծածկույթով տեքստիլ իրեր և դրանից տեխ. իրեր      | --- | --- | --- | --- | 17.2  | 110.3 | 210.9  | 183.7  |
| 60 | Մեքենայով կամ ձեռքով գործած տրիկոնաժե կտավ                                | --- | --- | --- | --- | 290.8 | 854.6 | 1357.4 | 1437.6 |
| 61 | Տրիկոնաժե հագուստ և հարակից իրեր  | --- | --- | --- | --- | 163.5 | 676.0 | 556.8  | 544.7  |
| 62 | Տեքստիլ հագուստ և հարակից իրեր  | 0.1 | --- | --- | --- | 247.2 | 292.6 | 527.1  | 881.5  |
| 63 | Այլ պատրաստի տեքստիլ իրեր, օգտագործած հագուստ և տեքստիլ իրեր              | --- | --- | 0.2 | --- | 214.6 | 235.2 | 337.1  | 383.2  |
| 64 | Կոշիկ, զուզագուլպա և նմանատիպ իրեր  | --- | --- | --- | --- | 354.9 | 422.5 | 361.1  | 353.8  |
| 65 | Գլխարկներ   | --- | --- | --- | --- | 2.9   | 1.1   | 2.5    | 8.0    |
| 66 | Յովանցներ, օրստափայտեր, ճոպաններ, մտրակներ և դրանց մասեր                  | --- | --- | --- | --- | 6.4   | 2.4   | 5.2    | ---    |
| 67 | Մշակված փետուրներ, արհեստական ծաղիկներ                                    | --- | --- | --- | --- | ---   | 0.02  | 0.2    | 0.3    |

|    |  |      |      |      |      |        |        |        |        |
|----|--|------|------|------|------|--------|--------|--------|--------|
| 68 | Իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ իրերից                                 | ---  | ---  | ---  | ---  | 48.4   | 84.5   | 88.3   | 79.3   |
| 69 | Կերամիկական իրեր   | 0.6  | ---  | 0.02 | ---  | 833.6  | 1257.0 | 1381.3 | 1995.0 |
| 70 | Ապակի և ապակե իրեր   | ---  | ---  | ---  | ---  | 422.3  | 404.8  | 481.2  | 466.4  |
| 71 | Բնական և արհետավական մարգարիտ, քամլարժեք և կիսաթանկարժեք քարեր, քամկ. մետաղներ | 0.9  | 84.8 | 25.1 | ---  | 11.0   | 40.2   | 8.2    | 142.4  |
| 72 | Սև մետաղներ  | --   | ---  | ---  | ---  | 583.3  | 1285.2 | 2536.2 | 3350.0 |
| 73 | Իրեր սև մետաղից  | 15.2 | ---  | ---  | ---  | 638.4  | 882.5  | 966.2  | 1335.3 |
| 74 | Պղինձ և իրեր դրանից  | ---  | ---  | ---  | ---  | 1.0    | 1.9    | 9.2    | 11.8   |
| 75 | Նիկել և դրանից իրեր  | ---  | ---  | ---  | ---  | ---    | ---    | ---    | 0.1    |
| 76 | Ալյումին և իրեր դրանից   | 10.3 | 0.1  | 85.8 | 23.0 | 483.7  | 717.9  | 478.4  | 1152.3 |
| 78 | Արծիճ և իրեր դրանից  | ---  | ---  | ---  | ---  | ---    | ---    | ---    | 2.8    |
| 79 | Ցինկ   | ---  | ---  | ---  | ---  | 12.8   | 152.1  | 5.3    | 11.7   |
| 80 | Անագ և դրանից իրեր   | ---  | ---  | ---  | ---  | ---    | 0.04   | 0.1    | ---    |
| 81 | Գործիքներ, դանակներ, գդալներ, պատրաքաղներ ոչ քամկ. մետաղից                     | 0.6  | ---  | ---  | ---  | 16.4   | 93.2   | 48.5   | 51.3   |
| 82 | Այլ իրեր ոչ քամկարժեք մետաղից  |      |      |      |      | 479.4  | 487.9  | 439.1  | 394.8  |
| 83 | Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավ. և մեխ. մասեր                          | 69.9 | 82.6 | 5.5  | ---  | 1208.3 | 2581.4 | 1853.5 | 2360.6 |
| 84 | Էլեկտր. մեքենաներ և սարքավորումներ, ձայնագորող պապարատներ և դրանց մասեր        | 38.1 | 0.1  | 0.01 | 56.2 | 715.7  | 1194.6 | 1316.8 | 1335.9 |
| 85 | Լոկոմոտիվներ, տրամվայներ,  | ---  | ---  | ---  | ---  | 0.3    | 0.2    | 0.3    | ---    |

|    |   |      |      |      |       |       |       |       |        |
|----|---|------|------|------|-------|-------|-------|-------|--------|
|    | դրանց մասեր   |      |      |      |       |       |       |       |        |
| 86 | Վերգետնյա տրաստորոշի միջոցներ և մասեր   | ---  | 0.5  | 26.8 | 910.6 | 191.0 | 169.6 | 117.2 | 1675.9 |
| 87 | Սարքեր և պարաւուներ, օպտիկական, լուսանկան, չափիչ, բժշկական մասեր և հարմարանքներ | ---  | ---  | ---  | ---   | 2.8   | 20.6  | 11.8  | 2.9    |
| 88 | Ժամացույցներ և դրանց մասեր  | ---  | ---  | ---  | ---   | 11.0  | 0.4   | 0.5   | 3.2    |
| 89 | Երաժշտական գործիքներ և դրանց մասեր  | ---  | 0.05 | 0.2  | ---   | ---   | 1.7   | 306.9 | 0.0    |
| 90 | Կահույք, անկողնային պարագաներ և դրանց հարակից մասեր                             | 0.3  | ---  | 0.04 | ---   | 232.7 | 235.0 | 17.8  | 970.6  |
| 91 | Խսաղալիքներ, խաղեր և սպորտային գովայք, դրանց մասեր և հարմարանքներ               | 0.2  | ---  | ---  | ---   | 13.3  | 28.8  | 161.0 | 12.5   |
| 92 | Ոլոշակի խմբերի մեջ չմտած ապահովանքներ   | 24.0 | ---  | ---  | ---   | 56.9  | 128.2 | ---   | 139.1  |
| 93 | Արվեստի ստեղծագործություններ, հնած իրեր   | 0.1  | 0.3  | 0.2  | ---   | ---   | ---   | ---   | ---    |
| 94 | Ուրիշ խմբերի մեջ չմտած ապահովանքներ   | ---  | ---  | ---  | ---   | ---   | ---   | ---   | 46.5   |


2002թ. ՀՀ արտահանումը կազմում է ներմուծման 3.8%-ը: Արտահանվում են ընդամենը վեց խումբ ապահովատեսակներ, որոնցից 92.6%-ը բաժին է ընկնում կաշվին և կաշվե հումքին, վերգետնյա տրանսպորտային միջոցներին և դրանց մասերին: Ներմուծումն ընդգրկում է 77 խումբ ապահովատեսակներ՝ սկսած սմանդամթերքից, կենցաղային քիմիական ապահովներից, հագուստեղենից, վերջացրած հանքահումքային, ներենաշխնական արտադրության ապահովներով: Սմանդամթերքին բաժին է ընկնում համախառն ներմուծման 14.2%-ը: Մնացած ապահովախմբերից ներմուծման ծավալում

համեմատաբար բարձր է շաբարի և հրուշակեղենի (4.6%), թղթի, ստվարաթղթի և դրանից իրերի (7.7%), տրիկոտաժե և տեքստիլ ապրանքների (8.7%), շինանյութերի (5.2%), սև մետաղի և դրանից իրերի, այսումինի և դրանից իրերի (15.3%), բժշկական և վիրաբուժական ապրանքների (7.9%) բաժինը:

Վերլուծությունը մեկ անգամ և փաստում է, որ Հայաստանը Թուրքիայի համար ոչ միայն տարածաշրջանային տնտեսական ինտեգրման, այլ նույնիսկ արտաքին առևտության բավարար գործընկեր չեղական ներքին շուկան հարևան խոշոր երկու պետությունների էժան, հնացած ապրանքների սպառողն է: Այս երկույթի, կարճաժամկետ առումով, դրական հետևանքները հանգում են հետևյալին. սպառման շուկան ընդլայնվում է, այդ ապրանքները հասանելի են բնակչության անապահով խավերին, ներկրնան գործընթացներում ներգրավված իրավաբանական և ֆիզիկական անձինք ստեղծում են աշխատատեղեր և ապահովվում որոշակի եկամուտներով, պետական բյուջեն և համալրվում է դրանցից գանձվող անուղղակի հարկերով:


Բացասական հետևանքներն ունեն ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ դրսևորումներ: Կարճաժամկետ առումով, բացասական դրսևորումներն արտացոլվում են արտաքին առևտության հաշվեկշռում: Հայաստանն արտաքին առևտության միայն կորցնում է: Արտահանումից ստացվող եկամուտները կարող էին ծառայել ոչ միայն ներմուծման վճարնան, այլև արտահանման ճյուղերում ներդրումների խթանմանը: Այստեղ էլ դրսևորվում է արտահանման նկատմամբ ներմուծման առաջանցիկ աճի երկարաժամկետ բացասական անդրադարձը: Այլ երկրներից տնտեսական կախվածությունը թույլ չի տալիս ներքին ռեսուրսները կենտրոնացնել հայրենական արտադրության զարգացման վրա: Ուստի, ինչպես Թուրքիայի, այնպես էլ Իրանի և Վրաստանի հետ արդեն ձևավորված տնտեսական կապերը, որոնք վկայում են համագործակցության խորացնան անհրաժեշտության մասին, անհրաժեշտ է համակարգել և ուղղորդել այնպես, որ դրանք փոխահավետ լինեն բոլոր կողմերի համար (գծապատկեր 1):

**Գծապատկեր 1**  
**ՀՀ արտաքին առևտության շրջանառության ծավալները հարևան երկրների հետ 1998-2003 թթ.**



Այս երկրները բավականին ծանրակշիռ տեղ ունեն նաև տարածաշրջանի երկրների հետ Հայաստանի արտաքին առևտության շրջանառության ծավալներում (գծապատկեր 2):

**Գծապատկեր 2**  
ՀՀ առևտության շրջանառության մեջ տարածաշրջանի և հարևան երկրների արտաքին առևտության տեսակարար կշիռը 2003թ.



## Օգտագործված գրականության ցանկ

- Անանյան Լ. Զ., Հայաստանի տնտեսական պատմության ուրվագծեր, Երևան, 2003:
- Դարբինյան Ա.Վ., Հայաստանը միջազգային տնտեսական ինտեգրացման գործընթացներում, Երևան, Պետական ծառայություն, 2000:
- Թորոսյան Թ. Շ., Հայաստան-Թուրքիա. առևտության կապեր, Ռազմավարական և առևտության հետազոտությունների հայկական կենտրոն, Երևան, 2001:
- Թորոսյան Թ. Շ., Առևտության կազմակերպության անդամակցության ազդեցությունը Հայաստանի արտաքին առևտության համակարգի վրա, Երևան, ԱՌՍ, 2004:
- Խոջաբեկյան Վ. Ե., Զրադշափության հիմնախնդիրները Հայաստանում անցման փուլում, Երևան, 1998:
- Կիրակոսյան Գ. Ե., Անցումային տնտեսության վերափոխումները, Տեսության հարցեր, «Տնտեսագետ», Երևան, 2002:
- Մարկոսյան Ա. Խ., Պետությունը և շուկան. գիրք 1, Երևան, «Տիգրան Մեծ», 2000:
- Մարկոսյան Ա., Հախվերդյան Դ., Նազարյան Գ., Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում, Երևան, ԱՌՍ, 2002:
- Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2002:
- ՀՀ արտաքին առևտությունը 1999թ., Վիճակագրական ժողովածու, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2000:
- ՀՀ արտաքին առևտությունը 2000թ., Վիճակագրական ժողովածու, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2001:
- ՀՀ արտաքին առևտությունը 2001թ., Վիճակագրական ժողովածու, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2002:
- ՀՀ արտաքին առևտությունը 2002թ., Վիճակագրական ժողովածու, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2003:
- ՀՀ արտաքին տնտեսական կապերի զարգացման և կարգավորման հարցեր: ՀՀ առևտության համարական պալատ, Երևան, 1996:
- ՀՀ մաքսային օրենսդրություն, «Պետական եկամուտների նախարարություն, «Հարկային և մաքսային տեղեկատու» ՓԲԸ, Երևան, 2001:
- ՀՀ միջազգային պայմանագրերի պաշտոնական տեղեկագիր, 1999-2001, ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր, 2001:

17. ՀՀ միջազգային պայմանագրերի պաշտոնական տեղեկագիր, 2003, ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր, 2003:
18. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2003թ. հունվար-դեկտեմբերին: ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2004:
19. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 1999.
20. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 1997.
21. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 1995.
22. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2000.
23. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 1996.
24. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն: ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 1990.
25. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 1, 2. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, 1998.
26. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 1994.
27. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն: ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, N9, 2001.
28. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն: ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2000.
29. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 1999.
30. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 1999.

31. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2000.
32. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 1994.
33. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 1973.
34. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 1997.
35. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2001.
36. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն), Երևան, 1991.
37. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, 2002, N1 (ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 1996, 65).
38. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն: ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, “ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն”, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 1994, N 1(31).
39. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն: ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 1994; “ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն”, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 1994, N3(16), 1994.
40. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն: ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2001, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2001, 45, 70-83).
41. Balassa B. The Theory of Economic Integration; Homewood. Irvin, 1961.
42. Beverly M. Carl Economic Integration Among Developing Nations: Law and Policy, 1986.

43. Cantwell J. The Reorganization of European Industries After Integration; Selected Evidence on the Role of Multinational Enterprise Activities; *Journal of Common Market Studies*, Vol. XXXI, N2, Dec. 1987.
44. Cooper C.A., Massell B.F. A New Look at Customs Unions Theory; *Economic Journal*, 1965.
45. El-Agra International Economic Integration; London, Macmillan, 1988.
46. Kozlov S. Ex-Soviet Republics Plan for Free Trade; 4 Countries Agree on Integration; *The Washington Times*, February 25, 2003.
47. Lipsy R.G. The Theory of Custom Unions; *Economic Journal*, September, 1961.
48. Machlup F. A History of Thought on Economic Integration; London, Macmillan, 1979.
49. McGuire G., Smith T. Restrictiveness of International Trade in Maritime; UNCTAD report, Tables 2-10, 2000.
50. Meade J.E. The Theory of Customs Unions; Amsterdam, North Holland, 1955.
51. Myurdale G. Development and Undevelopment Cairo; National Bank of Egypt, 1959.
52. Pinder J. Britain and the Common Market; Cresset Press, London, 1961.
53. Pomfret R. The Economics of Regional Trading Arrangements; New York: Oxford University Press, 1998.
54. Pradip K. Ghosh, Gamani C. Economic Integration and Third World Development; Greenwood Press, 1984, (p.25-100).
55. Salvatore D. International Economics; 2nd edition, New York London, 1987.
56. Salvatore D. Theory and Problems of International Economics; 2nd edition, New York: McGraw-Hill, 1984.
57. Summers L. Regionalism and the World Trade System in Policy Implication of Trade and Currency Zones; a symposium, sponsored by The Federal Reserve Bank of Kansas City, 1991.
58. Viner J. The Customs Union Issue; New York the Carnegie Endowment for International Peace, 1953.
59. African Economic Report, 1998 (p.10-12).
60. Black Sea Economic Cooperation Economic Agenda For The Future. Towards More Consolidated, Effective and Viable Black Sea Economic Cooperation Partnership; BSEC agenda, Istanbul, Sep., 2002.
61. Direction of Trade; Statistics Yearbook. IMF. Washington, 2001.
62. Ekonomist; Turkiye ve Ermenistan, daimi dusmanlar; 02.10.2003.
63. Figaro; journal 10.12.2003.
64. Georgian Economic Trend – 2001, N 3-4.
65. International Trade Statistics 2000. WTO Geneva, 2000.
66. Lost potential in the South Caucasus. Aspects of interstate trade; International Center of Human Development, Armenia; "AREAT" Center, Azerbaijan; The Strategic Research institute, Georgia, Yerevan-Baku-Tbilisi, 2003.
67. The Framework Agreement on ASEAN Investment Area. Handbook on investment Agreements in ASEAN; Jakarta. The ASEAN Secretariat, 1998.
68. The Summit Declaration on Black Sea Economic Cooperation. Istanbul, 25 June 1992. Black Sea Economic Cooperation. Handbook of Documents. V 1. Istanbul, July, 1995 (p.3).
69. The World Bank; World development Indicators 1999/2000.
70. Trade and Development Report; UNCTAD, NY and Geneva, 2002.

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ Յ ՈՒ Ն

Ներածություն ..... 3

ԳԼՈՒԽ I. Միջազգային տնտեսական ինտեգրման էռությունը, փուլերը և նախադրյալները

- 1.1. Միջազգային տնտեսական ինտեգրման տեսական հիմնադրույթները ..... 6  
1.2. Տարածաշրջանային ինտեգրման նախադրյալները և դրանց դրսերման առանձնահատկությունները ..... 21

ԳԼՈՒԽ II. ԱրևմտաԵվրոպական տնտեսական ինտեգրունը

- 2.1. Եվրոմիության ձևավորման և ընդլայնման փուլերը ..... 37  
2.2. Եվրոպական միության տնտեսական ինտեգրման հիմնական խնդիրները ..... 46  
2.3. Եվրոպական միության կառավարման մարմինները ..... 49  
2.4. ԵՄ երկների տնտեսական մոդելների առանձնահատկությունները ..... 51  
2.5. ԵՄ սոցիալական և գյուղատնտեսական քաղաքականությունը ..... 57  
2.6. ԵՄ ինտեգրման արդի մոդելը և Եվրոպական արժութային համակարգի ձևավորումը ..... 61  
2.7. «ԵՄ - Հայաստան» համագործակցություն ..... 69

ԳԼՈՒԽ III. Տարածաշրջանային ինտեգրման գործընթացները աշխարհի այլ տարածաշրջաններում

- 3.1. NAFTA-ի ձևավորման քաղաքական և տնտեսական նախադրյալները ..... 81  
3.2. Տնտեսական ինտեգրման դերը զարգացող երկրներում ..... 86  
3.3. ԱՊՀ շրջանակներում ՀՀ տնտեսական ինտեգրման արդյունքների ու հեռանկարյային միտումների գնահատականը ..... 95  
3.4. Սկզբանական տնտեսական համագործակցությունը և ՀՀ-ը ..... 119

## ԳԼՈՒԽ IV. ՀՀ տնտեսական ինտեգրման հիմնախնդիրները

- 4.1. ՀՀ տնտեսական ինտեգրումը Վրաստանի հետ ..... 132  
4.2. ՀՀ տնտեսական համագործակցությունը Իրանի հետ ..... 151  
4.3. ՀՀ տնտեսական համագործակցության ուղիները Աղբբեջանի և Թուրքիայի հետ ..... 158

Օգտագործված գրականության ցանկ ..... 174

Թաղեկույան Զոյա Աղվանի  
Գալոյան Դիանա Ռոբերտի

## Միջազգային տնտեսական ինտեգրացիա

Դրատ. Խմբագիր՝

Սրբագրիչ՝

Գ. Յովհաննիսյան

Զ. Յովհաննիսյան

Պատվեր՝ 66: Չափս՝ 60x84<sup>1/16</sup>:

9,5 հեռ. մամուլ, 9,6 հրատ. մամուլ,

11,25 տպ. մամուլ, 10,46 տպ. պայմ. մամուլ:

Տպաքանակ՝ 100:

«Տնտեսագետ» հրատարակչություն

Տպագրված է «Տնտեսագետ» հրատարակչության տպագրական  
արտադրանասում  
Երևան 25, Նալբանդյան, 128